


ԷԶՄԻԱԾԻՆ



Գ
2021



ՀԼ. ՏԱՐԻ


ԲԱՊՐԵԼ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՆՅՐ ԱԹՈՒՄՅՈՒՆ ՄԻԲՅՈՒՆ ԷԶԴԻԼԵՐՆԻ

Մ ար Կ

2021

Լ. ԷԶԴԻԼԵՐՆԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական

Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**


Խմբագիրներ՝ **Արփինէ Զանթիկեան,
Լուսինէ Վարդանեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօզոյեան,
Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան,
Գոհար Աւագեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Editors **Arpine Chantikyan,
Lusine Vardanyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**


Редакторы **Арпине Чантикян,
Лусине Варданян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Азат Бозоян,
Геворг Тер-Варданян,
Вардан Деврикян,
Гоар Авакян**

ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԳՐԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱԲՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՅ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում տիկնանց եւ օրիորդներին՝ Մարտի 8-ի տօնական առիթով:

Անփոխարինելի է կնոջ դերն ընտանիքի ամրութեան, քրիստոնէական արժէքներով եւ հայրենեաց աւանդներով մեր զաւակներին կրթելու գործում: Կանայք անձնուրաց նուիրումի, սիրոյ ու քնքշանքի մարմնացումն են մեր կեանքում:

Յետպատերազմեան այս դժուարագոյն օրերին, երբ մեր երկիրը շարունակում է փոթորկուել ներքին ու արտաքին մարտահրաւէրներից, վատահոլթիւնն ունենք, որ մեր ժողովուրդը վերստին իր խաչի ճանապարհը պիտի հասցնի մինչև յաղթական յարութիւն:

Սիրելի՛ մայրեր եւ քոյրեր, Մեր մաղթանքն է, որ դուք յոյսի ու մխիթարութեան մէջ դիմաւորէք մեծարանքի այս տօնը: Աղօթում ենք, որ Տէրը Սուրբ Հոգու սփռփանքը պարգևի պատերազմի ծանր կորուստների միջով անցած մեր մայրերին ու քոյրերին, ուժ ու կորով հաղորդի համայն մեր ժողովրդին՝ համակամ սիրով կերտելու լուսաւոր ու բարօր կեանքը հայրենիքի: Թող Բարձրեալ Տէրն իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի ձեզ ամէնքիդ եւ բիւր օրհնութիւններով շնորհի արեւշող կեանքի խաղաղ եւ երջանիկ օրեր, լուսաւոր ու պայծառ նոր իրագործումներ, այսօր եւ միշտ, ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
 «ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒՆՇԽԱՐԻԷ ԵՒ ԴՐԱ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ
 ԺՈՂՈՎՈՒՐՊՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
 ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(3 մարտի, 2021 թ.)

Գերաշնորհ Տ. Տիրան եպիսկոպոս Պետրոսյան՝ Կենտրոնական Եւրոպայի և Շվեդիայի հայրապետական պատվիրակ,

Մեծահարգ ատենապետներ՝ տիարք Միխայիլ Պիոտրովսկի և Աշոտ Գրիգորյան,

Համաժողովի հարգարժան մասնակիցներ,

Հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու ողջունն ենք բերում ձեզ բոլորիդ:

Այս համաժողովի գումարումը կարևոր և այժմեական է հատկապես ներկայիս, երբ ամիսներ առաջ Ադրբեջանը Թուրքիայի և ահաբեկչական խմբավորումների հետ պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ, որի հետևանքով նաև վնասվեցին հայկական եկեղեցական և մշակութային կոթողներ: Հարյուրամյակներ շարունակ մեր ժողովուրդը, իր ազգային նկարագրով ու հոգևոր արժեքներով զորացած, կերտել է իր կյանքը հայրենի բնօրրանում, կառուցել սքանչելի տաճարներ, ստեղծել բացառիկ ձեռագրեր, արվեստի ու դպրության բարձրարժեք գործեր: Արցախ աշխարհի ժառանգությունը՝ որպես հայ մշակույթի անբաժանելի մաս, մեծապես հարստացրել է ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային մշակութային գանձարանը իր յուրօրինակ մեծ ավանդով:

Այսօր, սակայն, Արցախի բազմադարյա ժառանգության ճակատագիրը պատերազմի հետևանքով Արցախի օկուպացված և Ադրբեջանի տիրապետության տակ անցած տարածքներում վերստին վտանգված է: Ցավոք պիտի արձանագրենք, որ դեռևս նախորդ տարվա նոյեմբերից պաշտոնական Բաքուն տարատեսակ խռչնդոտներով կասեցնում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությունը՝ մասնագետներ առաքելու Արցախ հայկական հոգևոր-մշակութային ժառանգության վիճակի գնահատման համար: Այս

առթիվ Մայր Աթոռը, Հայաստանի և Արցախի պետական և հասարակական կազմակերպությունները դիմել են միջազգային պատկան կառույցների և պետությունների ղեկավարների, որպեսզի կարելին ձեռնարկվի, և ապահովվի մեր դարավոր ազգային և հոգևոր ժառանգության, մեր սրբավայրերի, մեր վանքերի ու եկեղեցիների, հազարավոր խաչքարերի պահպանությունը, և կանխարգելի դրանց ոչնչացումը:


Հայության հետ առնչված ամեն ինչ ոչնչացնելու Ադրբեջանի մոլուցքը դրսևորվում է նաև մարդկային կյանքի հանդեպ դատապարտելի վերաբերմունքով: Ադրբեջանը, ոտնահարելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, հրաժարվում է գերիների՝ «բոլորը բոլորի դիմաց» փոխանակման ստանձնած պարտավորությունից՝ դիվերսանտներ հայտարարելով պատերազմից հետո գերեվարված զինվորներին, որոնք, ռազմական գործողությունների դադարեցման հայտարարությունից անտեղյակ, պատսպարվում էին անտառներում կամ իրենց դիրքերում:

Ադրբեջանական իշխանությունները, նկատելի է, որ ջանում են ամեն գնով ջնջել հայկական հետքն ու հայկական ներկայությունն Արցախ աշխարհում: Նախիջևանի դարավոր հայկական գերեզմանի բազմաթիվ խաչքարերի իսպառ ոչնչացումը և դրա վերաբերյալ միջազգային հանրության ոչ համաչափ արձագանքը թերևս առիթ են ընծայել Ադրբեջանին կարծելու, որ մշակութային ցեղասպանությունը կարող է մնալ անպատիժ: Այս մասին է վկայում այն փաստը, որ վերջին պատերազմի ընթացքում երկու անգամ հրթիռակոծվեց Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, քանդվեցին Շուշիի Սբ. Հովհաննես (Կանաչ ժամ) եկեղեցու գմբեթները, ոչնչացվեցին Թալիշի հայկական հուշարձանները, Հադրութի շրջանի Առաքել գյուղի և Դիզափայտ լեռան գագաթին գտնվող Կատարո վանքի խաչքարերը և այլն: Այս ամենից զատ՝ նաև վտանգավոր միտում է նկատվում Ադրբեջանի կողմից խեղաթյուրելու հազարամյակների հայկական հոգևոր մշակույթի, մասնավորաբար Արցախի տարածքում եկեղեցական կառույցների պատկանելիության պատմական փաստերը: Այդ նենգ նպատակի համար նաև գործի են դրվում պատմական հիմնավորում չունեցող, գիտական շղարշի տակ ներկայացվող թեզեր, որոնք հայկական եկեղեցիները, սրբավայրերը դիտարկում են որպես կովկասյան աղվանական ծագում ունեցող կառույցներ: Ադրբեջանի կողմից հայկական ժառանգությունը սեփականացնելու


նոր քաղաքականություն է իրագործվում, որի գրառումներին ականատես ենք վերջին շրջանում:

Այս առումով այսօր հրամայական է գիտական անկողմնակալ մոտեցում ցուցաբերել ադրբեջանական զավթողական ու պատմության կեղծման քաղաքականության դեմ: Գնահատելի է, որ սույն համաժողովին ներկա պատվարժան մասնակիցներդ, քաջատեղյակ լինելով պատմությանը, ձեր խոսքով պիտի միջազգային հանրությանն առավել հասու դարձնեք Արցախի և տարածաշրջանի քրիստոնեական ժառանգությանը, դրա պատկանելիությանը, ինչպես նաև պահպանության կարևորությանն ու անհրաժեշտությանը:

Վերստին Մեր օրհնությունն ու գնահատանքը բերելով համաժողովի կազմակերպիչներին և բոլոր մասնակիցներին՝ մաղթում ենք ամենքիդ քաջառողջություն, հաջողություններ ձեր գովարժան գործունեության մեջ և բարի ընթացք համաժողովի աշխատանքներին:







Տ. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒԲ
«ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ»-ԻՆ ՍԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 մարտի 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տո՛ւր տնտեսութեանդ հաշիվը»
(Ղուկ. ԺԶ. 2):

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Մեծ պահքի հոգեմտավոր ճանապարհորդութեան մեջ ենք, երբ ապաշխարութեամբ, ինքնաքննութեամբ, Ս. Գրքի ընթերցանութեամբ եւ Եկեղեցու սուրբ հայրերի խրատներով փորձում ենք հոգեպես եւ մարմնապես պատրաստվել՝ մեղքերից ազատագրված ու հոգով զորացած դիմավորելու մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը: Ինքնաանդրադարձի եւ զղջման կարեւոր այս շրջանը պատեհ առիթ է ամենքիս համար՝ ընդհանրապես մտածելու մեր ապրած կյանքի եւ հոգեւոր աճի անհրաժեշտութեան մասին, մի պահ կտրվելու աշխարհային թոհուրեւից, հոգսաշատ առօրյայից եւ անկեղծ հավատով ու սրտով Աստծուն աղոթելու, Նրա առաջ մեր սիրտը բացելու եւ իրապես փոխվելու: Մեր Եկեղեցու Տոնացույցում հաստատված Մեծ պահքի կիրակիներն ավետարանական առակների եւ սուրբգրային ընթերցվածքների միջոցով նաեւ հնարավորութիւն են տալիս յուրաքանչյուրիս՝ մեզ տեսնելու այդ ամենի մեջ եւ մտորելու, թե ինչ կանեինք այս կամ այն իրադրութեան ժամանակ, ինչպէս կվարվեինք այդ մարդկանց փոխարեն:

Եղեմական պարտեզում վայելում էինք Աստծու ներկայութիւնը եւ անհոգս, ուրախ ապրում, բայց մեր անհնազանդութեան պատճառով զրկվեցինք ամեն ինչից եւ արտաքսվեցինք դրախտից՝ դատապարտվելով այսուհետ երեսի քրտինքով, տանջանքով եւ անդուլ աշխատանքով

մեր օրերն անցկացնելու: Ցավոք, մեղքի պատճառով խզվեց նաեւ Աստված—մարդ անմիջական հաղորդակցությունը: Մարդկային կյանքի դեգերումներում կրտսեր եւ ավագ որդիներ դարձանք, բայց երբ զղջացինք եւ անդրադարձանք մեր կյանքին, երկնավոր Հայրը մեզ կրկին գրկաբաց ընդունեց, որովհետեւ սիրում է մարդ արարածին եւ միշտ սպասում:

Եւ այսօր Մեծ պահքի չորրորդ կիրակին է, որ անվանում ենք «Տնտեսի կիրակի»՝ նկատի ունենալով միայն Ղուկասի Ավետարանում պահանջված զարմանալի մի պատմություն: Եւ այսպես՝ մեր Տերն Իր աշակերտներին, ասել է թե՛ բոլոր քրիստոնյաներիս, մի առակ է պատմում: Մեծահարուստ մի մարդ տնտես ուներ, որին վստահել էր իր ամբողջ տնտեսություն կառավարումը: Ընդհանրապես հին աշխարհում մեծահարուստները շատ էին ճանապարհորդում տարբեր երկրներում, իսկ իրենց ունեցվածքը, ամբարած հարստությունները վստահում էին հատուկ եւ վստահելի մարդկանց: Նրանք, հնարավոր է, տարիներով հեռու լինեին իրենց սեփական տանից եւ հարազատ վայրերից, բայց ապրում էին այն անխախտ վստահությամբ, որ իրենց տնտեսությունն օրեցօր զարգանում եւ բարգավաճում էր, իսկ ունեցվածքը՝ ավելանում: Եւ ահա ամբաստանություն է լինում այս տնտեսի մասին, որ նա տիրոջից ստացած ունեցվածքը վատնում է:

Փորձենք մի պահ պատկերացնել նման կառավարչի հոգեվիճակը. ապրում էր բարվոք պայմաններում, որեւէ բանի կարիք չուներ, ինքն իրեն արդեն տեր էր զգում, եւ հանկարծ նրա սիրտն ու հոգին տակնուվրա է լինում, եւ մի հարց է տանջում՝ ինչ կանի կամ կասի իրական տերը վերադարձից հետո: Ինչպես աշխարհի որդիներն են կարողանում շատ արագ կողմնորոշվել, առանց դուշմին-ինչ կասկածի՝ ժամանակը ճիշտ օգտագործել, մտածում է. «Հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ» (Ղուկ. ԺԶ. 3): Եւ անմիջապես խնդրին լուծում է տալիս. կանչում է իր տիրոջ պարտապաններին եւ նրանցից մեկին ներում է պարտքերի 50 տոկոսը, իսկ մյուսին՝ 20-ը՝ այն հույսով, որ երբ իրեն զրկեն տնտեսությունից, կկարողանա այս մարդկանց տներում հանգրվանել եւ բարեկամներ ունենալ: Երբ մտովի հետ ենք գնում Հիսուսի ժամանակները, տեսնում ենք, որ ներված պարտքերը, իրոք, մեծ գումարներ էին: Հետաքրքրական է, որ նա մարդկանց կանչում էր առանձին, որպեսզի մեկը մյուսից չիմանար ներման չափը: Եւ Տերը վերադառնալով գովում է իր տնտեսի հնարամտությունը, իսկ առակը վերջանում է հետեւյալ

խոսքերով. «Այս աշխարհի որդիներն իրենց սերնդի մեջ ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները» (Ղուկ. ԺԶ. 8):

Մեր Տիրոջ պատմած այս առակը տարբեր ժամանակներում զանազան մեկնաբանություններ է ունեցել: Ուստի պատահական չէ, որ այն համարվել է ամենադժվար ընկալելին եւ ինչ-որ առումով նաեւ տարօրինակը. միթե Հիսուս գովաբանում է տնտեսի անիրավ արարքը: Այս տպավորությունը կարող ենք ունենալ սկզբում, բայց երբ ուշադիր կարդում ենք առակը եւ խորամուխ լինում նրբությունների մեջ, այլ եզրակացություն ենք հանգում: Շատ հստակ է, որ Հիսուս դատապարտում է տնտեսի արարքը, բայց գովաբանում է նրա հնարամտությունը, որ կարողացավ անելանելի վիճակից ելք գտնել եւ անգամ իր սխալ արարքով բարեկամներ շահել ապագայի համար:

Այս առակի մեծահարուստն Աստված է, իսկ տնտեսը՝ արարչագործության թագ ու պսակ հանդիսացող մարդը, որին վստահված է այս աշխարհն իբրեւ մի մեծ տնտեսություն՝ գործելու եւ բարին արարելու: Հետեւաբար Աստծու կամքն է եւ ցանկությունը, որ Իր տված բարիքները եւ շնորհները կարողանանք ճիշտ եւ տեղին գործածել: Աստված մարդուն զարգարել է բազում շնորհներով՝ նրան տեր եւ իշխան կարգելով այս աշխարհի վրա: Երբ մենք այդ շնորհները գործածում ենք բարին արարելու, մեզ նմանին օգնելու, լույս եւ սեր տարածելու համար, Աստված էլ բազմապատկում է դրանք, մեր մտքի լուսավորությունը պայծառացնում եւ հնարավորություններն ու կարողությունները զարգացնում: Մենք չգիտենք այս առակի տնտեսի կյանքի մանրամասների կամ մտածումների մասին, բայց մեկ բան հստակ է՝ նա էլ հասկացավ ներողամտության եւ գթասրտության կարեւորությունը եւ հնարամտությամբ վարվեց:

Սիրելիներ, մեր ունեցած ամեն հարստություն, շնորհ, կարողություն եւ ամենակարեւորը՝ այդքան թանկ կյանքն Աստծուց է: Ամեն ինչ տրվել է մեզ այս կյանքն արժանավայել ապրելու, բարիք գործելու, Աստծու կամքը երկրի վրա կատարելու եւ երկնքի արքայությանը նախապատրաստվելու համար: Այո՛, ինչ ունենք՝ նյութական, մտավոր եւ մարմնավոր, պարտական ենք Աստծուն, ուստի պարտավոր ենք նաեւ դրանից բաժին հանել մեր շրջապատի չունեւորներին եւ կարիքավորներին: Զէ՛ որ մեկ օր մենք էլ հավերժի ճամփորդ ենք դառնալու, իսկ երկնքում Աստծու առաջ կարող ենք արդարանալ միայն երկրի վրա կատարած մեր բարի գործերով: Ուրեմն, ամեն քրիստոնյա այս տնտեսի նման պետք է նաեւ

իր ապագայի մասին մտածի, որ Տիրոջ գալու ժամանակ գովեստի արժանանա: Բայց տեսե՞ք՝ մեզանից շատերն ինչքան կապված են այս ժամանակավոր կյանքին ու երկրային ամեն ինչին: Տպավորություն է, որ ուզում ենք ավելի շատ ապրել այս աշխարհում, հարստություն կուտակել ու վայելել, քան ամեն ինչ անել Տիրոջ հետ Իր արքայությունում հավերժ ապրելու համար: Նման մտածումների ժամանակ հիշենք անմիտ մեծահարուստին, որ ամեն ինչ ուներ, բայց մեկ օր Աստծուց լսեց. «Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են» (Ղուկ. ԺԲ. 20):

Մարդը հավիտենական էակ է եւ երկնաքաղաքացի, որի մասին հաճախ մոռանում է: Եւ այսօր այս տնտեսի օրինակով տեսնում ենք, որ մեզ տրված բոլոր բարիքները եւ հնարավորությունները միջոցներ են մեր փրկության, Աստծու մշտամնա ներկայությունը վայելելու համար: Մենք զանազան դրամական գործարքներ ենք անում, թոշակի համար նախապես գումարներ կուտակում, որպեսզի հետագայում՝ ծերության ժամանակ, արժանավայել կյանքով կարողանանք ապրել: Նույնն էլ հոգեւոր կյանքում է. պետք է բարիք գործենք, որպեսզի մեկ օր արժանանանք հավիտենական կյանքին:


Այս առակը մեզ նաեւ մտածել է տալիս հաշվետվության մասին, քանզի, ուզենք թե չուզենք, մի օր մեր արածի եւ չարածի համար հաշվետու ենք լինելու Տիրոջը: Եւ այն ժամանակ, երբ կկանգնենք անկաշառ Դատավորի առաջ, մեր կուտակած հարստությունը մեզ չի փրկելու կամ ազատելու վերահաս դատաստանից, այլ մեզ օգնելու են մեր կատարած բարի գործերն ու ապրած քրիստոնեավայել կյանքը: Այլ խոսքով՝ այս հաշվետվությունը նկատի ունենալով՝ ամեն ինչ պետք է անենք հավիտենապես ապրելու համար: Ս. Հովհան Ոսկեբերանը հաստատում է. «Ասում են՝ դժվար է փրկվելը, բայց նաեւ ամոթ է եւ աններելի, եթե չփրկվես քեզ տրված հնարավորություններից հետո»:


Պատմում են, որ մի մարդ մեռնում է եւ երկինք գնում: Եւ հրեշտակները գալիս են նրա մոտ եւ ասում. «Արի՛, քեզ պիտի տանենք Աստծու պատրաստած բնակարանը, ուր այսուհետ պիտի ապրես»: Ուրախությամբ սկսում է շրջել եւ հանկարծ ադամանդակուռ մի տուն է տեսնում, որում մարդիկ վայելում են, քեֆ անում եւ զվարճանում: Ինքը եւս ոգեւորվում է, մնալու ցանկություն հայտնում: Բայց հրեշտակը մերժում է նրան՝ ասելով. «Սա քոնը չէ, այլ բարեգործ եւ առաքինի մի մարդու, որն իր գիտակցական ամբողջ կյանքն ապրեց Աստծով եւ ամեն ինչ արեց

հավիտենապես ապրելու համար»։ Մարդն ու հրեշտակը շարունակում են առաջ ընթանալ՝ ճանապարհին հանդիպելով ոսկուց, մետաղից, փայտից եւ ստվարաթղթից պատրաստված տների, բայց ամեն անգամ մերժողական պատասխան լսում։ Եւ ահա գալիս կանգնում են թղթե մի տան առաջ, եւ հրեշտակը նրան ասում է. «Ահա՛ տունդ, սրանից հետո այստեղ պիտի ապրես»։ Զարմանում եւ զայրանում է այս մարդը, այսքան լավ տներ կային ճանապարհին, բայց իրեն բաժին հասավ այս խղճուկ թղթե տնակը, ինչո՞ւ..., ո՞ր մնաց արդարությունը։ Եւ լավում է հրեշտակի խրատական խոսքը. «Ամենքդ երկրի վրա ձեր բարի գործերով ու աստվածահաճո կյանքով եք վաստակում շաղախն ու քարերը երկնային ձեր տան։ Ինչպես ապրել ես, ինչքան ապագայիդ համար ներդրում ես արել, հիմա էլ դրան համապատասխան պիտի վայելես»։

Սիրելիներ, ամենքս պանդուխտ ենք այս աշխարհում, ուր ծնվել եւ ապրում ենք մահվան իրականության հետ, բայց առավել կյանք ունենում Բրիստոսով։ Եկե՛ք միասնաբար խորհենք եւ այս առակի տնտեսի նման մեր ապագայի համար հնարամտությամբ գործենք, Տիրոջ հավատարիմ զավակները լինենք եւ մեր կյանքի ամեն վայրկյանը նրանով իմաստավորենք։ Եւ երանի՛ նրան, ով Տիրոջից կլսի այդքան փափագելի խոսքերը. «Ապրե՛ս, բարի՛ եւ հավատարի՛մ ծառա, մտի՛ր տիրոջդ ուրախության մեջ» (Մատթ. ԻԵ. 23)։

Տիրոջ սերը, խաղաղությունը եւ ողորմությունն ամենքիս հետ լինեն, այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն։





ՈՒԹԵ ՓՈՍՍԵՔԵԼ

ՀՈՒԼԻԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԿՍՈՐԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՉ^{1*}

Ներածություն

518 թվականին Հուստինիանոս կայսրը, ինչպես հակաքաղկեդոնական բազմաթիվ այլ եպիսկոպոսների, այնպես եւ Հուլիանոս եպիսկոպոս Հալիկառնասցուն աքսորեց իրենց թեմից: Վերջինս ապաստանեց Ալեքսանդրիայում: Հուլիանոսի աստվածաբանական համոզմունքը, ըստ որի՝ մարմնի ապականությունը ոչ թե բնության, այլ մեղքի արդյունք է, պատճառ դարձավ այն պնդման, որ Քրիստոսի մարմինը, լինելով մեղքից զերծ, թերեւս չէր կարող ապականացու լինել նույնիսկ հարությունից առաջ: Քրիստոսի մարմնի անապականության (aphtharsia)²՝ նրա շեշտադրումը հակադրվեց լայն տարածում գտած փրկչաբանական ենթադրություններին եւ Անտիոքի Սեւերիոս պատրիարքի հետ կատաղի վեճի հանգեցրեց, որը նույնպես աքսորվել էր Եգիպտոս: Հուլիանոսի պնդումը, թե իր ուսմունքը հիմնված է հենց Սեւերիոսի գրվածքների վրա, չօգնեց գործին³, եւ երկարատեւ բանավեճ սկսվեց. Սեւերիոսը հակահուլիանական մի քանի ճառ գրեց, որոնց Հուլիանոսը բուռն արձագանքեց³:

¹ * Հոգվածի բնագիրը տե՛ս U. POSSEKEL, Julianism in Syriac Christianity. in: P. Bruns, H. O. Luthé (Hrsg.), *Orientalia Christiana, Festschrift für Hubert Kaufhold zum 70. Geburtstag*, Wiesbaden, 2013, էջ 437–457:

² Հուլիանոսի այս պնդման վերաբերյալ տե՛ս A. GRILLMEIER, T. HAINTHALER (eds.), *Christ in Christian Tradition*, vol. 2/2: *The Church of Constantinople in the Sixth Century*, Louisville, 1995, որն առաջին անգամ հրատարակվել է որպես A. GRILLMEIER, *Jesus der Christus im Glauben der Kirche*, Bd. 2,2. *Die Kirche von Konstantinopel im 6. Jahrhundert*, Freiburg, 1989, էջ 80:

³ Հուլիանոսի աստվածաբանական գրվածքները պահպանվել են միայն նրա ընդդիմախոսների երկերում առկա որոշ հատվածներում: Հուլիանոսի ճառերը ներառում են Տումարը, դրա երկրորդ՝ ընդլայնված տարբերակը, «Ջատագովություն»-ը, «Adversus blasphemias Severi» եւ «Disputatio adversus Achillem et Victorem Nestorianos» երկերը: Այդ հատվածները խմբագրել է Ռենե Դրագվեն (տե՛ս R. DRAGUET, *Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ. Etude d'histoire littéraire et doctrinale suivie des*

Կարելի էր ենթադրել, որ Սեւերիոսի երկարաշունչ հերքումները՝ զուգորդված միաֆիզիտ համայնքում պատրիարքի ունեցած բարձր դիրքով, շուտով վերջ կդնեին հուլիանական շարժմանը, սակայն կան վկայություններ, որ Հուլիանոսի հետեւորդները՝ իրենց հակառակորդներին հայտնի որպես «աֆթարդոկետականության հետեւորդներ» կամ «երեւութականներ», տարածվել են ողջ Մերձավոր Արեւելքում, ստեղծել իրենց իսկ նվիրապետությունը եւ դարեր շարունակ մրցակից միաֆիզիտ եկեղեցական համայնք են հանդիսացել: Հուլիանականներին կարելի էր հանդիպել Փոքր Ասիայում, Հայաստանում, Սիրիայում ու Եգիպտոսում (որտեղ հուլիանական Գայանուն էր բազմած հայրապետական աթոռին, թեեւ՝ ժամանակավոր): Մեր ուշադրությունն աշխտեղ, սակայն, սեւեռված է լինելու ասորախոս շրջանների հուլիանականությանը:

Հուլիանականության տարածումը Հուլիանոսի մահվանը հաջորդած առաջին տասնամյակում

Հուլիանոսի եւ Սեւերիոսի գրական վեճերը կարելի է թվագրել մոտ 520-ից մինչեւ 527 թվականով⁴, երբ մահացավ Հուլիանոսը: Արդեն

fragments dogmatiques de Julien (Texte syriaque et traduction grecque), Louvain, 1924): «Ճառ ընդդեմ Մանիքեոսի» աշխատության հատվածները խմբագրել է Ռուդոլֆ Ռիդինգերը՝ լատիներեն թարգմանության օգնությամբ (տե՛ս R. RIEDINGER, Acta conciliorum oecumenicorum (ser. 2), 1, Berlin, էջ 1984 էջ 332f): Հուլիանոսի գրվածքներից ամբողջական պահպանվել է միայն երեք նամակ. քննական բնագիրը՝ ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ, տե՛ս R. HESPEL, Sévère d'Antioche, La polémique antijulianiste, CSCO 444 445 / Syr. 104–105, Louvain, 1964, էջ 206–209 (բնագ.), էջ 159–162 (թարգմ.): Հուլիանոսի եւ նրա աստվածաբանության վերաբերյալ տե՛ս հետեւյալ ակնարկները՝ M. PENN, Julian of Halicarnassus, in: “Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage”, Gorgia, 2011, էջ 236. CH. KANNENGIESSER, M. Stein, Iulianus VI (Julianos von Halikarnassos), in: RAC 19 (2001), էջ 505–508. S. MÜLLER ABELS, Julian von Halikarnaß, in: „Lexikon der antiken christlichen Literatur“, Freiburg, 1998, էջ 407. H.—U. ROSENBAUM, Julianus von Halikarnassus, in: „Biographisch-bibliographisches Kirchenlexikon“ Bd. 3, Hamm, 1992, էջ 792–794: Հուլիանոսի քրիստոսաբանության մանրակրկիտ քննարկումը տե՛ս R. DRAGUET, Julien d’Halicarnasse. A. GRILLMEIER, T. HAINTHALER (eds.), Christ in Christian Tradition 2/2, էջ 79–111. Նաեւ՝ R. P. CASEY, Julian of Halicarnassus, “Harvard Theological Review” 19 (1926), էջ 206–213: Սեւերիոսի մասին տե՛ս Պոլին Ալենի եւ Հայվարդի վերջերս կատարած ուսումնասիրությունը՝ P. ALLEN, C. T. R. HAYWARD, Severus of Antioch, The Early Church Fathers, London: Routledge, 2004, (առկա գրականությամբ հանդերձ): Միաֆիզիտների քրիստոսաբանության մասին տե՛ս J. LEBON, La christologie du monophysisme syrien, in: A. GRILLMEIER, H. BACHT (Hrsg.), Das Konzil von Chalkedon: Geschichte und Gegenwart, Bd. 1: Der Glaube von Chalkedon, Würzburg, 1951, էջ 425–580:

⁴ Տե՛ս S. MÜLLER-ABELS, Julian von Halikarnaß, էջ 407:

հաջորդ՝ 528 թ. հասանելի էին Հուլիանոսի որոշ նամակների, ինչպես նաև Սեբերիոսի հերքումների՝ Պողոս եպիսկոպոս Կալլինիկոսացու⁵ պատրաստած ասորերեն տարբերակները: Պողոսը եպիսկոպոս դարձավ 509 թվականից ոչ ուշ⁶ եւ միաֆիզիտ բազմաթիվ այլ առաջնորդների հետ միասին 519-ին Հուստինիանոսի կողմից աքսորվեց իր թեմից: Պողոսը, թերեւս, գիտակցում էր Սեբերիոսի ու Հուլիանոսի աստվածաբանական վեճի կործանարար ներուժը եւ գուցե քաջատեղյակ էր արդեն 520-ական թվականներին Կալլինիկոսի (ժամանակակից Ռաքքա) շրջակայքում հաստատված հուլիանականների ներկայության մասին, ուստի նա անմիջապես լծվեց Սեբերիոսի հակահուլիանական ճառերի եւ զազրելի հակառակորդ Հուլիանոսի՝ այդ հարցին առնչվող որոշ գրվածքների ասորերեն թարգմանությանը: Շարժման լայն տարածման մասին է վկայում թե՛ Հուլիանոսի եւ թե՛ Սեբերիոսի գրվածքների թարգմանության արագությունը:

Կալլինիկոսի թեմում հուլիանականների ներկայության մասին փաստական ապացույցները վերցված են ասորական մի արձանագրությունից, որը հայտնաբերվել է Բիր էլ-Գանտարիում՝ Ռաքքայի եւ Ռեշայնայի միջեւ գտնվող գյուղում: Այս մակագրությունը՝ փորագրված երկու մեծ, ուղղանկյուն քարե տախտակների վրա, որոնցից յուրաքանչյուրի գազաթին զարդաձեւ խաչանշան կա, բացահայտորեն նշում է «բոլոր երեւութականներին»՝ մերժելով «յուրաքանչյուրին, ով չի խոստովանում՝ Բանը, որ Աստծուց է, չարչարվեց մարմնով ու խաչվեց մարմնով եւ

⁵ Պողոսի թարգմանության թվականի մասին նշվում է Vat. Syr. 140, fol. 145v ձեռագրի հիշատակարանում (տե՛ս Giuseppe Simone Assemani, Bibliothecae Apostolicae Vaticanae Codicum Manuscriptorum Catalogus, vol. 3, Rome, 1759, էջ 223–232, սյուն. 232): Այս ձեռագիրն ընդգրկում է Հուլիանոսի երեք նամակների ասորերեն տարբերակը՝ ուղղված Սեբերիոսին (տե՛ս G. S. ASSEMANI, Catalogus, էջ 223–225. նաեւ՝ LUCAS VAN ROMPAY, Pawlos of Kallinikos, “Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage”, էջ 323–324): Պողոսի թարգմանության վերաբերյալ տե՛ս Դանիել Քինգի ուսումնասիրությունը՝ D. KING, Paul of Callinicum and his place in Syriac Literature, «Muséon» 120 (2007), էջ 327–349:

⁶ Պողոս Կալլինիկոսացին եպիսկոպոս էր 509-ին՝ ըստ Ռաքքայի/Կալլինիկոսի մոտակայքում գտնվող Թալ Բիայում հայտնաբերված մի խճանկար արձանագրության: Նա 519 թ. Հուստինիանոսի կողմից աքսորվել է իր թեմից (տե՛ս L. VAN ROMPAY, Pawlos of Kallinikos, էջ 323):

⁷ Գիտական քննարկման առարկա է դարձել այն, թե, բացի Սեբերիոսի հակահուլիանական գրվածքներից, ինչ է հատկապես թարգմանել Պողոսը (տե՛ս D. KING, Paul of Callinicum և L. van Rompay, Pawlos of Kallinikos, էջ 323f.):

հարույթյուն առավ մեռելներից»⁸: Այս արձանագրությունը թվագրված չէ, բայց վերագրվել է Զ. դարին⁹:

Հուլիանականության վաղ կենտրոններից մեկը Հալեպի հարավ-արեւելքում տեղակայված Հռոմեական Սիրիա I նահանգի Գաբուլա քաղաքում գտնվող Մար Իսահակի վանքն էր¹⁰: Սա վանական կարեւոր համայնք էր, որը ծավալուն նամակագրություն էր վարում. այն Հակոբ Սրճեցու (մահ. 521 թ.) երկարաշունչ նամակի հասցեատերն էր, իսկ Բեթ Արշամցի Սիմեոնն իր՝ Նագրանի նահատակների մասին հայտնի պատմությունն ուղարկել էր Գաբուլայի Սիմեոն վանահորը¹¹: Իր «Նկեղեցու պատմությամբ» մեջ Կեղծ-Զաքարիա Հռետորը նշում է, որ Մար Իսահակի համայնքը եւ վանահայր Սիմեոնը, թեեւ «գեռ նախանձախնդիր էին հավատքի նկատմամբ», սակայն շուտով՝ 520-ական թվականների վերջին, «պղծվեցին Հուլիանոս Երեւութականի հերետիկոսությամբ»¹²: Թե-

⁸ Արձանագրության ասորերեն բնագիրը՝ ֆրանսերեն թարգմանությամբ, եւ քարե տախտակների նկարագրությունը՝ Պոլ Մուտերդի աշխատության մեջ (տե՛ս P. MOUTERDE, Une inscription syriaque récemment trouvée en Haute-Djeziré, «Les Annales archéologiques de Syrie» 10 (1960), էջ 87–92): Մեծ տախտակը 103x30 սմ է: Դրա գունավոր պատկերն ու նկարագրությունը տե՛ս S. P. BROCK, D. G. K. TAYLOR (eds.), The Hidden Pearl: The Syrian Orthodox Church and its Ancient Aramaic Heritage, vol. 2, Rome, 2001, էջ 24, որի քննարկումը 33 էջում է. տե՛ս նաեւ F. BRIQUEL CHATONNET, A. DESREUMAUX, Les inscriptions syriaques de Turquie et de Syrie, in: F. BRIQUEL CHATONNET, M. DEBIÉ, A. DESREUMAUX ed., Les inscriptions syriaques, Etudes syriaques 1, Paris, 2004, էջ 15–27, այստեղ՝ էջ 23: Քարե տախտակը պատկերված է այս հատորի տիտղոսաթերթին:

⁹ Տե՛ս S. P. BROCK, D. G. K. TAYLOR (eds.), Hidden Pearl, vol. 2, էջ 24, 33:

¹⁰ Գաբուլայի տեղանիությունը տե՛ս R. J. A. TALBERT (ed.), Barrington Atlas of the Greek and Roman World, Princeton, 2000, քարտեզը՝ էջ 67 F4. Նաեւ՝ քարտեզ 6, G. GREATREX, R. R. PHENIX, C. B. HORN et al. (eds.), The Chronicle of Pseudo Zachariah Rhetor: Church and War in Late Antiquity, Translated texts for Historians 55, Liverpool, 2011, էջ 472:

¹¹ Տե՛ս JACOB OF SARUG, Letter 19, ed. G. Olinder, Iacobi Sarugensis epistulae quotquot supersunt, CSCO 110 / Syr. 57, Louvain, 1952, էջ 102–129: Սիմեոն Բեթ Արշամացու նամակը հանդիպում է Կեղծ-Զաքարիայի երկում. տե՛ս PSEUDO-ZACHARIAH RHETOR, Church History 8.3, խմբագրված է լատիներեն թարգմանության օգնությամբ. նաեւ՝ E. W. BROOKS, Historia ecclesiastica Zachariae Rhetori vulgo adscripta, 4 vols., CSCO 83–84, 87–88 / Syr. 38–39, 41–42, Paris, 1919–1924, here: CSCO 84 / Syr. 39, 64–74: Անգլերեն թարգմանությունը տե՛ս G. GREATREX, R. R. PHENIX, C. HORN et al. (eds.), Chronicle of Pseudo-Zachariah, 285–293:

¹² Տե՛ս PS.-ZACHARIAH RHETOR, Church History 8.5d, ed. E. W. Brooks, CSCO 84 / Syr. 39, 81, 14–17; English transl. G. GREATREX, R. R. PHENIX, C. HORN et al. (eds.), Chronicle of Pseudo-Zachariah, էջ 306: Կեղծ-Զաքարիան որոշակիորեն չի նշում, թե երբ են այդ վանականները հարել հուլիանականությանը: Միաֆիզիտ վանական համայնքների աջոսրման մասին առավել ընդհանուր գծերով տե՛ս V. L. MENZE, Justinian and the Making of the Syrian Orthodox Church, Oxford Early Christian Studies, Oxford, 2008, էջ 125–134: Միքայել Մեծ պատրիարքը եւս արձանագրում է այս զարգացումը, բայց նշում է, որ Սիմեոնն աջոսրվելուց հետո միայն ընդունեց հուլիանական վարդապետությունը. տե՛ս MICHAEL THE SYRIAN, Chronicle IX 14, ed.

րեւս այս Սիմեոնն էր, որ հետագայում հուլիանականների եպիսկոպոս ձեռնադրվեց: Ինչպես կտեսնենք, Գաբուլայի Մար Իսահակի այս վանքը ոչ միայն հուլիանական շարժման ամենավաղ կենտրոններից, այլ նաև ամենատեսական ու ամենաաշխույժներից մեկն էր, որ դեռևս ծաղկում էր ապրում Ը. դարի վերջին:

Հուլիանական շարժման վաղ տարածման համար կարեւոր աղբյուր է Հովհաննես Թելլացու (482–538 թթ.) վարքը՝ կազմված ոմն Եղիայի կողմից¹³: Հովհաննեսը մեծացել եւ կրթություն է ստացել Կալլինիկոսում, իսկ 507 թ. մտել է Մար Զաքարյի մոտակա վանք¹⁴: 519 թ. նա ձեռնադրվել է Թելլայի (հայտնի է նաև որպես Կոնստանտինա) եպիսկոպոս¹⁵, բայց երկու տարի չանցած՝ 521 թ., պաշտոնանկ է եղել¹⁶: Դրանից հետո Հովհաննեսը թաքնված է մնացել, գաղտնի տեղից տեղ գնացել վերին Միջագետքում եւ Պարսկաստանում, Հաղորդություն տվել¹⁷ եւ բազմաթիվ քահանաներ ու սարկավազներ ձեռնադրել՝ ոչ քաղկեդոնականների ծառայելու համար¹⁸: Հուլիանականները բազմիցս անդրադարձել են Հովհաննեսի «Վարք»-ին, թեև Եղիան դիտավորյալ էր նախընտրել նյութի անտեսումը՝ նկատելիորեն շեշտելով. «Ես քիչ ժամանակ ունեմ, որ խոսեմ այն պաշքարի մասին, ինչի մեջ նա (Հովհաննեսը) ներգրավված

Gregorios Yuhanna Ibrahim, The Edessa-Aleppo Syriac Codex of the Chronicle of Michael the Great (= vol. 1 of George A. Kiraz (general ed.), Texts and Translations of the Chronicle of Michael the Great), Piscataway, NJ: Gorgias Press, 2009, 270a, 1–3: *Խմբագրումը (Ֆրանսերեն թարգմանությունը հանդերձ) տես* J. – B. CHABOT, Chronique de Michel le Syrien, 4 vols., Paris, 1899–1910, *լուսատիպ վերատպ.* Brussels: Culture et Civilisation, 1963), vol. 2, 172 (թարգմանություն), vol. 4, 267 (բնագիր):

¹³ *Խմբագրված է է. Վ. Բրուքսի լատիներեն թարգմանության օգնությամբ. տես* E. W. BROOKS, Vitae virorum apud monophysitas celeberrimorum, CSCO 7–8 / Syr. 7–8, Louvain, 1907: Հովհաննեսի կենսագրության վերաբերյալ տեղեկություն է պահպանվել նաև Հովհաննես Եփեսացու երկում. տես JOHN OF EPHESUS, Lives of the Eastern Saints, ed. with English transl. E. W. Brooks, John of Ephesus, Lives of the Eastern Saints: Syriac Text edited and translated, 3 vols., PO 17.1, 18.4, 19.2, Paris, 1923–1925, here: PO 18.4, 513–526: Հովհաննես Թելլացու մասին հակիրճ ամփոփումը տես V. MENZE, Yuhanon of Tella, “Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage”, էջ 447f.:

¹⁴ Մար Զաքարյ վանքի հստակ տեղանքը հայտնի չէ, սակայն որոշ գիտնականներ կարծում են, որ դա թերեւս Թալ Բիայում պեղված վանքն է. տես օրինակ՝ M. KREBERNIK, Schrift funde aus Tall Bi’a 1990, „Mitteilungen der Deutschen Orientgesellschaft“ 123 (1991), էջ 41–70:

¹⁵ Տես ELIYA, Life of John of Tella, ed. Brooks, 54.12–17:

¹⁶ Տես անդ, 56.22–57.1:

¹⁷ Քննարկումը տես V. L. MENZE, Justinian, էջ 158–165:

¹⁸ Հովհաննեսի քահանաներ ձեռնադրելու մասին տես ELIYA, Life of John of Tella, ed. Brooks, 58.25–59.7: Եղիան ընդգծում է, որ Հովհաննեսը շարունակում էր ձեռնադրել ոչ քաղկեդոնական հոգեւորականներ՝ միայն աքսորյալ մետրոպոլիտից ու եպիսկոպոսներից արտոնություն ստանալուց հետո:

էր այն հերձվածի պատճառով, որը ծագել էր Հալիկաոնասի նախկին եպիսկոպոս այդ Հուլիանոսի արտառոց վարդապետութեանը հավատարիմ մնացածներից»¹⁹; Եղիայի՝ «հերձված» բառի ընտրությունը եւ նրա անդրադարձը հուլիանականների հետ շարունակական պայքարին ցույց են տալիս, որ Սեւերիոսի ու Հուլիանոսի կողմնակիցների միջեւ թեժ հակամարտությունը խորապէս պառակտել էր միաֆիզիտ համայնքները: Հովհաննէսը եւ նրա գործընկերները գրությունների միջոցով ստեղծեցին ոչ քաղկեդոնական առաջնորդների ու համայնքների ցանց, եւ «ամենուր» ուղարկված նամակներով, ինչպէս սրբոց կենսագիրն էր ասում, Հովհաննէսը փորձեց կասեցնել հուլիանականության ալիքը: 532/533 թ. Հովհաննէս Թելլացին ընդգրկվեց միաֆիզիտ եպիսկոպոսների պատվիրակություն՝ Հուստինիանոս կայսեր հետ Կոստանդնուպոլսում բանակցելու համար²⁰: Հովհաննէսը նույնիսկ նամակ ուղարկեց Լախմիդ իշխան Մունդիր Գ.-ի (մահ. 554 թ.) արքունիք՝ զգուշացնելով նրան Հուլիանոսի վարդապետության մասին: Ըստ Եղիայի՝ Հովհաննէսի անխնա ջանքերի շնորհիվ բազմաթիվ հուլիանականներ վերադարձան Սեւերիոսի կողմը²¹, սակայն անհնար է գնահատել, թե այս պնդման մեջ սրբոց կենսագիրը որքանով է ցանկալին իրականության տեղ ներկայացրել²²:

Ի վերջո, հուլիանական մի վանական դարձավ Թելլայի նախկին եպիսկոպոսի մահվան պատճառը: Կաշառվելով՝ ճգնաժամը դավաճանաբար թշնամիներին հայտնեց Հովհաննէսի խցի տեղը²³: Հովհաննէսն իր վերջին թաքստոցն ընտրել էր Պարսկաստանի տարածքում, ամենայն հավանականությամբ հյուսիսային շրջանում՝ մի անհայտ վայրում: Ելնելով

¹⁹ Տէս ELIYA, Life of John of Tella, ed. Brooks, 62.13–16:

²⁰ Տէս ELIYA, Life of John of Tella, ed. Brooks, 59.8–60.11, 62.16–21: Վեճը նկարագրվում է մի փաստաթղթում՝ խմբագրված Ֆ. Նաուի Ֆրանսերեն թարգմանության օգնությամբ. տէս F. NAU, Textes monophysites, PO 13.2, Paris, 1919, էջ 192–196. նաեւ J. SPEIGL, Das Religionsgespräch mit den severianischen Bischöfen in Konstantinopel im Jahre 532, AHC 16 (1984), էջ 264–285:

²¹ Տէս ELIYA, Life of John of Tella, ed. Brooks, 62.20–21:

²² Տէս անդ, 62.16–63.4: Եղիայի բնագրից պարզ է դառնում, որ այստեղ նա խոսում է հատկապես այն նամակների մասին, որոնցում քննվում է հուլիանականության հարցը: Գիտնականները քննարկում էին՝ արդյո՞ք հնարավոր է, որ Լախմիդ արքա Մունդիրը քրիստոնյա լիներ, սակայն դա անհավանական է թվում. տէս օրինակ՝ T. HAINTHALER, Christliche Araber vor dem Islam, Eastern Christian Studies 7, Louvain, 2007, էջ 88–90: Սակայն քանի որ Եղիան գրում է՝ Հովհաննէսը նամակ է ուղարկել Մունդիրի արքունիք, ապա հնարավոր է, որ նա գրել է ոչ թե անձամբ արքային, այլ Լախմիդի արքունիքի մի ոմն քրիստոնյա առաջնորդի: Լախմիդ կառավարիչների օրոք քրիստոնեության մասին տէս T. HAINTHALER, Christliche Araber, էջ 83–93:

²³ Տէս ELIYA, Life of John of Tella, ed. Brooks, 67.6–15:

հուլիանականությանն առնչվող մտահոգությունից, ինչպես երեւում է նրա «Վարք»-ից, կարելի է վստահաբար ենթադրել, որ այս ճգնավորը միակը չէր, որ ընդունել էր «երեւութականների» վարդապետությունը: Հուլիանական Աբդիշոն, որի մասին կիսոսենք ավելի ուշ, իսկապես եկել էր հենց նույն՝ հյուսիսային Միջագետքի տարածաշրջանից:

Ակնհայտ է, որ Հուլիանոսի մահից հետո մեկ տասնամյակ նրա հետեւորդներին կարելի էր հանդիպել ողջ ասորախոս Մերձավոր Արեւելքում եւ նույնիսկ Սասանյան Պարսկաստանի խորքերում՝ Ալ-Հիրայի շրջանում, որտեղ ծառայության համար Զ. դարակեսին հուլիանական եպիսկոպոս ձեռնադրվեց: Ինչ վերաբերում է Ալ-Հիրայի տարածաշրջանին (հայտնի է նաեւ որպես Հիրթա²⁴), ապա կարող ենք նշել, որ հուլիանականությունն այնտեղ պահպանվել է նույնիսկ Ը. դարում, քանի որ Տիմոթեոս Ա. պատրիարքը (մահ. 823 թ.) մի նամակում նշում է, որ «մինչ այժմ» Հիրթայի մոտ գտնվող Նագրան քաղաքի քրիստոնյաները «կրում են Հուլիանոսի չարության լուծը»²⁵:

Հատկանշական է, որ աղբյուրները հիմնականում խոսում են հուլիանական վանականների կամ ճգնավորների մասին: Մենք չգիտենք՝ որքանով են աշխարհիկ քրիստոնյաներն ընդունել Հուլիանոսի ուսմունքը, բայց կարող ենք ենթադրել՝ եթե տեղական վանքը, որը հաճախ քրիստոնեական կյանքի հոգեւոր կենտրոնն էր համարվում, հավանություն տար Հուլիանոսի ուսմունքին, ապա նույն կերպ կվարվեին գոնե որոշ աշխարհիկ քրիստոնյաներ: Բացի այդ՝ մկրտությանն առնչվող մտահոգությունը՝ արտահայտված եկեղեցական կանոններում, ցույց է տալիս, որ հուլիանականությունն ազդեցություն էր գործել վանքի պատերից դուրս գտնվող քրիստոնեական առավել խոշոր համայնքի վրա:

Հովհաննես Թելլացու գրվածքներն արտացոլում են նրա մտահոգությունը Հուլիանոսի աստվածաբանության առնչությամբ: «Հավատքի դավանության» մեջ, որը կազմվել է հավանաբար Հովհաննեսի մահից քիչ առաջ՝ 538 թ., նա բացահայտ չի խոսում հուլիանականության մասին, սակայն հերքում է վերջինիս բնորոշ ուսմունքները, օրինակ՝ «...մարդեղացած Որդու միությունը տեղի ունեցավ ո՛չ երեւութապես եւ ո՛չ էլ

²⁴ S. A. F. L. BEESTON, I. SHAHID, al-Hira, "The Encyclopedia of Islam", vol. 3, Leiden, 1971, էջ 462f.:

²⁵ S. Timothy I, Letter 27, ed. with Latin transl. Oscar Braun, Timothei patriarchae 1 epistulae, CSCO 74—75 / Syr. 30—31, Louvain, 1953, էջ 151, 3—7 (բնագ.), 102 (թարգմ.):

պատրանքով»²⁶։ Սակայն հուլիանականության դեմ Հովհաննեսի դիրքորոշման ուղղակի ապացույցը մեզ է հասել Հովհաննեսի համահեղինակության մասին գրված նամակի միջոցով, որից միայն մի հատված էր հայտնի նախկինում²⁷։ Բարեբախտաբար, նամակի ամբողջական տարբերակը պահպանվել է Հարվարդի համալսարանին պատկանող ձեռագրում (Harvard Syriac 91), որը ԺԲ. դարում զարմանալի կերպով տեղ է գտել Ամիդի եպիսկոպոս Դիոնիսիոս բար Սալիբի վիճաբանություններում²⁸։ Այս նամակը մոտ 530 թ. կազմել է Հովհաննես Թեղլացին՝ եւս չորս եպիսկոպոսների՝ Սերգիոս Կյուրենացու, Մարիոն Սուրացու, Նոննոս Կիրկեսիոնացու եւ Թովմաս Դարացու հետ միասին։ Այն ստորագրել են եւս երեք նվիրապետներ՝ Պետրոս Ռեշայնացին, Փիլոքսենոս Դուլիչեցին եւ Թովմաս Գերմանիկացին, որոնք ենթադրաբար չեն մասնակցել դրա կազմությանը, սակայն ցանկացել են աջակցել նամակի պատգամին։ Բոլոր ստորագրողները Սեւերիոս Անտիոքացու համայնքի մաս էին կազմում։ Փաստորեն, հենց Սեւերիոսն էր տասը նամակ գրել Հովհաննես Թեղլացուն, Ֆիլոքսենոս Դուլիչեցուն եւ Թովմաս Դարացուն, որոնք բոլորն էլ այդ ժամանակ թաքնվում էին Մարդինի մոտակայքում²⁹՝ հորդորելով նրանց հովվական նմանօրինակ նամակ գրել աքսորված վանահայրերին ու վանականներին, որպեսզի թույլ չտան նրանց միանալ հուլիանական

²⁶ *Stē* JOHN OF TELLA, Confession of Faith, ed. with English transl. V. Menze and K. Akalin, John of Tella's Profession of Faith: The Legacy of a Sixth-Century Syrian Orthodox Bishop, Piscataway, 2009, էջ 79 (fol. 223a)։ «Հավատի դավանության» թվականի վերաբերյալ տես անդ, էջ 17։ «Հավատի դավանության» մեջ Հովհաննեսը քննում է Քրիստոսի չարչարանքների բնույթը, fol. 223a-b (ed. V. Menze and K. Akalin, էջ 81–83)։

²⁷ Հովհաննեսի համահեղինակության մասին գրված նամակի մի հատված (BL Add. 14,663) խմբագրել է Ռենե Դրագյեն. տես R. DRAGUET, Une pastorale antijulianiste des environs de l'année 530, «Muséon» 40 (1926), էջ 75–92։

²⁸ Այս նամակի ձեռագիր այլ օրինակներ պահպանվել են Դիոնիսիոսի վիճաբանությունների այլ ժողովածուներում (տես A. VÖÖBUS, Entdeckung neuer Handschriften des antijulianischen Pastoralischreibens, OrChr 66 (1982), էջ 114–117)։ Վոթբուսը ծանոթ չէր Harvard Syriac 91-ին։ Այս նամակի մի կարճ հատված (որն ընդգրկում էր միայն նախաբանը եւ ստորագրողների անունները վերջում) խմբագրել է Իգնատիոս Եփրեմ Բ. Ռահմանին (տես IGNATIUS EPHRAEM II RAHMANI, Studia syriaca seu collectio documentorum hactenus ineditorum ex codibus syriacis. Primo publicavit, latine vertit notis que illustravit, vol. 1, Libano, 1904, էջ 25f. (բնագ.), էջ 24f. (թարգմ.)։ Հայտնի չէ, թե Ռահմանին ինչ ձեռագրից է օգտվել։

²⁹ *Stē* SEVERUS, Letter V. 14, ed. with English transl. E. W. Brooks, The Sixth Book of the Select Letters of Severus, Patriarch of Antioch, in the Syriac Version of Athanasius of Nisibis, 2 vols., London, 1902–1904, vol. 2, էջ 389–394 (բնագ.), էջ 345–350 (թարգմ.), նաեւ՝ Leiter V. 15, ed. անդ, 395.16–23 (բնագ.), 352 (թարգմ.)։ Սեւերիոսն այս եպիսկոպոսների մասին խոսում է որպես «Մարդե սարի խոստովանողներ»։ Հստ էություն՝ Սեւերիոսն այստեղ նկատի ուներ Մարդինի շրջակայքը, որի տեղանքին, հավանաբար, նա իսկապես ծանոթ չէր։

կողմին³⁰։ Եպիսկոպոսները, որոնք առավել ծանոթ էին տեղի իրավիճակին, քան իրենց պատրիարքը, իրենց նամակն ուղղեցին հենց Ամիդի թեմի վանահայրերին ու վանականներին՝ ներկայացնելով սուրբգրային եւ աստվածաբանական փաստարկներ Հուլիանոսի՝ Քրիստոսի մարմնի անապականության վարդապետության դեմ։ Եպիսկոպոսներն իրենց պնդումները հիմնավորեցին Սեւերիոսի եւ Իսահակ Անտիոքացու երկերի հատվածների մեջբերումներով՝ այդպիսով կանխատեսելով հաջորդ դարի հակահուլիանական աշխատությունների ձևը, երբ բանավեճում գերակշռում էր ծաղկաքաղը։ Այստեղ բավարար տեղ չկա՝ այս նամակը մանրամասն ներկայացնելու համար, որի հրատարակությունը ներկայումս պատրաստում է սույն հեղինակը։ Ինչ վերաբերում է հուլիանական շարժմանը, ապա նամակը բացահայտում է, որ մինչ 530 թ. Ամիդի շրջակայքը դարձել էր դրա կենտրոններից մեկը։ Ավելին՝ այն հաստատում է արդեն իսկ ձևավորված տպավորությունը, որ հուլիանականությունը տարածվել էր հատկապես վանականների շրջանում՝ թերեւս համահունչ լինելով վանական նվիրումին ու հոգեւոր վիճակին։ Ճգնավորները, վանահայրերն ու վանական ողջ համայնքները հարում էին հուլիանականությանը։

Հուլիանականների ձեռնադրությունները

Քաջ հայտնի է, որ Սեւերիոսի դաշնակից միաֆիզիտներն արագորեն ստեղծեցին եկեղեցական նվիրապետություն՝ ձեռնադրելով հարյուրավոր քահանաների եւ սարկավագների, իսկ 540-ական թվականներից սկսած՝ հիմնեցին միաֆիզիտ եպիսկոպոսություն³¹։ Մեծ հաշվով նույն գործընթացը կարելի է վերագրել նաեւ հուլիանականներին, թեեւ նրանք յուրօրինակ խնդիրների էին բախվում։ Ի տարբերություն սեւերիոսական միաֆիզիտների, որոնց մեջ բազմաթիվ եպիսկոպոսներ կային, հուլիանականներն իրենց հիմնադրի մահից հետո կարծես եպիսկոպոսների պակաս ունեին։ Հետեւաբար որոշ հուլիանականներ ցանկացան

³⁰ Սեւերիոսի՝ այս եպիսկոպոսներին ուղղված նամակն ավարտվում է հովվական նամակի պահանջով. տե՛ս SEVERUS, Letter V. 14, ed. Brooks, էջ 393–394 (բնագ.), էջ 349–350 (թարգմ.)։

³¹ Այս գործընթացը վերջերս ուսումնասիրել է Մենզեն. տե՛ս V. MENZE, Justinian. նաեւ՝ E. HONIGMANN, Evêques et évêchés monophysites d'Asie antérieure au VI^e siècle, CSCO 127/Sub. 2, Louvain, 1951. W. H. C. FRED, The Rise of the Monophysite Movement: Chapters in the History of the Church in the Fifth and Sixth Centuries, Cambridge, 1972։

ձեռնադրվել սեւերիոսական եպիսկոպոսների կողմից՝ առանց բացահայտելու իրենց վարդապետական նախընտրությունը: Ձեռնադրության (ենթադրաբար՝ քահանայական) համար Ալեքսանդրիա մեկնած հուլիանականների հարցը քննում են միաֆիզիտ եպիսկոպոսները՝ այսպես կոչված «Արեւելում գրված գլուխներ»-ում, որը 530-ական թվականների սկզբին կազմված եկեղեցական կանոնագիրք է³²: Այս կանոնները սահմանում են, որ եթե հուլիանական հոգեւորականները դարձի գան եւ ցանկանան միանալ սեւերիոսական միաֆիզիտներին, «բավարար կլինի գործադրել այդ հերետիկոսությունից դարձի եկածներին վերաբերող կանոնները»³³: Ապաշխարության շրջանը կարելի է մի կողմ թողնել, եթե հուլիանական հոգեւորականները վստահեցնեն, որ ձեռնադրության պահին արդեն իսկ մերժել են հուլիանական վարդապետությունը:

Հովհաննես Եփեսացին (մոտ 507–589 թթ.)՝ միաֆիզիտ առաջնորդ եւ եկեղեցական պատմաբան, պատմում է մի դրվագի մասին, որը հետագայում ընդգրկվել է «Զոմինի տարեգրության» մեջ, թե ենթադրաբար ինչ տարօրինակ միջոցների են դիմել հուլիանականները՝ եպիսկոպոս ունենալու իրենց հուսահատ ջանքերում: Երբ հուլիանականության համախոհ Պրոկոպիոս եպիսկոպոս Եփեսացին, որը դարձի էր եկել ու նզովել Հուլիանոսին մինչ կրկին հուլիանական ազանդին միանալը, մահամերձ էր 548/549 թ., նրա հետեւորդները հորդորում էին նրան իրավահաջորդ նշանակել³⁴: Պրոկոպիոսը մերժեց այս պահանջը՝ համարելով այն հակականոնական, իսկ նրա մահից հետո հետեւորդները մի հնարքի դիմեցին.

³² Այս կանոնագրի վերաբերյալ տե՛ս A. VÖÖBUS, Syrische Kanonensammlungen: Ein Beitrag zur Quellenkunde, CSCO 307 / Syr. 35, Louvain, 1970, էջ 167–175, որտեղ հեղինակն այդ գլուխները թվագրում է Ք. հ. 532–534 թթ. (անդ, էջ 175). Խմբագրությունն անգլերեն թարգմանության օգնությամբ՝ A. VÖÖBUS, The Synodicon in the West Syrian Tradition 1, CSCO 367–368 / Syr. 161–162, Louvain, 1976, էջ 163–176 (բնագ.), 157–168 (թարգմ.). Ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս F. NAU, Littérature canonique syriaque inédite, ROC 14 (1909), 1–49, էջ 113–130:

³³ Տե՛ս “Chapters Written from the Orient can. 33”, ed. Vööbus, Synodicon 1, 174.3–13, transl. Vööbus, էջ 166:

³⁴ Հստ Հովհաննես Եփեսացու՝ Փոքր Ասիայում հուլիանականության կենտրոնը Եփեսոս քաղաքն էր (տե՛ս JOHN OF EPHESUS, Apud the Chronicle of Zuqnin, ed. J.–B. Chabot, Chronicon anonymum pseudo-Dionysianum vulgo dictum, CSCO 91, 104 / Syr. 43, 53, Paris, 1927–1933, here: CSCO 104 / Syr. 53, 121.21–26, transl. Amir Harrak, The Chronicle of Zugnin. Parts III and IV, A.D. 488–775. Translated from Syriac with Notes and Introduction, Mediaeval Sources in Translation 36, Toronto, 1999, էջ 121: Հովհաննես Եփեսացին պնդում է, որ հուլիանականությունը տարածվել է Եփեսոսից՝ տեղացի չորս ջատագովների կողմից, որոնք Ալեքսանդրիայում համաձայնել էին Հուլիանոսի դիրքորոշմանը:

նրանք հավաքվեցին դիակի շուրջը, բարձրացրին մահացածի ձեռքը եւ դրանով Եւտրոպոս վարդապետին ձեռնադրեցին հուլիանականների եպիսկոպոս: Եւտրոպոսն իր հերթին ձեռնադրեց եւս տասը եպիսկոպոսների, որոնց ուղարկեց տարբեր վայրեր՝ Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Հայաստան, Սիրիա եւ Պարսկաստանի Բեթ-Նումանի Հիրթա շրջանը (սա վերաբերում է Ալ-Հիրայի շրջանին³⁵)՝ հովվելու հուլիանական հավատացյալներին³⁶: Ըստ Հովհաննես Եփեսացու՝ այս աղաղակող պատմությունը կրկնակի է վարկաբեկում հուլիանական նվիրապետությունը. մահացած մարդու ձեռքով ձեռնադրված Եւտրոպոսը կարող էր միայն կեղծ եպիսկոպոս լինել: Իսկ նրա կատարած ձեռնադրություններն էլ, իրենց հերթին, կարող էին միայն կեղծ եպիսկոպոսներ առաջադրել: Հովհաննես Եփեսացին, որը նկարագրված իրադարձությունների ականատեսը չէր, պետք է գիտակցեր՝ այս պատմությունն առավել հակահուլիանական վիճաբանություն է հիշեցնում, քան հուլիանական նվիրապետության ծագման պատմության ճշմարտացի նկարագրություն: Հետեւաբար նա ջանաց բացահայտել իր տեղեկատվության աղբյուրը. Եփեսոսի քահանաներն էին հաստատել այդ իրադարձությունների ճշմարտացիությունը³⁷: Հովհաննեսի պատմությունը ներառում է եւս մեկ կարեւոր մանրամասնություն հուլիանական նվիրապետության վերաբերյալ, այն է՝ հուլիանական Սերգիոս եպիսկոպոսը (Ալ-Հիրայի եպիսկոպոս) ուղեւորվեց Արաբական թերակղզի՝ ծառայելու հիմյարիներին չորս տարի՝ մինչեւ նրա անժամանակ մահը: Մինչ այդ նա ձեռնադրել էր Մովսեսին՝ որպես իր հետնորդ³⁸:

Ժամանակակից գիտնականները դեռ կարող են կասկածներ ունենալ այդ պատմության վավերականության առնչությամբ, քանի որ մահացած մարդու ձեռքով ձեռնադրությունների նմանօրինակ վարկածներ շրջանառվում էին նաեւ այլ աղանդների վերաբերյալ³⁹: Հայ եւ

³⁵ Տէս E. HONIGMANN, *Évêques et évêchés*, էջ 129:

³⁶ Տէս “Chronicle of Zuqnin”, ed. Chabot, CSCO 104 / Syr. 53, 121.26–125.11, transl. Harrak, էջ 121–123. This story is also told by Michael the Syrian, Chronicle IX 31, ed. Ibrahim, 322a–323c (Chabot, էջ 319–320), transl. Chabot, vol. 2, էջ 263–264:

³⁷ Տէս “Chronicle of Zugnin”, ed. Chabot, CSCO 104 / Syr. 53, 125.3–8:

³⁸ Տէս անդ, 124.6–16. այս պատմության վերաբերյալ տես նաեւ Հոնիգմանի քննարկումը՝ E. HONIGMANN, *Evêques et évêchés*, էջ 128f.: Հայկական աղբյուրները պնդում են, որ հուլիանականները Հուլիանոսի անկենդան ձեռքը որպես մասունք էին պատվում (անդ, էջ 129–130):

³⁹ Տէս G. GARITTE, *La Narratio de rebus Armeniae. Édition critique et commentaire*, CSCO 132 /

վրաց գրականության մեջ կան պատմություններ, որոնք պնդում են, թե Հուլիանոսի մահից հետո միայն երկու հուլիանական եպիսկոպոսներ կային, որոնք դրել են իրենց ձեռքերը եւ մահացած Հուլիանոսի ձեռքը թեկնածուի վրա՝ ձեռնադրության ժամանակ կանոնով սահմանված երեք եպիսկոպոսների առկայությունն ապահովելու համար⁴⁰։ Հովհաննես Եփեսացու պատմության մեջ տեղ գտած էական տարրերը՝ հաստատված հուլիանականների ձեռնադրությանը վերաբերող փաստաթղթերով, որոնք այսօր պահվում են Բրիտանական գրադարանում (BL add. 14.629, cf. BL add. 12.155), ի վերջո վերադառնում են հենց հուլիանականների ստեղծած պատումներին⁴¹։ Այս փաստաթղթերն ընդգրկված են «Փաստումնմ ուղղափառ եւ առաքելական հավատի» աշխատության երրորդ մասում՝ որպես Անտիոքի պատրիարք Հովհաննեսի հովվական նամակ՝ ուղղված հավատացյալներին⁴²։ Հեղինակին՝ Հովհաննես պատրիարքին, Վիլյամ Բայթն անվանել է Հովհաննես Ա., Ասորի ուղղափառ պատրիարք 630/631–648 թվականներին⁴³։ Հովհաննեսի «Փաստումունք»-ի առաջին երկու մասերը հրամանակարգային (դոգմատիկ) բնույթ ունեն, մինչդեռ երրորդ մասն անդրադառնում է հուլիանականների ձեռնադրություններին։ Հովհաննեսն սկսում է համառոտ ներածությունից՝ ընդհանուր գծերով հաստատելով հուլիանական նվիրապետության, հետեւաբար նաեւ նրանց խորհուրդների անվավերությունը⁴⁴։ Նա այնուհետեւ մեջ է բերում Նիկիայի 325 թ. տիեզերաժողովի Դ. եւ Զ., ինչպես նաեւ 341 թ. Անտիոքի Սինոդի ԺԹ. կանոնները, որոնք սահմանում են՝ եպիսկոպոսական ձեռնադրության համար անհրաժեշտ է

Sub. 4, Louvain, 1952, էջ 127 եւ հաջորդող էջերում նշվում է, որ նման պատմություն կար նաեւ եսայանականների մասին։

⁴⁰ Տե՛ս G. GARITTE, *Narratio...*, էջ 126–128։

⁴¹ BL Add. 14.629 ձեռագիրը Վ. Բայթը վերագրում է Լ. կամ Թ. դարերին։ Այս մասնատված ձեռագիրը բաղկացած է 24 թերթից, որոնցից շատերին հաջորդում են բացատներ (տե՛ս W. WRIGHT, *Catalogue of Syriac Manuscripts in the British Museum Acquired Since the Year 1838*, 3 vols., London, 1870–1872, here: vol. 2, էջ 754–756։ Այդ հատվածը հանդիպում է նաեւ BL Add. 12.155, որը Վ. Բայթը վերագրում է Լ. դարին (տե՛ս R. WRIGHT, *Catalogue*, vol. 2, էջ 921, 954–955)։

⁴² Համաձայն մեր տեղեկությունների՝ Հովհաննեսի «Փաստումունք»-ը խմբագրված չէ։ Հակահուլիանական վավերագրերը խմբագրվել են ֆրանսերեն թարգմանության օգնությամբ՝ Ռենե Դրագվեի կողմից (տե՛ս R. DRAGUET, *L'ordination frauduleuse des Julianistes*, «Muséon» 54 (1941), էջ 59–89, նաեւ էջ 72–89)։

⁴³ Տե՛ս R. WRIGHT, *Catalogue*, vol. 2, էջ 754f.։ Այս նույնականացումն ընդունելի է նաեւ Ռ. Դրագվեի համար (տե՛ս R. DRAGUET, *L'ordination frauduleuse*, էջ 59)։

⁴⁴ Տե՛ս Ed. R. DRAGUET, *L'ordination frauduleuse*, էջ 72f.։

ներկայությունը առնվազն երեք եպիսկոպոսի, որոնք պետք է ընտրվեն եպիսկոպոսների մեծամասնության կողմից⁴⁵։ Այնուհետև Հովհաննեսը ներկայացնում է չորս փաստաթուղթ, որոնք բոլորը, թերեւս, կազմվել էին հուլիանական շրջանակում⁴⁶։ Դրանցից առաջինը պատմում է այն նույն իրադարձությունների մասին, ինչ Հովհաննես Եփեսացին, բայց շատ ավելի պարզեցված եւ նվազ գեղազարդված տարբերակով։ Արժե ամբողջությամբ մեջբերել կարճ բնագիրը. «Հուլիանական երեւութականների կեղծ ձեռնադրության պատմությունը՝ ճշգրիտ ներկայացված նրանցից ոմանց կողմից. Պրոկոպիոսը եպիսկոպոս էր եւ մի կարճ ժամանակ հարում էր սեւերիոսականներին, բայց հետո միացավ հուլիանականներին՝ միայն ինքը լինելով վերջին [եպիսկոպոսը] նրանց մեջ։ Եւ երբ նա մահամերձ էր, Եւտրոպոսին [եպիսկոպոս] դարձրեց։ Ներկա եղողներն ասում են, որ Պրոկոպիոսի մահից հետո նրա հետեւորդները բռնեցին նրա անկենդան ձեռքը եւ դրեցին այն Եւտրոպոսի գլխին։ Եւտրոպոսը [եպիսկոպոս] կարգեց Ռոմանոսին Բեթ Մար Մովսես վանքում, որը գտնվում է Կաֆրա դը-Բիրթայում, ինչպես նաեւ Սերգիոս Հիրթացուն եւ Թեոդորոսին, որի վրա տունը փլվեց Արաբիայում տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով։ Եւ Ռոմանոսը Մովսեսին [եպիսկոպոս] կարգեց Բեթ Մար Իսահակ վանքում, իսկ Սիմեոնին՝ Թուրայի Բեթ Մար Կիրակոս վանքում, իսկ Արաբիայում տեղի ունեցած երկրաշարժից զոհված Թեոդորոսի փոխարեն Ստեփանոսին [եպիսկոպոս] կարգեց»⁴⁷։ Եւտրոպոսի ձեռնադրության վերաբերյալ այս պատմության մեջ նշվում է, որ Պրոկոպիոսը ձեռնադրության ժամանակ մահվան շեմին էր, իսկ թե արարողության պահին նրա ձեռքն անկենդան էր, եւ արդեն մահացած մարդու ձեռք էր, մեկնաբանությունների համար մնում է բաց։ Ինչ վերաբերում է Եւտրոպոսի ձեռնադրած եպիսկոպոսներին, ապա կարելի է նշել, որ այստեղ հիշատակված Ռոմանոսի պետք է տարբերել Սեւերիոսի նամակներում նշված Ռոմանոսից, որը, ամենայն հավանականությամբ, Ռոհուսի (Կիլիկիա) եպիսկոպոսն էր⁴⁸։ Եւտրոպոսի ձեռնադրած Ռոմանոսն Ապամեայից հյուսիս-արեւմուտք գտնվող Կաֆրա դը-Բիրթա

⁴⁵ *Տէս անդ*, էջ 73f.։ The Syriac version of these canons is edited with English transl. by Vööbus, *Synodicon* 1, 86–88, 112 (text), 96–97, 116 (transl.)։

⁴⁶ *Տէս* Ed. R. DRAGUET, *L'ordination frauduleuse*, էջ 74–82։

⁴⁷ Ed. R. DRAGUET, *L'ordination frauduleuse*, էջ 74։

⁴⁸ *Տէս օրինակ* SEVERUS, Letter V.15, ed. Brooks, 401.15 (text), 356 (transl.)։ Հուլիանական եպիսկոպոս Ռոմանոսի մասին տե՛ս ALLEN, HAYWARD, Severus of Antioch, էջ 48։

գյուղում գտնվող Մար Մովսեսի մենաստանի վանական էր⁴⁹։ Կարող ենք ենթադրել, որ Մար Մովսեսի ամբողջ վանքը միացել էր հուլիանական շարժմանը, մինչդեռ նույն գյուղում գտնվող մեկ այլ վանք՝ Մար Եսեբիոսի վանքը, հավատարիմ մնաց Սեբերիոսին⁵⁰։ Ավելին՝ երբ բնագրում ասվում է, որ Մար Իսահակ վանքից ոմն Մովսեսի ձեռնադրեցին՝ հաջորդելու լուսահոգի Թեոդորոսին, ապա կարող ենք վստահաբար ենթադրել, որ նա Գաբուլայում գտնվող Մար Իսահակի համայնքից էր։

Է. դարում Հովհաննես Անտիոքացին հստակ ասում է, որ ծաղկաքաղ է անում հուլիանական ծագմամբ մի փաստաթղթից։ Ակնհայտորեն այս փաստաթուղթը կազմվել է արդեն Զ. դարակեսին (ենթադրաբար՝ Ստեփանոսի ձեռնադրությունից անմիջապես հետո եւ գուցե նրա կատարած վիճահարույց ձեռնադրությունների շարակարգում, որին կանդակադառնա՞նք ստորեւ), քանի որ այն մեջ է բերում նաեւ Սերգիոսը՝ Անտիոքի առաջին ասորի ուղղափառ պատրիարքը, որը գահակալել է 557–561 թվականներին։ Սերգիոսը նամակ է հղում Պարսկաստանի տարածքում գտնվող եպիսկոպոսներին՝ ի միջի այլոց խորհուրդ տալով, թե ինչպես վարվել ապստամբ հուլիանականների հետ, որոնք ցանկանում էին սեբերիոսականների հոտ վերադառնալ։ Հակառակորդների շարժումը վարկաբեկելու նպատակով՝ Սերգիոսն այստեղ պատմում է հուլիանական նվիրապետություն ծագման մասին նույն պատմությունը, ինչ Հովհաննես Անտիոքացին՝ հարյուր տարի անց։ Ընդարձակ հատվածներում նրանց պատմությունները նույնիսկ բառ առ բառ համընկնում են։ Սակայն Սերգիոս պատրիարքի պատմությունը, ի տարբերություն Անտիոքի

⁴⁹ Այս վանքի տեղանքությունը տե՛ս D. G. K. TAYLOR, The Psalm Commentary of Daniel of Salah and the Formation of Sixth-Century Syrian Orthodox Identity, in: Church History and Religious Culture, vol. 89 (2009), էջ 65–92։ Թելյորը նշում է, որ սրանք Քեֆր եւ Բարա ժամանակակից երկվորյակ գյուղերն են (անդ, էջ 71)։

⁵⁰ Վանական համայնքներն այլուր նույնպես տարածայնություններ ունեին հուլիանականության խնդրի շուրջ։ Կարելի է նշել, որ Եգիպտոսի Վադի Նատրոն քաղաքում գտնվող ասորական վանքը հիմնել են Սեբերիոսին հավատարիմ ասորախոս վանականները, որոնք հեռացել էին իրենց իսկ (հուլիանական) համայնքներից։ Այս տեսությունն առաջին անգամ ներկայացրել է Հյու Գ. Էվելին Ուայթը. տե՛ս H. G. EVELYN WHITE, The Monasteries of the Wādi 'n Natrūn, vol. 2: The History of the Monasteries of Nitria and of Scetis, New York, 1932, էջ 315–318, որին հետեւել են մյուսները (տե՛ս K. INNEMÉE, L. VAN ROMPAY, La présence des Syriens dans le Wadi al-Natrun (Égypte)։ A propos des découvertes récentes de peintures et textes muraux dans l'Eglise de la Vierge du Couvent des Syriens, ParOr 23 (1998), էջ 167–202, հատկապես էջ 180–182. F. JULLIEN, Le monachisme en Perse։ la réforme d'Abraham le Grand, père des moines de l'Orient, CSCO 622/ Sub. 121, Louvain, 2008, էջ 74f.)։

պատրիարք Հովհաննեսի, չի արտացոլում բնագրի բուն հուլիանական հեղինակին. հուլիանականներին այստեղ անընդհատ անվանում են հերետիկոսներ, մինչդեռ սեկերիոսականները կոչվում են «ուղղափառներ»⁵¹: Ուստի հավանական է, որ հուլիանական եպիսկոպոսության ծագման մասին այս պատմությունը տարածվել է Հուլիանոսի հետեւորդների շրջանում դեռեւս 550-ական թվականներին՝ դեպքերն արձանագրվելուց անմիջապես հետո: Հովհաննես Անտիոքացու «Փաստմունք»-ը դեռեւս պահպանում է փաստաթղթերի հուլիանական բնույթը, մինչդեռ Զ. դարի այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Անտիոքի պատրիարք Սերգիոսը կամ Հովհաննես Եփեսացին, փոխում են եզրույթները եւ հուլիանականներին անվանում հերետիկոսներ:

Հովհաննես Անտիոքացու «Փաստմունք»-ում ներառված հակահուլիանական վավերագրերը պարունակում են եւս մեկ շատ կարեւոր փաստաթուղթ, որը վերաբերում է Ստեփանոս եպիսկոպոսի կատարած ձեռնադրություններին⁵²: Պետք է նշել, որ այս փաստաթուղթը՝ կազմված Գաբուլայի Մար Իսահակ վանքում, նաեւ հենց հուլիանականների կազմած մի բնագիր է: Այն հաղորդում է վերոհիշյալ Ստեփանոսի, որի վանական ծագման կամ եպիսկոպոսական թեմի վերաբերյալ, ցավոք, տեղեկություն չունենք, եւ Աբրահամ անունով մի հայ եպիսկոպոսի (հավանաբար հուլիանական) կնքած պայմանագրի մասին. նրանցից որեւէ մեկը միայնակ չպետք է եպիսկոպոս ձեռնադրեր, այլ միայն՝ միասին: Այնուամենայնիվ, Ստեփանոսը միայնակ եպիսկոպոս ձեռնադրեց Բարլահային, իսկ հետագայում եւ Ստեփանոսը, եւ Բարլահան ձեռնադրեցին Կասիանոսին: Շատ հավանական է, որ եւ Բարլահան, եւ Կասիանոսը վանական էին, բայց բնագիրը, փորձելով բացասական ներկայացնել հուլիանական այս երկու առաջնորդներին, բաց է թողնում նրանց վանական պատկանելության կամ թեմի վերաբերյալ մանրամասները:

Մար Իսահակ վանքի վանականները թերեւս ցանկանում էին, որ Ստեփանոսն իրենց միաբաններից մեկին ընտրի եպիսկոպոս, եւ ոմն Զաքարիայի ներկայացրին որպես եպիսկոպոսության թեկնածու: Այնուհետեւ

⁵¹ Լատիններեն թարգմանության օգնությամբ այս նամակը խմբագրել է Ա. Վան Ռոեյը. տե՛ս A. VAN ROEY, Une lettre du patriarche Jacobite Serge I (557–561), ParOr6–7 (1975/76), էջ 213–227. համապատասխան հատվածը 219 էջում է:

⁵² S^{én} Ed. R. DRAGUET, L'ordination frauduleuse, էջ 75–77:

բնագրում պարզաբանվում է, որ Ջաքարիան ցանկանում էր դառնալ Հայաստանի եպիսկոպոսը: Մեր աղբյուրի պնդմամբ՝ Ստեփանոսը, ավաղ, հրաժարվեց ձեռնադրել նրան՝ նախանձից եւ անձնական հակակրանքից դրդված: Կատաղի վեճ բռնկվեց, որի ժամանակ Մար Իսահակ վանքի վանահայր Թովմասը մի նամակ գրեց «Արեւելքի» հուլիանականներին՝ Ստեփանոսի ձեռնադրությունը համարելով անվավեր, քանի որ այն կատարվել էր միայն մեկ եպիսկոպոսի ձեռամբ: Այս նամակը նույնպես ներառված է վավերագրերում, բայց, ցավոք, այն ընդհատվում է երկու էջ հետո, այնպես որ հնարավոր չէ ամբողջությամբ ընկալել Թովմասի աստվածաբանական փաստարկները⁵³: Պարզվում է, սակայն, որ վանահայր Թովմասը մեկ եպիսկոպոսի կատարած ձեռնադրությունները վավեր էր համարում, եթե որեւէ այլ եպիսկոպոս չկար: Նա կարծես պնդում էր, որ դա չի վերաբերում Ստեփանոսի ձեռնադրությանը, որն անվավեր էր համարվում⁵⁴: Վիճաբանելով Ստեփանոս եպիսկոպոսի հետ՝ Մար Իսահակի համայնքն այդ ժամանակ ենթադրաբար ցանկանում էր որպես եկեղեցի անկախ լինել նրանից: Վանականները կանչեցին շրջանի մյուս երկու հուլիանական եպիսկոպոսներին՝ Կասիանոսին եւ Բարլահային՝ խնդրելով տեղի վանականներին եպիսկոպոս ձեռնադրել: Իրավիճակը քաոսային դարձավ, եւ վանական համայնքը բաժանվեց երկու ճամբարի: Այնուհետեւ Բարլահան եւ Կասիանոսը 585 թ. աշնանը ձեռնադրեցին Մար Իսահակ վանքի երկու վանականների (Դանիել Փափուհիային ու Գեւորգ բար Աբշային), բայց ընդամենն օրեր անց նրանց կարգալուծ արեցին եւ նույն համայնքի երկու այլ տղամարդու (Ջաքարիային եւ Թովմասին) եպիսկոպոս օծեցին⁵⁵: Վանքում ծագած հերձվածք տեւեց հինգ տարի, եւ

⁵³ Տե՛ս Fragment ed. R. DRAGUET, L'ordination frauduleuse, էջ 80–82: Այս նամակի բնագիրը, ինչպես նաեւ կարգալուծությունը (քննարկված է ստորեւ) ակնհայտորեն հայտնի էին Ստեփանոսի ձեռնադրությունների եւ Մար Իսահակի վանքում դրանց հաջորդած հերձվածի մասին պատմությունների հեղինակին:

⁵⁴ Տե՛ս Դրագյւլեի քննարկումը՝ R. DRAGUET, L'ordination frauduleuse, էջ 71:


⁵⁵ Տե՛ս Ed. R. DRAGUET, L'ordination frauduleuse, էջ 77–80: Այս բնագրում Դանիելի ու Գեւորգի ձեռնադրությունը թվագրվում է 29 սեպտեմբերի, 896 թ.: Քանի որ սելեւկյան տարին սկսվում էր Թեշրի 1-ից, ապա այստեղ քննարկվող տարին կլինի Ք. հ. 585 թվականը: Պաշտոնանկությունը թվագրված է 2 Թեշրի 1 (հոկտեմբեր) 896 թվականին, որն այստեղ համապատասխանում է Ք. հ. 584-ին, ինչը, սակայն, ժամանակագրորեն անհնար է, քանի որ ձեռնադրությունը պետք է նախորդեր պաշտոնանկությանը: Այս երկու իրադարձությունները, ենթադրաբար, տեղի են ունեցել Ք. հ. 585 թվականին. R. DRAGUET, L'ordination frauduleuse, 62-ում այս իրադարձությունները թվագրում են Ք. հ. 584 թվականով. R. WRIGHT, Catalogue, vol. 2, 954-ում 585 AD.:

այդ ընթացքում չորս մրցակից եպիսկոպոսները հաշտվեցին եւ ճանաչեցին միմյանց հոգեւոր իշխանությունը:

Հակահուլիանական վավերագրերը, որոնք Հովհաննէս պատրիարքը մեջբերում է իր «Փաստմունք»-ում, ներառում են Դանիել Քափուհիայի ու Գեւորգ բար Աբշայի կարգալուծության բնագիրը՝ ստորագրված Բարլահա եւ Կասիանոս եպիսկոպոսների (առանց նրանց վանքերի կամ եպիսկոպոսական աթոռների վկայակոչման) եւ մի քանի վանահայրերի կողմից, որոնք ենթադրաբար առաջնորդում էին հուլիանական այլ վանքեր: Այս ցանկը մեզ հնարավորություն է տալիս հետեւելու շարժման հետագա տարածմանը Զ. դարավերջին: Չնայած թվարկված որոշ վայրեր հնարավոր չէ հեշտությամբ կռահել, սակայն նկատելի է, որ Գաբուլայում հուլիանական մեկ այլ վանք կար՝ Մար Կասիանոսի վանքը: 585 թ. կատարված այս կարգալուծությունը ստորագրել են⁵⁶.

- Կասիանոսը,
 - Բարլահան,
 - Թովմասը՝ Գաբուլայի Մար Իսահակ վանքի վարդապետ եւ վանահայր՝ ձեռնադրված Թովմաս քահանայի ձեռամբ,
 - Սերգիոսը՝ Մար Իսահակ վանքի վանական՝ Հովհաննէս սարկավագի ձեռամբ,
 - Գեւորգը՝ Թուրայի Մար Կիրակոս վանքի վանական՝ Թեոդորոս վանահոր անունից,
 - Հովհաննէսը՝ Գաբուլայի Մար Կասիանոս վանքի վանահայր՝ Թովմաս սարկավագի ձեռամբ,
 - Թովմասը՝ Մար Աբդա վանքի վանական՝ Բերենիցիանոս վանահոր անունից,
 - Դավիթը՝ Մար Զեբինա վանքի վանահայր,
 - Կարուրանացի Բարհադբեշաբան,
 - Լաուրայի վանքի սարկավագ Հովհաննէսը՝ Գեւորգ վանահոր անունից,
 - Ապամեայի շրջանի Նեքիրթայի վանահայր Սերգիոսը,
 - Հալիսի վանքի վանական Հակոբը՝ վանահոր անունից,
 - Հանիշարթայի Փեսիի վանքի վանահայր Սերգիոսը:
- Հիմնվելով մինչ այժմ ուսումնասիրված աղբյուրների վրա՝ հուլիանական նվիրապետությունը կարելի է ներկայացնել հետեւյալ գծապատկերում:

⁵⁶ S⁶ Ed. R. DRAGUET, L'ordination frauduleuse, էջ 79–80:



Հուլիանական՝ վերը քննարկված բնագրերը վերաբերում են Ստեփանոս եւ հայազգի Աբրահամ եպիսկոպոսների սերտ փոխհարաբերություններին: Թեեւ նրանց պայմանագրային համաձայնությունը՝ հետազայում

միայն միասին եպիսկոպոս ձեռնադրելու վերաբերյալ, որի հստակ նպատակն էր խուսափել ոչ կանոնական ձեռնադրություններ կատարելու մեղադրանքից, իրականություն չդարձավ, սակայն բնագիրը մեզ ուղղորդում է մեկ այլ ճանապարհով, որտեղ իրականում ձեռնադրվում էին ասորի հուլիանականները:

Հայկական մի շարք աղբյուրներ հաստատում են, որ Աբդիշո անունով հուլիանական մի վանական եպիսկոպոսական ձեռնադրություն է ստացել Դվինի Բ. Ժողովի (555 թ.) ժամանակ՝ հրավիրված Հայոց կաթողիկոս Ներսեսի կողմից⁵⁷: Թեև ասորի հեղինակները կարծես չեն խոսում Աբդիշոյի մասին, սակայն նրա գործունեությունն ու ձեռնադրությունը բավականին փաստագրված են հայկական աղբյուրներում, եւ նրա գրչին պատկանող մի քանի բնագիր պահպանված է հայերենով⁵⁸: Աբդիշոյի հուլիանական համոզմունքը հայտնի է դառնում նրա որոշ գրվածքներից, օրինակ՝ նզովքների ցանկից, որոնք դատապարտում են Քրիստոսի մարմնի ապականությանը հավատացողներին⁵⁹: Բավականին փաստագրված է նաեւ ասորի միաֆիզիտների հետ նրա կապը. հայոց եպիսկոպոսների ցանկում նա նշվում է որպես «Աբդիշո՝ ասորի հակաբիկյան»: Նա ինքը եւս նամակները ստորագրում էր իբրեւ «Ուղղափառ ասորիների եպիսկոպոս»⁶⁰: Աբդիշոն Սարբեայի վանքի վանական էր, որը գտնվում է Սասունից ոչ հեռու: Սարբեայի գտնվելու ճշգրիտ վայրը բազմիցս քննարկվել է գիտական գրականության մեջ: Ամեն դեպքում այն գտնվում էր Պարսկաստանի տարածքում՝ հայկական սահմանի մոտ⁶¹:

Նախորդ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Զ. դարակեսին հուլիանականները, ճիշտ այնպես, ինչպես սեւերիոսականները,

⁵⁷ Աբդիշոյի մասին հայկական աղբյուրների մանրամասն քննարկումը տե՛ս T. HAINTHALER, Wer ist Abdisho? Einige Bemerkungen zum Einfluss syrischer Theologen in Armenien im 6. Jahrhun dert, in: Syriaca III. Beiträge zum 7. Deutschen Syrologen-Symposium in Göttingen, Dezember 2011, ed. M. Tamcke, S. Grebenstein, Göttinger Orientforschungen I: Syriaca, Wiesbaden: Ակնարկն ալստեղ մեջ կբերվի ձեռագրի էջերի համարներով. նաեւ՝ F. REND, Rise of the Monophysite Movement, էջ 314:

⁵⁸ Մանրամասները տե՛ս T. HAINTHALER, Wer ist Abdisho? Einige Bemerkungen zum Einfluss syrischer Theologen in Armenien im 6....:

⁵⁹ Տե՛ս անդ, էջ 4—8:

⁶⁰ Տե՛ս անդ, էջ 3:

⁶¹ Ըստ Գարիտի՝ Սարբեայի վանքը, հավանաբար, Սարբատի վանքն է, որը գտնվում է Արգանից հյուսիս եւ Մարտիրոսյանից/Մալաթիայից մոտ 50 կմ արեւելք (տե՛ս G. GARITTE, Narratio, էջ 149). N. GARSOÏAN, L'église arménienne et le grand schisme d'Orient, CSCO 574/Sub. 100, Louvain, 1999, էջ 457, ծնթ. 4, հնարավոր է՝ այն գտնվում է Սասունի գավառում՝ Նփրկերտի մոտակայքում (տե՛ս T. HAINTHALER, Wer ist Abdisho?, էջ 3—4):

հաստատում են իրենց իսկ նվիրապետությունը: Հռոմեական տիրապետության տակ ապրող ասորի վանականները ձեռնադրվում էին Պրոկոպիոս Եփեսացու կողմից (Եւտրոպոսի եւ Ստեփանոսի միջոցով). հայտնի են եպիսկոպոսներ, որոնք եկել էին Կաֆրա դը-Բիրթայի (Ապամեայից հյուսիս-արեւմուտք) Մար Մովսես, Թուրայի Մար Կիրակոս եւ Գաբուլայի (Հալեպից հարավ-արեւելք) Մար Իսահակ վանքերից: Արձանագրված է, որ հուլիանական եպիսկոպոսներ կային նաեւ Արաբիայի եւ Ալ-Հիրայի շրջաններում ծառայելու համար: Հուլիանական եպիսկոպոսների երկրորդ շարքը հայտնվեց միեւնույն ժամանակ՝ հյուսիսային Միջագետքի պարսկական տարածքներում. «Աբդիշոն»՝ Սարեբա վանքից, ձեռնադրվել է 555 թ. Հայոց կաթողիկոսի կողմից, եւ ենթադրաբար նա էլ իր հերթին այլ վանականների է եպիսկոպոս ձեռնադրել: Այսպիսով՝ հուլիանական նվիրապետությունը կարծես թե սկիզբ է առել երկու տարբեր ուղղություններից. մեկը՝ Պրոկոպիոս Եփեսացուց, մյուսը՝ «Աբդիշոյից» եւ հայերից: Ուստի հուլիանական ներկայությունը եւ հուլիանական եպիսկոպոսության գոյությունը ինչպես հռոմեական, այնպես եւ պարսկական շրջաններում բավականին հիմնավորված են: Նկատելի է, որ մինչ այժմ հանդիպած հուլիանական բոլոր եպիսկոպոսները կա՛մ առնչություն ունեին որեւէ վանքի հետ, կա՛մ նշանակված էին որեւէ շրջանում. հուլիանական որեւէ եպիսկոպոս չի ձեռնադրվել քաղաքային թեմում ծառայելու համար: Անհրաժեշտության դեպքում հաճախ միայն մեկ եպիսկոպոս էր ներկա գտնվում եպիսկոպոսական ձեռնադրությանը, ինչը ոչ կանոնական ընթացակարգ էր եւ հաճախ էր քննադատվում միաֆիզիտ հակառակորդների կողմից:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Թարգմանությունն անգլերենից՝
ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ



ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑԻ

Սկիզբը՝ նախորդի

ՔԱՐՈՉ «ՄԻ՛ ՍՊԱՆՆԵՐ»¹ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ

Ուղեւորները [որոնք] ճանապարհով կ'ընթանան, բազմաթիւ հակառակութիւն եւ ճանապարհի արգելքներ կը հանդիպի անոնց:

Նախ՝ յորդահոս գետեր:

Երկրորդ՝ լայնատարած ծովեր:

Երրորդ՝ լեռներու բարձրութիւնը, որ յոգնութեամբ կ'ընթացուի:

Չորրորդ՝ քարանձաւներու նեղ ու անձուկ ճանապարհ:

Հինգերորդ՝ վայրենի գազանները ճանապարհները կը փակեն:

Վեցերորդ՝ փշոտ եւ մացառուտ անտառային վայրերը:

Եօթներորդ՝ թշնամիներ, հակառակորդներ:

Ութերորդ՝ շատ սիրողները կը բռնեն ու չեն ձգեր երթալ:

Իններորդ՝ ժամանակի թշուառութիւնը, որ է խաղաղութեան չգոյութիւն:

Տասներորդ՝ հիւանդանալ կամ գլխովին մահ:

Ասիկա եւ հոգեւորապէս որոնք կ'ընթանան Աստուածաշունչ գիրքերու նուրբ շաւիղներու ճամբաներով: Կայ, որ դեւերու փորձութեան կը հանդիպի, ինչպէս յորդահոս գետերը, ու կ'արգիլէ անցնիլ: Եւ կայ, որ Աստուածաշունչ գիրքերու լայնատարած իմաստներուն կը հանդիպի, սակայն լողալու մէջ ոչ հմուտ ըլլալուն պատճառով անոր ճանապարհը կը խանգարուի: Եւ կայ, որ գիրքերուն իմաստութիւնը բարձր է, ինչպէս լեռանը, ու առանց առաքինութեան գործերու չի՛ կրնար հասնիլ անոր: Եւ կայ, որ սատանան համարձակապէս կը յարձակի խօսքը (Աստուածաշունչը.— Վ. (Յ.) Ք.) քննողներուն վրայ ու արգելք կը պատճառէ: Եւ կայ, որ աշխարհի հարստութիւններէն խաբուելով, ինչպէս Տէրը աջալիսիին փուշ կ'ըսէ, եւ ան անպտուղ կ'ըլլայ²: Եւ կայ, որ հեշտութիւնը շատ կը սիրէ, որ

¹ Բ. Օր. Ե. 17. Մատթ. Ե. 21. Մարկ. Ժ. 19. Ղուկ. ԺԸ. 20:

² Տէս Մատթ. ԺԳ. 22. Մարկ. Դ. 19. Ղուկ. Ը. 14:

մարմինին կը խաբէ, ու այդպիսիով խօսքը կը սխալի: Եւ կայ, որ հոգեւոր կամ մարմնաւոր խաղաղութիւնը վերցուցած է, այդ պատճառով խօսքին գործէն կը դադրի: Եւ կայ, որ միտքին զօրութիւնը կը պակսի, կամ մեղքերով կը մահանայ, ու այդ պատճառով խօսքին գործերէն կը դադրի: Եւ կայ, որ նեղ եւ անձուկ է խօսքը, ինչպէս իմաստասէրներունը, որովհետեւ առանց միտքի նրբութեան չի՛ կրնար հասկնալ: Իսկ մեզի այս բոլոր բաները, որ վերը ըսինք, կը պատահին, եւ ցանկութիւնը կը յորդորէ ու թոյլ չի տար հանգստանալու: Այդ պատճառով կ'աղաչեմ օգնական ըլլալ տկարութեանս՝ օժանդակ ունենալով Սուրբ Հոգին, որ խօսքին տուողն է, ինչպէս Մովսէսին տուաւ՝ օրէնքները բերողին, ինչպէս կ'ըսէ. «Մի՛ սպաննեա՛ր»³:

Եւ գիտելի է, թէ սպաննութիւնը միակերպ չէ, այլ՝ բազմատեսակ, այդ պատճառով արժան է բոլոր [տեսականներն] ալ գիտնալ:

Նախ՝ մարդուն ջուրով սպաննումն է, ինչպէս փարաւոնը Իսրայէլի որդիներուն գետ կը նետէր⁴:

Երկրորդ՝ կրակով կ'այրեն, ինչպէս Բաբելոնի մէջ Նաբուգոդոնոսորը երեք երիտասարդներուն [ըրաւ]⁵, նոյնպէս սուրբերէն շատերը:

Երրորդ՝ քարերով կը քարկոծեն, ինչպէս Մովսէս օրինադրեց վնասակարներուն բանակէն դուրս քարկոծել⁶: Նաեւ Սուրբ Ստեփանոսին ալ քարկոծեցին⁷:

Չորրորդ՝ լեռան գագաթը տանելով կ'ուզէին գահավիժել, ինչպէս հրեաները կ'ուզէին մեր Տիրոջ ընել, իսկ Ան անոնց մէջէն գնաց⁸՝ օդին վրայէն: Ու ներկայ ժամանակին ալ կը տեսնենք շատեր, որոնք նմանատիպ մահուամբ իրենց կեանքը կու տան:

Հինգերորդ՝ նետով խոցելով կը սպաննեն, ինչպէս Յովաբը ծառէն կախուած Աբիսողոմին սպաննեց⁹:

Վեցերորդ՝ տեգով կը խոցեն, ինչպէս Փենեհէսը Զամբրին ու Քասբին գետինն գամեց¹⁰, եւ զինուորը մեր Տիրոջ գեղարդով խոցեց, ուրկէ արին եւ ջուր ելաւ¹¹:

³ Բ. Օր. Ե. 17:

⁴ Տէս Ելք Ա. 22:

⁵ Տէս Դան Գ. 21:

⁶ Տէս Ղեւ. ԻԳ. 14:

⁷ Տէս Գործք Է. 57:

⁸ Ղուկ. Դ. 29–30:

⁹ Բ. Թագ. ԺԸ. 14:

¹⁰ Տէս Թուոց ԻԵ. 7–15:

¹¹ Տէս Յովհ. ԺԹ. 34:

Եօթներորդ՝ խաչին գամելով կը կախեն, ինչպէս բոլոր իրենց ծնողներուն նկատմամբ վնասապարտներուն՝ Մովսէս կը հրամայէր կախել¹², ինչպէս հրեաներն ալ Պիղատոսէն կը խնդրէին մեր Տիրոջ համար. «Խա՛չ հանէ զԻնք»¹³, ինչպէս ալ հանեցին:

Ութերորդ՝ պարանով կամ լարով կը խեղդեն, ինչպէս Վաղէսը Սուրբ Պօղոս խոստովանողին խեղդեց ու սպաննեց¹⁴: Յուդան ալ կախուելով խեղդուեցաւ¹⁵: Նոյնպէս Աքիտոփէլը¹⁶:

Իններորդ՝ մահացուցիչ դեղ կը խմցնեն, ինչպէս հայոց իշխանները Տրդատին խմցուցին¹⁷: Եւ Պապը՝ Ներսէս Հայրապետին¹⁸:

Տասներորդ՝ վերջին վճիռ կու տան՝ սուրով գլխատելու, ինչպէս Զաքարիային սպաննեցին տաճարին մէջ՝ Սեղանին [դիմաց]¹⁹: Եւ Կայէնը սպաննեց Աբէլին²⁰: Նմանապէս սուրբերէն եւ ոչ սուրբերէն շատերուն կ'ընեն թէ՛ հինին եւ թէ՛ նորին մէջ:

Արդ՝ թէեւ կան մարդոց մահացուցիչ այլ տանջարաններ, սակայն խստագոյնները ասոնք են, որ ըսինք. Տէրը [ատոնցմէ] վեցը Իր վրայ ընդունեց, սակայն երեքը կատարուեցան, երեքի մասին խորհեցան, սակայն չկատարուեցաւ:

Որովհետեւ Հերովդէսը կամեցաւ սուրով սպաննել, այդ պատճառով Բեթլեհէմի մանուկները կոտորուեցան²¹: Եւ հրեաները ուզեցին լեռնէն գլորել²²: «Քարեր առին, — կ'ըսէ աւետարանիչը, — որպէսզի փառկոծեն զԻնք»²³:

Իսկ երեքն ալ իրապէս կատարուեցան, քանի որ խաչին վրայ գամեցին, տէգով խոցեցին²⁴ եւ լեղիով խառնած քացախ խմցուցին²⁵:

¹² Տէս Բ. Օր. ԻԱ. 22:

¹³ Ղուկ. ԻԳ. 21:

¹⁴ Տէս «Համաքրիստոնէական Սուրբեր», ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆՈՒՍԵԱՆ, Գանձասար, 1997, էջ 68:

¹⁵ Տէս Գործք Ա. 18:

¹⁶ Տէս Բ. Թագ. ԺԵ. 12, ԺԷ. 23:

¹⁷ Տէս Մովսէս ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց Պատմութիւն, Հայաստան հրատ., 1997, դրուագ չորրորդ, Բան Զ., էջ 388:

¹⁸ Տէս Փաւստոս Բիւզանդացիի Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, գլուխ ԻԴ., էջ 220—222:

¹⁹ Տէս Բ. Մնաց. ԻԴ. 21—22. Մատթ. ԻԳ. 35. Յովսէփոս ՓԼԱԻՌՈՍ, «Հրէական հնութիւնք», 1761, IX, 168—169, 171:

²⁰ Մինդ. Դ. 8:

²¹ Տէս Մատթ. Բ. 16—18:

²² Ղուկ. Դ. 29:

²³ Յովհ. Ժ. 31:

²⁴ Յովհ. ԺԹ. 34:

²⁵ Յովհ. ԺԹ. 29:

Իսկ եթէ մէկը հարցնէ, թէ ինչո՞ւ համար երեք տեսակի սպաննումով մեռաւ Տէրը: Կ'ըսենք, որ երեք պատճառով.

Նախ՝ քանի որ Ադամ բերանով խօսեցաւ օձին հետ, իսկ ոտքերով ու ձեռքերով ծառին մօտեցաւ, իսկ կողով՝ Եւայով, Ադամ խաբուեցաւ: Այդ պատճառով Տէրը բերանով լեղի ճաշակեց՝ Եւայի խօսքերուն պատճառով, իսկ ոտքերով ու ձեռքերով գամուեցաւ՝ պտուղէն ուտելու երթալուն համար, իսկ կողէն խոցուեցաւ՝ կողին՝ Եւային համար:

Երկրորդ՝ որովհետեւ ամէն մեզը երեք ձեւով կը գործուի, որ մէկը նախ կը ցանկայ բոլոր մեղքերը, իսկ բերանով կը խօսի ու ոտքերով դէպի շարը կ'ընթանայ ու առանց ձեռքի չի՛ գործեր, այդ պատճառով Տէրը կողէն խոցուեցաւ մեր ցանկութեան պատճառով ու բերանով լեղի ճաշակեց՝ խօսքով մեղանշելուն պատճառով, իսկ ձեռքերով ու ոտքերով գամուեցաւ մեղքերու գործերուն համար, որպէսզի բոլորին քաւէ:

Երրորդ՝ որովհետեւ պատիժները երեք են, որ Ադամ կրեց, քանի որ հոգիով դժոխք իջաւ, մարմինով ապականութիւն կրեց, իսկ միտքով չարի խնամքին մէջ հաստատուեցաւ, այդ պատճառով Տէրը երեք տեսակի սպանմամբ մեռաւ, որպէսզի ամբողջ մարդը ազատէ:

Ասկէ մեզի հինգ կասկած կը յառաջանայ.

Նախ՝ թէ Աստուած յայտնապէս Նոյին ըսաւ, թէ ով որ մարդու արին թափէ, անոր արեան փոխարէն իր արինը պիտի թափուի²⁶, ու այստեղ կ'ըսէ. «Մի՛ սպաններ»: Իսկ Տէրը կ'ըսէ. «Ով ո՞ր սուր կ'առնէ, սուրով պիտի մեռնի»²⁷: Իսկ Մովսէս էրիկ մարդու եւ ուրիշներու հետ շնութիւն ընողներուն, որ օրէնքին մէջ գրուած է, կ'ըսէ՝ պէտք է քարկոծել²⁸, եւ ուրիշ բազմաթիւ բաներ, հետեւաբար հակառակ են իրարու:

Երկրորդ կասկածը. Մովսէս ինչո՞ւ համար ծնողներուն հանդէպ մեղանշողներուն խաչել տուաւ²⁹, իսկ այլ յանցաւորներուն՝ քարկոծել:

Երրորդ՝ որովհետեւ օրէնքը սպաննելու հրաման կու տայ: Արդարեւ, ով որ Աստուծոյ օրէնքներուն համար կը սպաննէ, պարտական է արեան, թէ՞ ոչ:

Չորրորդ՝ եթէ բոլորն ալ օրէնքներու համար վրէժխնդիր ըլլան, արժան է սպաննել, թէ՞ չէ:

²⁶ Ծննդ. Թ. 6:

²⁷ Մատթ. ԻԶ. 52:

²⁸ Հմմտ. Բ. Օր. ԻԲ. 22:

²⁹ Հմմտ. Բ. Օր. ԻԱ. 18—23:

Հինգերորդ՝ թէ դահիճները արեան որոշ պատասխանատուութիւն ունին, քանի որ իրենց ձեռքով կը մեռնի դատապարտեալը:

Արդ, առաջինին համար կ'ըսենք, թէ սպաննութիւնը կրկնակի ձեւով կ'ըլլայ, մէկը՝ անմեղութեամբ կը մեռնի, ինչպէս Աբէլը, իսկ միւսը՝ չարիքներու պատճառով, ինչպէս գողերն ու աւազակները:

Արդարեւ, առաջինին համար Նոյին ըսաւ, թէ արիւն չթափել³⁰, նմանապէս՝ Տէրը եւ Օրէնքը: Իսկ երկրորդին համար Օրէնքը կը հրամայէ քարկոծել ու սպաննել, որպէսզի միւսները վախնան ու այդ չարիքը չգործեն: Իսկ որ կ'ըսէ, թէ ով որ մարդու արիւն կը թափէ³¹, «մարդու» կ'ըսէ, այսինքն՝ սուրբին, որովհետեւ մարդը Աստուծոյ պատկերով է³², որ սուրբերուն մէջ կ'երեւի, քանի որ ով որ կը մեղանչէ, մարդ չէ, որ Աստուծոյ պատկերով է, այլ՝ անասունի, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Մարդ պատիւի մէջ էր, բայց չիմացաւ»³³: Հետեւաբար, եթէ մէկը մեղանչողին սպաննէ, մարդ չսպաննէր, այլ՝ անասուն, որ մեղք չէ:

Երրորդ՝ քանի որ բանական եւ գրաւոր օրէնքին մէջ մարդը կատարեալ կ'ըսուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի համար, ինչպէս Երեմիա Մարգարէն կ'ըսէ. «Մարդ աւաւած է, ո՞վ կը ճանչնայ զինք»³⁴: Հետեւաբար, Իրեն (Յիսուսի.— Վ. (Յ.) Ք.) համար հրեաներուն կ'ըսէ. «Մի՛ սպաննէր»³⁵: Եւ յայտնի է, թէ Անոր սպաննելուն արեան փոխարէն Վեսպասիանոսը³⁶ կոտորեց հրեաներուն ազգը:

Երկրորդին մասին կ'ըսենք, թէ ով որ օրէնքներուն դէմ կը մեղանչէր, հասարակ ժողովուրդին չարիքներու նշաւակ կ'ըլլար, այդ պատճառով հասարակ ժողովուրդին ըսաւ քարկոծել, իբրեւ թէ անոնց օրէնքը լուծեց այդ մարդը: Նաեւ թէ բոլորն ալ հաղորդակից դարձան անոր չարչարանքներուն, որպէսզի բոլորը տեսնելով վախնան: Իսկ ով որ ծնողներուն նկատմամբ կը մեղանչէր, միայն ծնողներուն նկատմամբ էր, եւ այդ պատճառով միայն մէկ կամ երկու հոգիով խաչ կը հանէին զինք եւ ո՛չ թէ ամբողջ ժողովուրդը:

Եւ դարձեալ՝ ան, որ կը շնար, աշխարհական մեղանչում էր, այդ պատճառով գետինով կու տային զայն: Իսկ ծնողներուն նկատմամբ

³⁰ Հմմտ. Ծննդ. Թ. 5—6:

³¹ Հմմտ. Ծննդ. Թ. 6:

³² Հմմտ. Ծննդ. Ա. 27:

³³ Սաղմ. ԽԸ. 13, 21:

³⁴ Երեմ. ԺԷ. 9:

³⁵ Բ. Օր. Ե. 17:

³⁶ Տէս ՍՎԵՏՈՆԻՍ, «Պատմութիւն երկոտասան կեսարաց», Զմիւռնիա, 1877:

[գործուածը]՝ Աստուծոյ կը վերաբերէր, այդ պատճառով հրամայեց խաչ բարձրացնել³⁷:

Այդպէս կը կարծէին նաեւ հրեաները մեր Տիրոջ մասին, թէ Հօր Աստուծոյ հակառակ է, այդ պատճառով ալ այդպիսի նեղութիւններ տուին Անոր: Եւ որովհետեւ անցեալին Հայրը յայտնած էր, յայտնի է, ինչպէս Մովսէս կ'ըսէ. «Ասիկա չէ՞ քու հայրդ, որ քեզ ստեղծեց»³⁸:

Դարձեալ՝ ծնողներուն նկատմամբ կրկնակի մեղանշած ըլլալուն համար կրկնակի պատիժ կու տային, որովհետեւ նախ կ'անհիծէին ու ապա կը խաչէին: Եւ այս էր կրկնակի մեղանշումը, թէ՛ ծնողներն ու Օրէնքը կ'անարգէին: Իսկ շնացողները միայն Օրէնքը կ'անտեսէին, այդ պատճառով առանց անհիծելու կը քարկոծէին:

Երրորդին մասին կ'ըսուի, թէ հին Օրէնքին մէջ արեան պարտական չէր ան, որ Օրէնքին համար կը սպաննէր՝ անոնց խստապարանոց ըլլալուն պատճառով, եւ շատ էին անոնք, որոնք սպաննումին համար կ'երկնչէին ու օրէնքը կը գործադրէին, այդ պատճառով արեան պարտական չէին: Սամուէլէն յայտնի է, որ Ագազ թագաւորին սպաննեց³⁹: Եւ նոյնպէս Մովսէս՝ եգիպտացիին⁴⁰, իսկ Եղիան՝ Բահաղի մարգարէներուն, եւ արեան պարտական չեն⁴¹: Իսկ նոր օրէնքին մէջ այդպէս չէ, քանի որ հրաման չկայ ոեւէ մէկուն սպաննել՝ ո՛չ Աստուծոյ օրէնքներուն համար եւ ո՛չ ալ ուրիշներուն: Որովհետեւ եթէ «յիմար» կոչելը պարտական կը դարձնէ գեհենի կրակին⁴², ինչքան աւելի գլխովին սպաննումը:

Հարցում. սակայն օրինագանցներուն ի՞նչ ընենք, որովհետեւ շատեր կը մեղանշեն:

Պատասխան. այս բանը Քրիստոսէ սորվինք, որ կ'ըսէ. «Եթէ եղբայրդ մեղանշէ, գնա՛ ու յանդիմանէ՛ զինք, եւ ապա երկու եղբայրներու ներկայութեամբ..., եւ յետոյ եկեղեցոյ մէջ: Իսկ եթէ չզոյջայ, հեթանոսի պէս թող ըլլայ քեզի համար»⁴³, որովհետեւ Աստուած այստեղ [աշխարհի մէջ մարդուն] ապրիլը կ'ուզէ, քանի որ թողութեան ժամանակ է, որպէսզի ժամանակ

³⁷ Հմմտ. Բ. Օր. ԻԱ. 18–23:

³⁸ Բ. Օր. ԼԲ. 6:

³⁹ Տէս Ա. Թագ. ԺԵ. 33:

⁴⁰ Տէս ԵԼԹ Բ. 12:

⁴¹ Տէս Գ. Թագ. ԺԸ. 41:

⁴² Տէս Մատթ. Ե. 22:

⁴³ Հմմտ. Մատթ. ԺԸ. 15–17:

մը ետք ապաշխարէ ու ապրի: Իսկ եթէ քեզ՝ յանդիմանողիդ, չսէ, դուն վկայ կ'ըլլաս անոր խրատին, եւ՝ «պատժելը Իմս է, Ես պիտի հատուցեմ, կ'ըսէ Տէրը»⁴⁴, որպէսզի միայն Տիրոջմէ երեւի յանցաւորներուն [նկատմամբ] պատիժը:

Իսկ եթէ մէկը ասոր հակառակի մէջբերելով, թէ Պօղոսը պոռնկութիւն ընող կորնթացի երիտասարդին կրակի մատնեց⁴⁵, իսկ Պետրոսը Անանիային ու Սափիրային խօսքով սպաննեց⁴⁶, ատիկա ինչ է, արդարեւ անոնք Քրիստոսի առաքեալները չէին եւ նոր օրէնքին մէջ չէին:

Կ'ըսենք, թէ օրէնքը տակաւին նոր էր, իսկ անոնք հին օրէնքի պատիժներուն սովոր էին, այդ պատճառով Պօղոս մատնեց երիտասարդին⁴⁷: Իսկ տարիներ ետք Յովհաննէսը բազմաթիւ հաւատացեալներուն մէջէն մոլորած երիտասարդին ապաշխարութեամբ ապրեցուց⁴⁸, որ վնասակարութեամբ աւելին էր, քան կորնթացին: Իսկ Պետրոսը տակաւին կայ, որ է խօսքով կապուածը⁴⁹, որ թէեւ յայտնապէս մարմինը չի մեռնիր, սակայն հոգին յաւիտենական կապանքը կը կրէ, որ է հոգիին մահը: Եւ ասոնք անոնք են, որոնք այսպիսի անցուդարձեր կը կրեն, որոնք Հոգիին հայհոյողներ են, հերձուածողներ ու չզղջացողներ:

Եւ դարձեալ՝ քանի որ հաւատացեալները խստապարանոց ազգէն էին, այդ պատճառով հին օրէնքով դատեց զանոնք մինչեւ որ վարժուեցան նոր օրէնքին: Եւ յայտնի է Պօղոսի գրածէն, որ Տիմոթէոսին կ'ըսէ, քանի որ չըսուիր, սպաննէ՛, այլ՝ յանդիմանէ մեղանշողները, սաստի՛ ու մխիթարէ⁵⁰, ինչպէս Տէրն ալ ըսաւ Աւետարանին մէջ⁵¹: Հետեւաբար, ճիշդ է նոր օրէնքին մէջ վնասապարտներուն չսպաննելը:

Չորրորդին համար կ'ըսուի, թէ ոչ ոք իրաւունք ունի ոեւէ մէկուն դատել օրէնքին համար, որովհետեւ դատողին երեք բան պէտք է.

Նախ՝ իմաստութիւն, ինչպէս յայտնի է Սողոմոնէն, որ [իմաստութիւն] խնդրեց Աստուծմէ, Անոր մեծ ժողովուրդին դատաստան ընելու համար⁵²:

⁴⁴ Տէս Հռոմ. ԺԲ. 19:

⁴⁵ Հմմտ. Ա. Կորնթ. Ա. 5:

⁴⁶ Տէս Գործք Ե. 9–10:

⁴⁷ Հմմտ. Ա. Կորնթ. Ե. 5:

⁴⁸ Տէս «Գանձասար», Բ., 1992, էջ 257–258:

⁴⁹ Տէս Մատթ. ԺԸ. 18:

⁵⁰ Բ. Տիմ. Գ. 2:

⁵¹ Հմմտ. Մատթ. ԺԸ. 15:

⁵² Հմմտ. Գ. Թագ. Գ. 9:

Երկրորդ՝ իշխանութիւն, ինչպէս Տէրն առաքեալներուն տուաւ. «Ահա ձեզի իշխանութիւն տուի կոխկոտելու օձերն ու կառիւնները»⁵³: Նոյնպէս Աստուած Մովսէսէն ետք Յեսուին իշխանութիւն տուաւ՝ հրամայելու եւ իշխելու ժողովուրդին:

Երրորդ՝ որպէսզի օրէնքները սիրող ըլլայ, ինչպէս Եղիան, որովհետեւ Բահադի մարգարէները սպաննեց⁵⁴: Այս ամէն ինչը բոլորին չի՛ հանդիպիր, այլ՝ ոմանց: Ասկէ երեւցաւ, թէ ով կրնայ դատել: Իշխանները, որոնք Աստուծոմէ իշխանութիւն ունին, ըստ Առաքեալին⁵⁵, որոնք Աստուծոմէ կարգուած են, կարգուած իշխաններ, եպիսկոպոսներ ու քահանաներ, որոնք իմաստութեամբ լեցուն են: Նաեւ խոստովանահայրը, որ օրէնքներուն համար վրէժխնդիր է, ինչպէս նաեւ սիրող ու կատարող: Իսկ ասոնցմէ դուրս անիրաւութիւն է:

Հինգերորդին համար կ'ըսուի, թէ իւրաքանչիւր ոք արեան պարտական կ'ըլլայ ու մեղքերու կցորդ, այսինքն՝ ան, որ իր միտքին մէջ խէթ ունի կամ կ'ուրախանայ սպաննութեան համար, եւ այսպիսիները մօտիկ են սպաննութեան, սակայն արեան պարտական չեն, որովհետեւ նոյնպէս անոնց կամքը կը կատարուի, ինչպէս՝ սպաննողինը, թէեւ այդ վայրէն հեռու են:

Արդ՝ եթէ դահիճը ըստուած պատճառներէն ունի իր վրայ, մարդասպան է եւ առաւել մարդասպան, քանի որ իր ձեռքերով կը կատարէ կամքը, իսկ եթէ չունի, իր տիրոջ հրամաններուն կատարող է, արեան պարտականը իր տէրն է եւ ո՛չ թէ ծառան:

Իսկ եթէ մէկը դարձեալ հարցնէ, թէ ահաւասիկ քրիստոնեայ իշխաններ կան, եւ իշխաններուն գործը վնասակարներուն ջնջելն է: Արդ՝ եթէ սպաննէ, մարդասպան է, իսկ եթէ ոչ՝ գողերը կը շատնան, ու անիրաւները կը բազմանան, ի՞նչ պէտք է ընել:

Կ'ըսենք, թէ աստուածային օրէնքներուն մէջ չկայ իշխան եւ իշխանութեան տակ եղող, այլ՝ բոլորէն կը պահանջէ արդար եւ սուրբ ըլլալ ու առանց արիւնի: Արդ՝ եթէ մէկը աստուածային դատաստանէն կը վախնայ, օգուտ չէ կամ սպաննող ըլլալ ուրիշներուն, որովհետեւ եթէ Աստուած գազաններէն մարդուն արիւնը կը պահանջէ⁵⁶, ինչքան աւելի

⁵³ Տէս Դուկ. Ժ. 19:

⁵⁴ Տէս Գ. Թագ. ԼԸ. 41:

⁵⁵ Հմմտ. Հռոմ. ԺԳ. 1:

⁵⁶ Տէս Ծննդ. Թ. 5:

ուրեմն անորմէ եւ հետեւաբար իշխանութենէն հեռու պէտք է մնայ: Իսկ ոմանք կ'ըսեն, թէ թէեւ նոր օրէնքին մէջ արիւն թափել չկայ, սակայն քաղաքական օրէնքներուն եւ թագաւորական կանոններուն մէջ հարկ եղած է սպաննել գողերն ու աւազակները, որպէսզի մարդիկ խաղաղութեամբ եւ հանգիստ ապրին, եւ վախի պատճառով ուրիշներ այդ շարութիւնը չգործեն: Եւ վկայ կը բերեն Առաքեալը, որ կ'ըսէ. «Իշխանները վախ չեն պատճառէր բարիք գործողներուն, այլ միայն շարագործներուն»⁵⁷: Անոնք լսեցին Սողոմոնին խօսքը, որ կ'ըսէ. «Անաշառ դատաստան պիտի կատարուի իշխաններուն համար»⁵⁸, որովհետեւ եթէ իրաւունքով եւ դատաստանով կը սպաննէին յանցաւորներուն, ատիկա իրենց համար թեթեւագոյնը կ'ըլլար, սակայն վարժուելով անոր՝ անմեղները սպաննեն, առոր համար անոնց փրկութիւն չկայ, այդ պատճառով կ'ըսէ. «Մի՛ սպաններ»:

Եւ գիտելի է, թէ սպաննութեան պատճառները բազմաթիւ են, որոնք սպաննութեան կը հրաւիրեն, որ արժէ իմանալ:

Նախ՝ ատելութիւն, ինչպէս կ'ըսէ Առաքեալը. «Ով որ իր եղբայրը կ'ատէ, մարդասպան մըն է»⁵⁹:

Երկրորդ՝ նախանձը, ինչպէս Սողոմոն կ'ըսէ. «Բանասարկութիւն նախանձելուն պատճառով մահը աշխարհ մտաւ»⁶⁰, եւ անոնք, որոնք նոյն ընթացքով կ'ընթանան, այդ նոյն բանին բաժնեկից կ'ըլլան:

Երրորդ՝ շարախօսութիւն, ըստ որում՝ Մարգարէն կ'ըսէ. «Իշխաններն ու շարախօսները իրարու հետ նստան»⁶¹: Իսկ սատանան արտօնութիւն կ'ուզէր Յոբին համար ու կը շարախօսէր անոր մասին. «Դուն կը պահես ամոր ամէն ինչը»⁶²:

Չորրորդ՝ նենգութիւն, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Իմ մասիս նենգութեամբ խօսեցան»⁶³:

Հինգերորդ՝ ցանկութիւն, ինչպէս Առաքեալը կ'ըսէ. «Յանկութիւն յղանալով մեղքը կը ծնի, իսկ կատարուած մեղքը՝ մահ կը ծնի»⁶⁴:

⁵⁷ Հռոմ. ԺԳ, 3:

⁵⁸ Իմաստ. Զ, 6

⁵⁹ Ա. Յովհ. Գ. 15:

⁶⁰ Իմաստ. ԲԺ, 24:

⁶¹ Հմմտ. Սաղմ. ՃԺԸ. 23:

⁶² Տէս Յոբ Ա. 10:

⁶³ Սաղմ ՃԸ. 2:

⁶⁴ Հմմտ. Յակ. Ա. 15:

Վեցերորդ՝ բարկութիւն, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Ով որ առանց պատճառի իր եղբօր դէմ բարկանայ, գեհեմի կրակին պիտի դատապարտուի»⁶⁵, քանի որ բարկութենէն մահ կը ծնի, եւ թէ՛ «մարդուն բարկութեամբ Աստուծոյ արդարութիւնը չիրագործուիր»⁶⁶:

Եօթներորդ՝ հպարտութիւն, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Ահա ա՛յս է բռնող կորստեան պատճառները, հպարտութիւն եւ հացի ու գինիի պարատութիւն»⁶⁷: Եւ՝ «հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին»⁶⁸:

Ութերորդ՝ ռիսակալութիւն, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Բարկութեամբ ռիս կը պահէին ինծի հանդէպ, այդ պատճառով սիրտս խռովեցաւ, եւ մահուան երկիւղը մտաւ մէջս»⁶⁹:

Իններորդ՝ քինախնդրութիւն, ինչպէս Աբիսողոմը իր քրոջ՝ Թամարին համար քինախնդիր եղաւ Ամոնէն ու սպաննեց զայն⁷⁰:

Տասներորդ՝ անձնահաճութիւն, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Վա՛յ անոնց, որոնք իրենց զիրենց իմաստուն կը համարեն եւ իրենց աչիւն գիտուններ են»⁷¹, որովհետեւ իւրաքանչիւր ոք, ով ինքն իրեն կը հաւնի, այդպիսին ո՛չ մէկուն ապրիլը չի կամենար, ու այդպիսիին համար քիչ պատճառներ պէտք են ոեւէ մէկուն սպաննելու համար:

Իսկ եթէ մէկը հարցնէ. սպաննութիւնը ինչո՞ւ համար մեղք է:

Կ'ըսենք, թէ բազմաթիւ պատճառներու համար.

Նախ՝ քանի որ Աստուծոյ պատկերը կ'ապականէ, որ է կատարեալ մարդը՝ հոգին ու մարմինը: Այդ պատճառով Աստուած Նոյին կ'ըսէր. «Մարդու արիւն մի՛ թափէ, որովհետեւ ես Աստուծոյ պատկերով արարեցի մարդը»⁷²:

Երկրորդ՝ որովհետեւ Աստուծոյ է մարդուն դատելը ըստ մահու եւ ըստ կեանքի, այդ պատճառով Առաքեալը կ'ըսէ. «Ո՛վ ես դուն, որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը Ի՛նք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած»⁷³: Իսկ ան որ կը սպաննէ՝ Աստուծոյ դատաստանը կը յափշտակէ, այն, որ կ'ըսէ. «Ի՛մս է վրէժխնդրութիւնը»⁷⁴:

⁶⁵ Տէս Մատթ. Ե. 22:

⁶⁶ Տէս Յակ. Ա. 20:

⁶⁷ Տէս Եզեկ. ԺԶ. 49:

⁶⁸ Դուկ. ԺԲ. 16:

⁶⁹ Հմմտ. Սաղմ. ԾԴ. 3—5:

⁷⁰ Տէս Բ. Թագ. ԺԳ. 23—39:

⁷¹ Հմմտ. Ես. Ե. 21:

⁷² Հմմտ. Ծննդ. Թ. 6:

⁷³ Հռոմ. ԺԴ. 4:

⁷⁴ Բ. Օր. ԺԲ. 35:

Երրորդ՝ քանի որ Աստուած հոգին կապած է մարմինին, եւ Ան, որ կապեց, Անոր վայել է արձակելը: Իսկ ան, որ կը սպաննէ, Աստուծոյ ստեղծածը կ'արհամարհէ՝ Անոր արարածներուն չհաւնելով:

Չորրորդ՝ որովհետեւ սպաննուածին արեան գոշումը միշտ կ'աղաղակէ Աստուծոյ ականջներուն վրէժխնդրութիւնը չձգելու, ինչպէս Աստուած Կայէնին կ'ըսէր. «Եղբօրդ արիւնը կ'աղաղակէ Ինծի»⁷⁵:

Հինգերորդ՝ քանի որ սպաննուածին փոխարէն օրէնք եւ հարկաւորութիւն դրուած է Աստուծմէ, թէ անոր արիւնը պէտք է թափուի⁷⁶, այսինքն՝ սպաննողին, ինչպէս Տէրը հրեաներուն կ'ըսէր. «Խաբանչիւր արդարի թափուած արիւնը այս ազգին վրայ պիտի գայ»⁷⁷:

Վեցերորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր մեղք մէկ անգամ կը գործուի, եւ յետոյ չի պահանջուիր նոյնը ընել անոր քաւութեան համար, ինչպէս շնութիւնը եւ գողութիւնը, արդար դատաստան չի պահանջեր, այլ՝ շնութիւն եւ գողութիւն: Իսկ սպաննողին՝ իւրաքանչիւր արդար դատաստան գլուխը կը պահանջեն, ինչպէս Մովսէս կ'ըսէր. «Աչի տեղ աչի եւ խաւանի դիմաց խաւան»⁷⁸:

Եօթներորդ՝ քանի որ ուրիշի մը մարմինը սպաննած ժամանակ անմիջապէս սպաննողին հոգին կը մեռնի յաւիտենական մահով, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Ո՛չ միայն սպաննելուն համար, այլ՝ [իր եղբօր դէմ] բարկանալուն համար, գեեների կրակին պարտական պիտի ըլլայ»⁷⁹:

Ութերորդ՝ որովհետեւ սպաննողը սպաննուածի մեղքերուն պարտական կ'ըլլայ, որ սպաննողը խափանեց, ինչպէս Աստուած Կայէնի համար կ'ըսէր, թէ՝ «ով որ Կայէնին սպաննէ, անորմէ եօթնապատիկ վրէժ առնուի»⁸⁰:

Իններորդ՝ քանի որ ինչ առաքինութիւն եւ բարութիւն կար սպաննուածին համար յառաջիկային, որ սպաննողը խափանեց, այդ բոլորը անորմէ պիտի պահանջուին:

Տասներորդ՝ որովհետեւ նաեւ ձեր արիւնը, — կ'ըսէ Աստուած, — բոլոր գազաններէն պիտի խնդրեմ⁸¹, այսինքն՝ անհաւատներէն ու չարերէն՝ հանդերձեալ դատաստանին, ո՛չ միայն սպաննութիւնը, այլեւ՝ այնտեղ

⁷⁵ Հմմտ. Ծննդ. Գ. 10:

⁷⁶ Ծննդ. Թ. 6:

⁷⁷ Հմմտ. Մատթ. ԻԳ. 35. Ղուկ. ԺԱ. 50—51:

⁷⁸ Հմմտ. Ելք ԻԱ. 25:

⁷⁹ Տէս Մատթ. Ե. 22:

⁸⁰ Տէս Ծննդ. Գ. 15:

⁸¹ Հմմտ. Ծննդ. Թ. 5:

բոլորին կտրուած ձեռքերուն, ոտքերուն, ունգերուն եւ աչքերուն, ինչպէս Սուրբ Ներսէսը կ'ըսէ իր երգի վերջաւորութեան⁸²:

Արդարեւ, այս բոլոր բաները, որ ըսուեցան, ընդհանուրին համար ըսուեցան, որ կ'ըսէ. «Մի՛ սպաններ»: Իսկ առանձնակի, ի դէմս Քրիստոսի, հրեաներուն կ'ըսէ. «Մի՛ սպաններ»: Եւ երկրորդ՝ ի դէմս մեր հոգիին, որ հանապազ մեղքերով կը սպանենք:

Արդ, Քրիստոսի համար կ'ըսէ, թէ՛ «մի՛ սպաններ»: [Եւ ասիկա] բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ քանի որ քու Աստուածդ է, որ ամէն տեսակի բարիքները տուաւ քեզի անապատին եւ պարգեւներու երկրին մէջ:

Երկրորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», որովհետեւ բոլոր ազգերուն մէջ ձեր ազգին մէջէն մարմնացաւ ու ձեզի համար ջատագով կ'ըլլայ, ինչպէս կ'ըսէր. «Ես միայն Իսրայէլի ժողովուրդին կորսուած ոչխարներուն համար դրկուեցայ»⁸³:

Երրորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», քանի որ ձեր մէջ չարութիւն չընէր, ինչի համար արժանի է սպաննելու, այլ՝ ամէն տեսակի բարիք, ինչպէս ժողովուրդը, հիացած սքանչելիքներէն, կ'ըսէ. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. նոյնիսկ խուլերուն լսել կու տայ եւ համբերուն՝ խօսիլ»⁸⁴, եւ Ինք Պիղատոսի ներկայութեան ծառային կ'ըսէր՝ «Եթէ սխալ բան մը խօսեցայ, ցոյց տուր սխալը. իսկ եթէ շիտակ է ըսած, ինչո՞ւ կը զարմես Ինձի»⁸⁵:

Չորրորդ՝ որովհետեւ նախ ձեզի տրուած է մարգարէութեան եւ քահանայութեան շնորհքը, ինչպէս նաեւ Օրէնքը, յիշէ՛ բարերարութիւնները, ինչպէս Պօղոս կ'ըսէ՝ «որոնց են՝ նահապետները, կտակարանները, եւ որոնցմէ Քրիստոս մարմնապէս ծնաւ»⁸⁶:

Հինգերորդ՝ քանի որ ձեր ազգի հիւանդներն ու ախտաժէտները կը բժշկէ եւ ո՛չ թէ՛ հեթանոսներունը, ինչպէս Եսային կ'ըսէ. «Ան մեր հիւանդութիւնները վերցուց եւ մեր ցաւերը վերացուց»⁸⁷: Եւ Ինք կ'ըսէր. «Ծիշդ չէ՛ մանուկներուն ձեռքէն հացը առնել եւ շուններուն նետել»⁸⁸:

⁸² Հմմտ. Շարական, Վաղարշապատ, 1888, էջ 530:

⁸³ Մատթ. ԺԵ. 24:

⁸⁴ Մարկ. Է. 37:

⁸⁵ Յովհ. ԺԸ. 23:

⁸⁶ Տէս Հռոմ. Թ. 5:

⁸⁷ Հմմտ. Ես. ԾԳ. 4:

⁸⁸ Մատթ. ԺԵ. 26:

Վեցերորդ՝ որպէսզի աստուածամարտ չըլլանք՝ Անոր խօսքերը արհամարհելով, ինչպէս անցեալին արհամարհեցիք ու տանջանքները կրեցիք:

Եօթներորդ՝ «մի՛ սպաններ», քանի որ պարզ մարդ մը չէ, որուն արիւնը վատնելը դիւրին է, այլ՝ Աստուած է եւ Տէր՝ երկինքի ու երկրի, որ այս բանը չիմանալով՝ Պիղատոսին կ'ըսէին. «Անոր արիւնը թող մեր վրայ ըլլայ»⁸⁹:

Ութերորդ՝ որովհետեւ Ինքն Իր վրայ պատճառ մը չունի, ինչ բանի պատճառով սպաննեցիք զինք ու անմեղ ապրեցաք, այդ պատճառով Տէրը ըսաւ. «Եթէ աշխարհ եկած չըլլայի եւ խօսած չըլլայի իրենց, մեղք պիտի չունենային...: Եթէ իրենց մէջ կատարած չըլլայի այնպիսի գործեր, որոնք ուրիշ ոչ ոք ըրած է, անոնք մեղք պիտի չունենային: Սակայն ճիմա անոնք ո'չ մէկ պատճառ ունին»⁹⁰:

Իններորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», որպէսզի սկիզբը սիրելի որդիներ եղողներդ, վերջաւորութեան ատելիներ չըլլաք:

Տասներորդ՝ «մի՛ սպաններ», որպէսզի Աստուծոյ աչքէն չելլէք ու բոլոր մարդոց համար ատելի ըլլաք, ինչպէս Առաքեալը կ'ըսէ⁹¹:

Արդ՝ այս խօսքը, որ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», հրեաներուն տասը թերութիւնները ցոյց տուաւ, որ հիմա ունին եւ որ չլսեցին ու սպաննեցին.

Նախ՝ որովհետեւ Աստուած միայն իրենց համար Աստուած կը կոչուէր, իսկ հիմա հեռացած է:

Երկրորդ՝ բոլոր ազգերուն մէջէն միայն իրենց հետ կը խօսէր, իսկ հիմա բոլորին հետ կը խօսի, բայց անոնց հետ՝ ոչ:

Երրորդ՝ Աստուած բոլորին բարիք կը կատարէ, իսկ զանոնք ընդհանրապէս լքած է մինչեւ վերջին ժամանակները:

Չորրորդ՝ որովհետեւ անոնցմէ վերցուց քահանայութիւնը եւ այլն:

Հինգերորդ՝ քանի որ մանուկները շուներ եղան, իսկ շուն կոչուածները Աստուծոյ որդիներ եղան, որոնք են՝ հեթանոս ժողովուրդները:

Վեցերորդ՝ որովհետեւ աստուածամարտ եղան:

Եօթներորդ՝ քանի որ Աստուծոյ արիւնին պարտական եղան:

Ութերորդ՝ որովհետեւ Աստուծոյ Բանին պատասխաններ չունին:

Իններորդ՝ քանի որ առաջին էին եւ վերջին եղան:

⁸⁹ Տէս Մատթ. Իէ. 25:

⁹⁰ Տէս Յովհ. Ժե. 22, 24:

⁹¹ Հմմտ. Ա. Յովհ. Գ. 13:

Տասներորդ՝ որովհետեւ Աստուծոյ աչքէն ելան ու աշխարհի բոլոր բնակիչներէն անիծուեցան: Որոնց նախապէս խնամելով՝ ըսաւ. «Մի՛ սպաններ»:

Իսկ մեր հոգիներուն համար կ'ըսէ՝ «մի՛ սպաններ»: [Եւ ասիկա] բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ որովհետեւ չես գիտեր, թէ Աստուած ինչպէս ստեղծած է ատիկա կամ ուրիշ, կամ երբ, եւ կամ ինչ է ատոր էութիւնը:

Երկրորդ՝ քանի որ ոչինչ տուած են ատոր համար որպէս գին, որովհետեւ ատիկա քու ծառադ չէ, որու վրայ մահուան եւ կեանքի իշխանութիւն ունիս:

Երրորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», քանի որ ատիկա Աստուծոյ պատկեր է, որու «արիւնը ֆեզմէ պիտի պահանջուի»⁹², — կ'ըսէ Աստուած:

Չորրորդ՝ որովհետեւ ատոր համար դուն եւս դատաստանի ժամանակ պատիժ պիտի կրես, ինչպէս կ'ըսէ. «Ձեմ ճանչնաւ ֆեզ»⁹³:

Հինգերորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», քանի որ չի կրնար վերստին յարութիւն առնել մեռելներէն այն աշխարհին մէջ, ինչպէս մարմինդ, եւ զղջումի [առիթ] չունի այն աշխարհին մէջ:

Վեցերորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», որպէսզի սատանային գերի կամ տեղակից չըլլայ, կամ տանջակից, կամ անարգակից, կամ ընկերակից, որովհետեւ այս բաները պիտի հանդիպին մեղաւորին:

Եօթներորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», քանի որ դատաստանին սպառնալիքը մեծ է, այսինքն՝ «ճանեցիք դուսի խաւարին»⁹⁴:

Ութերորդ՝ կ'ըսէ՝ հոգիդ մեղքերով «մի՛ սպաններ», որպէսզի անասուններուն չհաւասարիս, ինչպէս Ադամը՝ քու նախահայրդ:

Իններորդ՝ «մի՛ սպաններ», որպէսզի երկինքի անդրանիկներու խումբերէն չհեռացուիս:

Տասներորդ՝ կ'ըսէ՝ «մի՛ սպաններ», որպէսզի Աստուծոյ փառաւոր երեսէն չզրկուիս, Անորմէ, որ բոլոր սուրբերը կը ցանկան տեսնել:

Արդ՝ ինչպէս որ հրեաներուն համար ըսինք, թէ Տէրը սպաններուն պատճառով տասը պակասութեան հանդիպեցան, այդպէս ալ մենք, որ մեր հոգիները մեղքերով կը սպանենք, կը հանդիպինք այս տասը դառնութիւններուն: Որմէ զարհուրեցէք, կ'աղաչեմ, որպէսզի մեր քաղցր

⁹² Եզեկ. Գ. 18:

⁹³ Տէս Մատթ. ԻԵ. 12:


⁹⁴ Տէս Մատթ. ԻԲ. 13:

դէմքը դառնութեան չփոխուի: Մանաւանդ՝ յաւիտենական տանջանքներէն ազատումի յոյս չկայ: Որու երկիւղիւ մաքրենք մենք մեզ բոլոր մեղքերէն, որպէսզի յաւիտենական սպաննումէն փրկուինք, որ օրհնեալ է Հօր հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Շարունակութիւնը՝ յաջորդիւ

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց՝
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ





ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՄՄ

ԵՋՆԻԿ ԿՈՂՐԱՅՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԳՈՅ» ԵՐԿԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ

Ե. դարի հայ ինքնուրույն եւ թարգմանական երկերում իր լեզվաոճական կատարելութեամբ առանձնանում է Եզնիկ Կողբացու՝ առավելապես «Եղծ աղանդոց» վերնագրով հայտնի երկը¹:

Առաջին անգամ հրատարակվելով 1762 (1763) թ. Զմյուռնիայում², այն 2 հարյուրամյակից ավելի բանասերների, փիլիսոփաների, աստվածաբանների տարբեր սերունդների ուսումնասիրության առարկա է եղել³: Երկի լեզուն շատերն են գնահատանքի արժանացրել՝ սկզբում տարերային կերպով, առավելապես գեղարվեստական ու լեզվական հնարքները գնահատելով⁴, ապա ավելի համակարգված՝ զուտ լեզվական երեւույթների ու առանձնահատկությունների ուսումնասիրություններով:

Արդեն ԺԹ. դարում Վիեննայի Մխիթարյանները Ե. դարի հայ մատենագրությունն ըստ լեզվի եւ ոճի հատկանիշների դասակարգելիս քննել եւ բնութագրել են նաեւ Եզնիկի երկի լեզուն, ապա դասերից մեկը միաձայն կոչել նրա անունով: Այսպես, հայր Հ. Գաթրճյանը «Քաղուածոյք ի թարգ-

¹ Երկը պահպանված միակ ձեռագրում անխորագիր է. հրատարակիչները տարբեր կերպ են վերնագրել, որոնցից ընդունվածն այսօր «Եղծ աղանդոց»-ն է:

² Տե՛ս http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/girg_ynddimuteanc1762_index.html (30.07.2020):

³ Եզնիկ Կողբացու եւ նրա երկի վերաբերյալ մատենագիտական ցանկերը տե՛ս Կ. ՎՐԳ. ՔԻՊԱՐԵԱՆ, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1992, էջ 94–95: Պ. ԽԱՋԱՏՐԵԱՆ, Հայ հին գրականութեան մատենագիտութիւն, Երեւան, 2016, էջ 151–155: Մ. ՄԻՆԱՍԵԱՆ, Ծառք ընդդէմ աղանդոց, հտ. 1, Ժնեւ, 1992, էջ 17–42: R.W. THOMSON, A bibliography of classical Armenian literature to 1500 AD, Brepolis–Turnhout, 1995, էջ 117–121, R.W.Thomson, Supplement to a bibliography of classical Armenian literature to 1500 AD: Publications 1993–2005, Le Muséon, Revue D’Etudes orientales, tome 120, Louvain–La–Neuve, 2007, էջ 184–185: Նաեւ մատենագիտական ցանկերի մեջ չընդգրկված՝ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի լեզվի մի քանի առանձնահատկությունների շուրջ, «Լեզու եւ լեզվաբանություն», Երեւան, 2005, 1/13, էջ 6–14, REV. FATHER ZAVEN ARZOUMANYAN, The Refutation of the Sects by Eznik of Kolb, “Studies in Armenian Historiography”, New York, 1976, էջ 1–14.

⁴ Տե՛ս, օրինակ, Յ. ԹՈՐՈՍԵԱՆ, Եզնիկ եւ իւր երկասիրութիւնը, «Բազմավէպ», 1889, Խէ., էջ 14–20, 108–110, 199–201, 313–318, 385–389:

մանուկեանց նախնեաց հանդերձ յոյն բնագրաւ»⁵ աշխատության «Ազդարարութիւն» առաջաբանում համառոտ, իսկ հայր Ք. Սպենյանը «Ուսումն հայերէն դասական լեզուի» հատվածաբար տպագրված աշխատությունում⁶ «ընդարձակ ու մանրակրկիտ»⁷ ներկայացնում են Ե. դարի ինքնուրույն եւ թարգմանական երկերի լեզվաոճական դասերը՝ առաջին դասի մեջ նախ նշելով Եզնիկի գործը: Հ. Գաթրճյանն այդ առաջին դասը բնութագրում է հետևյալ կերպ. «...է ընդհանրականագոյն իմն քան զամենայն եւ դիպող ոճ ի հայերէն մատենագրութեան բուն ոսկի դարու՝ վասն կանոնաւորն ընթացից, վասն ճիշդ բանից, առատ եւ ազգի ազգի ասացուածոցն եւ անուանց, վասն պարզն զարդուց եւ զօրեղ դարձուածոց...»⁸:

Եթե Գաթրճյանն ու Սպենյանը դասերը նշում են ուղղակի՝ Ա., Բ., Գ., Դ. համարակալմամբ, ապա հայր Թ. Թոռնյանը, անդրադառնալով այս հարցին, դասերից առաջինը կոչում է հենց Եզնիկի անվամբ՝ «Ջառաջին դասն ի դէպ է մեզ յԵզնկայ անուն կոչել...»⁹: Այս դասի երկերը, ըստ նրա, կանոնավոր են, զարդարուն, խիստ հմուտ կազմված՝ «կանոնաւոր քան զայլսն ամենեսին եւ պարզագոյն քան զերկրորդն (Սյուրեղի.— Ք. Հ.) եւ քան զերրորդ (Ագաթանգեղոսի.— Ք. Հ.), այլ զարդարուն եւ ճարտար յոյժ ի շրջուածս»¹⁰ եւ «ի չորեցունց դասուց աստի պատշաճագոյն եւ դիպողագոյն քան զայլսն»¹¹, իսկ Եզնիկ Կողբացու երկը «կրնանք առանց չափազանցութեան ըսել՝ բոլոր Ոսկի դարու գրքերուն մէջ առաջին տեղն ունի, վասն զի հայերէն լեզուի բովանդակ գեղեցկութեանցն ու յատկութեանց գանձն է, եւ ամենայն նկատմամբ հայկաբանութեան կիրթ ճաշակի օրինակ»¹²:

Նույն բաժանումը որոշակի փոփոխություններով ընդունում է Նորայր Բյուզանդացին՝ «Վաղագոյն քան զիս Թոռնեան իւր պատուական Հատընտիր Ընթերցուածոց մէջ ի չորս Դասս բաժանած է «զմատենագրութիւն կամ զթարգմանութիւնս ոսկեղէն դարուն», եւ համառօտիւ նշա-

⁵ Յ. ՎՐԴ. ԳԱԹՐՃԵԱՆ, Քաղուածոյք ի թարգմանութեանց նախնեաց հանդերձ յոյն բնագրաւ, Վիէննա, 1849, չհամարակալված էջ 1—5:

⁶ Ք. ՎՐԴ. ՍՊԵՆՅԱՆ, Ուսումն դասական հայերէն լեզուի: (Հայկաբանութիւն): Առաջին դպրութիւն Անգիր ժամանակի, Վիէննա, 1920:

⁷ ՏԷՍ Ն. ԱՎԻՆՅԱՆ, Դասական հայերէնը եւ Վիեննայի Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 50:

⁸ Յ. ԳԱԹՐՃԵԱՆ, նշ. աշխ., չհամարակալված էջ 2:

⁹ Թ. ՎՐԴ. ԹՈՐՆԵԱՆ, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, հտ. Ա., Վիէննա, 1866, էջ 16:

¹⁰ Անդ, էջ 16:

¹¹ Անդ, էջ 17:

¹² Անդ, էջ 28:

նակած զնկարագիր իւրաքանչիւր Դասու: Ես հետեւած եմ իւր բաժանմանն, փոքր-ինչ փոխելով զկարգաւորութիւնն եւ զանուանակոչութիւնս: Իմ Առաջին Դասս, Եզնրկեան, է նոյնպէս Առաջին առ Թոռնեանի, Եզնկայ...»¹³: Եզնիկյան ոճը բնութագրելիս նա մեջբերում է Թոռնյանի տված բնութագրերը, ապա՝ «Կանոնաւոր, դաշնակաւոր, յընտրութեան եւ ի շարուածս բառից ամենաճարտար, ասացուածովք, բացատրութեամբ եւ նոյնանշանօք շատ հարուստ...»¹⁴:

Ն. Բյուզանդացու բաժանմանը հետեւում է Հր. Աճառյանը¹⁵, իսկ Եզնիկյան դասը բնութագրում իբրեւ «բոլորից կանոնավորը, ճիշտը, հստակը, արվեստավորն ու գեղեցիկն»¹⁶:

Թեեւ հետագայում լեզվաոճական դասերի այս բաժանումը քննադատվում է, առաջարկվում նորը¹⁷, սակայն այն լեզվի պատմութեան ուսումնասիրման տեսակետից պետք է հատկապէս կարեւորել Ն. դարի հայերեն երկերի լեզվական մանրամասն քննութեան սկիզբը դնելու ու հետագա բանավեճերով այդ հարցի առավել խորացմանը նպաստելու տեսանկյունից:

Մեզ համար, սակայն, կարեւորը տվյալ դեպքում ոչ թե դասերի բաժանման հիմքերը, սկզբունքները, ընթացքն ու հետագա ճակատագիրն են, այլ՝ լեզվի պատմութեան տվյալ փուլում արդեն իսկ Եզնիկի երկի լեզվի ճիշտ բնութագրումը եւ արժեւորումը, նրան տրված այն գնահատականը, որն անվիճելի կերպով ընդունելի է առ այսօր:

Այսպիսով, ԺԹ. դարից սկսած՝ մինչ օրս Եզնիկի երկի լեզուն համարվում է գրաբարի օրինակելի նմուշ¹⁸, եւ նրանից բազում հատվածներ տեղ են գտնում գրաբարի դասագրքերում¹⁹:

¹³ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՅՈՒ, Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, էջ 20:

¹⁴ Անդ, էջ 15:

¹⁵ Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, հտ. Բ., Երեւան, 1951, էջ 77–79:

¹⁶ Անդ, էջ 78:

¹⁷ Տէս Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երեւան, 1981, էջ 106–116:

¹⁸ Օր.՝ «...իր ոսկեղէն լեզուին համար Ն. դարու ամենէն շքեղ եւ կատարեալ յիշատակարանն է» (Վ. ՎՐԴ. ՔԻՊԱՐԵԱՆ, նշ. աշխ, էջ 90), «Հին մատենագիրների շարքում Եզնիկ Կողբացին այն բացառիկ դեմքերիցն է, որ պահել է գոնե ցայժմ իր ավանդական հոշակը ամուր եւ անբասիր... Չէ թե միայն ոճի եւ բովանդակութեան կողմից, այլ եւ հավաստիութեան տեսակետից Կողբացու երկը հաշվում է հայ գրականութեան պարծանք» (Ն. ԱՂՈՆՑ, Երկեր, հտ. Բ., Երեւան, 2006, էջ 131), «Եզնիկ Կողբացու լեզու եւ ոճը համարվել է հայ հին գրական լեզվի ամենակատարյալ օրինակը» (Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 117), «...անգին մատենիկ մի, ձառք ընդդէմ Աղանդոց» (Ն. ԲԻՒԶԱՆԴԱՅՈՒ, նշ. աշխ., էջ 18): Երկի լեզվի մասին այլ գնահատականներ եւ կարծիքներ տես Մ. Միմասյան, նշ. աշխ., էջ 88:

¹⁹ «Եղծաղանդոց»-ի լեզվի մասին դիտարկումները վերը նշվածով չեն սահմանափակվում. երկի լեզվին հետագայում անդրադաձել են նաեւ այլ ուսումնասիրողներ, ինչպես բուն

Մեր հոգվածի նպատակն է քննել «Եղծ աղանդոց» երկում կիրառված դարձվածքները, որոնք ուսումնասիրողների ուշադրությունից թեեւ չեն վրիպել ու տարբեր դիտարկումներով հիշատակվել են, սակայն առանձին՝ իբրեւ լեզվական համակարգի ուրույն բաղադրիչ, չեն ներկայացվել ու դիտարկվել:

Այսպես, Վ. Առաքելյանը «Ակնարկներ հայերեն գրական լեզվի պատմության» աշխատության մեջ՝ Եզնիկի երկի լեզուն եւ ոճը ներկայացնող գլխում, իբրեւ երկի բառապաշարի անբաժան մաս անդրադարձել է նաեւ դարձվածքներին: Նա որպես օրինակ բերում է երկում կիրառված 62 դարձվածք²⁰ (որոնցից այսօրվա չափանիշներով դարձվածք է մի մասը միայն, իսկ մյուսը՝ ուղղակի հարադրավոր բայեր, ինչպես՝ արգել լինել, խրատ տալ, պատասխանի առնել, կամ կայուն կապակցություններ՝ երկրի երես, բնական ազդեցություն) եւ հայտնում հիմնականում հետեւյալ դիտողությունները.

ա. Եզնիկը կիրառել է Արարատյան աշխարհի դարձվածքներ. «Լինելով Արարատյան աշխարհի բնակիչ՝ նա Արարատյան աշխարհի բազմաթիվ բառեր ու դարձվածքներ է օգտագործել» (էջ 117), «Այդ դարձվածքները Արարատյան աշխարհի ժողովրդի բերանում են մշակվել» (էջ 122):

բ. «Ունեն աշխարհիկ բովանդակություն, իրենց վրա կրում են Եզնիկյան գրական մշակույթի հետքերը, ուստի եւ բառապաշարի ձեւաբանության ու շարահյուսության ճշտության, ոճի պարզության ու պատկերավորության հետ միասնություն են կազմում իրենց արտահայտչունակամբ ու հաղորդականությամբ» (էջ 117):

գ. Այդ դարձվածքների մի մասը կիրառվում են այսօր. «...այդ բառերն ու դարձվածքները որոշ փոփոխություններով հարատեւել են մինչեւ այսօր» (էջ 117), «օրինաչափական փոփոխություններով դրանցից շատերը հարատեւում են առ այսօր» (էջ 122):

դ. Թեեւ այս միտքն ընդհանրապես շարահյուսական առանձնահատկությանն է վերաբերում, սակայն մասնավորապես եւ դարձվածքներին. «Երբեմն էլ դարձվածքային կապակցությունների, բաղադրյալ բայերի, կապերի ու սրանց խնդիրների միջեւ են մտնում նախադասության ուրիշ անդամներ եւ քանդում սրանց միասնությունը՝ պատճառ դառնալով մա-

լեզվական, այնպես եւ բնագրագիտական, աղբյուրագիտական, մատենագիտական եւ այլ քննություններ կատարելիս, որոնք չենք թվարկում մեր բուն խնդրից չհեռանալու համար:

²⁰ Վ. Առաքելյան, նշ. աշխ., էջ 122–123:

սամբ նախադասության պարզության մթագնմանը, բայց եւ առաջ բերելով ռճական որոշ վայելչություն ու հանդիսավորություն» (էջ 134):

Մ. Մ. Մոհամադին իր «Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի լեզու եւ ոճը» ատենախոսության մեջ (Երեւան, 2005) բավարարվում է հիշատակելով երկում դարձվածքների կիրառության մասին ու թվելով որոշները:

Մեզ համար քննությունը կատարելու առիթ²¹ է հանդիսացել երկի դարձվածքների ուսումնասիրության այս պատկերը, ապա այն, որ մինչ այժմ կատարված ուսումնասիրությունները քննել են երկի նախորդ հրատարակությունները, իսկ վերջինը Մ. Մինասյանի կազմած բնագիրն է, «ուր նկատի են առնուած հիմնական հրատարակությունների, ձեռագրի ցարդ առաջարկուած բոլոր սրբագրությունների տուեալները»²²:

Մ. Մինասյանի կազմած բնագիրը տպագրվել է նախ «Հանդէս Ամսօրեայ»-ում²³, ապա 1992-ին Ժնեւում եւ վերահրատարակվել «Մատենագիրք հայոց» մատենաշարում 2003-ին²⁴: Վերջինս մեր քննության սկզբնաղբյուրն է: Ժնեւի հրատարակությունը բաղկացած է 2 հատորից, առաջին հատորը պարունակում է ներածություն՝ մանրակրկիտ քննություն Եզնիկի երկի հրատարակությունների, նաեւ դրանց մասին եղած ուսումնասիրությունները եւ բնագիրը, իսկ երկրորդ հատորը՝ ծանոթագրություններ ու համաբարբառ: Եզնիկի երկի համար համաբարբառ կազմվել է դեռեւս 1972-ին՝ ըստ երկի 1826-ի վենետիկյան հրատարակության²⁵, բայց հաշվի առնելով բնագրում կատարած ուղղումներն ու փոփոխությունները՝ Մ. Մինասյանը կազմել է

²¹ Մի մասնավոր առիթ էլ այն է, որ գրաբարի՝ Ե. դարի հայ ինքնուրույն գրականության երկի դարձվածքների ուսումնասիրությունը 2015-ից մեր ատենախոսության թեման է: Չենք անդրադառնում համեմատություն դարձվածային արտահայտություններին, որոնց մանրամասն քննությունը տես Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V–XVI դդ.), Երեւան, 2015:

²² Մ. ՄԻՆԱՍՅԱՆ, Եզնիկ Կողբացու երկի հրատարակությունների պատմությունից, «Հասկ» հայագիտական տարեգիրք, 1981–1982, Նոր շրջան, Բ.–Գ. տարի, Անթիլիաս–Լիբանան, էջ 54:

²³ Տես «Հանդէս Ամսօրեայ», 1990, ՃԴ., էջ 79–125, 1991, ՃԵ., էջ 127–193, 1992, ՃԶ., էջ 139–187:

²⁴ «Մատենագիրք Հայոց», Ե. դար, Ա. հատոր, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 433–512:

²⁵ «Հայկական համաբարբառ» 1: Եզնկայ Կողբացույ Բարգրեւանդայ եպիսկոպոսի «Եղծ աղանդոյ» (Վենետիկ, 1826), կազմ.՝ Ժ. ԹՈՍՈՒՆՅԱՆ, խմբ.՝ Ա. Աբրահամյան, Երեւան, 1972: Տես նաեւ համաբարբառի վերաբերյալ գրախոսականը՝ Ա. ԶԵՅԹՈՒՆՅԱՆ, Եզնիկ Կողբացու համաբարբառը, ԼՀԳ, 1977, թ. 8, էջ 56–67, եւ գրախոսականի պատասխանը՝ Ժ. ԹՈՍՈՒՆՅԱՆ, «Եզնիկ Կողբացու համաբարբառ»-ի առթիվ, ԼՀԳ, 1978, թ. 1, էջ 88–91:

նաեւ նոր համաբարբառ²⁶։ Ընդ որում՝ այս համաբարբառում հատուկ առանձնացված է «Դարձուածային համաբարբառ»²⁷ բաժինը։ Սակայն համաբարբառն ընդգրկում է ոչ միայն դարձվածքներ, այլեւ որոշ կայուն կապակցություններ, բառեր ու արտահայտություններ, ինչպես հենց կազմողն էլ նշում է՝ «դարձուած կամ արտայայտութիւն համարելի միատորներ»²⁸, օրինակ՝ ազգի ազգի, ածել զկնի, աղէա գործել, անձրել լինել, անմահութիւն գգնուլ, առաքինութիւն ցուցանել, առ հասարակ, առնուլ նմանութիւն, արեայից արեայ, արէն է, բարեկամութիւն ունել, գոյ հնար, գտանել հնար, դեղ մատուցանել, դէպ է, ի դէպ է եւ այլն։ Մենք, հետեւելով հայ դարձվածաբանության մեջ առավելապես իշխող տեսակետին²⁹, դարձվածք ենք համարում վերախմաստավորված, փոխաբերական իմաստ ունեցող կայուն կապակցությունները, ուստի ոչ թե համաբարբառից, այլ բնագրից ինքնուրույնաբար քարտազրել ենք դարձվածքները։ Այդ քարտազրումները համեմատել ենք Մ. Մինասյանի, ըստ հարկի նաեւ Ժ. Թոսունյանի կազմած համաբարբառների տվյալների հետ՝ բացթողումներից ու վրիպումներից խուսափելու, նաեւ առանձին հարցերում կողմնորոշվելու համար, ապա ստուգել համապատասխան բառարաններով³⁰։

Մեր հաշվումներով երկում կիրառված է գրաբարի դարձվածաբանական բառարանում եւ ՆՀԲ-ում գրանցված 191 միավոր, որոնցից դարձվածքներ՝ վերախմաստավորված կայուն կապակցություններ են 114-ը, իսկ մնացած 77-ը հարադրավոր բայեր եւ ոչ վերախմաստավորված կապակցություններ են, ինչպես՝ ազատ առնել (էջ 468), ազդ առնել (էջ 476, 502), ազդումն առնուլ (էջ 439, 192), ազդ լինել (էջ 478), այրմտիւ լինել (էջ 510), անկասկած լինել (էջ 466), անհոգ առնել (էջ 468),

²⁶ Եջնիկ ԿՈՂԲԱՅԻ, Ճառք ընդդէմ աղանդոց, հտ. 2, աշխատասիրութեամբ՝ Մ. Մինասյանի, Ժնեւ, 1992։

²⁷ Անդ, էջ 613–635։

²⁸ Անդ, էջ 613։

²⁹ Խ. ԲԱԳԻՎԱՆ, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երեւան, 1986, էջ 89։ Գ. ԶԱՀՈՒՎՅԱՆ, Է. ԱՂԱՅԱՆ, Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Վ. ՔՈՍՅԱՆ, Հայոց լեզու, Երեւան, 1980, էջ 476։ Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզու, Երեւան, 2004, էջ 296։

³⁰ Գ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, Խ. ՍԻՐՄԷԼԵԱՆ, Մ. ԱՒԳԵՐԵԱՆ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հտ. Ա., 1836, հտ. Բ., 1837 (այսուհետ՝ ՆՀԲ)։ Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Երեւան, 2012։ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երեւան, 2010։ Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, Հ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, Նորայայտ բառեր գրաբարում, Երեւան, 2007։ Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Ս. ԳԱԼՍՅԱՆ, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երեւան, 1975 (այսուհետ՝ ՀԼԴԲ)։

առնույ հրաման (էջ 455, 480), առնել յաշտ (էջ 466, 467, 468), լինել հնա-
րագիւտ (էջ 468, 469), երկրպագութիւն առնույ (էջ 435), ի բաց թողույ
(էջ 500), խելամուտ լինել (էջ 442, 446), հնազանդ լինել (էջ 505), հրաման
տալ (էջ 471, 475, 509), պատասխանի առնել (էջ 450, 462, 485, 493, 505)
եւ այլն³¹: Անշուշտ, շատ դեպքերում հարադրավոր բայերի եւ դարձ-
վածքների միջեւ հստակ սահմաններ դնելը բավականին դժվար է, եւ
տարբերակումը երբեմն պայմանավորված է որոշակի իրադրութեամբ
ու կիրառութեամբ³²:

Բառարաններով իբրեւ դարձվածք արձանագրված միավորներից
զատ, մեր համոզմամբ, դարձվածքներ են նաեւ երկուսն էլ կիրառված հե-
տեւյալ բառակապակցությունները³³:

ԱԾԵՆ ԵՐԿՅԱՆՄՏՈՒԹԵԱՄԲ Ի ՎԵՐԱՅ — ներողամտութեամբ վերաբեր-
վել. «Ուստի յայտ է, թէ երկայնմտութիւնն Աստուածոյ եղեւ պատճառ
խստութեան սրտին փարաւոնի...» (էջ 476):

ԱԾԵՆ Ի ԽՐԱՏ* — խրատել. «...այլոց սակաւուց տանջանալք ածէ յեր-
կիւղ եւ ի խրատ զբազումս...» (էջ 454):

ԱԾԵՆ ԶԵՐԿԻԻՂ* — վախեցնել. «...այլոց սակաւուց տանջանալք ածէ
յերկիւղ եւ ի խրատ զբազումս...» (էջ 454):

ԱԿՆ ԽԱՂԱԼ — աչքը խաղալ, աչքի կոպը շարժվել. «Որպէս յորժամ
ակն խաղայցէ, բնական ազդեցութեամբ վասն զնորոգ ոք տեսանելոյ լի-
նի» (էջ 479):

³¹ «Եղծ աղանդոց» երկում կիրառված հարադրավոր բայերի քննությունը տե՛ս
Գ. ԹՈՌՈՒՆՅԱՆ, Հարադրությունների գործածությունը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»
երկում, ԼՀԳ, 1980, Թ. 10, էջ 61–68:

³² Եզնիկի երկի օրինակներում վերը նշվածները վերաիմաստավորված չլինելու պատ-
ճառով չենք դիտարկում որպէս դարձվածք՝ հետեւելով Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ (Հայերենի հարադիր
բայերը, Երեւան, 1966, էջ 198–241) եւ Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ (Գրաբարի բառակազմական վերլու-
ծական տիպը, Երեւան, 2016, էջ 53–93) տեսակետներին: Տե՛ս նաեւ Խ. ԲԱԳԻՅԱՆ, նշ. աշխ.,
էջ 68–69:

³³ Այս միավորներն առանձնացնելիս եւ իմաստը ներկայացնելիս որքան էլ փորձել ենք
առաջնորդվել դարձվածքի որոշման սկզբունքներով, համեմատել արեւելահայերեն թարգ-
մանություն հետ, խորհրդակցել մասնագետների հետ, սակայն չի բացառվում, որ վրիպած
եւ իբրեւ դարձվածք ներկայացրած լինենք նաեւ ոչ այդպիսին, մանավանդ դարձվածք-
ների սահմանը փոխաբերական կապակցությունների ու բառերի փոխաբերական կիրա-
ռությունների հետ երբեմն շատ անորոշ է: Ուստի շնորհակալութեամբ կլսենք դիտողություններ
հետագա ճշտումների համար: *–ով ներկայացնում ենք այն կապակցությունները, որոնց
դարձվածք լինելը առավել երկբայական ենք համարել:

³⁴ Ժամանակակից հայերենում կա «աչքը (աչքերը) խաղալ — աչքի կոպերը շարժվել, որ
ըստ սնտոհապաշտական հավատալիքների՝ համարվում է լավ կամ վատ բան կատարվելու
նախանշան», տե՛ս ՀԼԴԲ:

ԱՄՓՈՓԵԼ ԸՆԴ ԵՐԿԻԻՂԻԻ — ԵՐԿՅՈՒՂԵԼ, ՎԻԽԵՆԱԼ. «...որպէս յորժամ ի լրջեաց ծուլայցէ, գիշերական երազովքն ամփոփի ընդ երկիւղիւ» (էջ 479):

ԱՆԿԱՆԵԼ ԸՆԴ ՈՒՄԵՔ — մեկի ազդեցության տակ ընկնել, լսել, ենթարկվել. «Ես ո՛չ ընդ ձեր մահ կամէի, եւ ո՛չ ընդ իշխանին՝ վատ խրատ տուին, անկանել» (էջ 451):

ԱՌՆԵԼ ԶԲԱՆ — խոսքը, ցանկացածը կատարել. «...որ առնեն զբան նորա...» (էջ 484)³⁵:

ԱՌՆՈՒԼ ԶԵՐԵՍՍ — մեկի կողմից, անունից հանդես գալ. «...որպէս Առաքելոյ առեալ զինքեամբ զերեսս ամենայն մարդկութեան՝ ասէ» (էջ 494):

ԱՐԵԱՆ ԳՆՈՅ ԳՆԵԼ — արյան գնով գնել, մեծ գին վճարել. «Եւ զայն ոչ համարձակութեամբ, այլ կասկածանաւք եւ արեան գնոց գնելով» (էջ 505):

ԱՐԿԱՆԵԼ ԸՆԴ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՄԲ* — ապաշխարության ենթարկվել. «...զի առ չժուժալոյ ցանկութեանն արկանեն միւսանգամ զնոսա ընդ ապաշխարութեամբ» (էջ 509):

ԱՐԿԱՆԵԼ Ի ՍՐՏԻ — գլուխը մտցնել, ներշնչել. «Սատանայ իսկ արկեալ էր ի սրտի Յուդայ Իսկարիոժտացոյ մատնել զնա» (էջ 480):

ԱՐԿԱՆԵԼ Ի ՓՈՐՁՈՒԹԻՆ — փորձել, փորձության ենթարկել. «Հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն...» (էջ 480):

ԳԱԼ ԸՍՏ ԿԱՐԾԵԱՅ — վարվել մեկի կարծիքի համաձայն. ՆՀԲ-ն տալիս է «գալ ըստ կամաց/բանի» կապակցությունը, կարծում ենք՝ «գալ ըստ կարծեաց»-ը նրան հոմանիշ դարձվածք է. «...նոյնպէս եւ Գրոց ըստ մարդկան կարծեացն եկեալ՝ առ ի նշանակելոյ զսաստկութիւն աւերածի աշխարհին...» (էջ 458):

ԳԱԼ ՅԱՇԽԱՐՀ — ծնվել. «...զի որ լաւ ոք եկեալ յաշխարհ, մեռանէր, վասն յիշատակի քաջութեանն զպատկերն երանգօք ի նկարու հանէին...» (էջ 487):

ԴՆԵԼ ԶՄԻՏՍ Ի ՄԻՋԻ — միտք արտահայտել. «Որոյ ցուցանի, թէ վասն գայթակղելոյն եդ զայնպիսի միտս ի միջի» (էջ 508):

ԴՆԵԼ Ի ՆԵՐՔՈՅ ՈՏԻՅ (ՈՒՐՈՒՄՆ) — հնազանդվել, ենթարկվել. «...զիցեն ամենայն թշնամիք նորա ի ներքոյ ոտից նորա» (էջ 504, 505):

³⁵ Ժամանակակից հայերենում կա «խոսքը անել» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

ԵՐԿԻԻՂ Ի ՄԻՏՍ ԱՐԿԱՆԵԼ — վախեցնել, սիրտը վախ գցել. «...վասն այլոց երկիրդ ի միտս արկանելոյ յայնպիսի տանջանս մատնիցի...» (էջ 454):

ԶԲԱՆՍ ԱԾԵԼ — խոսքերը շաղ տալ. «...որ ի քարշ անկեալ՝ ընդ վայրս գբանսն ածէ» (էջ 500):

ԶԲԱՆՍ ԾԱԽԵԼ — խոսքերը վատնել. «...լինիցի նոցա զճշմարիտն ուսանել, եւ մեզ՝ ոչ ի զուր ինչ բանս ծախել...» (էջ 437):

ԸՆԴ ԱՆՁՆ ԱՆԿԱՆԵԼ — մեկի հետեւից ընկնել, գնալ. «...իբր զշան կոբիւնս առ ընտելութեան ընդ անձն անկանին» (էջ 449):

ԸՆԴ ՄԱԻՐՆ ՄՏԱՆԵԼ³⁶ (կարելի է ներկայացնել ՄՏԱՆԵԼ ԸՆԴ ՈՒՄԵՔ ընդհանուր կաղապարով) — կենակցել. «Արդ, եթէ իմաստուն էր, ընդ մաւր մտանէր, եւ արեգակն որդի լինէր» (էջ 468):

ԸՆԴ ՄԻՏՍ ՀԱՐԿԱՆԵԼ — մտածել. «Կամ հիւղեայն զիմրդ ընդ միտս հարեալ էր...» (էջ 500):

ԸՆԴ ՄԿԱՆՈՒՆՍ ԼՍԵԼ* — ծեծելով հասկացնել, հնազանդեցնել. «Ծառայ, որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմա» (էջ 447):

ԸՆԴ ՔԵՌՆ ԱՆԿԱՆԵԼ³⁷ (կարելի է ներկայացնել ԸՆԴ ՈՒՄԵՔ ԱՆԿԱՆԵԼ ընդհանուր կաղապարով) — կենակցել. «...եւ ընդ քեռն անկանէր, եւ լուսին ծնանէր» (էջ 468):

ԸՆԴ ԴԵԼՈՒԹԻԻՆ/ԸՆՏԵԼՈՒԹԻԻՆ ՈՒՆԻՄ* — ընտելանալ. «Ապա եթէ մաւտ գային եւ ընդելութիւն ընդ մարդոյն ունէին...» (էջ 449, 450):

ԸՍՏ ՄՐՏԻ (ումեմն) ԳՏԱՆԵԼ — մեկին սրտամոտ, հաճելի լինել. «Եւ առն թագաւորի ըստ սրտի իւրում գտելոյ, թախծելոյ ի հարուածոցն, հրեշտակ... ցուցանէր» (էջ 457):

Ի ԳՈԳՆ ԱՅՐԱՀԱՄՈՒ ԶՈԳԵԼ — դրախտ գնալ, մահից հետո արքայության արժանանալ. «...եւ Քրիստոս ասէ՝ թէ աղքատն ի գոգն Աբրահամու չոգաւ, եւ մեծատունն ի տանջանս հրոյ» (էջ 506):

Ի ԼԻՆԵԼՆ ԵՒ Ի ԳՈՅԱՆԱԼ ԳԱԼ* — ստեղծվել, «...ի լինելն եւ ի գոյանալ եկին ի չգոյէ» (էջ 433):

Ի ԿԵՐՊԱՐԱՆՍ ԱԾԵԼ* — կերպավորել, կերպարանքի բերել. «...յորժամ զնա ի զարդ եւ ի յարդ եւ ի կերպարանս ածէր, ինքն յո՞ մարթեր ամփոփել...» (էջ 438):

³⁶ Եւ գրաբարի դարձվածաբանական բառարանում, եւ նշձ-ում ներկայացված է «մտանել առ կին» կապակցությունը, սա նույնիմաստ կապակցություն է:

³⁷ Գրաբարի դարձվածաբանական բառարանում կա «լինել ընդ ումեք» նունիմաստ դարձվածքը:

Ի ԿԵՐՊՍ ԴԱՌՆԱԼ* — մեկի կերպարանքի փոխվել, ձեւ ստանալ. «...յարանց կերպս դարձեալ՝ զկանայս յանցուցանէ...» (էջ 480):

Ի ԿԵՐՊՍ ԼԻՆԵԼ* — կերպարանք ունենալ, ստանալ. «Եւ բազում անգամ ի կանաց կերպս եղեալ՝ զարս խաբէ յերազի...» (էջ 480):

Ի Մէջ ԲԵՐԵԼ* — մեջբերել, մատնացուց անել. «...յամառեալ՝ զնոյն ի մէջ բերեն» (էջ 447, 450):

Ի ՅՈՅՍ ԿԱՊԵԼ³⁸ — հույս ունենալ, հուսալ. «...եւ ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք, որպէս եւ Հրեայք...» (էջ 460):

ԽԵՂԴ ԸՆԴ ԱՆՁՆ ԱՌՆԵԼ — խեղդել, կապանք լինել, ճնշել. «...եւ խեղդ ընդ անձն միշտ ոգւոց մարդոյն առնել...» (էջ 455):

ԽԵՂԴ ԸՆԴ ԱՆՁՆ ԼԻՆԵԼ — խեղդել, կապանք լինել, ճնշել. «...զի հանապազ խեղդ ընդ անձն հոգւոց մարդոյն դեւն լինիցի» (էջ 455):

ԿԱՐԾԻՔ Ի Մէջ ՄՏԱՆԵԼ — կասկածել. «Կարծիք ինչ ի մէջ մտանէին» (էջ 446):

ԿԱՐԾԻՔ Ի ՆԵՐՔՍ ՄՏԱՆԵԼ — կասկածել. «...կարծիք ինչ կարոտութեան ի ներքս մտանիցեն...» (էջ 433):

ԿՈՐՁԵԼ ՅԻՆՔՆ³⁹ — իր կողմը քաշել, համախոհ դարձնել. «...ընդէր ոչ բռնութեամբ իսկ ձեռն արկ եւ կորզեաց զոգիս տանջաւորացն յինքն» (էջ 505):

ՀԱՄԱՐՍ ՊԱՀԱՆՁԵԼ⁴⁰ — հաշիվ պահանջել. «...դու ո՞վ էիր, որ համարս պահանջէիր յԱստուածոյ» (էջ 476):

ՀԱՆԵԼ ՅԵՐԵՍԱՅ — աչքից գցել. «Հանցուք զնա յաչաց իւրոցն խաբեցելոց» (էջ 508):

ՀԱՍԱՆԵԼ Ի ԳԻՏՈՒԹԻԻՆ — հասկանալ. «...յառաջագիւտ եհաս ի գիտութիւնն սատանայի...» (էջ 445):

ՀԵՂՈՒԼ ԶԱՐԻԻՆ⁴¹ — արյուն թափել, սպանել. «Որ հեղու զարիւն արդարոյ, հեղցեն զարիւն նորա» (էջ 498, 503):

ՀՆԱԶԱՆԴԵԼ ԸՆԴ ՈՏԻՔ — հնազանդեցնել իշխանության ներքո. «...այլ Տէր մեր եւ Հայրն իւր, որ կարող են առնել զամենայն եւ հնազանդեն զամենայն թշնամութիւնս ընդ ոտիւք» (էջ 505):

³⁸ Ժամանակակից հայերենում՝ «հույս կապել (մեկին, մեկի հետ)» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

³⁹ Ժամանակակից հայերենում կա «իւր կողմը քաշել, ձգել, գրավել» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

⁴⁰ Ժամանակակից հայերենում կա համարժեք «հաշիվ պահանջել» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

⁴¹ Ժամանակակից հայերենում եւս կա «արյուն թափել» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

ԶԳԵԼ ԱՌԻ ՈՄՆ — մեկի կողմը գրավել. «...այլ եւ այլս բազումս ընտրեաց ի նոցանէն եւ առաքեաց, զի աշակերտիցեն եւ ձգիցեն առ նա» (էջ 503):

ՄԱՀՈՒ ԵՒ ԱՐԵԱՄԲ ԾԱՐԱԽԻ ԼԻՆԵԼ⁴² — թշնամի լինել, միմյանց մահացանկանալ. «Միմեանց մահու եւ արեամբ ծարաւի են» (էջ 436):

ՄԱՏՆԵԼ Ի ԿՈՐՈՒՍՏ* — կորստի մատնել. «մատնեցին զանձինս ի կորուստ մարմնոց» (էջ 496):

ՄԽԵԼ Ի ԽՆԴԻՐ* — ձեռնամուխ լինել. «...մխել ի խնդիր ճառիցս» (էջ 437):

ՄՏԱՆԵԼ ԸՆԴԻ (անուն՝ խոսքի մաս՝ արտահայտված գործիականով) — ենթարկվել, հնազադվել. «...մտցուք ընդ լծով Աստուծոյ երկիրդին» (էջ 454), «մտցեն երկիրդիւ ընդ Աստուծոյ հնազանդութեամբ» (էջ 454):

ՄՏԱՆԵԼ ԸՆԴԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՄԲ* — ապաշխարել. «...ապա լուծանեն զուխտն եւ գան, մտանեն ընդ ապաշխարութեամբ» (էջ 510):

ՄՏԱՆԵԼ Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ — փորձության ենթարկվել. «...եւ մտեալ ի փորձութիւնն նորա իբրեւ ի բովս...» (էջ 481):

ՄՏԱՆԵԼ ՅԱՇԽԱՐՀ — հաստատվել, տարածվել. «Բայց թէպէտ եւ հեթանոսութիւն եմուտ յաշխարհ, այլ աստուածապաշտութիւնն ոչ ամենեւին պակասեաց» (էջ 494):

ՄՏԱՆԵԼ ԶՏԱՆԳՈՎ* — պաշտպանել. «Այլ Առաքեալ մտանէ ջատագով Տեառնն իւրոյ՝ թէ...» (էջ 476):

ՅԱՅՏ ԵՐԹԱԼ ԱՍԵԼ — բացեիբաց, բացահայտ կերպով ասել. «Նա եւ յորժամ զխիստ ոք իշխան կամիցի ի քաղցրութիւն ածել, չկարէ յայտ երթալ ասել, թէ «Դու խիստ ես»» (էջ 448):

ՅԱԶԱՅ ՎՐԻՊԻՄ⁴³ — չնկատվել, անհետանալ. «Ոչ վասն սիրոյ սիրելւոյն, որ մահուամբ յաչացն վրիպեցաւ» (էջ 441):

ՅԱՌԱԿ ԳԱԼ* — օրինակ լինել. «...զի ձուկն թէպէտ եւ գայ յառակ, ի գերեզմանի առակ գայ եւ ոչ ի կենդանութեան...» (էջ 507):

ՅԸՆԴԵԼՈՒԹԻՒՆ/ԸՆՏԵԼՈՒԹԻՒՆ ԱԾԵԼ* — ընտելացնել. «Եւ այլոց զքարբս իգակերպս կալեալ՝ թովչութեամբ յընդելութիւն մարդկան ածեն...» (էջ 450):

⁴² Ժամանակակից հայերենում կա «արյան ծարավ» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

⁴³ Ժամանակակից հայերենում եւս կա «աչքից վրիպել — չնկատվել, ուշադրությունից վրիպել» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

ՇՐՋԵԼ ԲԱՆ(Ս)⁴⁴ — խոսքերը շրջել. «...շրջեալ զայս բանս՝ այլ իմն պատճառ լինելոյ արեգական մուծանեն » (էջ 469), «...լաւ համարէր զիւր բանսն շրջել քան զնոսա ի ձեռս այլազգեաց մատնել...» (էջ 477):

ՈՐՈՂՔ ԵՐԵՍԱԻՔ — ի՞նչ երեսով. «Եւ եթէ ինքեանք դիւի զո՛հ մատուցանեն, որո՞վք երեսաւք զդիւապաշտսն հալածիցեն» (էջ 469):

ՁԻՔ ՄՈՒՏ ԲԱՆԻՅՆ — խոսքն ընդունելի չէ. «Եւ եթէ ասիցեն՝ «Ի գեհենն չոգաւ իբրեւ զմեռեալ», չիք մուտ բանիցն...» (էջ 505):

ՊԱԿԱՍԵԼ Ի ԿԵՆԱՅ — մահանալ. «...մորթազերծ մահուամբ պակասեցաւ ի կենաց» (էջ 463):

ՏԱԼ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ — հանձնել. «...եւ ետ զնոսա ընդ ձեռամբ նորա...» (էջ 495):

ՏԱԼ Ի ՄԱՀ⁴⁵ — մահվան ենթարկել, մահու տալ, սպանել. «Հայր ետ զնա ի մահ...» (էջ 506):

ՓՉԵԼ ՇՈՒՆՉ ԿԵՆԴԱՆԻ — կենդանություն տալ. «...եւ փչեաց շունչ կենդանի որպէս թէ բերանով...» (էջ 473, 484):

Իմաստային տեսակետից կիրառված են երկի կրոնափիլիսոփայական բնույթին, տրամաբանական դատողություններով կազմված խոսքին համապատասխան դարձվածքներ, ինչպես.

1. Մտածել, խորհել, հասկանալ, ֆնել իմաստով դարձվածքներ — ածել զմտաւ (մտածել, խորհել, էջ 446, 462, 471, 479 , 493), առնուլ ի միտ (հասկանալ, իմանալ, էջ 495), գալ ի ֆնիմ (քննել, էջ 411, 458), դնել միտս ի միջի (արտահայտել, էջ 508), ընդ բերան ածել (մտքով անցկացնել, էջ 479), ընդ միտս հարկանել (մտածել, էջ 500), ի մտի ունել (մտքում պահել, էջ 454, 495), ի վերայ հասանել (վերահասու լինել, էջ 486), հասանել ի գիտութիւն (հասկանալ, էջ 445), միտ դնել (ուշադրություն դարձնել, էջ 456, 479, 490):

2. Նպատակադրվել, մտադրվել, ձեռնարկել իմաստով դարձվածքներ — առաջի դնել (նպատակադրվել, էջ 433), արկանել ի միտս (մտադրվել, էջ 439), ի մտի դնել (մտադրվել, էջ 436, 446, 461, 509), մխել ի խնդիր (խորամուկ լինել, էջ 437), ձեռն արկանել (ձեռնարկել, էջ 505):

3. Հայտնել, հայտնի դարձնել իմաստ արտահայտող դարձվածքներ — ածել ի գիտութիւն (տեղյակ դարձնել, էջ 457, 496), ածել յայտ (ի հայտ բերել, էջ 496), ի վեր հանել (հայտնի դարձնել, երեւան հանել, գաղտնիքը բացել, էջ 468, 469):

⁴⁴ Ժամանակակից հայերենում կա «խոսքը շուռ տալ» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

⁴⁵ Ժամանակակից հայերենում կա «մահի տալ» դարձվածք, տե՛ս ՀԼԴԲ:

3. Կասկածել *իմաստով դարձվածքներ* — ի թեթուս մատչիլ (*երկբայությամբ մոտենալ*, էջ 444), կարծիք ի մէջ մտանել (*կասկած առաջանալ*, էջ 446), կարծիք ի ներքս մտանել (*կասկածել*, էջ 433):

4. Գոյացնել, առաջացնել, առաջանալ, ծնվել *իմաստով դարձվածքներ* — գալ յաշխարհ (*ծնվել*, էջ 487), ի գոյ ածել (*գոյություն բերել*, էջ 433, 496), հանել ի կեանս (*կյանքի կոչել*, էջ 505), փչել շունչ կենդանի (*կենդանություն տալ*, էջ 473, 484):

5. Մահանալ, սպանել *իմաստով դարձվածքներ* — անկանել ընդ մահուամբ (*մահանալ*, էջ 451), բառնալ ի միջոյ (*մեջտեղից վերացնել*, *ոչնչացնել*, էջ 439, 446, 447, 460, 492, 496), հանել ընդ կառափն (*զլխատել*, էջ 504), հանել յաշխարհէ (*հոգին առնել*, էջ 493), յարեւէ արկանել (*կյանքից զրկել*, *սպանել*, էջ 436, 470, 475), պակասել ի կենաց (*մահանալ*, էջ 463), տալ ի մահ (*մահվան դատապարտել*, էջ 506):

6. Ծառայել, սպասավորել, երկրպագել *իմաստով դարձվածքներ* — արբանեկութիւն հարկանել (*սպասարկել*, էջ 484), երկիր պագանել (*երկրպագել*, էջ 461, 442, 492), հարկանել սպասաւորութիւն (*ծառայել*, *սպասավորություն անել*, էջ 481), պաշտաւն հարկանել (*պաշտել*, էջ 435), պաշտաւն մատուցանել (*պաշտել*, էջ 434, 435, 441, 461, 484, 490), պաշտաւն տանել (*պաշտել*, էջ 434):

Բերված օրինակները միաժամանակ մասամբ պատկերացում են տալիս երկուս կիրառված հոմանիշ դարձվածքների մասին՝ ի տարբերություն հակադրության, որոնց թիվը մեծ է՝ 1. ի միջի լինել (*գոյություն ունենալ*, էջ 465, 466, 496) եւ բառնալ ի միջոյ (*մեջտեղից վերացնել*, էջ 439, 446, 447, 460, 492), 2. ի հաստումն ածել (*գոյացնել*, *առաջացնել*, էջ 433), հանել ի կեանս (*կյանքի կոչել*, էջ 505), փչել շունչ կենդանի (*կենդանություն տալ*, էջ 473, 484) եւ հանել յաշխարհէ (*հոգին առնել*, էջ 493), յարեւէ արկանել (*սպանել*, էջ 436, 470, 475), հանել ընդ կառափն (*զլխատել*, էջ 504):

Եզնիկի կիրառած դարձվածքների քննության ժամանակ պետք է ուշադրության արժանացնել երկի լեզվի կատարյալ, գրաբարի բոլոր օրինաչափություններին համապատասխան լինելու հանգամանքը: Նման հատկանիշը չափանիշ ունեցող հեղինակը դարձվածքների՝ առավելապես ժողովրդախոսակցական լեզվի այս բառաշերտի կիրառության ժամանակ պետք է որ առավել հետեւողական լիներ եւ ընտրողաբար մոտենար նրանց: Ենթադրելի է, որ Եզնիկը կա՛մ պետք է գրական ասպարեզ բերած լիներ դարձվածքներ, որոնք ամենատարածվածն ու հասկանալին

էին⁴⁶, գուցե որոշակիորեն հղկված, կամ էլ գտնելով այնպիսիք, որոնք լավագույնս են արտահայտում իր միտքը, կիրառել ու այդպիսով գրական քաղաքացիություն տար:

Ընդ որում, Եզնիկը ոչ միայն չի խուսափել դարձվածքների կիրառությունից եւ գործածել դրանք անհրաժեշտությունից դուրս, այլեւ գիտակցաբար է կիրառել որեւէ երեւույթ, իրողություն առավել պատկերավոր, արտահայտիչ ներկայացնելու համար՝ գերադասելով դարձվածքը բառից: Սա կարելի է ցույց տալ այն բոլոր դեպքերում,

ա. երբ միեւնույն նախադասության կամ պարբերության մեջ կիրառել է տվյալ իրողությունը, երեւույթը, գաղափարն արտահայտող բառ եւ դարձվածք միաժամանակ,

բ. երբ գործածել է հոմանիշ դարձվածքներ (ինչպես նույն նախադասության կամ պարբերության մեջ, այնպես եւ ընդհանրապես ամբողջ երկում):

Քանի որ հաճախ այս 2 դեպքերի օրինակները միասին են հանդիպում, բերում ենք առանց միմյանցից առանձնացնելու խուսափելու համար կրկնությունից: Այսպես՝ «...յորժամ ի վերայ հասեալ՝ զոմն յընչից եւ յարեւէ արկանիցեմ... չէ պարտ ո՛չ թագաւորաց մահու հրաման տալ եւ ո՛չ դատաւորաց՝ քերել եւ սպանանել զմարդասպանն...» (էջ 475), հաջորդ նախադասության մեջ. «Եւ կամ յորժամ հէն յաշխարհ արշաւիցէ տեռագերծ առնել եւ կոտորել զմարդիկ» (էջ 475, յարեւէ արկանել, սպանանել — կոտորել, տեռագերծ անել — կողոպտել, յընչից արկանել — կողոպտել, զրկել):

«Արդ, եթէ իմաստուն էր, ընդ մաւր մտանէր, եւ արեգակն որդի լինէր, եւ ընդ Բեռն անկանէր, եւ լուսին ծնանէր» (էջ 468, կենակցել, կիրառում է նաեւ նույնիմաստ այնք ընդ այնս լինել, էջ 487):

«...նոյնպէս եւ այլոց սակաւուց տանջանալք ածէ յերկիւլ եւ ի խրատ զբազումս...» (էջ 454, ԻԱ. 8) եւ «...վասն այլոց երկիւլ ի միտս արկանելոյ յայնպիսի տանջանս մատնիցի...» (էջ 454, ԻԱ. 9, վախեցնել իմաստով կիրառված է նաեւ ահ եւ երկիւլ արկանել դարձվածքը, էջ 473):

«...հասեալ ի վերայ ո՛չ հանիցեմ զայն ընդ կառափն: Եւ կամ իցէ ոք... ծանուցեալ զլրտեսն՝ ո՛չ սատակիցեմ վաղվադակի» (էջ 504, գլխատել, սպանել):

⁴⁶ Հիշենք Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ. «Լինելով Արարատյան աշխարհի բնակիչ՝ նա Արարատյան աշխարհի բազմաթիվ բառեր ու դարձվածքներ է օգտագործել» միտքը (նշ. աշխ., էջ 117):

«Հ' ինչ, զոր ցերեկ ընդ բերան ածիցէ մարդն... Եւ Հ' ինչ, զոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ եւ տեսանէ յերազի» (էջ 479, մտածել, մտքով անցկացնել):

«...զի հանապազ խեղդ ընդ անձն հոգւոց մարդոյն դեւն լինիցի» (էջ 455, ԻԲ. 3) եւ «...եւ խեղդ ընդ անձն միշտ ոգւոց մարդոյն առնել...» (էջ 455, ԻԲ. 6, խեղդել) եւ այլն:

Հայ լեզվաբանական գրականության մեջ ընդունված՝ արդի հայերենի դարձվածքների դասակարգումը⁴⁷ կարելի է կիրառել նաեւ գրաբարյան դարձվածքների համար⁴⁸: Ըստ այս ընդունված դասակարգման՝ Եզնիկի երկում կիրառված դարձվածքներն անվանողական են եւ հաղորդակցական (միայն մեկը), ստորադասական, բայական եւ մակբայական, երկանդամ եւ բազմանդամ:

Հաղորդակցական կամ նախադասության արժեք ունեցող միակ դարձվածքն է չի՛մ մուտն բանիցն (էջ 505): Անվանողական դարձվածքներից երկուսը մակբայական են՝ ոռո՛վք երեսաւ (ի՛նչ երեսով, էջ 469)՝ կազմված դերանուն+գոյական կաղապարով, եւ յական քթել (մի ակնթարթում, էջ 512)՝ կազմված գոյական+բայ կաղապարով, մյուսները՝ բայական: Ըստ դարձվածքների բաղադրիչների քանակի՝ բայական դարձվածքներից 1-ը քառանդամ է՝ մահու եւ արեամբ ծարափ լինել (էջ 436, կաղապարը⁴⁹՝ գոյական+գոյական+ածական+բայ), 22-ը՝ եռանդամ, որոնք ներկայացնում են հետեւյալ կաղապարները.

Գոյական+գոյական+բայ — ան եւ երկիւղ արկանել (էջ 473), արեան գնոց գնել (էջ 505), զկեանս անձինն շահել (էջ 436), ի գոգն Աբրահամու չոգել (էջ 506), ի կերպարանս կերպարանս լինել (էջ 459), ի չափ հասակի հասանել (էջ 494), խեղդ ընդ անձն առնել (էջ 455), խեղդ ընդ անձն արկանել (էջ 463), խեղդ ընդ անձն լինել (էջ 455), երկիւղ ի միտս արկանել (էջ 454):

⁴⁷ Տե՛ս Խ. ԲԱԳԻԿՅԱՆ, նշ. աշխ.: Հմմտ. Պ. ԲԵԳԻՐՅԱՆ, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երեւան, 1973, էջ 120–177, 186–213: Գ. ԶԱՀՈՐԿՅԱՆ, Է.Գ. ԱՂԱՅԱՆ, Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Վ. ՔՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 500–509:

⁴⁸ Իմաստային դասակարգում չենք կատարում հետեւյալ պատճառով. անգամ ժամանակակից հայերենում շատ դեպքերում դժվար է որոշել դարձվածքի բաղադրիչների սերտաճման եւ ընդհանուր իմաստի հետ ունեցած հարաբերության աստիճանը, որոնց հիման վրա էլ տարբերակվում է իմաստային չորս խումբ (երբեմն այդ խմբերի միջեւ սահմանը շատ անորոշ ու պայմանական է), առավել եւս գրաբարի դարձվածքների համար հստակ բաժանում տալ ժամանակակից լեզվամտածողությամբ, կարծում ենք, նպատակահարմար չէ: Թեեւ նման քննության հնարավորությունը լիովին չենք բացառում:

⁴⁹ Ենթակաղապարների առանձնացումը եւ ավելի մանրամասն քննությունը թողնում ենք հետագային:

Գոյական+մակբայ+բայ — կարծիքի ի մէջ մտանել (էջ 446), կարծիքի ի ներս մտանել (էջ 433), պատիժս ի վերայ հասուցանել (էջ 447):

Բայ+գոյական+գոյական — ածել ի համբոյր եւ ի ֆծիմս (էջ 449), գալ ի չափ հասակի (էջ 440):

Բայ+գոյական+մակբայ — ածել երկայնմտութեամբ ի վերայ (էջ 476), դնել զմիտս ի միջի (էջ 508):

Բայ+մակբայ+գոյական — դնել ի ներքոյ ոտից (էջ 504, 505):

Դերանուն+մակբայ+բայ — այնց ընդ այնս լինել (էջ 487):

Մակբայ+բայ+բայ — յայտ երթալ ասել (էջ 448):

Բայ+գոյական+ածական — փշել շունչ կենդանի (էջ 473, 484):

Բայ (աներեւոյթ դերբայ) բնայ (աներեւոյթ դերբայ) +բայ — ի լինելն եւ ի գոյանալ գալ (էջ 433):

Ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ բայական երկանդամ դարձվածքները պատկանում են հետեւյալ կաղապարներին.

ա. ԳՈՅԱԿԱՆ+ԲԱՅ — 75 դարձված, ընդ որում՝ գոյական կարող է հանդես գալ տարբեր հոլովներով եւ առ, գ, ընդ, ըստ, ի նախդիրներով՝ ակն ունել (ակնկալել, հույս ունենալ, էջ 470), աչս ունել (խաբել, էջ 490), զբանս ծախել (անտեղի խոսել, էջ 437), ընդ բերան ածել (մտքովն անցկացնել, էջ 479), ընդ միտս հարկանել (մտածել, էջ 500), ի բուռն անկանել (բռնվել, էջ 504), ի ձեռս մատնել (տալ, հանձնել, էջ 465, 477), ի մտաց անկանել (ցնորվել, էջ 480), ի մտի դնել (որոշել, մտադրվել, էջ 436, 446, 461, 509), համարս պահանջել (հաշիվ պահանջել, էջ 476), ձեռն արկանել (1. ձեռնարկել, էջ 505, 2. ձեռք բարձրացնել վնասելու, էջ 512), յընչաց փերել (արհամարհել, էջ 493), ոգի առնուլ (հանգստանալ, էջ 456) եւ այլն:

բ. ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ — 57 դարձվածք. ածել ի գիտութիւն⁵⁰ (տեղյակ դարձնել, երեւան հանել, էջ 457), ածել ի խրատ (խրատել, էջ 454), առնուլ ի միտ (հասկանալ, էջ 495), գալ ըստ բանի (մեկի կամքով շարժվել, էջ 492), հանել ընդ կառափն (գլխատել, էջ 504), հանել յաչաց (աչքից

⁵⁰ «Ածել ի գիտութիւն», «առնուլ զինքեամբ», «բանս շրջել», «գնալ փախստական», «տալ ի ձեռս», դարձվածքները երկուսն հանդիպում են նաեւ այլ շարադասութեամբ՝ «ի գիտութիւն ածել» (էջ 496), «զինքեամբ առնուլ» (էջ 456), «շրջել զբանս» (էջ 469), «ի տալ ձեռն» (էջ 500, 501, 504): Սա բացատրվում է նրանով, որ ի տարբերություն ժամանակակից հայերենի դարձվածքների՝ գրաբարյանների որոշ մասի շարադասությունը կալուն չէ (այս մասին տե՛ս նաեւ Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 134): Ուստի երկի դարձվածքների թիվը որոշելիս հաշվում ենք այս դեպքում 5 դարձվածք, սակայն կաղապարների ներկայացման ժամանակ բերում ենք երկու դեպքում էլ՝ կաղապարների իրացումների մասին ճիշտ պատկերացում տալու համար:

գցել, էջ 496), համել յերեսաց (աչքից գցել, էջ 508), հասանել ի գիտութիւն (հասկանալ, էջ 445), հեղով զարիւն (սպանել, էջ 498), նստել ի սուգ (սգալ, էջ 498), շրջել զբանս (խոսքը փոխել, էջ 469), տանել ընդ միտ (դժկամել, էջ 447):

գ. ՄԱԿԲԱՅ+ԲԱՅ – 12 դարձվածք. առաջի դնել (նպատակադրվել, էջ 433), առաջի կալ (հանդիպել, էջ 452, 508), ի բաց պարզել (հեռացնել, էջ 433, 482), ի բաց փարատել (վերացնել, էջ 435), ի վեր երեւալ (վեր բարձրանալ, էջ 478), ի վեր հանել (հայտնի դարձնել, գաղտնիքը բացել, էջ 468, 469), ի վերայ հասանել (վերահասու լինել, էջ 486, հարձակվել, էջ 475, 504):

դ. ԱԾԱԿԱՆ+ԲԱՅ – 4 դարձվածք. գլխապարտ գտանել (մահապարտ դառնալ, գլխից ձեռք քաշել, էջ 499), հետամուտ լինել (հալածել, էջ 471), փախստական գնալ (փախչել, էջ 484, 512), ունկնդիր լինել (անսալ, հնազանդվել, էջ 446):

ե. ԲԱՅ+ԱԾԱԿԱՆ – 2 դարձվածք. ածել յայտ (հայտնի դարձնել, էջ 496), գնալ փախստական (փախչել, էջ 512):

զ. ԲԱՅ+ԴԵՐԱՆՈՒՆ – 2 դարձվածք. առնուլ զինքեամբ (իր վրա վերցնել, էջ 457), կորզել յինքն (իր կողմը գրավել, համախոհ դարձնել, էջ 505):

է. ԴԵՐԱՆՈՒՆ+ԲԱՅ – 1 դարձվածք. զինքեամբ առնուլ (իր վրա վերցնել, էջ 456):

Գուն գործել (ջանալ, շարշարվել, էջ 254) դարձվածքի կաղապարը հնարավոր չէ որոշել, քանի որ ոչ բայական բաղադրիչն իբրեւ առանձին, որեւէ խոսքի պատկանող բառ գրաբարում չի գործածվում. ըստ Հր. Աճառյանի՝ այն բնիկ հայերեն արմատ է, հանդես է գալիս միայն գուն գործել, գուն դնել «ոճերում»⁵¹: Նույն կերպ որեւէ կաղապարի չենք համարել տեռազերծ առնել դարձվածքը (կողոպտել, թալանել, էջ 475): Դարձվածքի տեռազերծ բաղադրիչը թեեւ ՆՀԲ-ում արձանագրված է իբրեւ ածական՝ «կողոպտիչ» իմաստով, սակայն, կարծում ենք՝ նրա կաղապարն ածական+բայ չէ. ոչ թե տեռազերծ առնել-ն է տեռազերծ-ից առաջացել, այլ հակառակը: Դա բացատրելի է տեռ արմատի իմաստի քննությունից. ըստ Աճառյանի՝ այն եւս բնիկ հայերեն արմատ է՝ «ոտքի կոշտ» իմաստով, իսկ «տեռազերծել» կամ «տեռազերծ առնել» բուն իմաստով նշանակում է «կաշին վրայից հանել, պոկել», որը հետագայում փոխաբերացման

⁵¹ Տե՛ս Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա., Երեւան, 1971, էջ 592–593:

հիմքով ձեռք է բերել «կողոպտել» իմաստը⁵²։ Սրանից էլ, մեր կարծիքով, առաջացել է տեռադերժ կողոպտիչ ածականը։

Այս դարձվածքներում իբրեւ բայական մաս հանդես են գալիս զանազան բայեր, որոնցից ամենահաճախականը՝ ածել — 15 դարձվածք, արկանել — 14 դարձվածք, լինել, գալ — 11 դարձվածք, մտանել — 10 դարձվածք, անկանել — 9 դարձվածք, հարկանել — 8 դարձվածք, դնել — 7 դարձվածք, առնել — 6-ական դարձվածք, առնուլ, հանել — 5 դարձվածք։ Իբրեւ բայական բաղադրիչ հանդես եկող մյուս բայերն են՝ ամփոփել, բառնալ, բերել, գործել, դառնալ, ելանել, ըմպել, լսել, խաղալ, ծախել, կալ, կապել, կորզել, հեղուլ, ձգել, մատնել, մատչիմ, մստել, շահել, շրջել, պագանել, պակասել, տանել, փչել եւ այլն, որոնցից յուրաքանչյուրը կազմում են 1—2 դարձվածք։

Այսպիսով, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում կիրառված է ընդհանուր հաշվով 177 դարձվածք, որոնցից 114-ը ներկայացված են Ռուբեն Դազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարան» եւ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարաններում։ Եւս 63 բառակապակցություն մենք դարձվածք ենք համարում եւ քննում երկի դարձվածային համակարգում՝ նկատի ունենալով նրանց կառուցվածքային (պատրաստի վերարտադրելի միավոր լինելը) եւ իմաստային առանձնահատկությունները։ Մոտավոր հաշվումներով՝ «Եղծ աղանդոց»-ում գործածված դարձվածքները կազմում են ամբողջ բառապաշարի մոտ 5%-ը։ Քննությունը ցույց է տալիս, որ Եզնիկ Կողբացին չի խուսափել, հակառակը՝ բավականին ազատ օգտվել է ժողովրդախոսակցական բառաշերտին բնորոշ դարձվածքներից՝ հարստացնելով ու արտահայտիչ դարձնելով բնագիրը։ Խոսքը պարզ ու հասկանալի կառուցելու համար նա դիմել է նաեւ հոմանիշ դարձվածքների կիրառությանը։ Կառուցվածքային առումով մեծ մասը՝ 153-ը (86,4%) երկբաղադրիչ են, 23-ը (13%)՝ եռաբաղադրիչ, ընդամենը 1-ը՝ քառաբաղադրիչ։ 1 դարձվածք հաղորդակցական բնույթի է, մյուսները՝ անվանողական։ Ձեւաբանական դասակարգմամբ անվանողականներից 2 դարձվածք մակբայական են, 174-ը՝ բայական։ Ամենաշատ իրացումներն ունեն ԳՈՅԱԿԱՆ+ԲԱՅ (75 դարձվածք), ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ (57) կաղապարները։ Կարելի է փաստել, որ Եզնիկի երկի դարձվածքները Ե. դարի հաճախ գործածվող դարձվածքներից են։

⁵² Տե՛ս Հ. Ս. ԱՃԱՌՅԱՆ, Հայերենի արմատական բառարան, հտ. Դ., Երեւան, 1979, էջ 395—396։

РЕЗЮМЕ

В статье представлены фразеологизмы, употребленные в труде Езника Кохбацци «Опровержение лжеучений». Он досконально изучен в арменистике, однако использованные в нем фразеологизмы не были также подробно исследованы. В труде Езника Кохбацци использованы 177 единиц фразеологизмов, из которых 114 представлены в словарях древнеармянского языка. К ним мы добавляем еще 63, не вошедших в словари.

Структурный и морфологический анализ фразеологизмов приводит к заключению, что большинство из 177 фразеологических единиц — глагольные. По своей структуре большинство фразеологизмов (86,4%) двухкомпонентные. В работе «Опровержение лжеучений» Езник использовал наиболее распространенные в период написания труда фразеологические обороты.

SUMMARY

The article discusses the idioms in “Refutation of the Sects” by Yeznik of Kolb. Although this work has been thoroughly studied by Armenologists, the idioms used in it have not yet been studied in detail. 177 idioms are used in the “Refutation of the Sects”, of which 114 are presented in the dictionaries of the Classical Armenian language (grabar). To them we add 63 more, not included in the dictionaries. Structural and morphological analysis of these idioms leads to the conclusion that most of them are verbal. According to their structure, 86.4% of them are two-component. In his work, Yeznik of Kolb used the most widespread idioms of the fifth century.



ԿԱՐԵՆ ՄԱԹԵԻՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, ՄՄ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Միջնադարյան Հայաստանի պատմության մեջ Անին բացառիկ դեր է կատարել ոչ միայն որպես երկրի քաղաքական ու հոգեւոր կենտրոն, Բագրատունյաց շրջանում՝ թագավորանիստ եւ կաթողիկոսանիստ, այլեւ քաղաքային կյանքի, տնտեսության, արհեստների ու առեւտրի, մշակույթի եւ արվեստի զարգացման առաջնակարգ վայր: Հայաստանի մյուս քաղաքների համեմատ Անիի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները նույնպես բազմաթիվ ու բազմաշերտ են: Դրանցից են քաղաքի տեղանվանական նշումները, որոնք վերաբերում են տարբեր քաղաքամասերի, կառույցների (եկեղեցիներ, քաղաքային դարպասներ, հյուրատներ եւ այլն), անշարժ գույքի տարբեր տեսակների (տներ, կուղպակներ, ձիթհաններ, ջրաղացներ, ծաղկոց-պարտեզներ, այգիներ), փողոցների եւ այլն:

Անիի փողոցների մասին վկայություններ են պահպանվել ինչպես բուն քաղաքի, այնպես եւ նրա մերձակա վանքերի՝ Հոռոմոսի, Բագնայրի, Արշոառիճի, Խծկոնքի, հիմնականում ԺԳ. դարի նվիրատվական արձանագրություններում: Անիի փողոցներին կամ դրանցից մի քանիսին՝ անունների մեկնաբանման եւ այլ առիթներով, անդրադարձել են Ղեւոնդ Ալիշանը¹, Բաբկեն Առաքելյանը², Գագիկ Սարգսյանը³, Սուրեն Ավագյանը⁴, Թադեւոս Հակոբյանը⁵, Գնել Գրիգորյանը⁶, սակայն սկզբնաղբյուրնե-

¹ Ղ. ԱԼԻՇԱՆ, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 45:

² Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հտ. II, Երեւան, 1964, էջ 181—182:

³ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Միջնադարյան կուղպակները եւ դրանց նվիրատվությունները IX—XIV դդ., ՊԲՀ, 1977, №3, էջ 274—276:

⁴ Ս. ԱՎԱԳՅԱՆ, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երեւան, 1978, էջ 84—86, 315:

⁵ Թ. ՀԱՎՈՔՅԱՆ, Անիի պատմություն (հնագույն ժամանակներից մինչեւ 1045 թ.), Երեւան, 1980, էջ 92:

⁶ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X—XIV դդ.), Ս. էջմիածին, 2002, էջ 22—30:

րում պահպանված բոլոր տեղեկությունների մեկտեղումով այդ ուշագրավ նյութն առանձին ուսումնասիրության չի արժանացել, ինչը մենք փորձել ենք կատարել ստորեւ:

Վիմագրերում ավելի հաճախ գործածվում է «փողոց» անվանումը, ավելի քիչ՝ «զուկակ» (արաբերեն՝ փողոց), որ նեղ փողոցներ կամ նրբանցքներ էին: Հետաքրքրական է, որ պատմիչ Արիստակես Լաստիվերցին Արծնում հիշատակում է փողոցների այս երկու տեսակը՝ «վաճառոց փողոցք եւ նրբափողոցք»⁷: Դատելով ԺԳ. դ. 70-ական թթ. եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու մի արձանագրությունից՝ կիրակի օրերին Անիի մեծ փողոցները վերածվել են համատարած վաճառանոցի: Այդ վիմագիր հրամանով Մխիթար եպիսկոպոսը ժամանակավորապես արգելում է կիրակնօրյա վաճառքը փողոցներում՝ երկրաշարժի վտանգի պատճառով. «...ենս՝ Մխիթար եպիսկոպոս Տեղերէցի ի ցասմանէ շարժի աւուրքս բարձաք զկիրակէի վաճառն ի փողոցէ»⁸:

Հարկ է նշել, որ Անիում այժմ էլ երեւում են մի քանի փողոցներ, մասնավորապես գլխավորը՝ վիմագրերից մեկում հիշված Բուն փողոցը (նկ. 1), բայց դրանց ամբողջական ցանցի հատակագիծը պարզ կդառնա միայն քաղաքի համատարած պեղումներից եւ հնագիտական ուսումնասիրությունից հետո:

Փողոցները, որոնք հիշվում են վիմագրերում, որոշ դեպքերում կարելի է մոտավորապես տեղորոշել: Մի մասի անունները դրանց դերի, դիրքի կամ ձևի բերումով են առաջացել, ինչպես օրինակ՝ Բուն փողոց (գլխավոր կամ հիմնական), Վերի փողոց (բարձրադիր), Ծռագուկակ (ծուռ կամ զիգզագ հատվածով), Ս. Առաքելոցի զուկակ (համանուն եկեղեցու մոտ): Սակայն դրանց մեծ մասն անվանակոչվել է այնտեղ գերիշխող արհեստավորական եւ առևտրական շարքերի անուններից, ինչպես՝ Դարբնո փողոց, Նալպնդնոց, Սառաճ փողոց, Բազ փողոց, Կոշկակարոց եւ այլն: Ծանոթանա՞նք սկզբնաղբյուրների տեղեկություններին:

⁷ «Արիստակիսի Լաստիվերտցույ Պատմութիւն», աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963, էջ 78: «Նրբափողոց» հիշատակվում է նաեւ Սսում՝ «ի նրբափողոցս քաղաքին Սիսույ» («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար», կազմեց Ա. Մաթեոսյան, Երեւան, 1984, էջ 434):

⁸ «Դիվան հայ վիմագրության» (այսուհետ՝ ԴՀՎ), պր. 1, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 24: Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են.— Կ. Մ.:

Բուն փողոց

Այս փողոցի մասին հիշատակությունը պահպանվել է ԺԳ. դ. Հոռոմոսի վանքի մի վիմագրում, որտեղ նշվում է, որ Աստվածատուրի որդի Առյուծը նվիրել է Անիի Բուն փողոցի վրա իր գնած եւ կառուցած կուղպակները. «Շնորհին Աստուծոյ, ես՝ Առիւծս՝ որդի Ա[ստուա]ծատրո միաբանեցա սուրբ ուխտիս եւ ետու ի յԱնո Բուն փողոցին զիմ գանձագին կուղպակն, որ շինեցի ներքի դեհն քանակից է Աւետեացն Բ. (2) կուղպակ ի կտերն, մէկն՝ ի վերա կուղպակին է, եւ մէկն իւրենն դիմաց, որ դաղլայն է ներքեւ, վասն յիշատակի զուգակցին իմո Համաւորին յանուն մեր պատարագի Քրիստոս»⁹:

Այստեղ շատ հետաքրքրական է նաեւ կուղպակների¹⁰ դիրքի նկարագրությունը: Նախ նշվում է, որ դրանք ներքեւի կողմից (ներքի դեհն) քանակից, այսինքն՝ սահմանակից են Ավետյացի սեփականությունը (հավանաբար դարձյալ կրպակ): Երկու կրպակն էլ երկրորդ հարկում կամ կտուրին են (ի կտերն), որոնցից մեկը մի ուրիշ կուղպակի վրա է («մէկն՝ ի վերա կուղպակին է»), իսկ մյուսը սրա դիմաց է («եւ մէկն իւրենն դիմաց»), որի ներքեւում դաղլան կամ դախլան է¹¹ («որ դաղլայն է ներքեւ»):

Ցավոք, Բուն փողոցի այլ հիշատակություն չի պահպանվել, բայց անունից դատելով՝ այն քաղաքի գլխավոր փողոցն էր, եւ հավանական է, որ քաղաքի Ավագ դռնից սկսվող եւ դեպի քաղաքամեջ եկող ճանապարհն է, որը հասնում է մինչեւ Մանուչեի մզկիթը¹² (Ախուրյանի ձորեզրին), իսկ այնտեղից շարունակվում մինչեւ միջնաբերդ եւ այսօր էլ հստակ տեսանելի է (նկ. 2):

Նշենք նաեւ, որ փողոցի Մանուչեի մզկիթից դեպի միջնաբերդ ձգվող հատվածը 1890-ական թթ.՝ Անիում Նիկողայոս Մառի գլխավորած պե-

⁹ Տե՛ս «Horomos monastery: Art and History (Edited by Edda Vardanyan)», Paris, 2015, էջ 453:

¹⁰ Կուղպակները (կրպակ) հիմնականում փոքր խանութ-արհեստանոցներ էին: Գ. Սարգսյանի բնութագրմամբ՝ «...իրենց բնույթով կուղպակները երկու տեսակ են եղել: Կուղպակ են անվանվել եւ այն հաստատությունները, որոնցում զբաղվել են արհեստով, ու որտեղ արհեստավորը սովորական օրերին վաճառել է իր արտադրանքը, եւ այն կուղպակ-կրպակ-խանութները, որտեղ միայն առեւտուր է կատարվել» (Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 274):

¹¹ Դաղլայն (դախլա — դրամափոխության տեղ), տե՛ս Ս. ԱՎԱԳՅԱՆ, նշ. աշխ., էջ 63:

¹² Բազրատունյաց շրջանում այդ կառույցը, ամենայն հավանականությամբ, կաթողիկոսարանի շենքն էր, որի կողքին մինարե կառուցելով՝ այն մզկիթի է վերածել Անիի Մանուչե ամիրան (1065—1110):

ղումները շրջանում, հնագիտական արշավախմբի անդամները պայմանականորեն կոչել են «Մառի փողոց», եւ դրա լուսանկարով անգամ փոստային բացիկ է տպագրվել (նկ. 3):

Վերի փողոց

Անիի այս փողոցի մասին հիշատակությունը պահպանվել է Վարդաճիժ Վարդյանցի 1218 թ. Հոռոմոսի մի վիմագրում, ըստ որի՝ նա քաղաքի իր գանձագին ունեցվածքից նվիրատվություն է կատարել վանքին. «...ես՝ Վարդաճիժ Վարդեանց, ապաւինեցա ի սուրբ ուխտս, ետու զիմ գանձագին կուղպակն եւ ի ներքեն՝ տակառք, ի յԱնի՝ ի Վերի փողոցին, քանեկից է Տիգրանա»¹³: Վիմագրից պարզ է դառնում, որ Վարդաճիժը նվիրել է Վերի փողոցի իր գնած կուղպակը, որի ներքեւում եղել է «տակառք», այսինքն՝ մառան կամ գինետուն, միաժամանակ նշվում է, որ այն սահմանակից էր Տիգրանի սեփականությանը (հավանաբար դարձյալ կրպակ): Հայտնի է, որ քաղաքի թաղամասերից մեկը նշանավոր մեծատուն Տիգրան Հոռենցի անունից կոչվում էր «Տիգրանանց», հնարավոր է, որ այս վիմագրում հենց այդ թաղամասն է հիշատակված: Վերի փողոց անունը հուշում է, որ այն քաղաքի վերին՝ համեմատաբար բարձրադիր մասում է եղել, որը Սմբատաշեն պարիսպների կողմում է: Այդ մասում այժմ ուրվագծվում է Ավագ դռնով քաղաք մտնող եւ պարիսպներին զուգահեռ՝ դեպի հարավ՝ Գայլիձորի ուղղությամբ ձգվող փողոցը (նկ. 2):

Դարբնո փողոց

Այս փողոցի մասին հիշատակվում է Հոռոմոսի ԺԳ. դ. մի ուշագրավ վիմագրում, որն սկսվում է հետեւյալ կերպ. «Հոռոմոսին վանացս հայրենիք, որ ի քաղաքին, այս են...», ապա թվարկվում է քաղաքում գտնվող վանքապատկան սեփականությունը: Դրանց շարքում ունի Վարհամ նվիրել է Անիում գտնվող կուղպակ. «Վարհամ ետ կուղպակ ի Դարբնո փողոցին, մաւտ ի Սուրբ Դրիգորն, եւ պատարագ մատչի յանուն նորա՝ Բ. (2)»¹⁴:

Փաստորեն՝ Դարբնո փողոցը Ս. Դրիգոր եկեղեցու մոտ էր: Անիում Ս. Դրիգոր անունով մի քանի եկեղեցի կար, որոնցից ամենախոշորը՝ ԺԱ. դ. սկզբին կառուցված Գագկաշեն Ս. Դրիգորը, նույն դարի կեսերին, հավա-

¹³ Տէս «Horomos monastery», էջ 443:

¹⁴ Անդ, էջ 457:

նաբար երկրաշարժի հետեւանքով, փուլ էր եկել, ուստի այս վիճագրում չէր կարող հիշատակվել: Նշանավորներից մյուսը՝ Ժ. դարի վերջերին կառուցված Պաշլավունյաց տոհմի Աբուղամրենց Ս. Գրիգորն էր, որը ցայժմ կանգուն է Ծաղկոցաձորի ափից ոչ հեռու: Հետաքրքրական է, որ Ս. Գրիգոր անունով եկեղեցիների բազմաթիվ լինելը նկատի ունենալով՝ ԺԳ. դ. Բագնայրի վանքի մի նվիրատու նշում է, որ Անիում իր գնած ու վանքին տված տունը հենց Աբուղամրենց Ս. Գրիգորի կողքին էր. «...ես՝ Խաչոտս... ետու... զիմ զգանձագին գտունն՝ մատ ի յԱպուղամրենց Սուրբ Գրիգոր»¹⁵: Հայտնիներից երրորդը 1215 թ. Տիգրան Հոնենցի հիմնած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ու վանքն էին, որոնք Ախուրյանի ձորի կողմում էին եւ բուն քաղաքից փոքր-ինչ կտրված էին: Ս. Գրիգոր էր կոչվում նաեւ քաղաքի հյուսիսային կողմում՝ պարիսպներից ոչ հեռու գտնվող եւ գրականության մեջ հաճախ «Բախտաղեկի» անունով կոչված եկեղեցին, որի ավերակներն ի հայտ են եկել Ն. Մառի կատարած պեղումների շնորհիվ¹⁶:

Տեղագրությունից ելնելով՝ ավելի հավանական ենք համարում, որ Դարբնո փողոցը հիշատակող վիճագրում նշված է Աբուղամրենց Ս. Գրիգորը, ուստի ենթադրելի է, որ դարբինների կամ մետաղագործների այդ փողոցը գտնվում էր Անիի հյուսիսարեւելյան կողմում՝ Ծաղկոցաձորի ափից որոշ չափով ներս ընկած հատվածում:

Բազ փողոց կամ բազզնոց

Այս փողոցի մասին հիշատակություններ են պահպանվել ԺԳ. դ. արձանագրություններում. առաջինը Անիում՝ Զաքարե հեքիմի թողած վիճագրում, որտեղ նշում է՝ «...ես՝ Զաքարե հեքիմ, որդի Բլ Հասանա... ետու զԲազ փողոցի տունս, կուղպակովս...»¹⁷: Երկրորդ վկայությունը 1209 թ. Բագնայրի վանքում թողել է Խաչերեսի դուստր Մամխաթունը. «...ես՝ Մամխաթունս, դուստր Խաչերեսին, ետու զիմ կուղպակն, որ ի փողոցկտերն է՝ Բազզնոցին, ի վերայ սագոնին, եւ յապարանքն...»¹⁸: Երրորդ հիշատակությունը պատկանում է Ալեքս վաճառականին, որը 1271 թ. Բագնայրի վանքին նվիրել է

¹⁵ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Բագնայրի վանքի արձանագրությունները, «Վարձք», 2013, №9, էջ 23:

¹⁶ Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. էջ-միածին, 1997, 161–167:

¹⁷ ԴՀՎ, պր. I, էջ 68: Արձանագրության քարը գտնվել է Ախուրյանի կիրճում, հավանաբար ընկել է ձորափին գտնված մի եկեղեցու պատից:

¹⁸ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 21: Հստ Գ. Գրիգորյանի՝ «սագոն»-ը տանիք իմաստով է գործածված (Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 27):

Անիի Բազազ փողոցի մի կողպակ. «...ես՝ Ալէքս վաճառական, որդի Ղազարու... էտու նվեր ի Բազազ փողոցին կողպակ մի...»¹⁹:

Անունը վկայում է, որ Բազզնոցը «բազազների» (բազզ — արաբերեն՝ կտավ), կտորեղենի, գործվածքեղենի, կերպասագործների ու ջուլհակների փողոց եւ թաղ է եղել: Վերը բերված երկրորդ վկայությունից երևում է, որ այն ունեցել է նաեւ երկհարկ կրպակներով հատված, որը բնորոշվում է «փողոցկտեր» անունով (կտուրներով անցնող փողոց): Այս անվանը կանգրադառնանք ստորեւ:

Թեեւ Բազ փողոցի կամ Բազզնոցի մասին հայերեն երեք վկայություն ունենք, սակայն դրանք տեղորոշման համար որեւէ հուշում չեն պարունակում: Հարցը պարզելուն կարող է նպաստել Անիի վերջին՝ շաղպադյան ամիրա Սուլթանի՝ ԺԲ. դարի երկրորդ կեսին Աբուլ Մուամրան մզկիթի վրա թողած պարսկերեն արձանագրությունը, որով նա սահմանում է քաղաքում բամբակի ու բամբակեղեն գործվածքների վաճառքի տարածքը. «Մենք բամբակի ու բամբակեղեն գործվածքի վաճառքը թույլատրեցինք այստեղից, որտեղ գտնվում է Աբուլ Մամրան մզկիթը, մինչեւ Սեբիլ փողոցի կողպակը: Մենք կարգադրեցինք առեւտուրն այստեղ կազմակերպել»²⁰: Այս տեղեկությունը թույլ է տալիս ենթադրել, որ Բազ փողոցն անցել է քաղաքի կենտրոնական մասում գտնվող Աբուլ Մամրան մզկիթի մոտով, որի մի մասը (մինչեւ «Սեբիլ» կոչված փողոցը), ամիրայի վերոնշյալ հրամանով, հատկացվել է բամբակեղենի վաճառքին: Բայց խնդիրն այն է, որ Անիի Ավազ դռնից սկսվող եւ մինչեւ միջնաբերդ ձգվող Բուն փողոցն է անցնում Աբուլ Մուամրան մզկիթի մոտով: Հետեւաբար, հնարավոր է, որ հենց այդ փողոցի մի հատվածն է, որ, իր առեւտրական նշանակությամբ պայմանավորված, կոչվել է նաեւ Բազ փողոց կամ Բազզնոց, կամ էլ վերջինս առնվազն եղել է այդ կողմերում:

Սեբիլ փողոց

Ինչպես վերը տեսանք, «Սեբիլ փողոց» անվանումը պահպանվել է Անիի Սուլթան ամիրայի ԺԲ. դարի վերջերին Աբուլ Մուամրան մզկիթի

¹⁹ Կ. ԲԱՍՄԱՋԵԱՆ, Հայերէն արձանագրութիւնք Անույ, Բազնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931, էջ 179—180:

²⁰ Տէս Ա. Т. Гюзальян, Персидская надпись Кей-Султана Шеддади в Ани, Сборник академику Н. Я. Марру, Москва—Ленинград, 1935, էջ 633:

վրա թողած պարսկերեն արձանագրության մեջ, որտեղ, ըստ Ն. Գյոզալյանի հրատարակության, նշվում է, թե բամբակեղենի առևտրով զբաղվողները պետք է այդ բանն անեն մզկիթից մինչև Սեբիլ փողոցի կրպակն ընկած հատվածում: Սակայն հարկ է նշել, որ արձանագրության այդ հատվածի այլ ընթերցում է առաջարկել Հ. Փափազյանը. «Սեբիլ փողոցի կրպակ»-ի փոխարեն՝ «Կոստանդինի խանութ»²¹: Դժվարանում ենք ասել, թե իրանագետներից որի ընթերցումն է ճշգրիտ: Այնուամենայնիվ, եթե ընդունենք որ նշված է «Սեբիլ փողոց», ապա հայերենում նման բառ չկա, եւ կարելի է կարծել, որ այն հայերեն որեւէ անվան թարգմանություն է, իսկ այդ դեպքում բառի նշանակություններից մեկը «բեղ»-ն²² է, բառացի՝ «Բեղի փողոց»: Նման անվանումն առաջին հայացքից տարօրինակ է թվում, սակայն եթե հիշենք, որ ԺԱ. դարի վերջերից եւ ԺԲ. դարում Անիում հայտնի տոհմերից մեկը, որի հիմնադիրը Բեխ անունով մի համարձակ մարդ էր, Բեխենց անունն էր կրում²³, որը, ի դեպ, հենց Անիի վիմագրերում պահպանվել է նաեւ որոշ տեղանունների մեջ, ինչպես՝ Բեխենց վանք, Բեխենց մեծ արտ²⁴, ապա տարօրինակ չպետք է լինի, եթե քաղաքում լիներ նաեւ այդ տոհմի անունով կոչված Բեխենց փողոց, անուն, որը հայերենից թարգմանվելու դեպքում կարող էր դառնալ «Սեբիլ փողոց»: Եթե Անիում իրոք եղել է նման փողոց (նկատի ունենք արձանագրության՝ Ն. Գյոզալյանի ընթերցման հավաստիությունը), ապա այն հատվել է քաղաքի Աբուլ Մուամրան մզկիթի մոտով անցնող Բուն փողոցի հետ:

Փողոցկտեր

Այս անվանումը հիշատակվում է երկիցս. 1209 թ. Մամխաթունի՝ Բագնայրի վանքում թողած, վերը բերված արձանագրության մեջ՝ «...ետու զիմ կուղպակն, որ ի Փողոցկտերն է՝ Բազգնոցին...»²⁵: Երկրորդը նույն

²¹ Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, Այգիներն ու այգետեղերը ըստ հայերեն եւ պարսկերեն կալվածագրերի, ԼՀԳ, 1982, №1 էջ 78–79:

²² سبيل [sabil] «ուղի, ճանապարհ» արաբական ծագման բառ է, կա նաեւ պարսկերենում: Նույն գրությամբ, բայց sibil արտասանությամբ՝ բառը նշանակում է «բեղ», «Բեղի փողոց» (բացատրությունը իրանագետ, գոկտոր Վարդան Ոսկանյանի, որին շնորհակալություն ենք հայտնում.— Կ. Մ.):

²³ Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Անիի քաղաքացիները (քաղաքային տոհմեր), «էմիածին», 2020, 2., էջ 53–55:

²⁴ ԴՀՎ, պր. 1, էջ 47, 63:

²⁵ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 21:

վանքի՝ Վահրամ Զեչկանցի 1233 թ. վիմագրում է, ուր նշվում է. «...եստու զիմ գանձագին կուղպակն, ի Փողոցկաերն, որ ի Թորոսոնց կուղպակին վերա է, եւ զայն տունն, որ Սեւթենց հմնակից է, եւ ի վերայն կուղպակն եմ շինած»²⁶: Գ. Գրիգորյանը, անդրադառնալով այս անվանը, գտնում է, որ «Փողոցկաերն Անիում առանձին փողոց չէր: Այդպես կարող էր կոչվել քաղաքի տարբեր մասերում գտնվող հարթ տանիքներով տների այն շարքը, որոնց կտուրներին կառուցվել էին ուրիշ շինություններ»²⁷:

Այն, որ «Փողոցկաերն» կտուրների վրա տեղակայված կրպակների շարք է նշանակում, կասկածից վեր է: Սակայն չի կարելի ասել, թե քաղաքի որ մասում երկհարկանի տուն ու կրպակ կար, կոչվում էր փողոցկաեր²⁸: Անվան «փողոց» բաղադրիչն արդեն իսկ վկայում է, որ դա քաղաքում մի որոշակի վայր էր, մեր կարծիքով՝ հենց Բազ փողոցի մի հատվածը, որտեղ երկրորդ հարկում գտնվող կրպակաշարքն զգալի տեղ էր զբաղում, ուստի հատուկ անունով կոչվել է Փողոցկաեր:

Սառան փողոց

Անիի համետագործների կամ թամբագործների այս փողոցի մասին Բագնայրի եւ Արջոառիճի վիմագրերում երկու վկայություն ունենք: Առաջինը Շարափշահի կին Թագուհու 1234 թ. նվիրագիրն է, որտեղ ասվում է. «...եստու խաչ մեծածախ եւ Աւետարան, Սառան փողոցին կուղպակ՝ ի վեր, Շիրակուանին մարգն, որ Ճլուտ կոչի»²⁹: Ուշագրավ է, որ նվիրաբերված կուղպակի տեղը ցույց է տրվում ոչ միայն փողոցի անվան հիշատակով, այլեւ նշվում է, թե այն փողոցի վերին մասում էր գտնվում: Երկրորդ արձանագրությունը պատկանում է ոմն Շնորհավորիկին (վիմագրում՝ Շնահուորիկ) եւ Գեւորգին, որոնք ԺԳ. դ. Արջոառիճի վանքին են նվիրել Անիում իրենց պատկանած «Սառան փողոցին կուղպակն»³⁰:

²⁶ Անդ, էջ 33:

²⁷ Գ. Գրիգորյան, նշ. աշխ., էջ 27:

²⁸ Անիում երկհարկանի տներ ու կուղպակներ նշվում են բազմաթիվ արձանագրություններում, սակայն դրանք չեն կոչվում Փողոցկաեր: Օրինակ՝ Բագնայրի մի վիմագրում կարդում ենք. «...ես՝ Խաչերեսս՝ որդի Աբրահամու Լաւոեցի, ետու զիմ գանձագին եւթն կուղպակն ի շարի՝ վեց ի վերեն եւ մին ի ներքեն՝ մզթիւն ընդդէմ, եւ երեք տուն ի ներքսեն» (Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 21, բնագրի բառանշատման ճշգրտումը մերն է.՝ Կ. Մ.):

²⁹ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., 30:

³⁰ Ն. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 191—192:

Նալպանդնոց

Անիի պալատարների փողոցի մասին վկայություն է պահպանվել Բագնայրի 1230-ական թթ. մի վիմագրում, որտեղ Շարափշահի դուստր Թալիկ Թագուհին հայտնում է, որ այդ փողոցի իր կուղպականուց (կրպակների շարքից) երկու կուղպակ է նվիրել Բագնայրի վանքին. «...ես՝ Թալիկ Թագուհի, դուստր Շարափշահի, ետու երկու կուղպակ յիմ կուղպականոյն, որ ի Նալպանդնոցին»³¹: Քանի որ ձիերի եւ ընդհանրապես գրաստի պալատելը կապվում է ճանապարհ ելնելու գործողության հետ, կարելի է ենթադրել, որ Անիի Նալպանդնոցը գտնվել է քաղաքային գլխավոր մուտքերից մեկի մոտակայքում:

Կոշկակարոց

Անիի կոշկակարների փողոցի մասին հիշատակություն է պահպանվել մեծահարուստ քաղաքացի Առյուծ Հոգեւորյանցի արձանագրություններից մեկում: 1251 թ. Հոռոմոսի վանքում նա վերականգնել է մոնղոլների գործած ավերածությունների պատճառով խափանված ջրագիծը, նվիրել Անիում գտնվող իր սեփական (հայրենի) կուղպակը՝ Կոշկակարոց փողոցում, եւ մի պարտեզ: Վիմագրում այդ մասին ասվում է. «Կաման Աստուծոյ, ես՝ Առիւծս Հոգեւորեանց... բերի զջուրս, զոր տաթարովս խուպանեալ էր, եւ տվի ընծա զհայրենի զիմ կուղպակն, որ ի Կաշկակարոցին, քանակից է վերի դեհն Տիգրանա...»³²:

Այստեղ նշվում է, որ կուղպակը վերելի կողմից (վերի դեհն) կից է Տիգրանի սեփականությանը, ամենայն հավանականությամբ՝ կրպակին: Ենթադրելի է, որ խոսքը Տիգրան Հոռոմոսի մասին է, որը կարող էր անշարժ գույք ունենալ քաղաքի տարբեր մասերում, սակայն որոշ տվյալներից դատելով՝ նրա ազդեցության ներքո գտնվող տարածքները 1215-ին իր հիմնած Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի հարակից շրջանն էր (քաղաքի արեւելյան անկյունամասում), որը վիմագրերում կոչվում է «Տիգրանանց»: Հնարավոր է, որ Կոշկակարոցը քաղաքի այս մասում է եղել:

Գդակկոց

Անիում գլխարկագործների թաղի մասին հիշատակություն է պահպանվել Շապադին Անեցու 1348 թ. վիմագրում: Նա հայտնում է, որ

³¹ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 30:

³² Տէս «Horomos monastery», էջ 461—462:

եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցուն է վերադարձրել քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցին, որ մինչ այդ (Գրիգոր Ա. Մագիստրոս եպիսկոպոսի կողմից) նրանից վերցվելով՝ տրվել էր Մարմաշենի վանքին: Շապաղինն այդ բանն անելու համար վճարել է 700 սպիտակ (արծաթ դրամ), միաժամանակ Ս. Առաքելոցին նվիրատվություններ է արել, որոնց թվում՝ Ամիր Հասանից իր գնած մի կուղպակ. «...մէկ կուղպակ, որ ի յԱմիր Հասանա գնել էի Գդակկրոցի, խանապարի դռան դիմաց է»³³:

Թեպետ բնագրում նշված է «Գդակկրոց», բայց քանի որ հաջորդ բառը խանապարի փոխարեն նշված է «խանապարի», կարծում ենք, որ գործ ունենք միջնավանկ «ա»-ի կրճատման հետ (երկրորդ դեպքում՝ «ը»-ի փոխման), եւ ճիշտ ձևը պետք է լինի Գդակկարոց, ինչպես որ վերը նշված կոշկակարների թաղի անվան դեպքում է՝ Կոշկակարոց:

Խանապարները մեծ իջեւանատներ էին: Այս վկայությունից կարելի է ենթադրել, որ Շապաղինի՝ Ամիր Հասանից ձեռք բերած կուղպակը գտնվել է Գդակկարոց փողոցում եղած խանապարի դռան դիմաց:

Կատանոց

Անիի նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցը 1213 թ. Անիի Մայր տաճարի գետնախարիսխը (վիմագրում՝ «զաշտիճաներս») նորոգելու արձանագրության մեջ նշում է նաեւ նվերներ, որոնցից առաջինն իր գնած կուղպակն է Կատանոցում. «...ետու նուէրք ի Սուրբ Կաթողիկէս զիմ գանձագին կուղպակն, որ ի Կատանոցին է»³⁴:

Ղ. Ալիշանը Կատանոցի մասին նշում է. «...թուին դերձակք լայն զգեստից՝ «քիւտատ» կոչեցելոց ի Պարսից»³⁵, որը, կարծում ենք, պետք է ընդհանրացված կերպով համարել դերձակների փողոց եւ թաղ: Ինչպես տեսանք, քաղաքում կային կոշիկ եւ գլխարկ կարողների փողոցներ (թաղեր)՝ Կոշկակարոց, Գդակկարոց, բնական է, որ պետք է լինեն նաեւ հագուստ կարող դերձակների թաղ: Ժ-Պ. Մահեի կարծիքով՝ Կատանոցը հարկեր ունեցող տների թաղ էր³⁶:

³³ ԴՀՎ, պր. I, էջ 29:

³⁴ Անդ, էջ 34: Մյուս նվերներն են՝ ձեռագրեր եւ արծաթե սկիհներ:

³⁵ Ղ. ԱԼԻՇԱՆ, Շիրակ, էջ 89:

³⁶ S'eu J.-P. Mahé, Le testament de Tigran Honenc': la fortune d'un marchand arménien d'Ani aux XIIe—XIIIe siècles, Comptes rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, 2001, 145—3, էջ 1332:

Փոլկարարոց

ԺԳ. դ. ոմն Բունիկ Մխիթարիչի հետ Արջոռուի ձին է նվիրել կուղպակ եւ նրա ներքեւի հարկի տունը. «Փոլկարարոց կուղպակն եւ տունն ի ներքեւն»³⁷: «Փոլկարարոց»-ը Ս. Ավագյանը բացատրում է որպես «արծաթագործ-ոսկերիչների շարք»³⁸: Պետք է ասել, որ այս վիմագիրը բառացի հասկանալու դեպքում կուղպակի մասին տպավորություն է ստեղծվում, որ այն արծաթագործական-ոսկերչական էր: Նկատենք, որ Անիի ու շրջակայքի վիմագրերում հիշատակվող ոչ մի կուղպակի դեպքում չի նշվում նրա բնույթը, լավագույն դեպքում՝ այն փողոցը (թաղը), որտեղ այն գտնվում էր: Դա մեզ թույլ է տալիս ենթադրել նրա տեսակը: Հետեւաբար, կարծում ենք, ճիշտ է իրողությունը նույն կերպ ընդունել նաեւ այս դեպքում՝ «Փոլկարարոցը» համարելով այն փողոցը կամ արհեստավորական շարքը, որի վրա գտնվում էր նշված կուղպակը:

Տիգրանանց

Տիգրան Հոնենցի՝ ինչպես իր կառուցած, այնպես եւ այլ եկեղեցիներին արված նվիրատվություններից երեւում է, որ նա նշանակալից անշարժ գույքի է տիրապետել Անիում: Վիմագրերում ակնարկներ են պահպանվել այն մասին, որ քաղաքի մի հատվածը կամ մի փողոց կոչվել է Տիգրանանց: Դա հավանաբար եղել է քաղաքի հարավարեւելյան մասում՝ Գալլիձորի կողմերում, որտեղ նաեւ Հոնենցի 1215-ին հիմնած վանքն էր: Այդ մասին է վկայում Շեխենց խաչոտի 1221 թ. հոկտեմբերի վիմագիրը, որտեղ նշում է, թե վանքին նվիրած է իր հայրենի տները «ի մայրաքաղաքին է, ի յԱնի, մատ ի Տիգրանանց, ի դուռնն»³⁹:

Նշենք եւս երկու հիշատակություն. 1218 թ. Հոռոմոսին նվիրատվություն կատարած Վարդյանց Վարդաճիժը հայտնում է, որ տվել է Անիում իր գնած կուղպակը եւ նրա ներքեւի գինետունը (տակառք), որը Վերի փողոցում է եւ սահմանակից (քանեկից) Տիգրանին պատկանող տարածքին. «...ետու զիմ գանձագին կուղպակն եւ ի ներքեւն՝ տակառք, ի յԱնի ի Վերի փողոցին, քանեկից է Տիգրանայ...»⁴⁰: 1251 թ. Առյուծ Հոգեւորյանցի՝

³⁷ Ն. ՍԱՐԳՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 191–192:

³⁸ Ս. ԱՎԱԳՅԱՆ, նշ. աշխ., էջ 86:

³⁹ Ն. ՍԱՐԳՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 210:

⁴⁰ ՏԷՄ “Horomos monastery”, էջ 443:

Հոռոմոսին նվիրաբերած կուղպակի տեղն էլ է նշվում. «...կուղպակն, որ ի Կալկակարոցին, քանակից է վերի դեհն՝ Տիգրանայ...»⁴¹: Առաջին վկայությունից կարելի է ենթադրել, որ Վերի փողոցը հասնում էր մինչև Տիգրանանց թաղը, որը համապատասխանում է պարիսպներին զուգահեռ ձգվող այդ փողոցի մեր տեղորոշմանը (նկ. 1):

Ծոազուկակ

Այս փոքր փողոցի մասին հիշատակություն է պահպանվել Խժկոնքի վանքում՝ Շեխենց տոհմից Խաչոտի 1221 թ. վիմագրում: Այնտեղ ասվում է, որ նա եւ իր կինը՝ Ավագտիկինը, վանքին նվիրել են իրենց հայրենի տները, որն Անիում Գոգոնց Ս. Սարգիս եկեղեցու դիմաց էին, եւ մի կուղպակ՝ Ծոազուկակ կոչված փողոցի վրա. «...ես՝ Խաչոտս Շեխեանց եւ ամուսին իմ՝ Աւագտիկին, միաբանեցաք սուրբ ուխտիս Խժկանից եւ տուաք զմեր հայրենի տներն, որ ընդդէմ Գոգոնց Ս(ուր)բ Սարգսի է, եւ կուղպակն, որ ի վերա Ծոազուկակին է»⁴²:

Երկրորդ անգամ այս փողոցը հիշվում է Ալեքս վաճառականի՝ 1266 թ. Հոռոմոսում թողած վիմագրում, որտեղ նշվում է նրա գնած ու վաճառած նվիրած կուղպակի մասին. «...ես՝ Ալեքս որդի Ղազարա եւ ամուսին իմ՝ Մլըքսթի, միաբանեցաք Սուրբ Յովանէսի եւ գնեցի կուղպակ ի Ծոազուկակին եւ ետու ընծա ի սուրբ ուխտս»⁴³: Յավոք, այժմ տեղորոշման հնարավորություն չկա, բայց փողոցի անունը ցույց է տալիս, որ այն թեքություն է ունեցել կամ ծուռումուռ է եղել: Միաժամանակ այս վկայությունները ցույց են տալիս, որ «զուկակները» այնքան էլ նեղ կամ երկրորդական փողոց չեն եղել, քանի որ նրանց վրա գտնվել են կուղպակներ:

Առաֆելոց եկեղեցու զուկակ

1201 թ. Բագնայրի վիմագրում Դվալի որդի Մխիթարը նշում է, որ վաճառել է նվիրել իր ինչքը, որը գտնվում էր Անիի Ս. Առաքելոցի զուկակի վրա: Յավոք, արձանագրությունը թերի է պահպանվել, եւ հստակ չէ, թե ինչ է նվիրաբերվել, բայց այն գտնվել է «...ի Ս(ուր)բ Առաֆելոց

⁴¹ Անդ, էջ 461—462:

⁴² Ն. ՍԱՐԳԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 210:

⁴³ ՏԷՍ “Horomos monastery”, էջ 467:

զուկակին»⁴⁴։ Այս փողոցի տեղորոշման համար պետք է նկատի ունենալ, որ Անիի Ս. Առաքելոց եկեղեցին ու նրա հարավային կողմում գտնվող գավիթը քաղաքում ուշագրավ դիրք ունեն։ Բանն այն է, որ ԺԱ. դարում կառուցված եկեղեցին քաղաքի միջնամասում՝ խիտ բնակեցված հատվածում է, այդ պատճառով նրա գլխավոր մուտքն արեւմտյան կողմում չէ (ինչպես սովորաբար լինում է եկեղեցիներում), այլ միայն՝ հյուսիսային եւ հարավային։ ԺԲ. դարում գավիթը կառուցել են եկեղեցուց հարավ, իսկ վերջինիս շքամուտքը՝ արեւելյան կողմում։ Ստացվել է եզակի պատկեր. գավթի շքամուտքը, որով մարդիկ ներս են մտել ու հարավային դռնով անցել դեպի եկեղեցի, եւ եկեղեցու խորանը նույն կողմում են։ Անկախ այն բանից, թե Ս. Առաքելոցի զուկակը կառուցյալների որ կողմով է անցել, կարելի է ենթադրել, որ հասել է մինչեւ գավթի շքամուտքը։

Հատեցոնց զուկակ

Տիգրան Հոնենցի 1215 թ. կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշվում են բազմաթիվ նվիրատու-վուծյուններ, այդ թվում՝ «...բոլոր տներ՝ Հատեցոնց զուկակի»⁴⁵։ Այստեղ «Հատեցոնց»-ը հավանաբար տոհմանուն է, եւ զուկակը կոչվել է այդտեղ բնակվող գերդաստանի անունով, բայց չպետք է բացառել «հատանող» (մանրող, աղացող) նշանակությամբ որեւէ արհեստի հետ կապը։

Այսքանն են տեղեկություններն Անիի փողոցների մասին։ Ինչպես տեսնում ենք, դրանք պահպանվել են բացառապես վիմագրերում։

Ամփոփելով կարող ենք ասել, որ Անիի փողոցների մեզ հայտնի անվանումներն են՝ «Բուն փողոց», որն սկսվում է քաղաքի Ավագ դռնից եւ քաղաքի կենտրոնական մասով անցնելով՝ հասնում է մինչեւ Մանուչեի մզկիթը, այնտեղից շարունակվելով՝ դեպի միջնաբերդ։ Մյուսը՝ «Վերի փողոցը», որը գտնվել է քաղաքի բարձրագույն մասում եւ անցել է պարիսպներին զուգահեռ։ Հաջորդ անվանումներում շեշտված են այն արհեստները կամ առևտրական շարքերը, որոնք գերիշխել են տվյալ փողոցներում, մասնավորապես՝ «Դարբնո փողոց»՝ դարբինների, «Բազ փողոց (Բազզնոց)»՝ կտորեղենի, գործվածքեղենի, ջուլհակների փողոց, «Սառաճ փողոց»՝ թամբագործների, «Նալպնդնոց»՝ պալատարների, «Կոշ-

⁴⁴ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 23։

⁴⁵ ԴՀՎ, պր. 1, էջ 63։

կակարոց»՝ կոշկակարների, «Գդակկրոց»՝ գդակագործների, «Կատտնոց»՝ դերձակների, «Փոլկարարոց»՝ ոսկերիչների: Քաղաքի մի հատված եւ տեղի փողոցը կոչվել են «Տիգրանանց»՝ նշանավոր մեծահարուստ Տիգրան Հոնենցի անունով: Հիշատակվող փոքր փողոցները կամ զուկակներն են՝ «Ծռագուկակը», Ս. Առաքելոց եկեղեցու եւ «Հատեցոնց» զուկակները: Հասկանալի է, որ վաճառաշահ Անիի փողոցների եւ առեւտրական շարքերի երբեմնի ամբողջական պատկերը շատ ավելի ընդարձակ ու հարուստ է եղել, սակայն այն, ինչ հայտնի է այսօր, չափազանց կարեւոր ու նշանակալից է, քանի որ միջնադարյան որեւէ այլ հայկական քաղաքի մասին մենք չունենք այս ծավալի տեղեկություններ:

РЕЗЮМЕ

В эпитафических надписях церквей средневековой столицы Армении Ани и близлежащих монастырей сохранились сведения о различных городских сооружениях, церквях, магазинах, гостевых домах, а также улицах. В статье представлены все данные первоисточников об улицах Ани, а также произведена локализация некоторых из них. В надписях чаще всего встречается название улица («փողոց»), а в случае узких улиц или переулков используется арабское название «зукак» («զուկակ»), что также означает «улица».

Одно из известных названий улиц Ани — «Бун» (Основная улица, «Բուն փողոց»), которая начинается от Главных ворот, проходит через центральную часть города и доходит до мечети Манучэ (ее хорошо видно и сегодня). Другая, «Верн» (Верхняя улица, «Վերի փողոց»), находилась в верхней части города, проходила параллельно городским стенам. В других названиях подчеркиваются ремесла, которые доминировали на улицах. Среди них: «Дарбно» («Դարբն փողոց») — улица кузнецов; «Баз» («Բազ փողոց») — улица сукна, текстиля, ткачества; «Сарач» («Սարաճ փողոց») — шорников; «Налпндноц» («Նալվնդնոց») — подковщиков; «Кошкакароц» («Կոշկակարոց») — сапожников; «Гдаккроц» («Գդակկրոց») — шляпников; «Каттноц» («Կատտնոց») — портных; «Полкарароц» («Փոլկարարոց») — ювелиров. Часть города была названа «Тигрананц» в честь известного богатого горожанина Тиграна Хоненца. В статье упомянуты также улочки или «зукаки». Это «Цразукак» («Ծռագուկակ») — кривая улица, зукак церкви Св. Апостолов и «Хатецонц»



Նկ. 1. Անիի Բուն փողոցի հատված՝ կրտսակների (խամուր-աբեստամոնցների) շարքով: Հեղինակ՝ Մայր տանյան Է (լուսանկարը՝ Կ. Մաթևոսյանի, 2012 թ.):



Նկ. 2. Անին վերևից, Ավագ դոնից (1) դեպի Բաղաբի կենտրոն եկող ճանապարհը
Ենթադրաբար Բուն փողոցն է, իսկ նույն դոնից դեպի հարավ՝ պարիսպներին զուգահեռ
անցնողը՝ Վերի փողոցը:



Նկ. 3. Անիի Բուն փողոցի մի հատվածը՝ նոր շրջանում պայմանականորեն «Մառի
փողոց» կոչված (փոստային բացիկ, 1909 թ.):

(«Հաւնիցն»), получившее свое название, вероятнее всего, от имени проживающей там семьи. Помимо армянских надписей, название одной из улиц упоминается и в персидской надписи мечети Манучэ — «улица Себиль».

SUMMARY

Epigraphic inscriptions of the churches of the medieval Armenian capital Ani and nearby monasteries provide information about various city buildings, churches, shops, guest houses, as well as streets. The article presents all the data of primary sources about the streets of Ani, as well as the localization of some of them. In the inscriptions, the most common name is street («փողոց»), and in the case of narrow streets or bystreets, the Arabic name “zusak” is used, which also means “street”. One of the famous names of the streets of Ani is “Boun” (Main street), which starts from the Main Gate, passes through the central part of the city, and reaches the Manuche Mosque (it is clearly visible today). Another street called “Veri” (Upper Street) was located in the upper part of the city, running parallel to the city walls. Other street names emphasize the crafts, which were dominant among those streets’ dwellers. In particular, “Darbno street”— street of blacksmiths, “Baz street”— street of cloths, textiles and weaving, “Sarach street”— street of saddlers, etc. Part of the city was named “Tigranants” after the famous wealthy city dweller Tigran Honents. The streets or zukaki mentioned in the article are Tsrazusak, which means a crooked street, the zukak of the Church of the Holy Apostles, and Hatetsonts. The latter, most likely, was named after a family living there. In addition to Armenian inscriptions, the name of one of the streets — “Sebil street”, is also mentioned in the Persian inscription of the Manuche mosque.



ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, ԳԱԱ ԳԻ

ՂԵՌՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԴԱՏԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ

Նվիրվում է Ղեւոնդ Ալիշանի ծննդյան
200-ամյա հոբելյանին:

Գրական առնչություններ: «Միքայել Նալբանդյանի հիշատակին» հոդվածում Հովհ. Թումանյանը, կարեւորելով գրական նախորդների վերագնահատության խնդիրը, գրում է. «Չէ՞ որ ամեն մի գրող ոչ այլ ինչ է, եթե ոչ իրենից առաջ եղածների ազդեցությունների համագումար՝ մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգեւորության հնոցի մեջ ու ձուլում, ձեւակերպում իր ճաշակով»¹: Անշուշտ, ինքը եւս բացառություն չէր, եւ նրա ոգեւորության հնոցում ներկա է եղել նաեւ Ղեւոնդ Ալիշանը:

Բնականաբար, ազդեցությունները կարող են վերաբերել բանաստեղծի միայն առաջին շրջանի երկերին: Դրանք այնքան թույլ ու աննկատ են եղել, որ մինչ օրս թումանյանագիտության ուշադրությանը չեն արժանացել: Սակայն երեւույթը չի վրիպել բանաստեղծի ժամանակակիցների, նրա ընկերների ու բարեկամների աչքից: Թումանյանի դասընկերներից Տիգրան Վերանյանը² բանաստեղծին ուղղված 1890 թ. դեկտեմբերի 27-ի նամակում գրում է, որ նրա «Ալեք» պոեմի տերտերի նախատիպը բանաստեղծի հայրն է՝ տեր Թադեւոսը, որն արդարացում է ազգի դարավոր թշնամու դեմ զինված պայքարը, իսկ պոեմի սկիզբը, որտեղ նկարագրվում է Հայաստանի՝ դրախտ հիշեցնող բնությունը, նամակագիրն ընկալում է իբրեւ Ալիշանի պոեզիայի ազդեցություն ու նմանություն:

¹ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (այսուհետեւ՝ ԵԺ), հտ. 7, Երեւան, 1995, էջ 227:

² Տիգրան Վերանյան (Հովհաննես Ավետիքի, քահ. Վրեն Տաշրացի) — թարգմանիչ, մանկավարժ, Թումանյանի դասընկերներից — 1865 (Լոռու գվ., այժմ Ստեփանավանի Ազարակ գ.) — (՝) 1937:

Ի՛նչ փարթամ է Արմենիան,
 Ի՛նչ սիրուն է, անմամն.
 Լեռներ չֆնաղ, հովասուն՝
 Կատարներով պսպղուն.
 Ծեր ծմակներ ծառախիտ,
 Զրեր անուշ ու վեհիտ.
 Դաշտեր բերրի, արգավանդ.
 Եւ լիություն երկավանդ.
 Երկինքը ջինջ, բաց կապույտ,
 Ամպերն ազատ եւ անփույթ,
 Թեթեւ, անհետ, իբրեւ անուշ,
 Պտտվում են նրա շուրջ.
 Ջնաշխարհիկ այն երկրին
 Մարդիկ դրախտ կոչեցին:

Թուժանյանի «Ալեք» պոեմի այս հատվածը նամակագրին հիշեցնում է հայր Ղ. Ալիշանի «Հայ հայրենիքը» բանաստեղծությունը, որն աչքի է ընկնում ինչպես իր պայծառ լավատեսությամբ, այնպես եւ հայրենի երկրի բնության փառաբանությամբ: Տիգրան Վերանյանը համեմատության եզրեր է գտնում հատկապես Ալիշանի նշված քերթվածում հայկական լեռնաշխարհի արեւածագի գեղեցիկ նկարագրության եւ Թուժանյանի՝ վերը բերված բնապատկերի միջեւ՝ նկատի ունենալով քնարական երկու երկերի պայծառ գույներն ու երաժշտականությունը:

Ահա ելներ արեւն համպոց,
 Վարդ կու թափեր հաշխարհն Հայոց,
 Յողըն տեղայր զով ու սիրուն,
 Զինչ մարգարիտն ի սաղափուն.
 Կարմիր, կանաչ, ծին ծիրանի
 Գոտի ածվեր Հայաստանի:
 Լեռանց սարերըն բարձրածայր
 Ոսկի պըսակ եղան հավսար.
 Հայոց գետերն հազարավոր
 Իջանեին հանանշավոր:
 Հազար թե գետ, բյուր թե առվի,
 Հայոց ծովակֆն այլ ավելի...
 Ահա՛ վտակումք կըրկըջային,
 Զորն ու հովիտ արբենային.
 Համեն կաթեն աստղիկ ծըներ,
 Համեն ծընեն ծաղիկ ծագեր...

Նամակագիրը, Թումանյանի «Ծեր ծմակներ ծառախիտ, ջրեր՝ անուշ ու վճիտ» տողերը համեմատելով Ալիշանի «Ծովն ծփայր ծին ծիրանի, գոտի ածվեր Հայաստանի» տողերի հետ, արտահայտում է իր հիացմունքն ու բացականչում. «Որքան քաղցրություն, որքան սահունություն, որքան ներդաշնակություն քո եւ նրա նկարագրությանց մեջ»³:

Հատկապես «Բազմավէպի» էջերում Թումանյանի ժողովածուների գրախոսները հիշատակում էին նաեւ հայր Ալիշանի անունը: 1904 թ. ապրիլին ամսագրի «Գրական հանդէս» բաժնում հայր Մկրտիչ Պոտուրյանն իր քննադատականում բանաստեղծի՝ 1903 թ. Թիֆլիսում հրատարակված ժողովածուի մասին գրում է. «Գրքին անունը արդեօք պիտի հաւատացնէ՞ ընթերցողին, թե այդ գրքերու բովանդակութիւնը բանաստեղծութիւն է... Թումանեանը եթէ բանաստեղծ համարինք, բայց ոչ ամէն գրածը բանաստեղծութիւն»⁴: Եւ որպէսզի «չնեղացնի» երիտասարդ գրողին, հայր Պոտուրյանը փորձում է «մխիթարել». «Լամարդին, Ալիշան, Գամառ-Քաթիպա եւ այլն բանաստեղծներ են, բայց անոնց գրուածոց մէջ ալ կան կտորներ, զորս պետք է միայն յանուն բնաստեղծին կարդալ»⁵:

Տարիներ անց որոշ քննադատներ Թումանյանի 50-ամյա հոբելյանը շնորհավորելիս նրան դիմում էին Ալիշանի խոսքերով: 1919 թ. փետրվարի 20-ին Սալլիմյան կեղծանունով տպագրվում է Զալալ Տեր-Գրիգորյանի⁶ հոդվածը՝ «Հովհաննէս Թումանյանի գրական դեմքը Վալերի Բրյուսովի գնահատությամբ» խորագրով: Այստեղ հեղինակը, շնորհավորելով բանաստեղծին, մաղթում է երկար տարիների կյանք, ստեղծագործելու բարենպաստ պայմաններ, «որ նա բարձրացնէ բնականից ջինջ ու հստակ, բայց ներկայումս ծանր աղետներից խամրած ու գազազած Հայ Հոգին, որ նա փայլեցնէ Հայ Հանճարը, որ «իմանան ազգեր, որ Հայք չեն անցեր», ինչպէս ասում է մեր բանաստեղծության Նահապետ Հ. Ալիշան»⁷:

Հայրենիքում իր ուղեւորությունների ընթացքում Թումանյանը հաճախ էր հիշատակում հայագետ Ալիշանի՝ աշխարհագրական անունների

³ «Հովհաննէս Թումանյանի կյանքի եւ ստեղծագործության տարեգրություն (1869-1908)» (այսուհետեւ՝ «Տարեգրություն»), Երեւան, 2010, էջ 107:

⁴ Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ, Գրական հանդէս, «Բազմավէպ», Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904, ապրիլ, թիւ 4, էջ 185:

⁵ Անդ:

⁶ Զալալ Տեր-Գրիգորյան Հովհաննէսի — (21.04.1866, Ղարաբաղի Զրաբերդի գվ., այժմ՝ Մարտակերտի շրջ. Մաղավուզ գ.— 31.08.1940 Մաղավուզ գ.) — գրական գործիչ, մանկավարժ, թարգմանիչ:

⁷ «Հառաջ», 1919, թիվ 32: Տե՛ս նաեւ՝ «Տարեգրություն», հտ. 3, էջ 684:

ստուգաբանումներն ու մեկնությունները: Այսպես, 1901 թ., երբ Ախալքալաքից Գանձա ուղեւորվելիս բանաստեղծը պատրաստվում էր տեսնել «Փարվանի փերիներին»⁸, այսինքն՝ Ախալքալաքից 35–40 կիլոմետրի վրա գտնվող Փարվանա լիճը, հիշում է, որ այն կոչվում է ոչ միայն Թափարվան, այլևս Ղեւոնդ Ալիշանի բնորոշմամբ՝ «Ծով Հիւսիսոյ»: Թումանյանը տեղյակ էր, որ Հովհաննես Կոստանյանը⁹ Ալեքսանդրապոլից աջակցել էր հայր Ղ. Ալիշանին՝ Անիի մասին եւ «Այրարատի» համար բավականաչափ նյութեր ուղարկելով» նրան:

1904 թ. մայիսի 4-ին Երեւանի առաջնորդարանի պատշգամբից բացվող տեսարանը Թումանյանն ընկալում է հայր Ղ. Ալիշանի ու նաեւ Խ. Աբովյանի քնարերգության բնապատկերների նմանությամբ, մասնավորապես Երեւանը բանաստեղծին պատկերվում է հայր Ալիշանի «Հրազդան» բանաստեղծության տողերով: Իր տպավորության մասին նա էջմիածնից գրում է Վարյա Խանդամիրյանին. «Ես չեմ մոռանալ այդ ռուպեն: Ուտներիս տակ, ներքեւ պղտոր, մռնչալով, ոլորապտույտ անցնում է պատմական Հրազդանը (Աբովյանի սիրած Զանգին), հիշում եմ Աբովյանի Զանգվին նվիրված տողերը, հիշում եմ Ալիշանի

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրիկըդ իմ անուշիկ...

Նայում եմ Արարատյան դաշտին, մտքովս անց են կենում մեր պատմության փառավոր շրջանները, կենդանանում են հոյակապ հերոսները, որ ապրել ու թաղվել են այդ դաշտում, սրտիս խոսում են սքանչելի լեզենդները, որ դեռ ապրում են այնտեղ: Վերջապես դեմ ու դեմ, ամպերից բարձր փալատակում է Մասիսը, ծերունու քմահաճույքներով մին մթնում, մռայլում, մին բացվում ու ժպտում, բայց միշտ սիրուն, միշտ խորհրդավոր, այնինչ աշուղը, հայոց կույր աշուղը, երգում է.

Գողգոթայից բարձր է Սասունի սարը,
Գողգոթայից դժար է Սասունի սարը,
Իմ խաչն առած ես բարձրանում եմ
Սասունի սարը»¹⁰:

⁸ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» (ասուհետեւ՝ ԹԺՀ), Երեւան, 1969, էջ 429:

⁹ Ս. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հովհաննես Թումանյանի կյանքի եւ ստեղծագործության պատմությունը. 1900–1912, Երեւան, 2012, էջ 251:

¹⁰ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 9, էջ 430:

Հովհ. Թումանյանը դեռ երիտասարդ տարիներից ընթերցում էր Ղեւոնդ Ալիշանի գիտական երկերը եւ այնտեղից քաղում ուշագրավ փաստեր, որոնք ծառայեցնում էր իր գեղարվեստական երկերի պատմական հենքն ապահովելուն: Նա սկսել էր թատերգություն գրել Անիի եւ Հովհաննես-Սմբատ թագավորի մասին: Ստեղծագործական այդ ծրագիրը ենթադրում էր պատմական աղբյուրների ուսումնասիրություն: Բանաստեղծի արխիվում պահպանվում է մի տետր, որը կրում է «Տեղեկություններ (1021—1047) Բագրատունյաց թագավորության անկման» խորագիրը¹¹: Այստեղ Թումանյանը Մատթեոս Ուռհայեցու, Արիստակես Լաստիվերցու, Սմբատ պատմագրի (Գունդստաբլ) աշխատությունների, Սարգիս Զալալյանի «Ճանապարհորդության», Միքայել Զամչյանի «Պատմություն հայոց»-ի կողքին նշում է հայր Ալիշանի «Շիրակ» ուսումնասիրությունը: Բանաստեղծի անձնական գրադարանում պահվող Ալիշանի «Շիրակ», «Շնորհալի եւ պարագայ իւր», «Սիսական», «Սիսիուան» գրքերում պահպանվել են բանաստեղծի գրառումները, որոնք վկայում են, թե ինչպիսի ուշադրությամբ է Թումանյանն ուսումնասիրել Ղեւոնդ Ալիշանի հետազոտությունները, որքան քաջածանոթ էր Ալիշան հայագետին, որքան բարձր էր գնահատում նրան եւ որքան հաճախ էր օգտագործում նրա աշխատություններն իբրեւ աղբյուր: Ընդ որում՝ զանազան պատմագիտական եւ այլ աղբյուրների բանաստեղծը դիմել է թե՛ իր գիտական հինգ ուսումնասիրությունները, թե՛ հրապարակագրական եւ թե՛ գեղարվեստական երկերն ստեղծելիս՝ մշտապես վկայակոչելով հեղինակին:

Իր «Հայկական էպոսի բառարանից» ուսումնասիրության մեջ Հովհ. Թումանյանը խոսում է Հայկյան տոտեմի, Հայկի անվան ծագման մասին, վկայակոչում վրացական, ասորական, հրեական եւ այլ ազգերի սկզբնաղբյուրներ, հիշատակում ազգագրական ուսումնասիրություններ: Այս համաբնագրում Թումանյանը մեջբերում է կատարում նաեւ Ղեւոնդ Ալիշանի «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» աշխատությունից. «Հայկն առաջին տօմարագիր կ'ըսվի, որ է՝ ժամանակի եւ տարւոյ չափ ու շրջան որոշող»¹²: Հիմնվելով Ալիշանի առաջադրած գրույթների վրա՝ նա գրում է. «Էսպեսով բոլոր ժողովուրդները իրենց ազգային տոտեմներն ու ազգային դյուցազունները իրար խառնելով, աստվածաց-

¹¹ Հովհ. Թումանյան, Ելժ, հտ. 5, էջ 552, տե՛ս նաեւ ԳԱԹ, ԹՖ, թիվ 127:

¹² Ղ. Ալիշան, Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1910, էջ 32:

նելով, աստեղացնելով ու երկինք հանելով՝ երկինքը լցրել են աստեղակերպ դյուցազուններով: Դրանցից էլ առաջ է եկել կրոնների ու հոգեւոր երգերի մեջ հիշատակվող երկնային զորքը՝ զորությունը երկնից:

Դրանցից մեկն է եւ Հայկի համաստեղությունը՝ Հայկը, որ իր մեջ ամփոփում է երկու գաղափար՝ մինը ազգի տոտեմի, մյուսը՝ ազգի նախահոր ու դյուցազնի: Բայց ինչպես ասինք, ժամանակի ընթացքում տոտեմը մոռացվել, ձուլվել է դյուցազնի հետ, ինչպես երբեմն եւ ձուլվում է ժողովրդի կամ երկրի անվան հետ»¹³:

Այնուհետեւ Թումանյանը խոսում է Արկադիայի եւ արկադացիների մասին, որոնք իրենց ծագումը կապում են արջի հետ: Եւ «արջ» բառը ստուգաբանելիս, նրա հունարեն, լատիներեն բացատրությունները մեկնելիս դարձյալ հիմնվում է Ալիշանի «Հին հավատք» աշխատության դրույթների վրա¹⁴, ինչպես նաեւ Մառի այն տեսակետի, որ «Արկադիա» կնաշանակի արջաստան կամ արջանոց: Նույն ուսումնասիրության սեւագրություններում, դարձյալ հղելով Ղ. Ալիշանին, արձանագրում է. «Ժողովուրդները մինչեւ էսօր էլ հավատում են, որ արջի մորթու տակ բանական մարդ է ծածկված, եւ նրա կերպարանափոխության պատմություններով լիքն են ժողովրդական զրույցները (էջ 10. Բարոյախոս եւ Ալիշան)»¹⁵:

Հովհ. Թումանյանն Ալիշանի ուսումնասիրությունները, ինչպես նաեւ ժողովրդական եւ օտարալեզու գրական աղբյուրները հաճախ օգտագործում էր միայն միտքը, ներշնչանքը աշխուժացնելու, խթանելու նպատակով եւ ստեղծում էր միանգամայն ինքնուրույն գրական երկեր: Այդպիսի գործերից է «Բզեզի դպրոցը», որը բանաստեղծը վեստեղծել է ազգային ինքնության ու մտածողությանը համահունչ: Դրա փայլուն արտահայտությունն է Կոնստանդին Լդովի¹⁶ «Պարոն ուսուցիչ բզեզը» եւ Թումանյանի «Բզեզի դպրոցը» ստեղծագործության ոճային եւ բնագրաբանական համեմատությունը¹⁷: Լդովի բանաստեղծության մեջ 22 տառերից ու անուններից երեք բուսանուն-հասկացություն էր ուսուցանվում, իսկ Թումանյանի «Բզեզի դպրոցում» 35- ից 34-ը, հայոց այբուբենի հերթա-

¹³ Հովհ. Թումանյան, Եկե, հտ. 8, էջ 272:

¹⁴ Ղ. Ալիշան, Հին հավատք, էջ 25:

¹⁵ Հովհ. Թումանյան, Եկե, հտ. 8, էջ 306:

¹⁶ Կոնստանդին Լդով (Վիտոլդ-Կոստանդին Նիկոլաևիչ Ռոզենբլում) — 1862—1935 — մանկագիր:

¹⁷ Այս մասին տես Է. Զրբաճյան, Փաստերի հետքերով, Երևան, 2000, էջ 28—34:

կանությունը, միայն բույսերի, ծառերի ու մրգերի անվանումներ են: Բուսանուններն ընտրելիս բանաստեղծն օգտվել է Ղեւոնդ Ալիշանի՝ այսօր էլ իր անձնական գրադարանում պահվող «Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն» գրքից (Վենետիկ, 1895):

Ղեւոնդ Ալիշանը Թումանյանի գնահատմամբ: «Պանդուխտ գրականության» թումանյանական ընկալումը: 1899 թ. ստեղծվեց նշանավոր «Վերնատունը», որի ասուլիսներում հաճախ էին քննության նյութ դառնում հեռավոր ու մերձավոր գրական նախորդների ստեղծագործությունները, ազգային գրականության ավանդույթները, անցյալի արժեքները վերագնահատելու խնդիրները: Անշուշտ, հայ նոր գրականության զարգացման ուղիների որոնման տիրույթում վերնականների ուշադրությունից չէր կարող լրիպել նաեւ իրենց անմիջական նախորդների՝ առաջին հերթին Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի եւ այդ սերնդի մյուս հայ գրողների գրապատմական դերի գնահատման հարցը:

Գրեթե նույն շրջանում՝ 1898–1902 թթ., «Ծիածան» աշակերտական գաղտնի ընկերության հավաքույթներում Թումանյանը զրույց-դասախոսություններ էր վարում հայ գրականության պատմությունից, որտեղ իր առանձնահատուկ տեղն ուներ նաեւ Ղ. Ալիշանի քնարերգությունը: «Ծիածանի» աշակերտների թիվը տատանվում էր 200–500-ի սահմաններում: Թումանյանը դասավանդում էր ընկերության «Մայր խմբին» եւ լսարան էր դարձնում Թիֆլիսի Բեհբուջյան փողոցի իր տունը՝ «Վերնատունը»: Այդ շրջանում դեռեւս չկար հայ գրականության համակարգված պատմություն: Գրականության մասին դասախոսություններում արտահայտվում էին Թումանյանի գրապատմական ըմբռնումներն ու գեղագիտական հայացքները, որոնք տարիների ընթացքում էլ ավելի արմատավորվեցին սկզբունքային մոտեցումներով եւ չկրելով որեւէ էական փոփոխություն՝ արտահայտվեցին նաեւ տարիներ անց բանաստեղծի կարգացած նոր դասախոսություններում, գրաքննադատական հոդվածներում եւ աշխատություններում:

1907 թ. հունիսի 10-ին Թումանյանը դասախոսություն է կարդում Թիֆլիսի Զուբալովի ժողովրդական տանը՝ «Կյանք եւ գրականություն» խորագրով, որտեղ արձանագրելով հայ կյանքի ու հայ գրականության մասին լուրջ ուսումնասիրությունների բացակայությունը՝ նկատում է. «Հայ գրականության մասին խոսել, այդ նշանակում է խոսել մի փոքրիկ գրականության մասին, որ դեռ նոր-նոր է սկսել իր լեզուն մշակել, ծաղկել, դեռեւս

անկերպարան վիճակում է, եւ որի սկսողների մի մասն արդեն մեռած, սակայն մյուս մասը դեռ ապրում է մեզ հետ, մեր ընկերներն են»¹⁸:

Բանաստեղծի արած գլխավոր շեշտադրումը եւ գրականության ու գրողների ստեղծագործության քննության ելակետերից մեկն ազգի կյանքի, պատմության, իրականության, միջավայրի ու շրջապատի անմիջական ազդեցությունն էր արվեստի եւ գրականության վրա: Այսպես, արվեստը մեկնելով կյանքի հանգամանքների հետ սերտ առնչակցության մեջ՝ բանաստեղծն ասում է. «Որքան շրջապատը լայն է ու ընդարձակ, բազմակողմանի ու բազմաբովանդակ, այնքան մեծ է գրողը ու նրա շրջահայացը, նույնքան մեծ ու հարուստ է նաեւ գրականությունը»¹⁹: Հենց այս համաբնագրում են հայրենիքում եւ նրանից դուրս ստեղծվող գրականությունն ու գրողները ստանում իրենց բնորոշումները եւ հենց այս տիրույթում են արժեւորվում հայ գրողների, այդ թվում՝ նաեւ Ղ. Ալիշանի ստեղծագործությունը: Այս ելակետից քննելով խնդիրը՝ Թումանյանը գրականության մասին իր ելույթներում հաճախ էր անդրադառնում հայության տարագրության պատմությանը՝ նկատելով, որ դարեր շարունակ տանջանքն ու բռնությունն են ստիպել հային հեռանալ իր հող ու ջրից, բռն երկրից՝ հայրենիքից: Եւ միայն հեռանալուց հետո են հանգիստ շունչ առել: Սակայն օտար միջավայրը չէր կարող իր ազդեցությունը չթողնել այնտեղ ստեղծվող գրականության վրա: Այս յուրահատկությանն է անդրադառնում բանախոս Թումանյանն իր «Կյանք եւ գրականություն» դասախոսության մեջ եւ ի վերջո հանգում է տխուր եզրակացության. «Ժողովուրդներն ունենում են հազար ու մի դարդ-ցավ, այրող-մաշող խնդիրներ, սակայն կան խնդիրներ, որոնք համաժողովրդական են, եւ որոնք իրենց հաստատուն կնիքը դնում են գրականության վրա: ...Տարագիր, պանդուխտ ժողովրդի գրականությունն էլ, անշուշտ, պիտի լինեն պանդխտության ու հալածանքի գրականություն: Պանդուխտ ժողովուրդ, պանդուխտ գրականություն» (ընդգծումը.— Ս. Հ.)²⁰:

Մեր գրականության պատմության մեջ բանաստեղծի՝ թեւավոր խոսք դարձած վերոնշյալ արտահայտությունն առաջին հայացքից միայն արձանագրում է օտարության մեջ ապրող գրողների արվեստում հայերենի միջավայրից եկող անմիջական ազդակների ու ներշնչանքի բացակայու-

¹⁸ Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 6, Երեւան, 1994, էջ 532:

¹⁹ Անդ, էջ 531:

²⁰ Անդ, էջ 531- 532:

թյունը, հայրենիքի իրական կյանքի ոչ խոր իմացությունը: «Օտար երկրում բուսած մի ծաղիկ չի կարող իր երկրի շունչն ու փարթամությունը ունենալ, մի մարդ, որ իր երկիրը չի տեսել, նա չի կարող այդ երկրի իսկական պատկերը տալ»,— գրում է նա²¹: Ցուրակ Խանզադյանին ուղղված 1916 թ. օգոստոսի 24-ի նամակում Թումանյանը, նկատի ունենալով Գամառ-Քաթիպային, գրում է. «Բայց եթե նա քիչ է ազգային բանաստեղծ՝ էդ պակասությունը իրենը չի, տաղանդի պակասությունը չի, այլ հանգամանքների, ինչպես եւ իմը չի էն առավելությունը, որ ես ավելի եմ ազգային, այլ դարձյալ հանգամանքներին: Մի խոսքով, օբյեկտիվ ու հարգալից վերաբերմունքը, կիրթ, գեղարվեստական ճաշակն ու առողջ գրական հասկացողությունը վերջ ի վերջո որոշելու են ամեն մեկի տեղը: Եւ օրհնյալ են ամենքն իրենց տեղը»²²:

Այդ հոգեբանությամբ ստեղծագործած գրողների շարքը Թումանյանն սկսում է Ղ. Ալիշանով, այնուհետեւ տալիս Մ. Պեշեքյանի, Ս. Շահազիզի, Գ. Պատկանյանի անունները. «Հայր Ալիշանը Վենետիկից մրմնջում է. «Ով լերինք ծաղկաց»²³ ...Հիշում է անուշ երկրի հարուստ բնությունը եւ երանի տալիս նրան»²⁴:

Բանաստեղծն Ալիշանին անդրադառնում է նաեւ «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» ուսումնասիրության մեջ: Այստեղ Թումանյանի ուշադրությունը գրավում են հայր Ալիշանի «Հայոց աշխարհիկ»-ից այն տողերը, որտեղ հեղինակն օտար երկրից կարոտակեզ կանչում է իր հայրենիքին.

Ո՛հ, լեռնմ ծաղկած, ո՛հ ջուր ծիծաղկոտ,
Զանուշիկ հովերդ ի յիս ածե՛ք մօտ.
Յուզմունք անուշիկ, եկե՛ք, մօտ ի յիս,
Շունչ ու երգս առե՛ք, տարե՛ք ի Մասիս...

Նույն խոսքերը մեջբերում է նաեւ այդ ուսումնասիրության համար կատարած իր գրառումներում՝ հիշելով, որ Ալիշանը Վենետիկից է մրմնջում այդ խոսքերը²⁵: Նկատի ունենալով «պանդուխտ գրողներին»՝ Թումանյանն իր հոգու ցավն է արտահայտում նրանց ճակատագրի հա-

²¹ Անդ, էջ 532:

²² Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 10, էջ 250:

²³ Մեջբերումը Ղ. Ալիշանի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունից է. տե՛ս «Նուագք», հտ. Ե., Վենետիկ, 1858, էջ 159–162:

²⁴ Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 6, էջ 531:

²⁵ Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 8, էջ 88:

մար. «Ո՛չ ապրեցին հայի գյուղում, ո՛չ քնեցին հայի հյուղում, ո՛չ լեզուները խոսաց նրանց հետ, ո՛չ ականջները լսեց նրանց, ո՛չ նրանց ուրախությունը տեսան, ո՛չ տրտմությունը վրա հասան: Եւ ահա իրանց տաղանդներով հանդերձ՝ սխալներ արին հայրենիքի բնությունը երգելիս, ժողովրդի կյանքն ու սովորույթը պատմելիս, լեզուն խոսելիս»²⁶: Բանաստեղծը միաժամանակ նոր եզրույթ է առաջադրում՝ «հայ գրող» եւ «հայոց գրող»: Առաջինն անծանոթ է Հայաստանում ապրող հայի կյանքին, իսկ երկրորդն ապրում է նրա հետ եւ շատ ավելի լավ ճանաչում նրա կյանքն ու հոգսերը ու նաեւ բնությունը, որոնք նկարագրում է առանց վիպապաշտական գունավորումների: «Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշվառ հայրենիք, բայց թե ինչ բան է այդ հայրենիքը, ինչի մեջն է նրա թշվառությունը, ինչպես են ապրում, ինչպես են խոսում, լալիս, ուրախանում եւ այլն, նրա ժողովուրդը, ահա այդ է հարկավոր... Հակառակ դեպքում նրանք կմնան հայ բանաստեղծներ, ոչ թե հայոց բանաստեղծներ... Դեպի ժողովուրդը, դեպի բնությունը, հայոց գրողներ», — վերջաբանում կոչ է անում բանաստեղծը²⁷:

Այս խնդրի շուրջ մեկնություններ կատարելիս Թումանյանը ստեղծում է նաեւ տառաշխարհիկ ու բնաշխարհիկ եզրույթները: Հայր Ղեւոնդ Ալիշանը, բնականաբար, տարաշխարհիկ գրողների շարքում է: Սակայն, որքան էլ գրականության պատմաբան Թումանյանը նկատեր հայրենիքից հեռու ստեղծագործելու հանգամանքով պայմանավորված յուրահատկություններ, նա բարձր էր գնահատում «տարաշխարհիկ» գրողների հայրենասիրությունը: Ալիշանի եւ այլ գրողների պատմական ծառայությունը համարում էր ժողովրդի մեջ ազատության ոգու արթնացումը. «Նախորդ շրջանի այդ գրողները հայ երիտասարդությանը դեպի Արաքսի այն կողմն էին հրավիրում, այնտեղ էր նրանց կռիվը: Ապարդյուն չի Արաքսի այն ափը, Զեյթունն աղմկում է, եւ հայ ժողովուրդը էն գլխից ըմբոստացման ուղին է բռնում: Այս հանգամանքը մեր վերջին պատմության ամենալավ էջերից մեկն է կազմում»²⁸: Հստ Թումանյանի՝ որպես տառաշխարհիկ, պանդուխտ գրականության ներկայացուցչի՝ Ալիշանի քնարերգությունն ավելի աչքի էր ընկնում իրականության քնարական, վիպապաշտական ընկալմամբ, մինչդեռ բնաշխարհիկը «ծնվում եւ սնվում

²⁶ Անդ, էջ 79:

²⁷ Անդ, էջ 85:

²⁸ Անդ:

է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում»²⁹: Ահա թե ինչու բնաշխարհիկ գրականությունն իր հետ բերում է հայ ազգային կյանքի, տառապանքի եւ ձգտումների ճշմարտացի պատկերը, ունակ է ժողովրդի հետ խոսել նրան հարազատ լեզվով ու պատկերներով: Բնաշխարհիկ գրողները՝ Խ. Աբովյանից սկսած, ներկայացնում են իրական դժոխքը հայրենի հողի վրա:

1913 թ. մայիսի 16-ին Հայ գրողների կովկասյան ընկերության 15-րդ երեկույթում, որը նվիրված էր Գամառ-Քաթիպային, Թումանյանը, իր ելույթում նշելով Պատկանյանի լեզվական սխալները եւ անծանոթությունը հայ կյանքին, մեկ անգամ եւս սահմանում է բնաշխարհիկ եւ տառաշխարհիկ գրականությունը: Առաջինն այն է, որ ծնվում եւ սնվում է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում: Երկրորդը, «կտրված հայրենիքից, զարգանում է օտար երկնքի տակ՝ հայ գաղութներում»³⁰:

Եւ դարձյալ բանաստեղծը շտապում է ընդգծել այդ գրողների ստեղծագործության արժանիքներից կարեւորագույնը՝ հայրենասիրությունը՝ նկատելով, որ օտարության մեջ ապրող հեղինակները «հայրենասիրության միշտ մեծ կորով են երեւան բերել... բայց հենց որ նրանք վերացական մտքերից դիմում են հայ կյանքի կոնկրետ ձեւերին, անմիջապես ցույց են տալիս իրենց անծանոթությունն այդ կյանքին»³¹:

«Գրական-գեղարուեստական արվանդան»-ի խմբագրության հարցաթերթիկին պատասխանելիս Թումանյանն անդրադառնում է գաղութներում ստեղծված գրականության առանձնահատկությունները պայմանավորող պատմական հանգամանքներին եւ գործոններին: Բանաստեղծը սահմանում է նախ ազգային եւ ապա համամարդկային լինելու գեղագիտական սկզբունքը, որն ընկած է ցանկացած գրականության զարգացման հիմքում. «Մինչեւ այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչեւ երկինք հասնի»³²:

²⁹ «Հորիզոն», 1913, մայիսի 21, թիվ 111: Տե՛ս նաեւ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 7, էջ 532:

³⁰ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 7, էջ 532:

³¹ Անդ, էջ 396:

³² Անդ:

Այնուամենայնիվ, Թումանյանը բարձր էր գնահատում Ալիշանի դերը հայ գրականության պատմության մեջ: Եւ գրական բանավեճերում երբեմն հիշատակում էր նրա անունը որպէս ամենքի համար ընդունելի, գրական անառակելի հեղինակություն: Այդպիսի առիթ էին «Նոր Դարի» 1899, թ. մարտի 4-ի թիվ 39-ի «Կանոնավոր կրթությունն է պակաս» եւ նույն լրագրի 1899 թ. ապրիլի 1-ի թիվ 58-ի «Այս ինչիցն է» առաջնորդողները: Այս հոգւածներում վերջին 20 տարիների հայ գրողները բնորոշվում էին «անընդունակների, աղմուկ հանողների, եւ միտքը, եւ սիրտը պղտորողների, եւ հայերեն լեզուն ապականողների ահագին լեգեոն»³³:

«Կանոնավոր կրթությունն է պակաս» առաջնորդողում հայ գրողները մեղադրվում էին հայ մարդուն բացասական կողմերով ներկայացնելու մեջ, որով, ըստ հոգւածագրի, ոտնահարվում էր ազգային արժանապատվությունը: Իբրեւ պատճառ նշվում է հայ գրողների թերիմացությունը, կրթության բացակայությունը: Առաջնորդողում ասվում էր. «Մեր մեծ համարուած, բայց իսկապէս շատ փոքրիկ տաղանդի տէր բանաստեղծները, դրամատուրգները, վիպասաններն իրենց փառքը որոնել են հայի մէջ միմիայն պակասութիւններ տեսնելով, նրան յոռի ու տգեղ կողմերը մեծացնելով ու աշխարհի առաջ ծաղրի առարկայ շինելով հային եւ հայի անունը... Իրենց այս ընթացքով նրանք վնասել են ժողովրդի զարգացման գործին եւ յուսահատեցրել են... Եւ ինչո՞ւ են... այդպէս վարուել... Որովհետեւ զուրկ են եղել կանոնաւոր եւ հիմնաւոր կրթութիւնից, որովհետեւ բոլորն էլ մեծ ախրացումներ են եղել»³⁴:

Այս պատասխանն ու եզրակացությունը, «նախատինքներն ու խրատները» Թումանյանը բնորոշում է «անմխիթար, հուսահատական, մեկը մյուսից ավելի անհեթեթ ու անճոռնի»: Իսկ այն, որ առաջնորդողներն «աղաղակում» էին նաեւ այն մասին, թե գրականության մեջ ինչ լավ բան եղել է, եղել է միայն անցյալում, Թումանյանն անվանում է «մի շատ խավար ու տմարդի ձեւ», եւ «աբսուրդ» է բնորոշում հայ գրողներին տիրացու կոչելը, իսկ նրանց կողմից ազգի միմիայն պակասությունները, հոռի ու տգեղ կողմերը տեսնելու, դրանք մեծացնելու ու ծաղրելու եւ դրանով ազգի առաջընթացը խոչընդոտելու մեղադրանքն անվանում է «անխիղճ զրպարտություն»: Բանաստեղծը գրում է. «Բայց բանն ասելը չէ, բանը

³³ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 6, էջ 589:

³⁴ Տե՛ս «Նոր Դար», 1899, մարտի 4, թիվ 39, 1899 թ., ապրիլի 1, թիվ 58. ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 6, էջ 589:

ապացուցանելն է. ցույց տվեք տեսնենք մեր ո՞ր բանաստեղծը միմիայն հայի հոռի կողմերը երգեց, որ արժանացավ ձեր այսօրվա նախատինքին: Ինչպե՞ս չեք պատկառում Ալիշանի նվագներից*, ի՞նչպե՞ս չեք քաշվում Գամառ-Քաթիպայի ազատ երգերից, ի՞նչպե՞ս չեք ամաչում Պեշիկթաշլյանի աղու մրմունջներից, Շահազիզի ու Դուրյանի գործերից:Մի՞թե մեր միակ դրամատուրգ Սունդուկյանցը միմիայն նրա համար է Պեպո գրել եւ միմիայն Զիմզիմովի վատ տիպն է դուրս բերել, որ հային խայտառակի աշխարհի առաջ, թե Պեպոն ու մյուս լավ տիպերը հայ չեն»³⁵:

Այս ամենը բանաստեղծին հանգեցնում են տխուր եզրակացություն. «Մեր լրագիրները փեշակ են շինել հալածել ու հայհոյել գրականությունն ու գրողներին, իհարկե, միշտ քննադատության անունով, գրականության վրա սրտացավ հսկողի հավակնությամբ, միշտ անաչառություն աղաղակելով: Շատ հետաքրքրական բան դուրս կգար, եթե մի ձեռնհաս մարդ քններ այս տխուր երեւույթը, ցույց տար, թե ինչ շարժառիթներից է առաջ եկել, ինչպե՞ս է արտահայտվել կամ ինչ միտք է ունեցել այս թշնամական վերաբերմունքը, որ միշտ անցել է հասարակ մարդավարության եւ տանելի դատողության սահմաններից»³⁶:

Եւ ահա այդ «հասարակ մարդավարության եւ տանելի դատողության սահմաններն» անցած քննադատության անվան տակ հանդես եկող «թշնամական վերաբերմունքի» դեմ պայքարելիս Թումանյանը՝ իբրեւ հայ գրականությունը ներկայացնող արժանավոր բանաստեղծ, հիշատակում էր նաեւ Ալիշանի անունը, որից կարող էր պատկառել ցանկացած ընդդիմախոս: Նա վստահ էր, որ Ղեւոնդ Ալիշանի կյանքն ու ստեղծագործությունը համահունչ էին իր ժողովրդի ճակատագրին եւ առանձնահատուկ նույնքան, որքան հայ ազգի պատմությունը:

Անդրադառնալով Ղ. Ալիշանի եւ իր մյուս նախորդների ստեղծագործությանը՝ Հովհ. Թումանյանը ոչ միայն արտահայտեց իր գնահատականներն ու մոտեցումներն այդ հեղինակների գրական ժառանգությանը, այլեւ ձեւակերպեց նախաթումանյանական շրջանի հայ գրականության կարեւոր առանձնահատկություններից մեկը, որն էական նշանակություն ունեցավ հայ գրականության եւ քննադատական մտքի զարգացման համար:

³⁵ Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. 6, էջ 114:

³⁶ Անդ:

РЕЗЮМЕ

По свидетельствам современников, в ранний, период своей творческой жизни Ованес Туманян находился под отдаленным и опосредованным воздействием Гевонда Алишана, которое носило непродолжительный характер. Воздействие это было настолько слабым, что до недавнего времени оставалось незамеченным для армянской филологической мысли и не удостоивалось внимания туманяноведов.

Однако несомненно то, что поэт глубоко и основательно изучил все литературное и научное наследие Алишана, к которому неоднократно обращался в своих публицистических и художественных произведениях, а также в своих беседах-лекциях по истории армянской литературы.

Туманян по достоинству оценивал литературно-историческую роль Г. Алишана. Обращаясь к творчеству Алишана, Туманян не только выразил свое отношение к его поэзии и дал ее оценку, но и сформулировал одну из особенностей армянской литературы предшествующего периода, которая сыграла важную роль в развитии армянской литературы и литературно-критической мысли.

SUMMARY

According to the testimonies of contemporaries, Hovhannes Tumanyan in the early period of his creative life was under the remote and indirect influence of Ghevond Alishan, which was of a short-term nature. This influence was so weak that until recently it went unnoticed by the Armenian philological thought and did not receive the attention of scholars studying the works of Tumanyan.

However, there is no doubt that the poet deeply and thoroughly studied the entire literary and scientific heritage of Alishan, whom he repeatedly referred to in his journalistic and artistic works, as well as in his talks-lectures on the history of the Armenian literature.

Tumanyan appreciated the literary and historical role of G. Alishan. Referring to the works of Alishan, Tumanyan not only expressed his attitude to his poetry and gave his assessment, but also formulated one of the features of the Armenian literature of the previous period, which played an important role in the development of the Armenian literature and literary-critical thought.

ՀԱՅԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀԱԱ

ՎՅՅԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՄԻ ԵՐԵՒԱՆԵԱՆ ԶՕՐԱՋՈԿԱՏԻ ՇՏԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆ ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ՎՈԳԵՒՈՐ ՃԵՍԱՐԱՆԻ ՇԵՆՔՈՒՄ 1918 ԹՈՒԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ

1918 թ. յունուարի 30-ին (նոր տոմարով՝ փետրուարի 12-ին) Կովկասեան ռազմաճակատում գործող թուրքական «Կովկաս» բանակախումբը (հրամանատար՝ Մեհմեդ Վեհիբ փաշա), խախտելով դեռևս 1917 թ. դեկտեմբեր 5-ի Երզնկայի զինադադարը եւ զինադադարի համաձայնագրին կից «Դեմարկացիոն գծերի մասին» ակտը¹, անցնում է յարձակման ռազմաճակատի ամբողջ գծով: Յարձակումն սկսելու պահին թուրքերը Կովկասեան ճակատում ունէին երեք բանակային կորպուս, որոնք գործում էին Տրապիզոն—Բաթում (3-րդ բանակի 2-րդ կորպուսը), Էրզրում—Կարս (3-րդ բանակի 1-ին կորպուսը), Վան—Բայազէտ (2-րդ բանակի 4-րդ կորպուսը) ուղղութիւններով²: Այս երեք բանակային կորպուսները միասին սկզբում ունէին 10 000 սուր, իսկ արդէն մարտի վերջին՝ 25 000 զինուոր ու սպայ³:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ ռուսական զօրքերի լքած շուրջ 720 կմ երկարութիւն ունեցող Կովկասեան ռազմաճակատի՝ Տրապիզոն—Բաբերդ (Բայբուրդ) հատուածի պաշտպանութիւնը վստահուած էր նոր կազմաւորուած Վրացական առանձին բանակային կորպուսին, իսկ Բաբերդից մինչեւ Պարսկաստանի սահմանն ընկած հատուածը՝ Հայկական առանձին բանակային կորպուսին: Վերջինիս կազմաւորման գործընթացն սկսուեց Մօզիլեովի զօրակայանի⁴ 1917 թ. նոյեմբերի 16-ի

¹ Համաձայնագրի եւ «Դեմարկացիոն գծերի մասին» ակտի բնագրերը տէս Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828—1923), խմբ.՝ Զ. Ս. Կիրակոսեանի, Երեւան, 1972, էջ 412—413:

² Յարձակման քարտէզը տէս Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 247, ց. 3, գ. 70, թ. 1:

³ Տէս Е. Ф. ЛУДШУВЕЙТ, Турция в годы Первой мировой войны. 1914—1918 гг., Մոսկուա, 1966, էջ 167:

⁴ 1915 թ. օգոստոսից մինչեւ 1917 թ. նոյեմբեր ամիսը Յարական բանակի գերագոյն-գլխավոր հրամանատարի զօրակայանը գտնուում էր Մօզիլեով քաղաքում:

«Բանակի եւ նաւատորմի վերաբերեալ» հրամանի⁵, ինչպէս նաեւ Կովկասեան ռազմաճակատի գլխաւոր հրամանատար, հետեւագործի գեներալ Միխայիլ Պրժեւալսկու 1917 թ. նոյեմբերի 30-ի №136 եւ Հայկական առանձին բանակային կորպուսին ուղղուած 1917 թ. դեկտեմբեր 1-ի №2 հրամանների հիման վրայ⁶: Կորպուսի հրամանատար է նշանակուած գեներալ-լէյտենանտ Թովմաս Նազարբեկեանը՝ համաձայն հետեւագործի գեներալ Մ. Պրժեւալսկու №796 կարգադրութեան⁷: Կորպուսի շտաբի պետ է նշանակուած փոխգնդապետ Ալեքսանդր Սիլեարեւիչը (յետագայում նրան փոխարինում է գեներալ-մայոր Եւգէնի Վիշինսկին), իսկ կորպուսի ռազմական կոմիսար՝ Դրաստամատ Կանայեանը (Դրօն):

Հայկական բանակային կորպուսը (ներառեալ գեներալ-մայոր Միխայիլ Արեշելի ու գեներալ-մայոր Մովսէս Սիլիկովի հրամանատարութեամբ գործող 1-ին եւ 2-րդ Հայկական հրաձգային դիվիզիաները, գնդապետ Կոնստանտին Ղամազեանի եւ գնդապետ Քրիստափոր Արատեանի հրամանատարութեամբ գործող 1-ին ու 2-րդ հրետանային բրիգադները, գեներալ-մայոր Անդրանիկ Օզանեանի (աւելի ուշ նրան փոխարինած գեներալ-մայոր Պաւէլ (Պօղոս) Անբեկեւի) հրամանատարութեամբ գործող 3-րդ հրետանային ջաշտակ Հաւաքական զօրաշուկատը, էրզրումի, Կարսի եւ Ալեքսանդրապոլի բերդերի կայազօրները) ունէր 17 000 անձնակազմ⁸:

1917 թ. դեկտեմբերի 25-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ղեկավարութիւնը Հայոց ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուբար փաշային յայտնում է հետեւեալը. «Վրացիների հետ սկսած են շատ լուրջ բանակցութիւններ իրական եւ հիմնաւոր համաձայնութիւն ստեղծելու Կովկասեան ճակատի միաբան պաշտպանութեան համար: Բանակցութիւնները տակաւին թէեւ չեն վերջացած, բայց համաձայնութիւնը անկասկած է»⁹: 1918 թ. մարտի 3-ին գեներալ-լէյտենանտ Թ. Նազարբեկեանը, իր շտաբով ժամանելով Սարիղամիշ, գեներալ Իլիա Օդիշելիձէից ընդունում է ռազմաճակատի ընդհանուր հրամանատարութիւնը¹⁰: Սա-

⁵ Տէս Ա. ՆԱԶԱՐԵԱՆ, Հայկական զօրամասերի կազմաւորումը Կովկասեան ճակատում (1914–1918 թթ.), Երեւան, 1999, էջ 150:

⁶ Տէս ՀԱՍ, ֆ. 1267, ց. 2, գ. 97, թ. 1:

⁷ Տէս Ա. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 150:

⁸ Տէս Ե. Փ. АУДШУБЕՅԻՏ, նշ. աշխ., էջ 160:

⁹ «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», «Գէորգ Ե. Սուրէնեանց կաթողիկոս Ամենայն Հայոց (1847–1930)», գր. Ժ. Գ., կազմող՝ Ս. Բեհբուդեան, Երեւան, 2005, էջ 469:

¹⁰ Տէս Ա. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 198:

կայն թուրք-վրացական ռազմաքաղաքական ղեկավարների միջեւ կայացուած գործարքների¹¹ հետեւանքով Տրապիզոնն ու Բաթումի Միխայիլովեան բերդը գրեթէ առանց դիմադրութեան յանձնոււմ են թուրքական բանակին: Միաժամանակ Անդրկովկասեան Սէյմի ռազմաքաղաքական ղեկավարութեան՝ Թիֆլիսից նահանջի մասին արուած հրահանգների, ինչպէս նաեւ Հայկական կորպուսի առանձին ստորաբաժանումներում առկայ թոյլ կարգապահութեան հետեւանքով թուրքական բանակը մէկը միւսի հետեւից, գրեթէ առանց կռուի, գրաւոււմ է Երզնկան, Բաբերդը, Մամախաթունը, Էրզրումը, Վանը, Սարիղամիշը, Կարսը:

1918 թ. մարտի 24-ին Վաղարշապատի Ազգային եւ զինուորական մարմիններից եւ Ս. Էջմիածնի Միաբանական ուխտի անդամներից գումարուած խառը ժողովը խորհրդակցութեան նիւթ է դարձնում հայրենիքի եւ հայ ժողովրդի խիստ վտանգուած դրութիւնը¹²: Արարատեան դաշտը եւ Երեւանի ու Վաղարշապատի պաշտպանութիւնն իրականացնում էր Երեւանեան զօրաշոկատը: Վերջինս կազմաւորուեց 1918 թ. գարնանը: Զօրաշոկատի միջուկը կազմում էր գեներալ-մայոր Մ. Սիլիկովի հրամանատարութեամբ գործող Հայկական հրաձգային 2-րդ դիվիզիան: Եւ ամենեւին պատահական չէ, որ նորաստեղծ զօրաշոկատի հրամանատար նշանակուեց հէնց Մ. Սիլիկովը, իսկ զօրաշոկատի շտաբի պետի պաշտօնն ստանձնեց նոյն դիվիզիայի շտաբի պետ, փայլուն շտաբային սպայ, փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլեանը: Ինչպէս գեներալ-լէյտենանտ Թ. Նազարբեկեանին ուղղուած նամակում Մ. Սիլիկովն էր շեշտում. «Հաշուի առնելով Երեւանի բնակչութեան ծայրայեղ նեարդային տրամադրութիւնները, ես իմ շտաբը տեղափոխեցի Էջմիածին, որտեղ եւ մնացի մինչեւ բոլոր ռազմական գործողութիւնների աւարտը»¹³:

Վաղարշապատում շտաբը տեղակայոււմ է Գէորգեան հոգեւոր ճեմարանի շէնքում¹⁴:

¹¹ Գործարքների մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 42—44:

¹² Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1918—1920), գք. Ե., կազմող՝ Ա. Բեհրուդեան, Երեւան, 1999, թ. 21:

¹³ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թ. 8:

¹⁴ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի ստեղծման գործընթացը, որը տեղի ունեցաւ Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Դ.-ի նախաձեռնութեամբ, սկսուեց 1867 թ. (տե՛ս ճեմարանի բացման մասին Գէորգ Դ.-ի 1874 թ. ապրիլի 28-ին հրապարակուած №175 կոնդակը. ՀԱԱ, ֆ. 65, ց. 1, գ. 6473, թ. 1 եւ շրջ.): Արդէն 1874 թ. ստացոււմ է Յարական Ռուսաստանի ներքին գործերի նախարարութեան Այլադաւան հոգեւոր գործերի բաժանմունքի՝

Յատկանշական է, որ ճեմարանի շէնքը դեռեւս 1917 թ. դեկտեմբերից արդէն դրուել էր Հայկական առանձին բանակային կորպուսի տրամադրութեան տակ: Մասնաւորապէս Վաղարշապատում տեղակայուած Հայկական 4-րդ հրաձգային գնդի հրամանատար, գնդապետ Աբրահամ (Արտէմ) Յովսէփեանցի ստորագրութեամբ դեկտեմբերի 20-ին ճեմարանն ստանում է №8374 գրութիւնը, որով պահանջում էր զինուորական նպատակների համար երեք օրուայ ընթացքում դատարկել «ճեմարանի ամբողջ շէնքը իւր խոշոր շինութիւններով»¹⁵: Հարցը քննարկելու նպատակով՝ գնդապետ Ա. Յովսէփեանը եւ գաւառային կոմիսար Ալթունեանը տեսակցութիւն են ունենում ճեմարանի տեսուչ Գարեգին եպիսկոպոս Յովսէփեանի հետ: Հանդիպման ժամանակ գաւառային կոմիսարը յայտնում է, որ ճեմարանը պէտք է փակուի, քանի որ 19-ից 33 տարեկանների զօրահաւաք է յայտարարուած, եւ բնականաբար, բարձր դասարանների աշակերտները եւ ուսուցիչները նոյնպէս պէտք է զօրակոչուեն զինուորական ծառայութեան¹⁶: Նոյն օրը՝ երեկոյեան, Գարեգին եւ Յուսիկ եպիսկոպոսները հանդիպում են ունենում զինուորական հրամանատարութեան հետ՝ առաջարկելով ճեմարանի շէնքը վնասուելուց զերծ պահելու համար ուրիշ շէնք տրամադրել¹⁷: Սակայն այլ տարբերակի շուրջ կողմերը համաձայնութեան չեն հանգում:

Ի վերջոյ՝ 1917 թ. դեկտեմբերի 21-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Ե.-ի որոշումով ճեմարանն առժամանակ դադարեցնում է իր դասերը, եւ շէնքը տրամադրում է զինուորական հրամանատարութեանը¹⁸: 2 օր անց՝ դեկտեմբերի 23-ին, ճեմարանը վերջնական լուծարման է ենթարկւում¹⁹: Արդէն 1918 թ. մայիսի դրութեամբ Մայր Աթոռի միւս կառույցներից շատերը ծառայում էին որպէս որբանոցներ, հիւանդանոցներ,

ճեմարանը բացելու թոյլտուութիւնը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 75, ց. 2, գ. 841, թ. 1—4): Ճեմարանը պաշտօնապէս բացուեց 1874 թ. սեպտեմբերի 28-ին (բացման մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 1109, թ. 1—9): Հինգ տարի անց՝ 1881 թ. սեպտեմբերի 1-ին, Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Դ.-ն հաստատում է ճեմարանի կանոնադրութիւնը (Կանոնադրութիւնը տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 92, թ. 1—8):

¹⁵ ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 28, թ. 19-ի շրջ:

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 28, թ. 19-ի շրջ եւ 20:

¹⁷ Տե՛ս անդ:

¹⁸ Տե՛ս «Նշանաւոր ճեմարանականներ», պր. Ա., խմբ. Պ. Յովհաննիսեանի, էջմիածին, 2005, էջ 24:

¹⁹ Տե՛ս «Գարեգին Ա. Յովսէփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1867—1943—1952)», հտ. Ա., կազմող Գ. Աւագեան, գլխ. խմբագիր՝ Ա. Վիրաբեան, Ս. էջմիածին, 2017, էջ 336:

զօրանոցներ ու զինանոցներ, իսկ Մայր Աթոռի տպարանն աշակցում էր ճեմարանի շէնքում հաստատուած Երեւանեան զօրաշոկատի շտաբին՝ հրատարակելով հայ ժողովրդին ուղղուած նրա կոչերը²⁰:

Այդ ծանր օրերին զինուորական հրամանատարութեան տրամադրութեան տակ էին ոչ միայն Մայր Աթոռի շինութիւնները, այլեւ բազմաթիւ հոգեւորականներ, այդ թւում՝ ճեմարանականներ: Վերջիններս, ինքնակամ դիմում գրելով, մեկնում են ռազմաճակատ: Մասնաւորապէս դեռեւս 1917 թ. դեկտեմբերի 29-ին Մայր Աթոռի միաբանական ժողովը զեկուցագիր է ներկայացնում Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Ե.-ին՝ յայտնելով միաբաններ Վարդան, Գիւտ, Կորիւն, Իսահակ, Թադէոս վարդապետների, ինչպէս նաեւ Ներսէս Աբեղայի՝ ռազմաճակատ մեկնելու եւ Կովկասեան ռազմաճակատի պաշտպանութեան գործին աշխոյժ մասնակցութիւն ունենալու որոշման մասին²¹: Աւելի ուշ՝ 1918 թ. փետրուարին, ռազմաճակատ են մեկնում Արիստակէս եւ Խորէն վարդապետները²², իսկ արդէն մարտին՝ Գարեգին եպիսկոպոսը²³:

Մայիսին Կարսում թուրքական ուժերի վերախմբաւորման հետեւանքով 2-րդ եւ 1-ին բանակային կորպուսներից կազմում է «Կարս» բանակախումբը: Գեներալ Նաղուբ Շեւքիի հրամանատարութեամբ գործող բանակախմբի մէջ մտնող դիվիզիաները գործելու էին հետեւեալ ռազմավարական ուղղութիւններով. 5-րդ Կովկասեան հետեւակային դիվիզիան Ղարախաչի լեռնանցքով — Վորոնցովկա — Բոլնիս — Խաչէն երթուղով հարուածելու էր Թիֆլիսին՝ հարաւից: 11-րդ Կովկասեան հետեւակային դիվիզիան նպատակ ունէր, Ալեքսանդրապոլ — Մեծ Ղարաքիլիսա գծով շարժուելով, գրաւել Մեծ Ղարաքիլիսան, այնուհետեւ Դիլիջան—

²⁰ Տէս Հ. ԱՂԱԽԱՆԵԱՆ, Հայոց եկեղեցու մասնակցութիւնը Հայաստանի առաջին Հանրապետութեան կրթամշակութային կեանքին, Կրթամշակութային կեանքը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին: Գիտաժողովի նիւթեր. Երեւան, 2018, էջ 31:

²¹ Տէս «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1914—1920)», հտ. Բ. (1917—1920), կազմող՝ Գ. Ավագեան, գլխ. խմբագիր՝ Ա. Վիրաբեան, Ս. Էջմիածին, 2018, էջ 140:

²² Տէս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1918—1920), գք. Ե., էջ 15—16:

²³ Տէս ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 92, թ. 41—42, «Գարեգին եպիսկոպոս Յովսէփեանին՝ ռազմաճակատ մեկնելու թուղտութեան մասին», իսկ աւելի ուշ Սարգարապատի ճակատամարտին մասնակցութիւն ունենալու համար Կովկասեան ռազմաճակատի հրամանատար գեներալ-մայոր Յեգէնի Լեբեդիւսկոյ հրամանով Գարեգին եպիսկոպոսին Սբ. Գէորգիի շքանշանով պարգևատրելու մասին տէս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1918—1920)», գք. Ե., էջ 60:

Քարուանսարա—Ղազախ գծով դուրս գալ Ելիզավետպոլ, իսկ այնտեղից՝ Ելիզավետպոլ—Բաքու երկաթգծով շարժուել դէպի Բաքու: 36-րդ Կովկասեան հետեւակային դիվիզիան, որը յայտնի էր «Գելիբոլու» անունով, Ալեքսանդրապոլ—Երեւան երկաթուղու երկայնքով շարժուելով՝ պէտք է գրաւէր Երեւանը, ապա երկաթուղով շարժուէր Զուլֆա եւ Թաւրիզ: 9-րդ Կովկասեան հետեւակային դիվիզիան շարժուելու էր Համամլու — Բաշ-Ապարան — Աշտարակ — Երեւան գծով:

1918 թ. մայիսի 15-ին թուրքական ուժերը գրաւում են Ալեքսանդրապոլը եւ ներխուժում Արարատեան դաշտ՝ սպառնալով արեւելահայութեանը, ինչպէս նաեւ Երեւանում ու Վաղարշապատում կենտրոնացած արեւմտահայ գաղթականութեանը:

Արաքսից հարաւ՝ Սուրմալուի գծում, գործում էին թուրքական 4-րդ բանակային կորպուսի 5-րդ եւ 12-րդ հետեւակային դիվիզիաները. նպատակ ունէին աջակցել Արարատեան դաշտում գործող թուրքական ուժերին, այն է՝ գետանցել Արաքսը եւ դուրս գալ Երեւանեան զօրաջոկատի թիկունք:

Ալեքսանդրապոլ—Երեւան ուղղութեամբ թուրքական զօրքերի առաջխաղացման հետեւանքով գնդապետ Դանիէլ-բէկ Փիրումեանի հրամանատարութեամբ գործող Իգդիրի զօրաջոկատի (կազմուած էր գնդապետներ Պաւէլ Իւզբաշեւի եւ Չարուխչեւի հրամանատարութեամբ գործող Վանի 1-ին եւ Վանի 2-րդ գնդերից) համար շրջապատուելու վտանգ է ստեղծուում: Հետեւաբար Երեւանեան զօրաջոկատի շտաբից Իգդիրը թողնելու հրաման ստանալով՝ մայիսի 20-ին հայկական ուժերը Մարգարայի կամրջով անցնում են Արաքսի ձախ ափ՝ իրենց հետեւից պայթեցնելով Մարգարայի ու Կարակալայի կամուրջները: Այդպիսով՝ Սուրմալուն գրաւած թուրքական զօրքերը Սարդարապատի ռազմաճակատից կտրուած են մնում:

Ռազմաճակատի թիկունքը հարաւից ապահովելու՝ Դաւալուի ուղղութեամբ կամ Շարուրի կողմից Արաքսը գետանցելով թուրքական յարձակումը կանխելու համար, գեներալ-մայոր Մ. Սիլիկովի հրամանով, այդ կողմում ծաւալուում է Վանի 4-րդ գունդը՝ գնդապետ Տիգրան Բաղդասարեանի հրամանատարութեամբ:

Երեւանն ու էջմիածինը պաշտպանող Երեւանեան զօրաջոկատն իր կազմում ունէր գնդապետ Պօղոս-բէկ Փիրումեանի եւ գնդապետ Աբրահամ Դոլուխանեանի հրամանատարութեամբ գործող 5-րդ եւ 6-րդ հրաձ-

գային գնդերը, ինչպես նաև գնդապետ Ք. Արարատեանի հրամանատարութեամբ գործող 2-րդ հրետանային բրիգադը:

Երեւանեան զօրաշոկատի հրամանատարութեան ներքոյ են խմբաւորուում նաև փոխգնդապետ Սակենի հրամանատարութեամբ գործող Իգդիրի հետեւակային գունդը, գնդապետ Ալեքսանդր Կազիմիրսկու խնուսի հետեւակային, փոխգնդապետ Սարգիս Սալիբեկեանի Զեյթունի հեծեալ եւ փոխգնդապետ Պաւէլ Զօլօտարեօվի յատուկ հեծեալ գնդերը, գնդապետ Վլադիմիր Պերեկրեօստովի հրամանատարութեամբ գործող պարտիզանական հետեւակ ու փոխգնդապետ Ալեքսանդր Կորոլկովի պարտիզանական հեծեալ գնդերը, ինչպես նաև Ուսուր բէկի եւ Զանգիր աղայի հրամանատարութեամբ գործող եզդիական հեծեալ գումարտակը:

Թուրքական 36-րդ դիվիզիայի առաջխաղացման պայմաններում մայիսի 20-ին հայկական առաջապահ ուժերը ստիպուած թողնում են Արաքս եւ Ղարաբուռն կայարանները՝ միաժամանակ նահանջելով նաև երկաթգծից հիւսիս ընկած նախալեռնային շրջաններից՝ Մաստարայից, Թալինից, Աշնակից, կենտրոնանում Սարդարապատում: Կապիտան Իւան Մանիւեւի՝ Մակուի հետեւակային, փոխգնդապետ Սերգէյ Արեշեանի՝ Ղարաքիլիսայի հետեւակային, կապիտան Կարապետ Հասանփաշայեանի՝ Երզնկայի հետեւակային գնդերը եւ խնուսի հետեւակային գնդից մէկ գումարտակ մայիսի 20-ի երեկոյեան Սարդարապատից տեղափոխուում են աւելի խորք ու տեղակայուելով Խզնաուզ գիւղում՝ կազմաւորում Խզնաուզի զօրաշոկատը:

Հայկական ուժերի նահանջի համապատկերում մայիսի 19-ի առաւօտեան գեներալ-մայոր Մ. Սիլիկովը հեռագրաթելի միջոցով կապուում է Երեւանի Հայոց ազգային խորհրդի կազմում ստեղծուած Յատուկ յանձնախմբի (կոմիտէ) նախագահ Արամ Մանուկեանի հետ.

«Սիլիկեան — Հրամայեցէք Երեւանի զինուորական քաղաքապետին՝ պատրաստութիւններ տեսնել Ուշ-Թաքալարի բարձունքների պաշտպանութեան համար (որ Երեւանից 1 վերստ հեռաւորութեան վրայ է) եւ Քանաքեռի սարերի: Այս երկուսի վրայ փորել խրամատներ եւ այդ բոլորը պատրաստել 3 օրուայ ընթացքում: Հրազդանի վրայ կառուցել ժամանակաւոր կամուրջ՝ զինուորների նահանջի համար, իսկ գլխաւոր կամուրջը պահել կառքերի եւ թնդանօթների համար:

Արամ — Զօրավար, Ձեր խօսակցութիւնից եզրակացնում եմ, որ դուք մտադիր էք նահանջել դէպի Երեւան եւ նոյնիսկ մայրաքաղաքը ենթարկել ուժակոծման:

Սիլիկեան — Ամէն ինչ հնարաւոր է:

Արամ — Այդ չի լինի: Ասացէ՛ք անմիջապէս՝ ինչ է պէտք ձեզ՝ յարձակողականի անցնելու եւ նախօրօք դրուած խնդրի իրագործման համար:

Սիլիկեան — Փամփուշտներ, մարդիկ, հաց, տեղափոխութեան միջոցներ, իսկ գլխաւորը՝ թիկունքի ոգեւորութիւնը, եւ յաղթանակը երաշխաւորում եմ:

Արամ — Պահեցէ՛ք, զօրավար, դիրքերը երկու օր, եւ ամէն ինչ կը լինի»²⁴:

Մայիսի 21-ին թուրքական ուժերն Արաքս կայարանի շրջանից շարունակեցին յարձակումը: Երկաթգծի ուղղութեամբ առաջ շարժուելով՝ այդ օրը երեկոյեան թուրքերը գրաւեցին Սարգարապատ կայարանը եւ շուրջ 2 կմ դէպի հարաւ գտնուող համանուն գիւղը: Շարունակելով յարձակումը՝ թուրքական ուժերը երկաթգծի ուղղութեամբ առաջացան մինչեւ Ղամըշլու կիսակայարան: Վերջինս գտնւում էր Երեւանից 20 կմ հեռաւորութեան վրայ:

Վերը նշուած բնագծերից հակաշարձակման անցնելու մասին որոշումը կայացւում է մայիսի 21-ի՝ լոյս 22-ին, երբ այդ հարցի վերաբերեալ Երեւանեան զօրաշոկատի շտաբից գեներալ Մ. Սիլիկովը եւ փոխգնդապետ Ա. Վեքիլեանը հեռախօսային խորհրդակցութիւն են անցկացնում գնդապետ Դանիէլ-բէկ Փիրումեանի, փոխգնդապետ Ք. Արարատեանի, փայլուն շտաբային սպայ, կապիտան (յետագայում Հայկական բանակի գնդապետ) ազգութեամբ գերմանացի Ալեքսանդր Շնէուրի մասնակցութեամբ²⁵: Նշուած խնդիրն իրականացնելու նպատակով գեներալ-մայոր Մ. Սիլիկովի հրամանով Երեւանեան զօրաշոկատի ուժերի մի մասից ձեւաւորւում է Սարգարապատի զօրաշոկատը՝ գնդապետ Դանիէլ-բէկ Փիրումեանի հրամանատարութեամբ: Մայիսի 22-ին Սարգարապատի զօրաշոկատի շտաբի պետ է նշանակւում կապիտան Ա. Շնէուրը²⁶: Շտա-

²⁴ «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1918—1920)», գր. Ե., էջ 62:

²⁵ Տէս A. A. AYVAZYAN, Armenian Victories at Khznalous and Sardarabad on May 23, 1918, New York, 1985, էջ 16:

²⁶ Տէս J. KAYALOFF, The Battle of Sardarabad, The Hague—Paris, 1973, էջ 37:

բը տեղակայուած էր Սարգարապատ կայարանի մօտ²⁷։ Երեւանեան զօրաշոկատի շտաբը Սարգարապատի զօրաշոկատի շտաբի եւ Դիլիջանում տեղակայուած Հայկական առանձին բանակային կորպուսի շտաբի հետ իր կապը պահում էր հեռագրի, հեռախօսների, այդ թվում՝ զինուորական դաշտային հեռախօսների, ինչպէս նաեւ հեծեալ եւ հետիոտն սուրհանդակների միջոցով²⁸։ Եւ ահա Երեւանեան զօրաշոկատի շտաբի մշակած փայլուն պլանի²⁹ համաձայն՝ մայիսի 22-ին Սարգարապատի ճակատում գնդապետ Դ. Բէկ-Փիրումեանի հրամանատարութեամբ հայկական ուժերը, հրետանային մարտկոցների կրակային աջակցութեամբ, Քիւրաքեանլու, Քեօրփալու—Հայի, Զեյուա—Դուրդուղուլի գիւղերի բնագծերից ամբողջ ճակատով անցնում են հակայարձակման։ Գլխաւոր հարուածը ճակատի կենտրոնում հասցրին գնդապետներ Պ. Փիրումեանի եւ Ա. Դուլխանեանի հրամանատարութեամբ գործող 5-րդ եւ 6-րդ հրաձգային գնդերը։ Դրա շնորհիւ ազատագրւում են նախօրէին գրաւուած Սարգարապատ գիւղն ու կայարանը։ Հայկական զօրքերը, մարտերի շնորհիւ, մէկ օրում առաջ շարժուեցին 15—20 կիլոմետր։ Թուրքական գլխաւոր ուժերը նահանջեցին Արաքս կայարանի ուղղութեամբ՝ ամրանալով կայարանի մատուցներում գտնուող եւ մարտավարական կարեւորագոյն նշանակութիւն ունեցող Թիւլքի-թափա եւ Զիմնի Դըռ բարձունքներին։ Սարգարապատի զօրաշոկատի շտաբը հաստատւում է Սարգարապատ կայարանում³⁰։

Միաժամանակ նոր ռազմաճակատ էր ստեղծուել Բաշ-Ապարանի ուղղութեամբ, որի պատճառով գեներալ-մայոր Մ. Սիլիկովի շտաբը որոշում է ընդունում Դրոյի հրամանատարութեամբ նոր զօրաշոկատ ստեղծելու մասին։ Երեւանեան շտաբի՝ մայիսի 21-ի հրամանով մայիսի 22-ին Դրօն Յատուկ հեծեալ զօրաշոկատով, որը կազմուած էր փոխգնդապետ Ալեքսանդր Կորոլկովի հրամանատարութեամբ գործող պարտիզանական հեծեալ գնդից ու Առանձին հեծեալ բրիգադի 2-րդ հեծեալ գնդից, ինչպէս նաեւ Գրիգորի Սուլթան-Շահի 4-րդ լեռնային մարտկոցից, Աշտարակով շարժւում է Ալի-Քուչակի ուղղութեամբ։

²⁷ Տէս «Սարգարապատի հերոսամարտը. Գրեց Գլխաւոր Սպաշակոյտի Գնդապետ՝ Ալեքսանդր Կ. Շնէտր. Մասնակցողի Յուշեր», Ֆրեզնօ, 1967, էջ 39։

²⁸ Տէս Ա. Ա. АՅՎԱԶՅԱՆ, նշ. աշխ., էջ 23։

²⁹ Պլան — հրամանը տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 8 եւ շրջ։

³⁰ Տէս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 41։

Արդէն մայիսի 25-ին ստորագրուած հրաման-պլանի³¹ համաձայն՝ մայիսի 26-ին Սարգարապատի եւ Բաշ-Ապարանի ճակատներում (հրամանատար Դրօ) հայկական ուժերն սկսում են նոր խոշոր յարձակում, որն աւարտում է մայիսի 27-ի լուսաբացին, երբ կապիտան Կարապետ Հասան-Փաշայեանի հրամանատարութեամբ գործող խզնաուզի հարուածային զօրաջոկատը կատարում է թեւանցում եւ թիկունքից հարուած հասցնում Արաքս կայարանից հիւսիս-արեւմուտք ընկած Թիւլքի-թափա եւ Զիմնի Դըռ բարձունքներում կենտրոնացած թուրքական ուժերին:

Մայիսի 29-ի դրութեամբ հայկական ուժերը Սարգարապատի ռազմաճակատում հասել էին Կարաբուռուն կայարանին, իսկ Բաշ-Ապարանի ռազմաճակատում հետ էին մղել թուրքական ուժերին՝ իրենց ձեռքում պահելով Բաշ-Ապարանն ու Ալի-Քուլակը, ինչի շնորհիւ երկու ռազմաճակատներում թուրքական դիվիզիաները ջախջախւում են:

Թուրքերի կորուստները կազմեցին մինչեւ 7000 զինուոր, որոնցից միայն Սարգարապատում՝ 3500³²: Թոււմ էր, թէ յաղթանակը լիարժէք էր, եւ գեներալ-մայոր Մ. Սիլիկովը ծրագրում էր յետ գրաւել Ալեքսանդրապոլը, ինչի առթիւ նա դիմում է ժողովրդին կոչով³³: Ինչ վերաբերում է Երեւանեան զօրաջոկատի շտաբի պետ, փոխգնդապետ Ա. Վեքիլեանին, ապա վերջինս «3–4 օրուայ մէջ նկատելիօրէն փոխուել էր — նիհարել ու գունատուել: Գիշեր-ցերեկ աշխատանքի սեղանից ու քարտէզից չէր հեռանում... «Բոլորը մտածում են Ալեքսանդրապոլի մասին», — ասաց զօրավար Սիլիկեանը: Այդտեղ Վեքիլեանը միջամտեց՝ ասելով, որ ինքը կասկած չունի, որ մի երկու օրից յետոյ քաղաքը (Ալեքսանդրապոլը) պիտի վերագրաւուի, եւ այն ժամանակ տաճիկները հարկադրուած յետ պիտի քաշուեն Ղարաքիլիսայից³⁴»: Սակայն Ղարաքիլիսայի ճակատում³⁵ գնդապետ Ալեքսանդր Բէյ-Մամիկոնեանցի հրամանատարութեամբ գործող 1-ին Հայկական հրաձգային դիվիզիայի կրած պարտութիւնը եւ մայիսի 28-ին Ղարաքիլիսայի անկումը հօդս ցնդեցրին Երեւանեան զօրաջոկատի շտաբի ծրագրերը:

³¹ Պլան — հրամանը տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 9–10:

³² Տե՛ս Ս. ԱՅԱՆԵՍԵԱՆ, Սարգարապատի յաղթանակը (Հայաստան. մայիս 1918), Երեւան, 1991, էջ 76. Հ. ԹՈՒՐԵԱՆ, Սարգարապատի հերոսամարտը, Երեւան, 1965, էջ 138:

³³ Կոչը տե՛ս ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 6, թ. 1:

³⁴ Ա. ԱՍՏՈՒԱՏՈՒՐԵԱՆ, Սարգարապատի պատմաշինութիւնը. 3. Թուրքեանի «Սարգարապատի հերոսամարտը» գրքին առթիւ. Պէյրութ, 1966, էջ 80:

³⁵ Ղարաքիլիսայի ռազմաճակատի ընդհանուր հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբէկեանը:

ինչեւիցէ, Մայիսեան հերոսամարտերն ունեցան պատմաքաղաքական բացառիկ նշանակութիւն, քանզի դրանց շնորհիւ արեւելահայութիւնն ու արեւմտահայ գաղթականութիւնը փրկուեցին, եւ վերականգնուեց հայոց անկախ պետականութիւնը, ու հռչակուեց Հայաստանի Հանրապետութիւնը: Մայիսեան հերոսամարտերն ունեցան նաեւ ռազմավարական կարեւորագոյն նշանակութիւն, քանզի դրանց շնորհիւ կոտորուեց թուրքական բանակի յարձակման թափը դէպի Թիֆլիս, Թաւրիզ եւ յատկապէս Բաքու:

Հայաստանի Հանրապետութեան հռչակումից յետոյ Հայկական բանակային կորպուսի հիմքի վրայ ստեղծուեց հանրապետութեան բանակը, որը, համաձայն Բաթումի հաշտութեան բանակցութիւններում թուրքական կողմի ներկայացրած պահանջի, կազմուած էր լինելու մէկ դիվիզիայի³⁶: Հետեւաբար գեներալ-լէյտենանտ Թ. Նազարբէկեանի 1918 թուականի յուլիսի 26-ի №99 հրամանով կորպուսը վերակազմաւորուեց Հայկական առանձին դիվիզիայի³⁷: Վերջինիս շտաբը ձեւաւորուում է յունիսին Վաղարշապատից (Գէորգեան հոգեւոր ճեմարանի շէնքից³⁸) երեւանում տեղակայուած Երեւանեան զօրաջոկատի շտաբի հենքի վրայ: Նոյն յուլիսի 26-ի №99 հրամանի համաձայն՝ նորաստեղծ Հայկական առանձին դիվիզիայի հրամանատար է նշանակուում գեներալ-մայոր Մ. Սիլիկովը, իսկ աւելի ուշ Հայկական առանձին դիվիզիայի շտաբի պետ է նշանակուում գնդապետ Միխայիլ Զինկեւիչը, որը դեռեւս յուլիսի 8-ին նշանակուել էր Երեւանեան զօրաջոկատի շտաբի պետ³⁹: Փոխգնդապետ Ալեքսանդր

³⁶ Տէս ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 2:

³⁷ Հրամանը տէս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 47, թ. 2 եւ շրջ.:

³⁸ 1918 թ. երկրորդ կէսին ճեմարանի շէնքում է տեղակայուում նորաստեղծ Հայկական առանձին դիվիզիայի 1-ին հետեւակային բրիգադի 2-րդ հետեւակային գունդը (տէս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 552, թ. 8 եւ շրջ.), իսկ արդէն 1919 թ. սկզբներին ՀՀ կառավարութիւնը ճեմարանի շէնքը տրամադրում է Ամերիկեան նպաստամատոյց վարչութեանը (տէս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 159, թ. 39): Եւ թէպէտ 1919—1920 թթ. ընթացքում ճեմարանը վերաբացելու որոշ փորձեր եղան, սակայն ապարդիւն (մանրամասն տէս Ս. ԲԵՀՐՈՒԳԵԱՆ, Ճեմարանի վերաբացման փորձերը 1918—1930 թուականներին, Երեւան, 2004): Արդէն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից յետոյ էջմիածին կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին ՀՍԽՆ Հեղափոխական կոմիտէի (Յեղկոմ) 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով (դեկրետը տէս ՀՍԽՆ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պր. 1, 1920 թ. նոյեմբերի 29 — 1921 թ. փետրուարի 18, էջմիածին, 1921, էջ 16) ճեմարանի շէնքն անցնում է Լուսժողկոմատին, իսկ Հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարի՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ի հրամանով ճեմարանի շէնքը դրւում է Լուսժողկոմատի կողմից նշանակուելիք կոմիսարի ղեկավարութեան ներքոյ (հրամանը տէս ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 2ա, թ. 1):

³⁹ Նշանակման հրամանը տէս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 18:

Վերջիլովը նույնպես իր ծառայությունն է շարունակում նորաստեղծ Հայկական առանձին դիվիզիայի շտաբում՝ զբաղեցնելով օպերատիվ բաժնի պետի պաշտոնը:

Այսպիսով՝ 1918 թ. գարնանը Հայաստանում ստեղծուած ռազմաքաղաքական բարդ պայմաններում Հայկական բանակային կորպուսի կազմում Երեւանեան զորաջոկատի ստեղծումն ու գործունէութիւնը ունեցան պատմական նշանակութիւն ինչպէս հայ ժողովրդի, այնպէս էլ ամբողջ Կովկասեան ռազմաճակատի համար:

Յօդուածին կից հրատարակում ենք Հայաստանի ազգային արխիւում պահուող արժէքաւոր ծաւալուն մի փաստաթուղթ՝ ռուսերէն բնագրից թարգմանուած արդի հայերէնով եւ ծանօթագրութիւններով, որտեղ մանրամասն ներկայացուած է Երեւանեան զորաջոկատի գործունէութիւնը եւ այդ օրերին Վաղարշապատում տիրող իրավիճակը:

Յաւելուած

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՇՈՒԻԶ ԲԻԻՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ՝ ԵՐԵՒԱՆԵԱՆ ԶՕՐԱԶՈՎԱՏԻ ԿԱԶՄԱԴՈՐՄԱՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՍԻՑԵԱՆ ՄԱՍԻՆ

Հ. 52 7 փետրուարի 1919 թ.

Գաղտնի Երեւան

<Կովկասեան ռազմաճակատից> ռուսական զօրքերի հետանալուց յետոյ թուրքերի դէմ ռազմական գործողութիւնների սկզբնափուլում Երեւանեան զօրաջոկատի կազմում ընդգրկուած էին Հայկական <առանձին> բանակային կորպուսի զօրամասերից երկու հետեւակային գունդ եւ երկու <հրետանային> մարտկոց. այն է 5-րդ եւ 6-րդ Հայկական <հրաձգային> գնդերը եւ 2-րդ լեռնային ու 5-րդ թեթեւ մարտկոցները: Դրանք գեներալ-մայոր <Մովսէս> Սիլիկովի⁴⁰ <2-րդ> Հայկական <հրաձգային> դիվիզիայի եւ վերջինիս <2-րդ> հրետանային բրիգադի զօրամասերն էին, որոնք գտնուում էին կազմաւորման փուլում

⁴⁰ Մովսէս Բաբայի Սիլիկեան (1862–1937): Ցարական բանակի գեներալ-մայոր: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով գեներալ-լէյտենանտի կոչման: 1920 թ. Հայ-թուրքական պատերազմի ժամանակ Կարսի ռազմաճակատի հրամանա-

եւ հազիւ էին համարել հաստիքակազմի մօտ կեսը: Մարտկոցներն ունէին չորսական հրանօթ, բայց համարուած ոչ բաւարար անձնակազմով, ձիերով եւ նիւթական մասով:

Բացի թուարկուած զօրամասերից, որոնք կարծես թէ կազմում էին կանոնաւոր հայկական զօրամասերը, Երեւանեան զօրաշոկատի կազմում ընդգրկուած էին Դոնի Պարտիզանական Հայկական հետեւակային գումղը եւ մի քանի գումարտակներ՝ համարուած թուրքահայերից, գնդապետ <Նիկոլայ> Բաղդասարովի⁴¹ հետեւակային բրիգադը:

Երեւանեան զօրաշոկատի զօրամասերը 1918 թ. փետրուար ամսուայ առաջին օրերից գտնուում էին գեներալ-[մայոր] <Մովսէս> Սիլիկովի հրամանատարութեան ներքոյ:

Յունուարի վերջին, ամբողջ փետրուար ամիսը եւ մարտ ամսուայ կեսը բոլոր վերը նշուած հայկական զօրամասերը, գտնուելով ձեւատրման փուլում, պայքար էին մղում թաթարական եւ ֆրդական կազմակերպուած զինուած բանդաների դէմ, որոնք ամեն կերպ խոչընդոտում էին հայկական զօրամասերի կազմաւորմանը եւ ցանկանում էին գրաւել Երեւանի նահանգի կարեւոր շրջաններ՝ նպատակ ունենալով դիւրացնել թուրքական զօրքերի առաջխաղացումը Անդրկովկասում: Այդ պայքարի արդիւնքում, թաթարները յայտնուեցին շրջափակման մէջ, կատարեալ մեկուսացուեցին եւ միայն առանձին դէպքերում իրականացնում էին յարձակում երկաթուղու Ալագեազ⁴²–Էջմիածին–Ուլուփսանլու⁴³–Ղամարլու⁴⁴ կայարանների հատուածում, ինչպէս նաեւ Մարգարայ–Իգդիր ճանապարհի ուղղութեամբ:

Այդ ժամանակահատուածում Երեւանի նահանգի՝ նախկին ռուսական սահմանին յարող հատուածը լցուած էր Անդրկովկաս անցած, գլխաւորապէս Իգդիրի կողմից, գաղթականներով: Մարդկանց այդ սոված զանգուածը, թափառական կեանքից ուժասպառ եղած, փնտրում էր իր համար սնունդ, եւ

տարն էր: 1921 թ. յունուարին բոլշևիկեան իշխանութիւններն աքսորել են Բաքու, ապա Ռեւզան, ապա համաձայնեցնել ազատ արձակել: 1937 թ. ձերբակալուել է եւ գնդակահարուել:

⁴¹ Նիկոլայ Մկրտիչ Բաղդասարեան (1868–1922-ից յետոյ): Ցարական բանակի գնդապետ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Մասնաւորները շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով գեներալ-մայորի կոչման: 1920 թ. մայիսին՝ բոլշևիկների կազմակերպած խռովութեան ժամանակ, Դիլիջանում գերեվարուել է եւ տարուել Բաքու: 1921 թ. յուլիսին գիմել է ՀՍՍՀ Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին՝ աշխատանքի անցնելու նպատակով:

⁴² Ներկայիս Արագած երկաթուղային կայարանը:

⁴³ Ներկայիս Մասիս երկաթուղային կայարանը:

⁴⁴ Ներկայիս Արտաշատ երկաթուղային կայարանը:

այդ հոդի վրայ, բնականաբար, տեղի էին ունենում զինուած յարձակումներ հայ գաղթականների կողմից թաթարական գիւղերի վրայ:

1918 թ. ապրիլի 10-ին սկսուեցին ռազմական գործողութիւններ թուրքական կանոնաւոր զօրամասերի դէմ, որոնց Ձինգիլեան լեռնանցքի ուղղութեամբ միացան թաթարները եւ քաղական ցեղերը, եւ ապրիլի 15-ին թուրքերին գրեթէ յաջողուեց մօտենալ Իգդիր քաղաքին, սակայն նրանք ետ շարտուեցին գլխաւորապէս կապիտան <Վաղիմիր> Սակկիլարիի⁴⁵ հրամանատարութեամբ գործող 2-րդ <լեռնային> մարտկոցի կրակով, եւ Ձինգիլեան լեռնանցքը կրկին զբաղեցրին մենք: Այդտեղ ուղարկուեց 1-ին լեռնային մարտկոցի մէկ դասակ՝ պորուչիկ <Հրանտ> Սարգսեանի⁴⁶ հրամանատարութեամբ, իսկ Արաֆս գետի վրայով մեր անցումն ապահովելու համար Վաղարշապատից Մարգարայ գիւղի մօտ ուղարկուեց 5-րդ թեթեւ մարտկոցի մէկ դասակ՝ պորուչիկ <Նիկոլայ> Կիլի⁴⁷ հրամանատարութեամբ: Այդ մարտերում հերոսի մահով ընկաւ մեր գնդերից մէկի հրամանատար, Սուրբ Գեորգիի շքանշանի ասպետ, գնդապետ Զարուխչեւ:

Իգդիր քաղաքը, թէեւ մնաց մեր վերահսկողութեան տակ, սակայն այդուհանդերձ այդտեղից դուրս պրծած գաղթականների ալիքը էլ անելի լցրեց էջմիածնի եւ Երեւանի գաւառների գիւղերը:

Այդ ռազմագործողութիւններին զուգահեռ գլուխ բարձրացրին թաթարները, յատկապէս այն գիւղերը, որոնք տեղակայուած էին Նաշ-Գեառնիի շրջանում, որն ընկած էր Երեւան քաղաքից դէպի արեւելք՝ 25 վերստ հեռաւոր-

⁴⁵ Վաղիմիր Գեորգիի Սակկիլարի (1891–1938): Ազգութեամբ յոյն Յարական բանակի հրետանու կապիտան: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ ստանալով փոխգնդապետի, ապա գնդապետի կոչում: 1920 թ. դեկտեմբերից ծառայութիւնը շարունակել է Հայկական Կարմիր բանակում: 1938 թ. Խորհրդային իշխանութիւնները ձերբակալել եւ զնդակահարել են:

⁴⁶ Հրանտ Զոհրաբի Սարգսեան (1893–1938): Յարական բանակի հրետանու պորուչիկ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ ստանալով շտաբ-կապիտանի կոչում: 1921 թ. հեռացել է Թուրքի: 1922 թ. վերադառնալով հայրենիք՝ անցել ծառայութեան Հայկական Կարմիր բանակում: 1923 թ. զօրացրուել է եւ ուղարկուել պահեստազօր: 1938 թ. Խորհրդային իշխանութիւնների կողմից ձերբակալուել է եւ զնդակահարուել:

⁴⁷ Նիկոլայ Ալեքանդրի Կիլի (1895–1941): Յարական բանակի հրետանու պորուչիկ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ ստանալով կապիտանի կոչում: 1920 թ. դեկտեմբերից ծառայութիւնը շարունակել է Հայկական Կարմիր բանակում: 1940 թ. արժանացել է հրետանու գեներալ-լեյտենանտի կոչման: 1941 թ. Խորհրդային իշխանութիւնները ձերբակալել եւ զնդակահարել են:

րութեան վրայ: Այդտեղ գործողուեց ջոկատ՝ 1-ին լեռնային մարտկոցի մէկ դասակի հետ միասին՝ հրետանու շտաբ-կապիտան <հորէն> Իգիթխանովի⁴⁸ հրամանատարութեամբ: Այդ ջոկատը ապրիլի 16-ին ստիպեց թաթարներին, որոնք շրջապատել էին հայկական գիւղը, հեռանալ դէպի լեռները:

Մայիսի 8-ին, Կողբ ֆաղափի մերձակայ եւ այդ տարածքով անցնող սահմանային լեռնաշղթաների պաշտպանութեան նպատակով, գեներալ-մայոր <Մովսէս> Սիլկովի կողմից այդտեղ ուղարկուեց ջոկատ՝ կապիտան <Իւան> Մանիելի հրամանատարութեամբ⁴⁹ Թիֆլիսից ժամանած Մակուի հետեւակային գնդի մէկ գումարտակի եւ շտաբ-կապիտան <հորէն> Իգիթխանովի 1-ին լեռնային մարտկոցի մէկ դասակի կազմով:

Զինադադարը, ստորագրուած թուրքերի հետ 1918 թ. ապրիլի 25-ին, Ալեքսանդրապոլի ուղղութեամբ խախտուեց մայիսի 15-ին թուրքերի կողմից, եւ նրանք, նոյն օրը գրաւելով Ալեքսանդրապոլ⁵⁰ ֆաղափը եւ էսկանօտէն ֆայ-ֆայելով գեներալ-մայոր <Միխայիլ> Արեշելի⁵¹ <1-ին> Հայկական <հրաձգային> դիվիզիան, սկսեցին առաջանալ դէպի Զաջուտի լեռնանցք, իսկ Երեւանի ուղղութեամբ նրանց առաջխաղացումը պայմանաւորուած էր այդ շրջանը գրաւելու անհրաժեշտութեամբ:

Երբ նրանց յաջողուեց անցնել Զաջուտի լեռնանցքը եւ մօտենալ Ղարափիլիսային⁵², ամմիջապէս, մայիսի 17-ին, 18-ին եւ 19-ին սկսեցին սեղմել մեր

⁴⁸ Խորէն Ներսէսի Իգիթխանեան (1887–1938): *Յարական բանակի հրետանու շտաբ-կապիտան: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական Առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ ստանալով կապիտանի, ապա փոխգնդապետի կոչում: 1920 թ. դեկտեմբերից ծառայութիւնը շարունակել է Հայկական Կարմիր բանակում: 1921 թ. յունուարին բոլշեւիկեան իշխանութիւնների կողմից աքսորուել է Ռեազան: 1921 թ. գարնանը համաներում ստանալով՝ մինչեւ 1926 թ. ծառայութիւնը շարունակել է ՀԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատում: 1937 թ. ձերբակալուել է եւ 1938 թ. գնդակահարուել:*

⁴⁹ Իւան (Յովնաննէս) Եւտաֆելի Մանիել (1892–1937-ից յետոյ): *Յարական բանակի կապիտան: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական Առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով նախ փոխգնդապետի, ապա գնդապետի զինուորական կոչման: 1920 թ. դեկտեմբերից ծառայութիւնը շարունակել է Հայկական Կարմիր բանակում: 1921 թ. յունուարին բոլշեւիկեան իշխանութիւնների կողմից աքսորուել է Ռեազան, ապա համաներումով ազատ արձակուել: 1937 թ. դրութեամբ բնակուել է Թիֆլիսում:*

⁵⁰ Ներկայիս Գիւմրի քաղաքը:

⁵¹ Միխայիլ Վասիլի Արեշել (1876–1921-ից յետոյ): *Յարական բանակի գեներալ-մայոր: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական Առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում: Եղել է Փարիզի հաշտութեան կոնֆերանսում հայկական պատուիրակութեան ռազմական խորհրդատու:*

⁵² Ներկայիս Վանաձոր քաղաքը:

գործամասերը Երեւան–Ալեքսանդրապոլ երկաթգծի երկայնքով: Եւ նրանց գրեթէ յաջողուել էր կտրել ճանապարհը Իգդիրի գորաշոկատի, որ գործում էր գնդապետ Դանիէլ-բէկ Փիրումովի⁵³ հրամանատարութեամբ. նրան այդ ժամանակ հրամայուած էր հապնեպ նահանջել դէպի հիւսիս՝ Մարգարայ գիւղի մօտ պայթեցնելով Արաֆսի վրայի կամուրջը: Այդ խուսանաւումը գնդապետ Դանիէլ-բէկ Փիրումովը յաջողութեամբ իրականացրեց գիշերային գորաշարժով: Առաջացող թուրքերի դէմն առնելու եւ գնդապետ <Դանիէլ-բէկ> Փիրումովի գորաշոկատին աջակցելու նպատակով Քանափեռ գիւղից Վաղարշապատի միջով դէպի Սարդարապատ հապնեպ ուղարկուեց Պօղոս-բէկ Փիրումովի⁵⁴ հրամանատարութեամբ գործող 5-րդ Հայկական <հրաձգային> գունդը եւ պորուչիկ <Նիկոլայ> Կլիչի 1-ին <թեթեւ> մարտկոցի մէկ դասակ: Այնուամենայնիւ մայիսի 20-ին եւ 21-ին թուրքերին յաջողուում է սեղմել մեր գործամասերին այնպէս, որ թուրքական հետեւակային գումարտակը գրաւեց Քեօրփալու⁵⁵ գիւղը, որն ընկած էր Էջմիածնից դէպի արեւմուտ՝ 6 վերստ հեռաւորութեան վրայ:

Մայիսի 16-ից սկսած յատկապէս ուժեղացաւ գաղթականների հոսքը, որը շարժում էր Վաղարշապատով դէպի Երեւան: Նրանք բառացիօրէն լցրեցին Երեւան տանող բոլոր ճանապարհները, իսկ Էջմիածնի Մայրավանքի շրջակայքում ձեւաւորուեց գաղթականների հսկայական ծով՝ խցանելով Վաղարշապատ գիւղի բոլոր ելքերն ու մուտքերը, եւ յարդիւնս դրա անհնարին դարձաւ հետագայ առաջխաղացումը: Այդ օրերին անգամ Վաղարշապատ գիւղի բնակիչները, որոնք մինչ այդ նստած էին իրենց տեղերում, թողնելով գիւղում զինուած տղամարդկանց՝ ճանապարհ ընկան դէպի Երեւան:

1918 թ. մայիսի 21-ի առաւօտեան իրադրութիւնը Վաղարշապատում (Էջմիածնի Մայրավանքում) ծայրայեղ ծանր էր: Գաղթականների եւ տեղի

⁵³ Դանիէլ-բէկ Արիստղոմոնի Փիրումեան (1861–1922): Յարական բանակի գնդապետ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառալուծիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով գեներալ-լեյտենանտի զինուորական կոչման: 1920 թ. աշնանը եղել է Կարսի բերդի կայազօրի հրամանատարը: Կարսի անկման հետեւանքով յայտնուել է թուրքական գերութեան մէջ, աւելի ուշ՝ ազատ արձակուել: Մահացել է 1922 թ.՝ ծանր հիւանդութիւնից:

⁵⁴ Պօղոս-բէկ Կարամանի Փիրումեան (1856–1921): Յարական բանակի գնդապետ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառալուծիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով գեներալ-մայորի զինուորական կոչման: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ ինքնասպանութեամբ վերջ է տուել իր կեանքին:

⁵⁵ Ներկայիս Արմաւիրի մարզի Արշալոյս գիւղը:

բնակչության ճնշումը տրամադրությունը ու ոգու անկումը, ինչպես նաև Նորին սրբություն Գեորգ Ե. Սուրենյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի վճռականությունը՝ չլիել Սուրբ Էջմիածնի վանական եղբայրներին, Երեւանեան զօրաշոկատի շտաբին՝ ֆաջարի գեներալ-մայոր] <Մովսէս> Սիլիկովի ու շտաբի պետ, փոխգնդապետ <Ալեքսանդր> Վեֆիլովի⁵⁶ գլխաւորութեամբ, ստիպեց ընդունել անյետաձգելի որոշում՝ առաջացող թշնամուն յամառ դիմադրութիւն ցոյց տալու եւ մարտն ընդունելու մասին: Գեներալ-մայոր] <Մովսէս> Սիլիկովի որոշումը հաղորդուեց զօրին, եւ մայիսի 21-ին՝ կէսօրից յետոյ, 5-րդ <հրաձգային> գունդն ունեցաւ յաջողութիւն. թուրքերը շղիմացան եւ սկսեցին ետ ֆաշուել: Դա բարձրացրեց զօրի եւ բնակչութեան ոգին, եւ ամբողջ Վաղարշապատը, բառացիօրէն, ցնծում էր. Բնակիչներն սկսեցին կազմել խմբեր, որոնք իրենց հետ վերցրել էին զէնք ու մթերք՝ ռազմանական ուղարկելու համար, իսկ իրենց <ունեցած> սայլերը յանձնեցին ընդ տնօրինութիւն հրետանու պետ, գնդապետ <Քրիստափոր> Արարատովին⁵⁷՝ փամփուշտները եւ արկերը դիրքեր հասցնելու համար: Մարդկային ուժի համալրումն ստացուեց ամեն տեղից, յատկապէս, Երեւան ֆաղափց եւ Ղամարլու գիւղից:

Մինչդեռ, ունենալով յաջողութիւն Սարգսրապատի ուղղութեամբ, <Երեւանեան> զօրաշոկատի շտաբը այդ օրերին սկսեց ստանալ հաւաստի տեղեկութիւն՝ Ալեքսանդրապոլից Բաշ-Ապարանի միջով Երեւանի վրայ թուրքական զօրքերի շարժի եւ <Ղարափիլիսայի ուղղութեամբ> գեներալ-մայոր] <Միխայիլ> Արեշելի <1-ին Հայկական հրաձգային> դիվիզիայի մնացորդների, որոնք այդ ժամանակ արդէն գտնուում էին գնդապետ

⁵⁶ Ալեքսանդր Դաւիթի Վեֆիլով (1883–1921-ից յետոյ): Ցարական բանակի փոխգնդապետ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով գնդապետի զինուորական կոչման: 1920 թուականի հայ-թուրքական պատերազմի ժամանակ եղել է Կարսի ռազմաճակատի շտաբի պետը: 1920 թ. հոկտեմբերին Կարսի անկման հետեւանքով գերի է ընկել թուրքական կողմին: 1921 թ. սկզբին էրզրումի բանտից դիմել է փախուստի եւ ապաստանել Թուրքիոյ: 1922 թ. օգոստոսի 19-ին նրա անունը հանդիպում է հայրենիք վերադառնալ ցանկացողների ցուցակում:

⁵⁷ Խաչատուր Գերասիմի Արարատեան (1876–1937): Ցարական բանակի հրետանու գնդապետ: Մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին (1904–1905 թթ.), աւելի ուշ՝ Առաջին համաշխարհային պատերազմին: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով գեներալ-մայորի կոչման: 1919 թ. մարտից մինչեւ 1920 թ. ապրիլ զբաղեցրել է ՀՀ զինուորական նախարարի պաշտօնը: 1920 թ. հոկտեմբերին Կարսի անկման հետեւանքով գերի է ընկել թուրքական կողմին: Աւելի ուշ ազատ է արձակուել եւ ծառայութիւնը շարունակել Հայկական Կարմիր բանակում: 1937 թ. ձերբակալուել է եւ գնդակահարուել:

<Ալեքսանդր> Բէյ-Մամիկոնեանցի⁵⁸ հրամանատարութեան ներքոյ, կրած անյաջողութեան մասին:

Բաշ-Ապարանի ուղղութեամբ պաշտպանութիւն կազմակերպելու նպատակով, 1918 թ. մայիսի 22-ին հապենայ այդտեղ է գործուղում Դրոյի հրամանատարութեամբ գործող զօրաշուկատ՝ կազմում ունենալով մէկ հետեւակային գունդ, կամատրականներից կազմուած հեծեալ խումբ, պորուչիկ <Գրիգորի> Սուլթան-Շահի⁵⁹ հրամանատարութեամբ գործող 4-րդ լեռնային մարտկոցի մէկ դասակ: Նաեւ այդտեղ, հապենայ, տեղափոխուեց գնդապետ <Աբրահամ> Դոլուխանովի⁶⁰ հրամանատարութեամբ գործող 6-րդ <հրաձգային> գունդը, որն այդ ժամանակ գտնուում էր Ղամարլուտում, եւ շտաբս-կապիտան <Խորէն> Իգիթխանովի հրամանատարութեամբ գործող 1-ին լեռնային մարտկոցից երկու հրանոթ:

Յետագայում Երեւանեան զօրաշուկատի ռազմական գործողութիւնները շարունակուեցին երկու ուղղութիւններով. Սարդարապատի՝ գնդապետ Դանիէլ-բէկ Փիրումովի հրամանատարութեամբ, եւ Բաշ-Ապարանի՝ Դրոյի հրամանատարութեամբ:

Փոփոխակի յաջողութիւններով մարտերը շարունակուեցին մինչեւ մայիսի 29-ը, ընդորում, այդ ժամանակ մեր զօրամասերը Երեւան—Ալեքսանդրապոլ երկաթգծի երկայնքով առաջ շարժուեցին մինչեւ Բոգոյրի կիսակայարան (Ղարաբուտուն⁶¹ կայարանից հիւսիս), իսկ Բաշ-Ապարանեան զօրաշուկատը հասաւ Թանահերմազ գիւղ, որը գտնուում է Բաշ-Ապարանի հիւսիսում, այդ կերպ ամուր պահելով Բաշ-Ապարանն իրենց ձեռքում:

⁵⁸ Ալեքսանդր Պետրոսի Բէյ-Մամիկոնեանց (1871—1935): Յարական բանակի հրետանու գնդապետ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով գեներալ-մայորի զինուորական կոչման: 1919 թ. նշանակուել Ռազմական նախարարութեան գլխավոր ինտենդանտ (Համբարակային վարչութեան պետ): 1921 թ. յունուարին բոլշեւիկեան իշխանութիւններն աքսորել են Ռեազան, ապա համաներումով ազատ արձակել: Ապրել է Լէնինգրադում եւ դասաւանդել Ռազմական ակադեմիայում:

⁵⁹ Գրիգորի Պալովիչ Սուլթան-Շահի (?—1918): Յարական բանակի նշանաւոր գեներալ Պաւել Սեմեօնովիչ Սուլթան-Շահի որդին: Յարական բանակի հրետանու պորուչիկ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա Հայաստանի ՀՀ բանակում ստացել շտաբս-կապիտանի զինուորական կոչում: Զոհուել է հայ-վրացական պատերազմի (1918 թուականի դեկտեմբեր) ժամանակ:

⁶⁰ Աբրահամ Մերգելի Դոլուխանեան (1870—?): Յարական բանակի գնդապետ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում: Եղել է Ռազմական նախարարութեան հաշուի բաժնի կազմակերպման յանձնաժողովի անդամ: 1919 թ. զբաղեցրել է Ռազմական նախարարի օգնականի պաշտօնը:

⁶¹ Ներկայիս Արմաւիրի մարզի Քարակերտ գիւղի համանուն կայարանը:

Գնդապետ Դանիել-բէկ Փիրումովի զօրաչոկատի կազմում այդ ժամանակ գործում էին կապիտան <Վլադիմիր> Սակկիլարիի 2-րդ լեռնային մարտկոցը, պորուչիկ Հրանտ Սարգսեանի 1-ին լեռնային մարտկոցի մէկ դասակ եւ կապիտան <Բոգդան> Բաղդասարովի⁶² 5-րդ թեթեւ մարտկոցը, ընդ որում այդ վերջինը գործում էր առանձին դասակների կազմով, իսկ Դրոյի զօրաչոկատի կազմում՝ <Գրիգորի> Սուլթան-Շահի հրամանատարութեամբ գործող 4-րդ լեռնային մարտկոցի մէկ թնդանօթ եւ 1-ին լեռնային եւ 6-րդ <թեթեւ> մարտկոցներից մէկական դասակներ:

Այդ կերպ, <Բաթումում> թուրքերի հետ զինադադար, ապա հաշտութիւն կնքելու պահին գեներալ-լմայոր <Մովսէս> Սիլիկովի Երեւանեան զօրաչոկատի գործերն ընթանում էին մեզ համար բարենպաստ կերպով, բայց, ցաւօք, Հայկական <առանձին> բանակային կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ <Թովմաս> Նազարբեկովի⁶³ հեռագիրը, որով յայտնում էր Ղարաբիխայի տակ մեր զօրի լիակատար անյաջողութեան մասին, ստիպեց կանգնեցնել Երեւանեան զօրաչոկատի յարձակողական գործողութիւնները Ալեքսանդրապոլ ֆաղափ ուղղութեամբ, քանզի Երեւան ֆաղափը յայտնուել էր հակառակորդի կողմից հիւսիս-արեւելից ներխուժման վտանգի առաջ:

Դրանով աւարտուեցին թուրքերի դէմ հայկական զօրամասերի գլխաւոր ռազմագործողութիւնները, քանզի յունիսի առաջին օրերին (ներառեալ մինչեւ ամսի 10-ը) տեղի ունեցած դէպքերը վերաբերում էին 1918 թ. յունիսի 4-ին Բաթումում կնքուած զինադադարի եւ հաշտութեան պայմանների կատարմանը:

Յունիսեան այդ օրերին Երկաթգծի ուղղութեամբ թուրքերն առաջացան մինչեւ Ուլուխանլու եւ աւելի հարաւ: Առաջխաղացման ճանապարհին ոչնչացրին հայկական գիւղերը, յատկապէս Ղամարլուի շրջանում, եւ հարաւից

⁶² Բոգդան Վլադիմիրի Բաղդասարով (1870—?): Ցարական բանակի հրետանու կապիտան: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառայութիւնը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով փոխգնդապետի, ապա գնդապետի կոչման: 1919—1920 թթ. զբաղեցրել է ՀՀ բանակի գլխաւոր շտաբի պետի պաշտօնը: Ծառայութիւնը շարունակել է Հայկական Կարմիր բանակում: 1923—1925 թթ. զբաղեցրել է Հայկական հրաձգային դիւրիզիայի շտաբի պետի, 1925—1927 թթ. ՀՍՍՀ զինուորական կոմիսարի պաշտօնները:

⁶³ Թովմաս Յովհաննէսի Նազարբեկեան (1855—1931): Ցարական բանակի գեներալ-լեյտենանտ: Ռուս-թուրքական (1877—1878 թթ.), ռուս-ճապոնական (1904—1905 թթ.) եւ Առաջին համաշխարհային պատերազմների մասնակից: 1917 թ. վերջին նշանակուել է Հայկական առանձին բանակային կորպուսի հրամանատար: Ծառայութիւնը շարունակել է ՀՀ բանակում, ստացել հետեւագործի գեներալի զինուորական կոչում: Նշանակուել է ՀՀ ռազմական խորհրդի նախագահ: 1921 թ. բոլշեւիկեան իշխանութիւններն աքսորել են Բաքու, ապա Ռեազան: Համաներմամբ վերադարձել է աքսորից եւ ապրել Թիֆլիսում:

Երեւանի ֆաղափն մօտեցան 7 վերստ հեռաւորութեան վրայ՝ հանդիպելով դիմադրութեան հայկական զօրամասերի կողմից: Յունիսեան այդ անսպասելի ռազմական գործողութիւնների պատճառը կայանում էր նրանում, որ հայերը, կտրուած լինելով ամբողջ աշխարհից, իր ժամանակին չէին ստանում տեղեկութիւններ տիրող դրութեան մասին, անգամ իրենց ներկայացուցիչներից, որոնք բանակցում էի ստորագրում էին հաշտութեան այս կամ այն պայմանները Բաթումում, այդ իսկ պատճառով թուրքերին, բնականաբար, թուացել էր, թէ հայերը կանխամտածուած կերպով չեն իրագործում իրենց իսկ պարտականութիւնները, իսկ ներկայացուած վերջնաժամկէտներին պատասխանում են զէնքի ուժով:

Կարծում եմ, որ ցանկացած ժողովուրդ, որից խլուել է ամէնը, եւ որին մնացել է հողի մի փոքրիկ կտոր եւ Երեւանի ֆաղափն ու Սուրբ Էջմիածինը, կը կռուի մինչեւ վերջին մարդը, քանզի հակառակ դէպքում նրան սպասում է ամբողջական ստրկութիւն եւ կործանում:

Աւարտելով գեներալ-[մայոր] <Մովսէս> Սիլիկովի Երեւանեան զօրաշնկաւի <ռազմական> գործողութիւնների համառօտ նկարագրութիւնը՝ ժամանակագրական յաջորդականութեամբ, ուզում եմ մի քանի խօսք ասել Երեւանի ազգային խորհրդի⁶⁴ գործունէութեան մասին, որի ոգին էին, ներկայումս իր մահկանացուն կնքած, Արամ Փաշան (Մանուկեանը) եւ ոգով զինուորական մեր ժողովրդական հերոս Դրօն (<Դրաստամատ> Կանայեանը):

Երեւանի շրջանում ամբողջ իշխանութիւնը այդ ժամանակ գտնւում էր Արամ <Մանուկեանի> ամուր ձեռքում, որը լիարժէք համերաշխութեամբ գործակցում էր գեներալ-[մայոր] <Մովսէս> Սիլիկովի ու Դրոյի հետ:

Արամ <Մանուկեանի> ակնառու կարողութիւնները Երեւանի շրջանում ռազմական հզօրութեան կազմակերպման գործում, տնտեսական եւ այլ բնագաւառներում, հնարաւորութիւն տուեց հայերին զէնք ձեռքին պաշտպանելու հողի կտորը, միակ ֆաղափը եւ Սուրբ Էջմիածնի Մայրավանքը, եւ եթէ մեզ՝ հայերիս, հետ հաշուի նստեցին այդ ժամանակ եւ հաշուի են նստում այժմ, դա կարող էր վերագրել բացառապէս երեք անձերի՝ Արամ <Մանուկեանի>, գեներալ-[մայոր] <Մովսէս> Սիլիկովին եւ Դրոյին:

⁶⁴ Երեւանի ազգային խորհուրդն ստեղծուել էր 1917 թ. վերջերին եւ համակարգում էր Երեւանի նահանգի հասարակական-քաղաքական կեանքը: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նման կազմուած էր տարբեր կուսակցութիւնների ներկայացուցիչներից եւ ձեւականօրէն ենթարկւում էր վերջինիս: Հէնց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից 1917 թ. դեկտեմբերին Արամ Մանուկեանը գործուղուեց Երեւան՝ ղեկավարելու Երեւանի ազգային խորհրդի գործունէութիւնը:

Հայկական հրետանային բրիգադի հրամանատար,
գնդապետ <Քրիստափոր> Արարատով
Բրիգադային համհարզ,
շտ[աբս]-կապիտան <Արթուր> Այվազեան⁶⁵
ՀԱԱ, ֆ. 1267. ց. 2, գ. 84, քք. 5–6 եւ շրջ.: Բնագիր: Մեխենագիր:

РЕЗЮМЕ

В конце 1917 года, в результате Октябрьской революции в России развалился Кавказский фронт. Для предотвращения процесса началось формирование армянских национальных частей. Формирование Армянского отдельного армейского корпуса началось с приказа ставки Верховного главного командования Русской армии с 16 ноября 1917 года.

В начале 1918 года, когда Турецкая армия нарушила Эрзинджанское перемирие, оборона Кавказского фронта была полностью возложена на вновь сформированный Армянский корпус. В мае 1918 года Эриванский отряд Армянского отдельного армейского корпуса нанес поражение турецкой армии на Сардарабатском и Баш-Апаранском фронтах. В результате была провозглашена Первая Республика Армения.

Армянский отдельный армейский корпус послужил основой для формирования армии Первой Армянской Республики, а штаб Ереванского отряда, который весной 1918 года был распложен в здании эчмиадзинской духовной семинарии «Геворгян», послужил основой для формирования Генерального штаба Армянской армии.


SUMMARY

At the end of 1917, as a result of the October Revolution in Russia, the Caucasian Front collapsed. For preventing this collapse, the Armenian Corps began to be

⁶⁵ Արթուր Ալեքսանդրի Այվազեան (1894–1982): Յարական բանակի հրետանու շտաբ-կապիտան: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից: Ծառալուծիչը շարունակել է Հայկական առանձին բանակային կորպուսում, ապա ՀՀ բանակում՝ արժանանալով կապիտանի կոչման: 1919 թ. նշանակուել է ՀՀ ռազմական նախարարութեան համհարզ: 1921 թ. հեռացել է Թուրքիա:

formed on October 16, 1917, by the order of the Stavka of the Supreme Commander of Russian Army. In 1918, when the Turkish army broke the ceasefire of Yerznka, the defense of the Caucasian Front was completely entrusted to the newly formed Armenian Corps. Yerevan Squad of the Armenian Corps defeated the Turkish Army during the battles of Sardarapat and Bash-Aparan in May, 1918. As a result, the First Armenian Republic was proclaimed.

The Armenian Corps became the basis of the newly formed Republic of Armenia, but the Staff of the Yerevan Squad, which was stationed in the building of the Gevorkian Theological Seminary (Etchmiadzin) in spring of 1918, became the basis of the newly formed General Staff of the Armenian Army.



ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՄԻ 1920–1930-ԱԿԱՆ ԹԹ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ակիգրք՝ նախորդիվ

Թիվ 37

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 17/1-[19]28 թ.
ԼՍԵՑԻՆ՝

3. Էջմիածնի վանքապատկան հողերի բռնագրավման մասին (էջ-
միածնի գավկոմի որոշում):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա. Հաշվի առնելով էջմիածնի գավառի անհող գաղթականներին եւ
սակավահող գյուղացիներին հողաբաժին տալու խիստ անհրաժեշտու-
թյունը, էջմիածնի վանքին օգտագործման մնացած հողերի խլումը հա-
մարել ժամանակին:

Բ. Առաջարկել ՀողԺԿ-ին ԺԿԽ հաստատմանը ներկայացնել վերոնշյալ
որոշման գործնական իրականացման համար միջոցառումների նախագիծ:

4. Հոգեւորականության մոտ օգտագործման գտնվող հողերի մասին:
ՈՐՈՇԵՑԻՆ՝

Առաջարկել հանձնաժողովին՝ Հ. Հովսեփյան¹ (գումարումը), Ա. Երզն-
կյան եւ Ս. Մելիք-Օսիպով, կազմով, Հողժողկոմատի նյութերի հիման վրա
քննարկել բոլոր հողերի բռնագրավման հարցը, որոնք գտնվում են հո-
գեւորականների անհատական օգտագործման ներքո, համաձայն հողա-
յին օրենսգրքի, եւ գործնական առաջարկներ ներկայացնել Նախագա-
հությանը²:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 16, թ. 15: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

¹ Հովսեփյան Հայկ (1891–1937): 1922-ից՝ Հայկական դիվիզիայի կոմիսար, 1927–
1928 թթ.՝ ՀԿ(բ)Կ ԿԿ 1-ին քարտուղար: Բռնադատվել է, գնդակահարվել:

² «Հուլիսի գաղտնի – Հատուկ թղթապանակ»: Քաղվածքն ուղարկվել է Հ. Հովսեփյանին (ԿԿ
քարտուղար), Ա. Երզնկյանին (հողժողկոմ), Մելիք-Օսիպովին (ՊՔՎ Նախագահ), ՀողԺԿ-ին:

ԹԻՎ 38

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 24/I-1928 թ.

ԼՍԵՑԻՆ՝

8. ՊՔՎ հարցեր (Մ[ելիք]-Օսիպով):

Բ) Հոգեւորական Տեր Հարությունի սպանության մասին գործը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Թույլատրել սոցիալական պաշտպանության բարձրագույն պատժա-
շափ՝ զնդակահարություն, հոգեւորական Տեր Հարությունի ֆիզիկական
մարդասպանների եւ Դ[աշնակցություն]/կ[ուսակցության] ընդհատա-
կյա կազմակերպության գործուն անդամներ Կոլոտ Հախվերդյանի եւ
Եգոր Մնացականյանի նկատմամբ³:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 4: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 39

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N16

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 6/III-1928 թ.

ԼՍԵՑԻՆ՝

11. Եկեղեցական օրացույցների մասին (Մ[ելիք]-Օսիպով):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել ԿԳԿ-ին քննել կաթողիկոսի «ամենայն հայոց կաթողի-
կոս» տիտղոսի հարցը⁴:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 18: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 40

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 17/III-[19]28 թ.

ԼՍԵՑԻՆ՝

3. Եկեղեցական օրացույցների մասին (ԿԿ Մամուլի բաժնի որոշում,
Մ[ելիք]-Օսիպովի հեռագիր):

³ «Հուլիս գաղտնի — Հատուկ թղթապանակ»: Քաղվածքն ուղարկվել է ՊՔՎ եւ «Հատուկ
թղթապանակ»:

⁴ «Հուլիս գաղտնի — Հատուկ թղթապանակ»: Քաղվածքն ուղարկվել է «Հատուկ թղթա-
պանակ»:

ՈՐՈՇԵՑՑԻՆ՝

1) Հաստատել Մամուլի բաժնի առաջարկը՝ հանելով «4», «Ե», «Է», «Ը», կետերը, 2) թույլատրել էջմիածնի 1928 թ. օրացույցի թողարկումը հետեւյալ փոփոխություններով. Ա) հանել սկզբից 3 թերթ, որտեղ նշված են եկեղեցական տոները առանձին թերթիկով, թողնելով միայն այն էջը, որտեղ նշված են պետական տոները, տոնական օրերը տպագրելով հաստ տառատեսակով, եւ Բ) հանել թերթեր սկսած 189 էջից մինչեւ վերջին թերթը ներառյալ, բացի շապիկից:

ԼՍԵՑԻՆ՝

4. ՀԿ(բ)Կ էջմիածնի գավկոմի 3/ԱԼ-28 թ. որոշումը:

ՈՐՈՇԵՑՑԻՆ՝

Ա) Հաստատել էջմիածնի վանական տնտեսությունից բխող գյուղատնտեսական հարկի գանձման մասին էջմիածնի գավկոմի որոշումը:

Բ) Գավկոմի կողմից հաստատված ժամկետում հարկի չմուծման դեպքում գանձել ընդհանուր հիմունքներով:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 53: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսւ.:

ԹԻՎ 41

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության №9 նիստի 3-րդ կետի հավելված

Քաղվածք ԿԿ Մամուլի բաժնի կոլեգիայի 15/Ա-[19]28 թ. նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ՝

4. էջմիածնի եւ Թիֆլիսի հայ կղերականների եկեղեցական օրացույցների մասին (Արիսյան):

ՈՐՈՇԵՑՑԻՆ՝

Ա) Եկեղեցական օրացույցների հրատարակությունը համարել հնարավոր բացառապես եկեղեցական կազմակերպությունների սպասարկման նպատակներով, Բ) Եկեղեցական օրացույցների թողարկումը հնարավոր համարել «գրաբարով», հին ուղղագրությամբ, նկատի ունենալով, որ այդ անջրպետում է աշխատավոր լայն խավերին հնարավոր ազդեցությունից՝ վերջիններիս անհասանելիության պատճառով, Գ) Եկեղեցական օրացույցների հրատարակման իրավունքի տրամադրում հնարավոր համարել միայն էջմիածնի կենտրոնին⁵, Դ) Հաստատել էջմիածնի կենտ-

⁵ Նկատի ունի կաթողիկոսարանը:

րոնի կողմից օրացույցների հրատարակման հետեւյալ պայմանները. 1. տպաքանակ — ոչ ավելի քան 3000, 2. Հեղափոխական տոները պետք է նշել կարմիր հաստ տառատեսակով առանց կրճատման եւ առանց որեւէ մեկնաբանությունների, ի հակակշիռ սովորական սեւ տառատեսակով եկեղեցական տոների, 3. բովանդակություն — բացառապես եկեղեցական տոների ժամկետներ եւ նշումներ, 4. օրացույցից հանել կաթողիկոսի եւ վանքի⁶ նկարները (Արիսյանը եւ Մակինցը մնում են իրենց կարծիքին, որ հնարավոր է կաթողիկոսի եւ էջմիածնի նկարների տեղադրումը), Ե) ՀԿ(բ) Կ ԿԿ առջեւ բարձրացնել «Ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսի հանման մասին հարցը, Զ) Պետհրատի արտադրական ծրագրի մեջ մտցնել հակակրոնական օրացույցի հրատարակման հարցը, Է) եկեղեցական օրացույցների վաճառքի վրա ոչ մի արտոնություն չտարածել, Ը) արգելել եկեղեցական օրացույցների վաճառքը գրախանութների միջոցով եւ Պետհրատի այլ կրպակներից, կոոպերատիվներից եւ այլ կազմակերպություններից, Թ) Թիֆլիսի եւ էջմիածնի տպագրված օրացույցները բռնագրավել:

Նախագահ (Արիսյան) [առանց ստորագրության]

Քարտուղար (Բատիկյան) [առանց ստորագրության]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 22, թ. 56: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 42

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №177

ՀԿ(բ) Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 31 մայիս 1928 թ.

ԼՍԵՑԻՆ՝

Հոգեւորականության մասին (Մ[եղիք]-Օսիպով, Կառւ⁸, Մռավյան, Ամիրխանյան, Տեր-Գաբրիելյան, Կոստանյան⁹)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա) Հավանություն տալ Հայ-Գրիգորյան եկեղեցու վերաբերյալ Հայ[աստանի] ՊԲՎ-ին կից օպերատիվ խորհրդակցության նախագծին:

⁶ Նկատի ունի Մայր տաճարը:

⁷ «Հուլիս գաղտնի — Հատուկ թղթապանակ»: Քաղվածքն ուղարկվել է «Հատուկ թղթապանակ»:

⁸ Կառվ Ալեքսանդր (1887–1958): ԽՍՀՄ Միացյալ ՊԲՎ լիազոր ներկայացուցիչ (ղեկավար) Անդրկովկասում: 1931-ից՝ կուսակցական աշխատանքի: 1937 թ. դատապարտվել է 20 տարվա աքսորի: Հրեա:

⁹ Կոստանյան Հայկազ (1897–1938): 1928–1930 թթ.՝ ՀԿ(բ) ԿԿ 1-ին քարտուղար, 1931–1934 թթ.՝ ՀամԿ(բ) Դրիմի մարզկոմի 1-ին քարտուղար: Բռնադատվել է, գնդակահարվել:

Բ) Միաժամանակ, ընդհանուր քաղաքական գծով, անհրաժեշտ համարել իրականացնել լայն զանգվածային աշխատանք, հատկապես արտասահմանյան հայկական գաղթօջախներում աշխատավոր զանգվածներին եկեղեցու ազդեցությունից կտրելու նպատակով օգտագործելով արտասահմանում Հայ-Գրիգորյան եկեղեցու ներսում տարածայնություններ, այդ թվում՝ նորեկեղեցականների եւ այլնի հետ:

Գ) Հարցն ընդհանուր առմամբ ներկայացնել նախագահությանը:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թթ. 120, 121: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսւ.:

ԹԻՎ 43

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊՔՎ նիստ, 30/V-[19]28 թ.¹⁰

Կառւի նախագահությանը եւ ներկայությանը Մ[ելիք]-Օսիպովի, Վարդանովի, Փանյանի եւ Ծատուրովի:

ԼՍԵՅԻՆ՝

Հայ-Գրիգորյան հոգեւորականության մասին զեկուցագրեր:

Զեկուցողներ՝ Ծատուրով եւ Փանյան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա) Հայ-Գրիգորյան հոգեւորականության գծով աշխատանքների իրականացման գծով հիմնական խնդիրը, ամեն գնով ինչ էլ լինի, այդ հոգեւորականության հետեւից գնացող կրոնական զանգվածին ԳՀԽ¹¹-ից-էջմիածնից եւ Դաշնակցություն/կ[ուսակցության] ազդեցությունից ինչպես այստեղ ԽՍՀՄ-ում, այնպես եւ՝ մասնավորապես արտասահմանում, մեկընդմիջ կտրելու ու մեր ազդեցության տակ վերցնելու հարցն է: Միաժամանակ, անհրաժեշտ է կտրել Հայ-Գրիգորյան եկեղեցուն արեւմտաեւրոպական երկրների ազդեցությունից (անգլիական[անգլիկան] եկեղեցու կողմնորոշման հարցը եւ ԳՀԽ մտադրությունը տարածել կաթոլիկ ունիան հայկ[ական] եկեղեցու վրա¹²): Այդ զանգվածին կապել

¹⁰ Պետական անվտանգության մարմինների՝ ՀԱԵ նկատմամբ դիրքորոշման վերաբերյալ փաստաթղթերը կներկայացնենք առանձին հրապարակմամբ: Այստեղ միայն հրատարակում ենք այն փաստաթղթերը, որոնք ուղղակի կապ ունեն եւ բխում են հենց կոմկուսի կենտկոմի որոշումներից:

¹¹ Գերագույն հոգեւոր խորհուրդ:

¹² Գերագույն հոգեւոր խորհրդի կողմից նման մտադրության ակնարկ անգամ չհայտնաբերեցինք:

Խորհրդ[ային] իշխանության հետ, սակայն վերոնշյալին հասնելու համար մեզ անհրաժեշտ է.

1. Հաշվի առնել մեր բոլոր ուժերը, օգտագործելով ցանկացած տարածայնություն, որ գոյություն ունի հենց ԳՀՆ ներսում: Օգտագործել ԳՀՆ կազմից հին եկեղեցու կողմնակիցներին, ինչպես նաև՝ հայկ[ական] եկեղեցու բարենորոգման կողմնակիցներին: Կատարել աշխատանք այն ուղղությամբ, որպեսզի գրավվի եթե ոչ ամբողջությամբ ԳՀՆ-ն, ապա գոնե՝ մեծամասնությունը: Ներդնել ԳՀՆ կազմի մեջ աշխարհականների՝ հին եկեղեցու կողմնակիցների, բայց խորհրդային կողմնորոշմամբ: ԳՀՆ աշխատանքը ընդհանուր առմամբ տանել մեզ ձեռնտու ուղղությամբ (հրատարակել կոնգակներ¹³, քաղաքական աշխատանքի դադարեցման ու ակնհայտ հակախորհրդային արքեպիսկոպոսների հեռացման մասին հռչակագիր եւ այլն): Եվ այդպիսի միջոցներով կրոնական զանգվածին կտրել Դաշնակցություն/կ[ուսակցությունից], հատկապես՝ գաղթօջախներում:

2. ԳՀՆ եւ թեմական վարչությունների կազմից մեկուսացնել առավել հետադիմական հոգեւորականների, ովքեր կկողմնորոշվեն դեպի Դ[աշնակցություն]/կ[ուսակցություն] կազմակերպությունը եւ արեւմտաեւրոպական երկրները:

3. Համանման աշխատանք կատարել ԽՍՀՄ խոշոր թեմական վարչություններում, մեր առջեւ խնդիր դնելով մեծամասնության նվաճումը, եւ մեր օգտին նրանց աշխատանքի ուղղորդումը:

4. Նկատի ունենալով, որ նոր-եկեղեցականները ԳՀՆ ընդդիմադիրներն են եւ օգտագործվում են մեր կողմից որպես զենք-սպառնալիք ուղղված ԳՀՆ ներկա կազմի դեմ, գտնում ենք նպատակահարմար մինչեւ ԳՀՆ վերջնական նվաճումը.

Ա) Թողնել նոր եկեղեցուն այն վիճակում, որում նա այժմ կա, սակայն դնել նրան որոշակի շրջանակների մեջ եւ մեր ազդեցությունից ու ղեկավարումից դուրս չթողնել:

Բ) աշխատանքը տանել այն ուղղությամբ, որպեսզի նոր եկեղեցին Հայ-Գրիգորյան եկեղեցուց չբանադրվի (որպես մեկուսացված, որպես աղանդ հայկ[ական] եկեղեցում եւ այլն), այլ հետագայում մնա բաղկա-

¹³ Բնագրում ուսերեն գրված է՝ «кондаки»:

ցուցիչ խումբ, որը պահանջում է կողմնորոշում դեպի խորհրդային] իշխանություն եւ հայկ[ական] եկեղեցու բարենորոգում:

Նախագահ Կառլ [առանց ստորագրության]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թթ. 120, 116: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 44

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊԹՎ-ում տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցության

30 մայիս 1928 թվական

Ներկա էին՝ Մ[ելիք]-Օսիպով, Կառլը, Վարդանովը, Ծատուրովը եւ Փանյանը:

ԼՍԵՑԻՆ՝

Հայ-Գրիգորյան եկեղեցու գծով մեր հետագա աշխատանքի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա. Մեր մարտավարության որոշման ելակետեր են.

1. Հայ-Գրիգորյան եկեղեցու անցյալի յուրահատուկ բնույթը՝ առանց պետության հետ սերտաճելու, հայ հասարակության պայքարի ուժով, մեկ թուրքական, մեկ ցարական պետության հետ Հայ-Գրիգորյան եկեղեցու, ինչպես եւ ամենից երիտասարդ հայկական բուրժուական խավերի քաղաքական կողմնորոշումը ժամանակի ընթացքում կտրուկ տատանվել է:

2. Հայաստանի կրոնական կյանքում եւ «գաղթօջախներում» Հայ-Գրիգորյան եկեղեցու խոշոր դերը հասարակական-քաղաքական կյանքում:

3. Տեղեկությունները, որ հակառակորդը պատրաստ է նույնիսկ պառակտման, նստավայրի տեղափոխման, «Էջմիածնի վտարանդիության»:

Տեղեկություններ մի կողմից դեպի անգլիկան եկեղեցի կողմնորոշման, եւ մյուս կողմից՝ կաթոլիկ եկեղեցու հետ միավորման մասին:

4. Նորեկեղեցականները վտարվել են եկեղեցուց, նրանք ուղղահայե վատների տեսանկյունից միայն աղանդավորների կուտակ են:

5. Նորեկեղեցականների նշանակությունը պատմականորեն կարելու է, սակայն ազդեցությունը, դերակատարությունը առայժմ բավականին սահմանափակ է, չնչին:

6. «Նորեկեղեցականները» — լավագույն դեպքում այն ուղադրության, ուժերի եւ միջոցների մասն է, որը մենք կարողացել եւ կարող ենք հատկացնել Հայ-Գրիգորյան եկեղեցու սպասարկման գործում մեր աշխատանքում:

7. Եկեղեցու ներսում ձախ-ընդդիմադիր հոսանքը գերազանցապես ազդեցիկ աշխարհականներից եւ ստորին եկեղեցական ծառայողներից, նրա քաղաքական դիրքորոշումը — միտումը — դաշնակիզմից հեռացումն է եւ խորհրդային կողմնորոշման որդեգրումը:

8. ԳՂԽ եւ կաթողիկոսի «Շրջապատը»: Ըստ էության դաշնակցական գիծ: Սակայն, նրա ներսում անհատական տարաձայնությունների նշանակությունն առավել եւս մեծ է, քանզի կաթողիկոսը թուլացած, ծեր, աննախաձեռնող, միայն ցուցանակ է:

Բ. Մեր մարտավարությունը.

1. Չթույլատրել ոչ եկեղեցու պառակտում, ոչ «էջմիածնի վտարանդիություն»:

Ոչ դեպի էջմիածին նրա ազդեցության տակ գտնվող հայկական գաղթօջախների խավերի ձգտման թուլացում:

2. Ողջ հարցը էջմիածնի քաղաքական կողմնորոշման մեջ է, դրա համար էլ նրան պետք է գրավել մեր ազդեցությամբ:

3. Մինչեւ այժմ մենք քիչ ուշադրություն ենք դարձրել էջմիածնում, ԳՂԽ-ում մեր ազդեցության ուժեղացման աշխատանքի անմիջական հարցերին, քանի որ զբաղված էինք նորեկեղեցականներ աճեցնելով: Հետագայի խնդիրը — ավելի ուշադրություն, ուժ եւ միջոցներ ԳՂԽ գործունեության լուսաբանման գծով անմիջական աշխատանքին եւ նրա ընդգրկմանը մեր ազդեցության ներքո:

Նույնը Հայ-Գրիգորյան եկեղեցու առկա ընդդիմության նկատմամբ, գլխավորապես կազմված աշխարհականներից եւ ստորին եկեղեցական ծառայողներից:

4. Դրա համար.

Ա) Հմտորեն, պատշաճ մոտեցմամբ եւ ամեն կերպ օգտագործել հետապնդող նորեկեղեցականներին, սակայն, ըստ էության, ոչ թե որպես եկեղեցու բարենորոգչական հոսանքի, այլ որպես ԳՂԽ-ին քաղաքական ընդդիմություն — խորհրդային կողմնորոշմամբ: «Բարենորոգչական հոսանքը» թույլատրել միայն միասնական եկեղեցու ներսում:

Բ) Նորեկեղեցականների դերը եւ նշանակությունը, սակայն, իրական կլինեն այնքանով, որքանով կհանդիսանան ոչ հերձվածող, Հայ-Գրիգորյան եկեղեցու աղանդ, այլ կգտնվեն միասնական եկեղեցու ներսում՝ ներքին հակասությունների խորացման համար: Եթե դրա, այսինքն՝ կաթողիկոսի կոնդակով նորեկեղեցականներին Հայ-Գրիգորյան եկեղեցի

ընդունելու համար անհրաժեշտ է ժամանակավոր հրաժարվել ամսագրի¹⁴ տպագրումից, դրան ստիպված ենք գնալ, սակայն ամսայաման նորեկեղեցականների անդամների նախօրոք մշակմամբ, որպեսզի նրանց պահպանենք միասնական եկեղեցու ներսում, որպես փառափառական ընդդիմություն¹⁵:

Գ) Հայ-Գրիգորյան եկեղեցու գծով մեր հետագա աշխատանքում հմտորեն, պատշաճ մոտեցմամբ եւ ամեն կերպ օգտագործել դեպի Խորհրդային իշխանություն կողմնորոշված աշխարհականների եւ ստորին եկեղեցական ծառայողների անհատական ընդդիմությունը, խորացնել նրանց քաղաքական ընդդիմությունը եւ վերցնել մեր ազդեցության տակ:

Դ) Հմտորեն, պատշաճ մոտեցմամբ եւ ամեն կերպ օգտագործել կաթողիկոսի «շրջապատում» առկա ներքին տարաձայնությունները:

Որպեսզի այդ տարաձայնությունների օգտագործման օգնությամբ, աշխարհականների եւ ստորին եկեղեցական ծառայողների ու նորեկեղեցականների առկա ընդդիմությամբ ստանանք ԳՀԽ ներսում գերակշռող ազդեցություն: Հայ-Գրիգորյան եկեղեցու վճռական, քաղաքականապես թշնամական գործիչներին ըստ ամենայնի վարկաբեկել եւ քաղաքականապես վնասազերծել՝ ընդհուպ անհատական մեկուսացում:

5. Կաթողիկոսին եւ ԳՀԽ-ին մեր «աջակցության» պարտադիր պայման պետք է լինեն.

Ա) ԽՍՀՄ ողջ իրադրության հաշվառմամբ եւ Խորհրդային Հայաստանի գոյության 7-ամյակի առթիվ կաթողիկոսի կոնդակը դաշնակիզմի դատապարտման մասին՝ որպես ողջ հայ ժողովրդի եւ նրա զարգացման համար կործանարար, վտանգավոր քաղաքական հոսանքի, եւ արձանագրումը, որ Հայաստանի ու հայ ժողովրդի շահերի համար ընդհանրապես՝ ամբողջ աշխարհի հայկական գաղթավայրերում, Խորհրդային իշխանությունը միակ հնարավորությունն է, որ այն ամբողջությամբ ապահովել է եւ ապահովում է Հայ-Գրիգորյան եկեղեցու ազատությունը եւ նրա զարգացումը:

Բ) Կաթողիկոսի կոնդակը նորեկեղեցականների մասին, որ նրանք մտնում են միասնական Հայ-Գրիգորյան եկեղեցու մեջ եւ մնացյալ կրոնական¹⁶ Հայ-Գրիգորյան համայնքների հետ հավասարապես մասնակցում են միասնական եկեղեցու ամբողջական կյանքին եւ գործունեությանը:

¹⁴ Նկատի ունեն «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթը:

¹⁵ Բնագրում հատվածն ընդգծված է կարմիր գրիչով:

¹⁶ Նկատի ունեն՝ հավատացյալ:

Գ) Այդ ամենի արդյունքում՝ ԳՀԽ-ում մեր ազդեցության ամբողջությամբ կամ ծայրահեղ դեպքում մեծամասամբ ապահովումը:

6. Մեր հույսն ոչ թե թեմերի քանակի սահմանափակումն է, այլ որտեղ նպատակահարմար է եւ մեր շահերից է բխում (մեր կամ լոյալ թեկնածուներ)՝ անգամ դրանց հնարավոր ընդարձակումը:

7. Մասնավորապես, անհրաժեշտ համարել ՄԵԼՅԱՆԻՆ¹⁷ եպիսկոպոսի աստիճան տալը:

8. Բոլոր այս դրույթներն օգտագործել եւ իրականացնել նմանապես եւ առանձին թեմական խորհուրդների եւ նմանների դեպքում մեր աշխատանքում:

9. Հետագա աշխատանքում հստակ հետազոտել եւ լուծել Կաթողիկոսի թեկնածուի մասին հարցը:

10. Հայ-Գրիգորյան եկեղեցու գծով աշխատանքի ողջ լրջության առթիվ անհրաժեշտ է հատկապես հանգամանալից, մտածված, պատշաճ մոտեցմամբ դեկավարել մեր գործակալական ցանցը, այն որակապես եւ քանակապես ուժեղացնել, ապահովելով Հայ-Գրիգորյան եկեղեցու գծով ՊՔՎ ողջ աշխատանքում կենտրոնացված դեկավարությունը:

11. Հայ-Գրիգորյան եկեղեցու գծով հետագա աշխատանքում ելնելով նշյալ կետերից, դրանց մասնակի լրացման կամ փոփոխման անհրաժեշտության դեպքում, ՀԱՅՊՔՎ-ն անմիջապես պետք է հստակ տեղեկացնի ԱՆԴՐՊՔՎ-ին, փոփոխության գնալով միայն ԱՆԴՐՊՔՎ թույլտվությամբ:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թթ. 117–119: Բնագիր: Մեխենագիր:

Թարգմ. ռուս.:

Թիվ 45

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N27

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի,

5 հունիս 1928 թ.

ԼՍԵՑԻՆ՝

9. Հոգեւորականության մասին (Մ[ելիք]-Օսիպով):

¹⁷ Մեսրոպ ավագ փահաճա Մելյանը (1859–1941) երկարատեւ հոգեւոր ծառայությունից հետո վարել է հակականոնական գործունեություն, 1924–1928 թթ. երեւանում հրատարակել է «Ազատ եկեղեցական եղբայրության» «Ազատ եկեղեցի» պաշտոնաթերթ: Եպիսկոպոսի աստիճան չի ստացել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով հարցի կարեւորությունը եւ նախագահության անդամների նախնական ծանոթացման անհրաժեշտությունը եղած նյութերին, քննարկումը հետաձգել հաջորդ նիստին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 16, թ. 93: Բնագիր: Մեքենագիր:

Թարգմ. ուսւ.:

ԹԻՎ 46

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №46

Հայաստանի Կ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 27 հոկտեմբեր 1928 թ.

ԼՍԵՑԻՆ՝

1. ՊՔՎ հարցեր (Մելիք-Օսիպով)¹⁸

Ա) Հոգեւորականության մասին (Քարտուղ[արություն] N. 17):

Բ) Տեր-Գրիգոր Տեր-Գրիգորյանի գործը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա) 1. Հաստատել հոգեւորականության մասին Քարտուղարության 31/V որոշումը, 2. Փաստելով Քարտուղարության որոշման իրականացման անբավարար ընթացքը՝ ՊՔՎ-ին եւ ՆԳԺԿ-ին առաջարկել հոգեւորականության հանդեպ ԿԿ նախանշած գծի ապահովման առթիվ վճռական միջոցներ ձեռնարկել, 3. Էջմիածնի օրացույցի հարցը փոխանցել Քարտուղարության որոշմանը:

Բ) Համաձայնվել Տեր-Գրիգոր Տեր-Գրիգորյանի մասին ՊՔՎ կոլեգիայի որոշմանը¹⁹:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 15, թ. 14: Բնագիր: Մեքենագիր:

Թարգմ. ուսւ.:

ԹԻՎ 47

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №38

Հայաստանի Կ(Բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 28 սեպտեմբեր 1928 թ.

ԼՍԵՑԻՆ՝

2. Էջմգավկոմի ս.թ. 10/VIII որոշումը:

¹⁸ «Հուլիս գաղտնի — Հատուկ թղթապանակ»: Քաղվածքն ուղարկվել է «Հատուկ թղթապանակ»:

¹⁹ Տեր Գրիգորի այս գործի մասին այլ նյութեր չհայտնաբերվեցին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա) Ձեղարկել էջմիածնի գավկոմի որոշումը վանական բնակարանների համատարած խման մասին:

Բ) Հնարավոր համարել բնակարանները խտացնել այնպես, որպեսզի վանքի տրամադրություն տակ մնա ոչ ավելի, քան բնակչի համար նախատեսված բնակելի մակերեսը:

Գ) «Բ» կետը փոխանցել խորհրդային կարգով ձեւակերպման:

Յ. էջմիածնի գավկոմի որոշումը էջմիածնի գրադարանը Երեւան տեղափոխման մասին:

Ա) Ձեղարկել էջմգավկոմի ս.թ. 10/VIII որոշումը:

Բ) Առաջարկել ԼուսժԿ-ին գրադարանում աշխատանքի դրվածքի բաբելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 23, ք. 67: Բնագիր: Մեքենագիր:

Թարգմ. ռուս.:

Թիվ 48

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №48

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի,

18 դեկտեմբեր 1928 թ.

ԼՍԵՑԻՆ՝

14. Տոնական օրերի մասին (ՀամԿ(բ)Կ²⁰ ԿԿ հեռ[ագիր]):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա) Տոնական օրերի մասին հարցի առթիվ խորհրդային օրենսդրությամբ ղեկավարվել, թույլ չտալով Ծննդյան եւ Նոր Տարվա օրերի կրկնակի տոնակատարություն:

Բ) Կրկնվող տոնակատարություն թույլատրել միմիայն բացառիկ դեպքերում, լրացուցիչ ոչ աշխատանքային օրերի աշխատելու պայմանով²¹:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 16, ք. 110: Բնագիր: Մեքենագիր:

Թարգմ. ռուս.:

²⁰ Համամիութենական կոմունիստական (բանվորական) կուսակցություն:

²¹ «Հուլիս գաղտնի — Հատուկ թղթապանակ»: Քաղվածքն ուղարկվել է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին, ՀամԿ(բ)Կ ԱԿԿ-ին [Անդրկովկասյան երկրամասային կոմիտե], «Հատուկ թղթապանակ» եւ ԱշխատանքԺԿ-ին:

ԹԻՎ 49

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 23 փետրվար 1929 թ.

ԼՍԵՑԻՆ՝

5. Հակակրոնական աշխատանքում խեղաթյուրումների մասին (Ամատունի²²):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ա. Գավկոմների ուշադրությունը հրավիրել հակակրոնական աշխատանքում (եկեղեցիների արագացրած փակում, վարչական ճնշում եւ այլն) նկատվող խեղաթյուրումների վրա, խստորեն հետեւելով տվյալ հարցում ԿԿ հրահանգներին:

Բ. Հանձնարարել ԱԲԲ-ին հարցի շուրջ գավկոմներին ուղարկել շրջաբերական նամակ,

Գ. Դարալագյազի գավառում, որտեղ եկեղեցիների խման հարցում որոշ սխալներ են թույլ տրվել, անհապաղ գործուղել հանձնաժողով՝ Դաշտոյան²³ (գումարում), Գ. Հարությունյան եւ Կ. Ղազարյան կազմով, պարզաբանման եւ ԿԿ-ին զեկուցելու համար:

Դ. Առաջարկել գավկոմներին ԿԿ-ին շտապ ներկայացնել եկեղեցիների եւ աղոթատների փակման մասին բոլոր նյութերը:

Ե. Անհրաժեշտ համարել վարչական կարգով պատասխանատվության կանչել այն անձանց, ովքեր մեղավոր են եկեղեցիների փակման մեջ:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 17, թ. 13: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

ԹԻՎ 50

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №16

ՀԿ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 28 հուլիս 1934

ԼՍԵՑԻՆ՝

22. Անաստվածների Կ[ենտրոնական] Խ[որհրդի] նախագահի մասին (Արիայան²⁴):

²² Ամատունի (Վարդապետյան) Ամատունի (1900–1938): 1928–1930 թթ. ՀԿ(բ)Կ երեւանի գավկոմի քարտուղար, 1935–1936 թթ.՝ ՀԿ(բ)Կ ԿԿ 2-րդ, 1936–1937 թթ.՝ 1-ին քարտուղար: Գնդակահարվել է:

²³ Դաշտոյան Ռուբեն (1879–1937): ՀՍԽՀ ԿԳԿ քարտուղարն էր: Բռնադատվել է, գնդակահարվել:

²⁴ Արիայան Աեոն (1903–1938): 1934-ից՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ, 1936-ից՝ Լուսավորության ժողկոմ: Բռնադատվել է, գնդակահարվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Եր. Խոջամիրյանի²⁵ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ ազատել նրան Հայաստանի ՄԱՄ²⁶ ԿԽ նախագահի պաշտոնից: ՄԱՄ ԿԽ նախագահ հաստատել Վարդունուն²⁷:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 24, թ. 103: Բնագիր: Մեֆենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 51

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №32

Հայաստանի Կ(բ) ԿԿ Բյուրոյի նիստի, 22 հունվար 1935

ԼՍԵՑԻՆ՝

21. Հայաստանի Մարտնչող Անաստվածների Միության աշխատանքի մասին (Խանջյան²⁸):

ՈՐՈՇԵՑԻՆ՝


1. Առաջարկությունը հիմնականում ընդունել:

2. Հանձնարարել հանձնաժողովին՝ Ստ. Ակոպով (գումարում), Արիսյան, Եղիազարյան, Շահվերդովա²⁹ եւ Հովհ. Մելիքյան կազմով, Բյուրոյում կարծիքների փոխանակման հիման վրա, վերախմբագրել առաջարկները եւ ներկայացնել ԿԿ Բյուրոյի հաջորդ նիստի հաստատման:

3. Ընկերության նախագահ հաստատել Ս. Շահվերդովային:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 9, թ. 37: Բնագիր: Մեֆենագիր: Թարգմ. ուսու.:

Շարունակությունը՝ հաջորդիվ




²⁵ Խոջամիրյան Երվանդ (1889–1938): 1924–1938 թթ. Երեւանում եւ Թիֆլիսում զբաղեցրել է կուսակցական եւ խորհրդային պատասխանատու պաշտոններ: Բռնադատվել է, գնդակահարվել:

²⁶ Մարտնչող անաստվածների միություն:

²⁷ Վարդունի Լեւոն (1898–1975): 1930–1933 թթ.՝ ՀԿ(բ) Աշտարակի շրջկոմի քարտուղար, մանկավարժ:

²⁸ Խանջյան Աղասի (1901–1936): 1930–1936 թթ.՝ ՀԿ(բ) ԿԿ 1-ին քարտուղար: Սպանվել է Լ. Բերիայի կողմից:

²⁹ Շահվերդովա Սուսաննա (1888–1947): 1934–1937 թթ.՝ ՀԽՍՀ կուսակցության ժողկոմի տեղակալ:



ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐ ՓՈԻԼԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՐԱՀԱՍ ԿՐԵՏԱՅՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Աբրահամ Գ. Կրետացին (1734—1737 թթ.) կարեւոր դերակատարում է ունեցել ԺՀ. դարի հայ հոգեւոր ու մշակութային կյանքում: Նա իր գրական բեղուն գրչով, արժեքավոր երկերով, հատկապես «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից»¹ 53 գլխից բաղկացած աշխատութեամբ մեծապես նպաստել է ԺՀ. դարի հայ պատմագրութեան զարգացմանը: Երկն առաջին անգամ հրատարակվել է 1796 թ. Կալկաթայում, իսկ 1870-ին՝ Վաղարշապատում:

Աբրահամ Գ. Կրետացու «Պատմագրութիւնը» արժեւորել ու բարձր է գնահատել Մ. Աբեղյանը. «Այդ պատմութեանն իսկապես պատմութեան չէ, այլ անձնական հիշատակարան եւ իբրեւ այդպիսին՝ մեր պատմութեան մեջ մի առանձին տեղ է բռնում եւ, կարելի է ասել, եզակի է իր տեսակի մեջ, քանի որ մեզանում պատմական հիշատակարաններ շատ չկան: Աբրահամը մանրամասն արձանագրում է այն, ինչ որ ինքն արել ու գործել կամ մտածել է...»²: Այս երկին անդրադարձել է նաեւ Լեոն: Ըստ նրա՝ ճիշտ չէ կաթողիկոսի սույն գործը «Պատմագրութիւն» անվանելը. այն հիշատակարան է, որտեղ «հեղինակն արձանագրել է իր տեսածն ու իմացածը լոկ իբրեւ լրատու...»³:

Նույնքան արժեքավոր են նաեւ կաթողիկոսի «Կոնդակ»-ը (էջ 179—186), որը հրատարակված է որպես «Պատմագրութեան» շարունակութեւն, եւ «Պատմութիւն Անի քաղաքին»⁴ փոքրածավալ երկը:

¹ ԱՐՐԱՀԱՍ ԿՐԵՏԱՅԻ, Պատմութիւն, քնն. բնագ., ռուս. թարգմ. (АБРААМ КРЕТАЦИ, Повествование), առաջ. եւ ծանոթ.՝ Ն. Ղորղանյանի, Երեւան, 1973 (մենք օգտվել ենք քննական բնագրից. այսուհետեւ՝ սույն բնագրից մեջբերումների էջերը տե՛ս շարադրանքում՝ փակագծի մեջ). տե՛ս նաեւ «Աբրահամ կաթողիկոսի Կրետացու պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870:

² Մ. ԱՐԵՂՅԱՆ, Հայոց հին գրականութեան պատմութեւն, հտ. Բ., Երեւան, 1946, էջ 459:

³ ՏԵՆ ԼԵՈ, Երկերի ժողովածու, հտ. 3, Երեւան, 1973, էջ 447:

⁴ ՏԵՆ «Աբրահամ կաթողիկոսի Կրետացու, էջ 101—109:

Վերոնշյալ երկերը լեզվական առումով եւս առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ Աբրահամ Գ. Կրետացու բառապաշարը հարուստ է, խոսքը՝ գեղեցիկ, իսկ լեզուն միայն անաղարտ գրաբարը չէ: Այս հոդվածում բառաքերականական քննության ենք ենթարկել «Կոնդակ»-ը, «Պատմություն Անի քաղաքին» եւ «Պատմագրություն» (որոշ հատվածներ) երկերը:

Հր. Աճառյանն իր «Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ»⁵ աշխատության ժԳ. գլուխը, որն ունի «Հայերէն նոր բառեր Աբրահամ Կրետացու մէջ» վերնագիրը, քննում է «Պատմագրություն» եւ «Կոնդակ» գործերում ամփոփված 13 բառ: Մեծանուն լեզվաբանը տալիս է այդ բառերի ստուգաբանական եւ իմաստային բացատրությունները⁶:

ԺԸ. դարի գրաբար պատմագրության լեզվին առհասարակ հատուկ են բարդ բառակերտումները: Աբրահամ Գ. Կրետացու երկերը եւս աչքի են ընկնում նմանօրինակ կազմություններով, երբեմն հանդիպում են նաեւ փոխառյալ բառով կազմված բարդություններ: Դրանցից մի քանիսը ժամանակի լեզվամտածողությանը բնորոշ նորակազմություններ են: Օրինակ՝ հոգունակություն (էջ 36), դիագարդել (էջ 60), բարձրամիստ (էջ 62), վրանածել (էջ 66, 106), սագաշէն (քարաշէն, նաւակածել⁷, էջ 79, 182), լուսաւորչածին (էջ 79), մեռնախառն (էջ 80), նեղանցուկ (էջ 150), վարդէշուր (էջ 182), անուշահոտութիւն (էջ 183), բարձրայօն (ամբարտաւան, սնապարծ⁸, էջ 102), խորտկակերութիւն (էջ 103), արծաթախորութիւն (էջ 103), յիշոցատութիւն (էջ 104), օտարատեցութիւն (էջ 104), յանձնապաշտութիւն (էջ 104), վալիութիւն (էջ 106), խանութիւն (էջ 106), արինաթաթախ (էջ 106), Լեհացտուն (էջ 109) եւ այլն:

Այս շրջանի պատմագրության մէջ, ինչպէս նկատում է Վ. Համբարձումյանը, գործառական արժեք են ստանում ռազմական-պետական բնագավառի տարբեր կողմերը ներկայացնող նոր հասկացություններ:

⁵ Տէն Հր. Աճառյան, Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, Վենետիկ, 1913, էջ 127–134:

⁶ Անդ, էջ 127–134. ասղաբան (ասեղնագործուած), դմշխեայ (պարս. «կացին» բառն է, ծագում է արաբ. «Դամասկոս» բառից, նշանակում է ընտիր պողպատեայ թուր), զեկ (գիտութիւն, տեղեկութիւն), թեպուր (փետուր), խօսացտէր (իշխանատու, մեծատու), կատաղունիք (իջեւան, հիւրանոց, բնակարան), հացուտ (հացաւէտ, հացաշատ), մետաղ (օթեւան, իջեւան), մորոսել (ծաղրել, մէկի վրայ խնդալ), մսմար (զամ, բետեռ), նեղանձուկ (նեղ, շատ նեղ), շողային (շոգ, տաք), ունի (էգ էակ, աղջիկ կամ կին):

⁷ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Բ., Վենետիկ, 1837, էջ 683:

⁸ ՆՃԲ, հտ. Ա., Վենետիկ, 1836, էջ 464:

րի անվանումները⁹: Այսպես՝ «...խօսեցաւ պատրաստելոյ վասն զմեզ եւ պահպանելոյ ի նենգութենէ հագարացոց՝ մերձասահման գոլոյն մեզ սահմանացն նոցին» (էջ 63), «Եւ՝ վասն դալիմի ձիավարժութեան եւ պատերազմավարժութեան» (էջ 129):

«Պատմագրութեան» մէջ եւ «Կոնդակ»-ում ներկայացված կենսագրական տեղեկությունները վկայում են, որ հեղինակի աշխատություններում գրաբարին զուգակից գործածվող միջինհայերենյան, բարբառային ու ժամանակի խոսակցական աշխարհաբարին բնորոշ ձևերը պայմանավորված են Այրարատի, Սյունիքի, Դիզակի եւ Մուղանի բնակիչների, պարսիկ խաների ու հարյուրապետների, թաթարների, հայ եւ տաճիկ աղաների ու քեթիկների հետ ունեցած հարաբերություններով:

Ուսումնասիրվող երկերում բարբառային շերտը ներառում է էւ բուն հայերեն, էւ օտար բառեր, ինչպես՝ մեզանէ (էջ 183), Մօսկօֆու/Մօսկի (էջ 79, 182), շատրայ (էջ 182), խառելեզ¹⁰ (էջ 182), լօթի (էջ 183), նաւակ¹¹ (էջ 78), իւզպաշիֆ (էջ 80, 180), փաղօղ (էջ 79), ֆէխտուտայ (էջ 80, 180), մինն (էջ 182), Դոիմ (էջ 109), ճուղայ (Ջուղա, էջ 108), Կէննայ (Գյանջա, էջ 47, 79), գեղ (էջ 50), հանտ¹² (էջ 50), զֆաղաֆաղիֆն (էջ 183) եւ այլն:

Պատմության Ի.Գ. գլխում Աբրահամ Գ. Կրետացին գրում է. «Եւ անդ կատարեալ զկարգ ջրօրհնեացն հեղաֆ զսուրբ մեռոնն ի ջուրն Երասխայ, յորոյ էին Երեւանայ ֆալանթար Մէլիֆջանն, մէլիֆ Յակոբջանն եւ մէլիֆ Մկրտումն, Տուգախո մէլիֆ էլէնն... Այլեւ՝ Երեւանայ եւ Արարատեան ֆէտխտուայֆն, եւ բանակի եղեալ հայֆն, եւ Երեւանայ աղաներն եւ այլաներն շէխիսլամն, դազին եւ խանին իւզպաշիֆն՝ աւելի ֆան զԳՃ. (300) մարդ՝ հայ եւ թուրք» (էջ 80):

Պարզ է, որ այսպիսի շփման պայմաններում նա յուրացրել է օտար բառեր ու արտահայտություններ եւ դրանք գործածել իր երկերում: Այդ բառերը բազմիմաստ են, կան նաեւ ամբողջական նախադասություններ՝ հայերեն թարգմանություններով: Այսպես՝

⁹ Տէս Վ. ՀԱՄԱՐԱՋՈՒԾԱՆ, XVIII–XIX դարերի գրաբար պատմագրության լեզվական բնութագիրը, «Պատմաբանասիրական հանդես», 1982, թ. 1, էջ 73–82. նաեւ նույն հեղինակի՝ «XVIII–XIX դդ. գրաբարի ձևաբանական առանձնահատկությունները», ՊՐՀ, 1988, թ. 1, էջ 11–22:

¹⁰ Հմմտ. խառելեզ՝ գարնան սկզբից մինչեւ աշնան վերջն ընկած ժամանակաշրջան (տես «Հայոց լեզվի բարբառային բառարան», հտ. Բ., Երեւան, 2002, էջ 371):

¹¹ Հմմտ. նաւլա՝ նավակ, ՀԼՔԲ, հտ. Գ., Երեւան, 2007, էջ 142:

¹² Տէս հանդ՝ արտ, դաշտ (Ռ. ԱՋԱՐՅԱՆ, Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Միջին հայերենի բառարան, հտ. Բ., Երեւան, 1992, էջ 15):

այլամ — արաբ․՝ ազնվական, ավագ, նախարար, մարզպան. «Երեւանայ աղաներն եւ այլաններն...» (էջ 80):

արիֆէ — թուրք․՝ նախատոնակ. «Եւ արիֆէի օրն հարին մեծ վրան մի եղեգնեայ պարսպին մէջն՝ կից հանի ամարաթին» (էջ 182):

ամարաթ — արաբ․՝ imarat, emarāt (շենք, շինութիւն). «Եւ զի էր նստած տեղն հանին ամարաթ շինեալ փայտաշէն...» (էջ 181, 182):

արշուն — հնց., երկարության ռուսական չափ = 0,711 մետրի. «Որոյ էր երկայնութիւնն ճժ. (110) արշուն» (էջ 182):

թամաշայ — պարսկ., արաբ․՝ tamaša (1. տեսարան, խաղ, զվարճութիւն, 2. զբոսանք, ման գալ, 3. դիտորդ, դիտող, ականատես). «Որ եւ հրաման ետուր ամենեցուն՝ գնալ եւ թամաշայ առնել» (էջ 182):

թուրայ — 1. սուրմա, ծարիր՝ մագերը, հոնքերը ներկելու ներկ, 2. մետաղյա զարդ:

ֆնտխ — պարսկ.՝ fondoḡ (կաղին, պնդուկ). «...մի կողմն թուրայ (ի) նման ֆնտխ ոսկոյն» (էջ 185):

թուման — պարսկ.՝ tūmān (10 000). «...եմիփորոնն էր յոյժ պատուական եւ արժէր Ծ (50) թուման եւ այլ աւելի» (էջ 185):

խալաթ — արաբ., պարսկ.՝ xal'at (իբրեւ նվեր տրված թանկագին հագուստ):

մանտիլ — արաբ., պարսկ.՝ mandil (զլխաշոր, վարշամակ). «...ի ձեռն պաշտօնէից իւրոց առաքեաց եւ ինձ խալաթ, որ էր մանտիլ սեւագոյն, բայց՝ պատուական» (էջ 185):

ղալիօն — հուն.՝ ռազմանավ:

փալամար - նավի հաստ չվան՝ պարան. «...զվարի կողմն՝ առասանաւ, որ էր որպէս զալիօնի երկաթի հաստ փալամար» (էջ 78):

պայքամ — մահմեդական եռօրյա երկու տոների անունը. «...ի Վրաստանու եւ ի Թավրէզու եւ այլոց տեղեաց՝ գումարեալ ժողովեցաց, կուտեցան եւ եկեղեցացան մինչեւ ցՊայքամն իւրեանց» (էջ 181, 182):

սէլամ — արաբ., պարսկ.՝ salām, թուրք.՝ selām (բարեւ, ողջույն, երկրպագութիւն). «Իսկ ի միւսում օրն գնացաք կրկին ի սէլամ ըստ սովորութեան մերում» (էջ 181, 183):

«Կոնդակ»-ի վերջում Աբրահամ Գ. Կրետացին գործածում է նաեւ հայատառ պարսկերեն նախադասութիւններ: Օրինակ՝ «Փատիշահի մամալիքի Իրան, զիլլի սիւպհան, Նա՛տիրի տէվրան Ֆաթիէ» (Արքայն աշխար-

հաց իրանի, ստուերն ամինաբարձրելոյ՝ Նատիր՝ ընտրելագոյն որդին ժամանակաց՝ յաղթողն, էջ 186):

Հայոց հայրապետի երկերում, պայմանավորված ժամանակի գրական լեզվի եւ բարբառների ազդեցությամբ, նկատելի են նաեւ քերականական որոշակի տարբերություններ:

«Պատմութիւն Անի քաղաքին» փոքրածավալ երկը շարադրված է կանոնավոր գրաբարով եւ քիչ՝ աշխարհաբարյան ձեւերով, մինչդեռ «Կոնդակ»-ը եւ «Պատմագրութիւն»-ը հարուստ են միջինհայերենյան հնչունական փոփոխություններով, բառերի, արտահայտությունների աշխարհաբարյան ձեւերի խառնուրդներով:

Հոլովման, թվակազմության համակարգերում հանդիպում են եւ զուտ աշխարհաբարյան, եւ գրաբար-աշխարհաբարյան ձեւեր:

Ասվածը հաստատենք բնագրային վկայություններով. «Անի քաղաքն էր մեծ եւ հռչակաւոր՝ որ ի դաշտին Շիրակվան, որ եւ աթոռ լեալ թագաւորացն մերոց, որոյ բնական բնակիչքն էին մեծափարթամք եւ ընչաւէտք եւ փափկասնունդք» (Անի, էջ 101): Այս օրինակը կանոնավոր գրաբարով է միայն ընդգծված կառույցում՝ «ի դաշտին Շիրակվան». Շիրակ հատուկ անունը տրված է աշխարհաբարյան ձեւով՝ ու հոլովմամբ՝ Շիրակու > Շիրակուան > Շիրակվան: Այս նույն բառը հաջորդ նախադասության մեջ տրված է միաժանակ աշխարհաբար ու եւ գրաբար ա հոլովումներով. այսպես՝ «Որ եւ յայնմ ժամանակի գնաց Յօհաննէս թագաւորն Շիրակվանայ...» (Անի, էջ 101):

«Զեկեալ խաներաց զոմանս անդ իջուցանէին» (էջ 182). խան բառի հոգնակի սեռական հոլովն է՝ աշխարհաբարի եւ հոգնակերտով, գրաբարի ա հոլովմամբ:

Եւ-ով հոգնակիներ են կազմվել նաեւ հետեւյալ օրինակներում. «Երեւանայ աղաներն եւ այաներն շէխիսլամն...» (էջ 80), «...որ էր ի փայտէ փորեալ շրոնխներ» (էջ 78):

«Կոնդակ»-ում գրաբարի յաւուր-ի դիմաց գործածվում է գրաբար-աշխարհաբար խառն ձեւ՝ ի միւսում օրն (էջ 181, 183):

Երբեմն աշխարհաբարացվում են գրաբարի հոգնակի հայցականի ձեւերը: Այսպես՝ «...մտանէին ի տունս, եւ զնորահարսունքն, եւ զփեսայքն... յափշտակեալ տանէին» (Անի, 106), «...նախ բառնալ զնզովքն...» (էջ 184), «...ձայնեցին զփաղափացիքն» (էջ 183, 184):

Ժամանակի բանավոր-խոսակցական լեզվի ազդեցությամբ փոփոխություններ են նկատվում նաեւ որոշ հատկանունների բացառական հոլովում: Օրինակ՝ ի Թիֆլիզու, ի Հերաթու, ի Մազանդարանու, ի Մաշատու, յԱրտաիլու (էջ 180, 181):

Հոլովական տարբերություններ են դիտվում մի քանի այլ բառերում՝ ի գիւղէն (էջ 39, փխ.՝ ի գեղջէ), գեղին (էջ 50, փխ.՝ գեղջ), ի վանքս (էջ 52, 53, փխ.՝ ի վանս), մոմերով (էջ 53), գազանոց (էջ 58, փխ.՝ գազանի, գազանաց), բլրիս (էջ 63, 66, փխ.՝ բլրոյն):

ԺԸ. դարի գրաբար բնագրերում հանդիպում են աշխարհաբարյան ձեւեր, որոնց բացառիկ սկզբնաձեւերը՝ սաղմերը, կարող են լինել հենց Ե. դարի կամ հաջորդ դարերի բնագրերում: Նման զարգացում է ունեցել իլ մասնիկով անորոշ դերբայի գործածությունը: Դասական շրջանում հատուկենտ բառեր ունեին այդպիսի վերջավորություն, մինչդեռ միջին ու նոր շրջաններում այն լայն տարածում է գտել եւ նույնիսկ թափանցել է ԺԹ. դարի 80—90-ական թթ. հայ գրողների երկեր:

«Պատմութիւն Անի քաղաքին» բնագրում եւս իլ-ով անորոշի ձեւեր հաճախ են հանդիպում : Օրինակ՝ «...մտանելով յեօթնապարիսպն Երիքովի, կարծելով թէ՛ այնու կարեն ազատիլ ի բարկութենէն» (Անի, էջ 102). ուղղական հոլովով անորոշ դերբայը բայական բաղադրյալ ստորոգյալի մաս է:

«Եւ ջանային մի քան զմին՝ ընչաւեաք լինիլ» (Անի, էջ 103). ուղղական հոլովով անորոշ դերբայը հարադրական բայի բաղադրիչ է, իսկ հարադրական բայն իր հերթին բաղադրյալ ստորոգյալի մաս է:

«Եդին երկայն գրակալն, զի ի ձկտիլն (նույնը՝ ձգտիլ)՝ ծաղր արասցեն զնա» (Անի, էջ 105). ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ արտահայտում է ժամանակի իմաստ՝ ձգտելիս:

Այլ օրինակներ. «...եւ սկսան կրկին ի մեղս թաւալիլ» (Անի, էջ 107), «...եւ յանկարծակի էջ սաստիկ բարկութիւնն Աստուծոյ, եւ սկսաւ քաղաքն շարժիլ եւ տապալիլ պարիսպքն» (Անի, էջ 108), «...անտի կարիցեն պատերազմիլ ընդ նոսա» (էջ 57):

Հեղինակի մյուս բնագրերում իլ-ով անորոշի կիրառությունները սակավ են:

Խոնարհման համակարգում եւս միջինհայերենյան, բարբառային ձեւերին զուգահեռ հանդիպում են աշխարհաբարյան կազմություններ: Օրինակ՝ «...հասանք ի Փարագար» (էջ 43), «...կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի» (էջ 45), «...լաւ տեղ տուէք» (էջ 181), «...եւ ասացեա

է» (էջ 186), «...պիտիւ ուղարկեն» (էջ 185, բրբռ. ձեւ է, հմմտ. բէդա՛ր), «...չի հաստատե՛ք կրկին» (էջ 184), «...չի պահե՛ք ի միջի ձերում» (էջ 184), «...զայն նզովքն չի յիշե՛ք» (էջ 184):

Շարահյուսական կառույցների հարցում Աբրահամ Գ. Կրետացին հիմնականում պահպանում է դասական ավանդույթները:

Դասական շրջանում շատ տարածված գրաբարյան շարահյուսական կառույցի օրինակ է «Յայնժամ տեսեալ վարդապետին զհաւատ կնոջն...» (Անի, էջ 107) նախադասությունը, որի ենթական՝ վարդապետին, սեռական հոլովով է դրված տեսեալ անցյալ դերբայ-ստորոգյալի պահանջով: Սեռականով ենթակայի օրինակ է նաեւ վերնագիրը՝ «Պատմութիւն Անի քաղաքին, զոր գրեալ է Աբրահամու Բաբունապետի...» (Անի, էջ 101):

Այսպիսով՝ Աբրահամ Գ. Կրետացու երկերի՝ սույն հոգվածի սահմաններում ներկայացված բառապաշարային ու ձևաբանական վերլուծությունը ցույց տվեց՝ որքան էլ մեծ է կաթողիկոսի՝ հին պատմագրության ավանդույթներին հարազատ մնալու ձգտումը, այնուամենայնիվ, նրա բնագրերը կրում են ԺԸ. դարի լեզվական ազդեցության հետքերը: Դրանք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում՝ տարբեր փուլերի լեզվական առնչակցություններն ու համատեղությունները վեր հանելու եւ ներկայացնելու առումով: Ուշագրավ են հատկապես ձևաբանական հնացած ու նոր զուգահեռումները, որոնք վկայում են մեր լեզվի՝ ԺԸ. դարի անցումային որակի ու լեզվական նոր իրողությունների մասին:

РЕЗЮМЕ

Абраам Кретаци — деятель XVIII века, Католикос Всех Армян, который отличался плодотворной литературной деятельностью, несколькими ценными произведениями, в том числе трудом «История». Последний уникален в возродившейся тогда историографии на грабаре своей языково-стилистической и грамматической структурой. В данной статье мы рассматриваем отрывки из «Истории», «Кондак» и краткую работу «История города Ани».

Работы Кретаци отличаются сложными словообразованиями и новообразованиями, свойственными языкового мышления того времени.

Данная статья констатирует, что несмотря на большое стремление Католикоса оставаться верным традициям древней историографии, произведения

автора в языковом плане носят следы языкового влияния XVIII века. В частности, интересны устаревшие и новые морфологические параллели, которые свидетельствуют о переходном качестве армянского языка в XVIII веке, а также о новых языковых реалиях.


SUMMARY

Abraham of Crete was an eighteenth century Armenian catholicos and scholar. He is prominent for his fruitful literary heritage, a number of valuable works, including “The Chronicle”. The latter is unique to the revived historiography in the Classical Armenian language for its linguistic-stylistic and grammatical structure. In the current article, the author discusses passages from “The Chronicle”, “Kontakion” and the small work of “The History of the City of Ani”.

The works of Abraham of Crete are distinguished for sophisticated word derivations and neologisms. The latter were peculiar to the then dominant linguistic way of thinking.

The current article states that despite of Abraham’s endeavors to remain faithful to the traditions of the old historiography, his works bear the trace of the 18th century linguistic influence. In particular, the archaic and new morphological parallels, which testify the transitional character of the Armenian language in the 18th century, as well as new linguistic phenomena are worth mentioning.





ՆՈՏԱԳՐՎԱԾ ԴԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

Լույս է տեսել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակած «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշարի երրորդ հատորը՝ նվիրված հարսանեկան երգերին¹: 2018 թ. ի վեր հրատարակվող այս մատենաշարը նպատակ ունի հայ ժողովրդական երգարվեստի՝ մի շարք երաժիշտ-բանահավաքների գրառած բազում արժեքավոր նմուշներից ընտրանիներ կազմել՝ ըստ ժանրային սկզբունքի՝ այս կերպ մինչ օրս մեզ հասած լավագույն նմուշներն ի մի բերելով շարքի համապատասխան ժողովածուի մեջ: Հատկանշական է նաեւ մատենաշարի երկլեզվյան լինելը (հայերեն, անգլերեն): Հատորներում բանաստեղծական բնագրերը ներկայացված են հայերենով, Հյուբշման-Մեյե-Բենվենիստ (ՀՄԲ) միջազգային գիտական տառադարձմամբ եւ անգլերեն տողացի թարգմանությամբ: Բոլոր հատորները պարունակում են տառադարձման արտասանության ուղեցույց: Մատենաշարը, որի ստեղծման գաղափարը ծագել է թանգարան-ինստիտուտի կրթական ծրագրերի ընթացքում եւ այդ ծրագրերում կիրառելիք նյութերի հիման վրա, նախատեսված է ինչպես Կոմիտասի թանգարան-ինստիտուտի կրթական ծրագրերի, այնպես եւ հայ երաժշտությամբ հետաքրքրվողների, այդ թվում՝ ոչ հայալեզու օգտվողների համար:

«Հարսանեկան երգեր» (մաս Ա.) խորագրով երրորդ հատորը հրատարակվել է համագործակցությամբ Երեւանում «Գյոթե կենտրոնի», ՀՀ ԿԳՄՄ նախարարության աջակցությամբ: Հատորը կազմել եւ խմբագրել են Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատողներ արվեստա-

¹ Մատենաշարի առաջին հատորում քնարական երգերի ընտրանի է, երկրորդում պարերգեր են: Տե՛ս «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշար, հտ. Ա., «Քնարական երգեր», կազմող, թարգմանիչ եւ խմբագիր՝ Տաթևիկ Շախկուլյան, Երեւան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2018, «Հազար ու մի երգ». «Հայկական ժողովրդական երգերի մատենաշար», հտ. Գ., «Հարսանեկան երգեր» (Մաս Ա.), Երեւան, 2020, 140 էջ: «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշար, հտ. Բ., «Պարերգեր», կազմող, թարգմանիչ եւ խմբագիր՝ Լիլիթ Հարությունյան, Երեւան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2019:

գիտությունների թեկնածու Լիլիթ Հարությունյանը (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) եւ Աստղիկ Մարտիրոսյանը (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա)՝ աշխատակցությամբ Նանե Միսակյանի (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ), արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանի (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) եւ Անդրանիկ Միքայելյանի։ Թարգմանիչը Լիլիթ Հարությունյանն է, մասնագիտական խորհրդատուն՝ արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա)։ Հատորի նկարները եւ շապիկը Դավիթ Ստեփանյանինն են, ձեւավորողը Գոհար Գրիգորյանն է։

Հայոց ավանդական հարսանեկան ծեսը մեր ժողովրդի հնագույն արարողակարգերից է։ Պայմանավորված բերքահավաքով՝ այն հիմնականում տեղի է ունեցել աշնանը։ Օրեր, երբեմն շաբաթներ տեւող այս ընդգրկուն ծիսակարգն իրենից ներկայացնում էր մի թատերականացված արարողություն՝ իր մեջ ներառելով մի շարք խաղեր, կատակներ, գովքեր, լացեր, պարեր, պարերգեր եւ այլն, որոնցից յուրաքանչյուրը հատկանշական դեր է կատարել ամբողջական ծեսում²։ Այս առումով նկատելի է նաեւ հայ ժողովրդական երգարվեստի մի շարք ճյուղերի (քնարական երգեր, պարերգեր, լացերգեր, կատակերգեր...) ներառումը հարսանեկան ծեսի շրջանակներում։

Հաշվի առնելով հայ ժողովրդական երգարվեստում վերոնշյալ հարուստ ու բազմաշերտ հարսանեկան ծեսի կարեւորությունը՝ հետեւաբար նրանում ընդգրկված երգերի մեծաքանակ եւ բազմաբովանդակ լինելը (թագվորի եւ հարսի արդուզարդի արարողակարգերին նվիրված երգեր, հարսի՝ հրաժեշտի լացերգեր, հարսանեկան պարերգեր, օժիտի երգեր, կատակերգեր, հանելուկ-երգեր եւ այլն), նպատակահարմար է գտնվել հարսանեկան երգերը ներկայացնել երկու գրքով՝ այս եւ հաջորդող հատորներով։ Նկատի ունենալով Կոմիտասի հսկայական ավանդը բանագիտության, մասնավորաբար՝ ժողովրդական երգերի (այդ թվում՝ հարսա-

² Խոսելով հայոց ավանդական հարսանեկան ծեսից՝ երաժշտագետ Մարգարիտ Բրուտյանը նշում է. «Հարուստ հարսանիքը ընդմիջումներով տեւել է մոտ 40 օր»։ Տէս Մ. ԲՐՈՒՏՅԱՆ, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, մասն. խմբագիր՝ Ա. Փահլեւանյան, Երեւան, 2003, էջ 125։

նեկան) հավաքման եւ մշակման գործում՝ սույն հատորում ընդգրկվել են Կոմիտասի եւ այլ բանահավաքների՝ այս ծեսի երգերից առավել վաղ շրջանում արձանագրվածները: Հաջորդ հատորում ծրագրվել է կոմիտասյան այլ գրառումների կողքին ընդգրկել հարսանեկան երգերի՝ համեմատաբար առավել ուշ շրջանի նմուշները: Հարսանեկան երգերի այս ընտրանին ներառում է 1890-ական թվականներից մինչեւ 1950-ականները գրաված երգեր: Ընդգրկված են նմուշներ Արշակ Բրուտյանի, Կոմիտաս վարդապետի, Սպիրիդոն Մելիքյանի, Գարեգին Գարեգյանի, Հակոբ Հարությունյանի, Միհրան Թումաճանի, Սրբուհի Լիսիցյանի, Մկրտիչ Լյուկեճյանի եւ Արամ Քոչարյանի ժողովածուներից: Նախորդ երկու ժողովածուների օրինակով այս հատորում եւս պահպանվել է ընտրված երգերի քանակը՝ 50 նմուշ:

Հատորում երգերը դասավորված են ըստ հարսանեկան ծեսի զարգացման ընթացքի: Գիրքը բաղկացած է հարսանեկան ծեսում առկա առանձին արարողակարգերի ամփոփ նկարագրություններից, որոնց հաջորդում են համապատասխան երգերի նոտային օրինակները: Այսպես, առանձնացված է 14 ենթաբաժին՝ «Փեսաբաղնիք», «Քավորի գովք», «Թագվորագովք», «Թագվորի ձիու գովք», «Կենաց ծառ», «Հարսի բաղնիք», «Հինադրեք», «Ծաղկոց երգեր», «Հարսնառ», «Հարսի պատրաստություն», «Հարսի հրաժեշտ», «Հարսանեկան պարերգեր», «Հարսանեկան խնջույք» եւ «Լուսաբաց»: Պայմանավորված նշված ենթաժանրերի երգերի տարածված կամ սակավաթիվ լինելով՝ որոշ ենթաբաժանումներին հաջորդում է վեց եւ ավելի, իսկ որոշների դեպքում՝ մեկ կամ մի քանի երգ: Առավել ծավալով ներկայացված են «Թագվորագովք» (11 երգ), «Հարսի հրաժեշտ» (8 երգ) ենթաբաժինները: Սակավաթիվ երգերով են ներկայացված «Փեսաբաղնիք», «Քավորի գովք», «Թագվորի ձիու գովք», «Հարսի բաղնիք», «Լուսաբաց» (յուրաքանչյուրում՝ 1-ական երգ), «Հինադրեք», «Ծաղկոց երգեր» (յուրաքանչյուրում՝ 2-ական երգ) ենթաբաժինները:

Լիահույս ենք, որ սույն հատորն ու ամբողջ մատենաշարը կխթանեն հետաքրքրությունը հայ ժողովրդական երաժշտության հանդեպ՝ նպաստելով նրա տարածմանը թե՛ հայ եւ թե՛ օտարազգի երաժշտասերների շրջանում:

ԱՍՏԳԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ,
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

- Поздравительное послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН**, с 8 марта – Международным женским днем5
- Речь **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН**, на симпозиуме «Христианское историко-культурное наследие народов Армянского нагорья и прилегающих территорий»6

ПРОПОВЕДИ

- Проповедь **ПРОТОАРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА**, произнесенная в монастыре Святой Гаяне во время Святой Литургии в честь Воскресенья об Управителе9

РЕЛИГИОВЕДЕНИЕ

- УТЕ ПОССЕКЕЛ** — Юлианство в сирийском христианстве14
- АРХИМАНДРИТ МАТЕОС ДЖУЛЬФАЕЦИ** — Проповедь об изречении «Не убей»34

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- КНАР АРУТЮНЯН** — Фразеологизмы в труде «Опровержение лжеучений» Езника Кохбацци49
- КАРЕН МАТЕВОСЯН** — Улицы города Ани68
- СУСАННА ОВАНЕСЯН** — Гевонд Алишан в историко-литературных восприятии Ованеса Туманяна.83


- ԱԿՆԱՅԱՐՅԱՆ** – Деятельность штаба Ереванской армии отдельного
армейского корпуса в здании эчмиадзинской духовной семинарии «Геворгян»
весной 1918 года97
- ԱՎԱԳ Ա. ԱՐՄԵՆՅԱՆ** – Документы коммунистической партии Армении,
относящиеся к Армянской Церкви (1920—1930 гг.) 119

СООБЩЕНИЯ

- ՐԱԶԱՆՆԱ ՏԱԿՅԱՆ** — Языковые совмещения разных периодов армянского
в произведениях Абраама Кретацци133

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- ԱՏԽԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** — Переложенные в ноты свадебные песни141



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

- Congratulatory message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on March 8, on the occasion of Women's Day.5
- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, during the conference entitled "Christian Historical-Cultural Heritage of the Peoples living in the Armenian Highlands and Adjacent Areas"6

SERMONS

- Sermon delivered by **PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN** during the Divine Liturgy celebrated on Steward's Sunday at St. Gayane Monastery 9

RELIGIOUS STUDIES

- UTE POSSEKEL** — Julianism in Syriac Christianity14
- ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA** — Sermon on "Don't Kill"34

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

- KNAR HARUTYUNYAN** — Idioms in "Refutation of the Sects" by Yeznik of Kolb49
- KAREN MATHEVOSYAN** — Streets of the City of Ani.68
- SUSANNA HOVHANNISYAN** — Ghevond Alishan in historical and literary perceptions of Hovhannes Tumanyan.83


HAYK NAZARYAN — Activity of the Yerevan Squad of the Armenian Corps stationed in the building of the Kevorkian Theological Seminary of Etchmiadzin in spring of 1918.....	97
AVAG A. HARUTYUNYAN — Documents of the Communist Party of Armenia on the Armenian Church from 1920 to 1930s.	119

ESSAYS

RUZANNA SAHAKYAN — Linguistic combinations of different periods of the Armenian language in the works of Abraham of Crete	133
---	-----

LITERARY REVIEW

ASTGHIK MARTIROSYAN — Notated wedding songs	141
--	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

շնորհաւորական ուղերձը Մարտի 8-ի՝ կանանց տօնի առիթով 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը

«Հայկական լեռնաշխարհի եւ դրա յարակից տարածքների ժողովուրդների քրիստոնէական պատմական-մշակութային ժառանգութիւնը» խորագրով համաժողովին 6

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ՉԱՔԱՐԻԱԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ

վանքում «Տնտեսի կիրակի»-ին մատուցուած Ս. Պատարագին. 9

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒԹԷ ՓՈՍՍԵՔԷԼ — Յուլիանականութիւնն ասորի քրիստոնէութեան մէջ. 14

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՅԻ — Քարոզ «մի՛ սպաններ» խօսքին

մասին 34

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՆԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի

դարձուածքները 49

ԿԱՐԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ — Անի քաղաքի փողոցները. 68

ՍՈՒՍԱՆԵԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Ղեւոնդ Ալիշանը Յովհաննէս Թումանեանի

գրապատմական ընկալումներում. 83

ՀԱՅԿ ՆԱԶԱՐԵԱՆ — Հայկական առանձին բանակային կորպուսի Երևանեան
 զօրաջոկատի շտաբի գործունեությունն Էջմիածնի Գեորգեան հոգեւոր
 ճեմարանի շէնքում 1918 թուականի գարնանը 97


ԱԲԱԳ Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — Հայաստանի կոմկուսի 1920—1930-ական թթ.
 փաստաթղթերը Հայաստանեայց Եկեղեցու վերաբերեալ 119

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՀԱԿԵԱՆ — Հայերէնի տարբեր փուլերի լեզուական
 համատեղություններ Աբրահամ Կրետացու երկերում 133

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏՂԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ — Նօտագրուած հարսանեկան երգեր. 141



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեսյան), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲԵ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Ալգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- САН** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ <http://www.flib.sci.am/arm/node/2>

Հեռ. (+374-10) 517-277/278

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.04.2021 թ.



ՄԵՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾԻՆ ՏՊԱՐԱՆ